

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

1

Բենիամինի երկիրը, Անաթովթի մէջ եղող քահանաներէն Զեղկիայի որդիին՝ Երեմիայի խօսքերը, **2** որուն «Տէրը խօսեցաւ», Յուդայի թագաւորին՝ Ամոնի որդիին Յովսիայի օրերը, անոր թագաւորութեան տասներեքերորդ տարին. **3** նաեւ Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի օրերը, մինչեւ Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Սեդեկիայի տասնմէկերորդ տարուան վախճանը, մինչեւ Երուսաղէմի տարագրութիւնը, որ հինգերորդ ամսուան մէջ եղաւ.---

ԵՐԵՄԻԱՅԻ ԿՈՉՈՒՄԸ

- 4** <sup>բ</sup>Տէրը խօսեցաւ՝ ինծի՝ ըսելով.
- 5** «Զեզ որովայնի մէջ չձեւակերպած՝ քեզ կը ճանչնայի, Դուն **քու մօրդ** արգանդէն չելած՝ քեզ սրբացուցի, Զեզ ազգերուն մարգարէ կարգեցի»:
- 6** Այն ատեն ըսի.  
«Ո՛հ, Տէ՛ր Եհովա, ահա՛ ես խօսիլ չեմ գիտեր, Որովհետեւ <sup>բ</sup>մանուկ եմ»:
- 7** Բայց Տէրը ինծի ըսաւ.  
«Մի՛ ըսեր. “Ես մանուկ եմ□, Որովհետեւ ուր որ քեզ ղրկեմ՝ պիտի երթաս, Եւ ինչ որ քեզի հրամայեմ՝ պիտի խօսիս»:
- 8** <sup>դ</sup>Անոնցմէ մի՛ վախճար, Զանի որ ես քեզի հետ եմ՝ Զեզ ազատելու համար», կը պատգամէ Տէրը:
- 9** Յետոյ Տէրը իր ձեռքը երկարեց ու բերանիս դպաւ, Եւ Տէրը ինծի ըսաւ.  
«Ահա՛ իմ խօսքերս քու բերանդ դրի»:
- 10** Նայէ՛, ես այսօր քեզ նշանակեցի ազգերուն վրայ Եւ թագաւորութիւններուն վրայ, Որպէսզի խլես ու փլցնես, կործանես եւ քանդես, **Նաեւ** կառուցանես ու տնկես»:

ԵՐԿՈՒ ՏԵՍԻԼՆԵՐ

- 11** <sup>ե</sup>Տէրը խօսեցաւ՝ ինծի՝ ըսելով.  
«Ո՛վ Երեմիա, ի՞նչ կը տեսնես»:

---

- <sup>ա</sup> Եբբ.՝ Եհովայի խօսքը եղաւ
- <sup>բ</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ
- <sup>գ</sup> Եբբ.՝ տղայ
- <sup>դ</sup> Եբբ.՝ Անոնց երեսէն
- <sup>ե</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

Պատասխանեցի. «Նշենիի գաւազան մը կը տեսնեմ»:

12 Այն ատեն Տէրը ինձի ըսաւ. «Լա՛ւ տեսար.

Արդարեւ ես կը հսկեմ իմ խօսքիս վրայ՝ զայն իրագործելու համար»:

13 Երկրորդ անգամ ալ՝ «Տէրը խօսեցաւ» ինձի՝ ըսելով. «Ի՞նչ կը տեսնես»:

Պատասխանեցի. «Եռացող կաթսայ մը կը տեսնեմ,

Որուն երեսը դէպի հիւսիս է»:

14 Ուստի Տէրը ինձի ըսաւ.

«Չարիքը հիւսիսէն պիտի Էտարածուի

Երկրին բոլոր բնակիչներուն վրայ,

15 Զանի որ ահա՛ ես հիւսիսի թագաւորութիւններուն

Բոլոր գերդաստանները պիտի կանչեմ, – կը պատգամէ Տէրը:–

Անոնք պիտի գան եւ իւրաքանչիւրը իր գահը պիտի դնէ

Երուսաղէմի դռներուն առջեւ,

Անոր շրջակայ պարիսպներուն դիմաց,

Ու Յուդայի բոլոր քաղաքներուն դիմաց:

16 Անոնք դէմ պիտի արձակեմ իմ դատավճիռներս՝

Իրենց բոլոր չարութիւններուն համար,

Որովհետեւ անոնք զիս լքեցին,

Ուրիշ աստուածներու խունկ ծխեցին,

Իրենց ձեռքերու գործերուն երկրպագեցին:

17 Ուրեմն դուն մէ՛ջքդ կապէ, կանգնէ՛,

Եւ ըսէ՛ անոնց ամէն ինչ որ քեզի պիտի հրամայեմ.

Անոնցմէ մի՛ զարհուրիր,

Որպէսզի ես ալ քեզ անոնց առջեւ չզարհուրեցնեմ:

18 Ահա՛ այսօր ես քեզ ամբողջ երկրին դիմաց,

**Այսինքն** Յուդայի թագաւորներուն, անոր իշխանաւորներուն,

Զահանաներուն ու երկրին ժողովուրդին դիմաց,

Պարսպապատ քաղաքի պէս, երկաթէ սիւնի պէս

Եւ պղինձէ պարիսպներու պէս՝ հաստատեցի:

19 Անոնք պիտի պայքարին քեզի դէմ,

Բայց պիտի չյաղթեն քեզի.

Արդարեւ ես քեզի հետ եմ՝

Քեզ ազատելու համար», կը պատգամէ Տէրը:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ

2

«Տէրը խօսեցաւ» ինձի՝ ըսելով.

2 «Գնա՛, գոչէ՛ Երուսաղէմի ականջներուն եւ ըսէ՛.

<sup>9</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>Է</sup> Եբբ.՝ բացուի

<sup>Ը</sup> Եբբ.՝ դրի

<sup>Ս</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Տէրը սա՛ կը յայտարարէ.

“Զեզի կը յիշեցնեն երիտասարդութեանդ՝ քաղցրութիւնը  
Հարսնութեանդ սէրը,  
Երբ իմ ետեւէս կը քալէիր անապատին մէջ,  
Չսերմանուած երկրի մը մէջ:

3 Իսրայէլ Տէրոջ՝ Գընժայուած էր,

Անոր բերքերուն՝ Դերախայրիքն էր.

Բոլոր անոնք՝ որ զայն կ’ուտէին, յանցաւոր կ’ըլլային.  
Անոնց վրայ չարիք կը հասներ<sup>բ</sup>, կը պատգամէ Տէրը:

4 Տէրոջ խօսքը մտի՛կ ըրէք, ո՛վ Յակոբի տունը,  
Եւ Իսրայէլի տան բոլոր գերդաստանները».

## ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱՉԱՅՐԵՐՈՒՆ ՄԵՂԸ

5 «Տէրը սա՛ կը յայտարարէ.

“Չեր հայրերը ի՞նչ անհրաւութիւն գտան իմ վրաս՝  
Որ ինձմէ հեռացան,  
Եւ ունայնութեան հետեւելով ունայն եղան:

6 Անոնք չըսին. “Ո՞ր է Տէրը՝

Որ մեզ բարձրացուց Եգիպտոսի երկրէն,  
Որ մեզի քալել տուաւ անապատին մէջէն,  
Անբնակ ու փոսերու երկրէն,  
Չորութեան եւ մահուան շուքի երկրէն,  
Այնպիսի երկրէ մը՝ ուրկէ ո՛չ մէկը կ’անցներ,  
Ու հոն ո՛չ մէկ մարդ կը բնակէր”:

7 Ես ձեզ բարեբեր երկիր մը բերի,

Որպէսզի անոր պտուղն ու բարիքը ուտէք.  
Բայց դուք մտաք եւ իմ երկիրս՝ Եպականեցիք,  
Իմ ժառանգութիւնս գարշելի ըրիք:

8 Քահանաները չըսին. “Տէրը ո՞ր է”.

Օրէնքի վարդապետները զիս չճանչցան,  
Հովիւները ինձի դէմ ապստամբեցան.  
Մարգարէները Բահաղով մարգարէացան,  
Եւ անօգուտ բաներու հետեւեցան<sup>գ</sup>»:

## ՏԵՐՈՋ ԴԱՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԷՄ

9 «Հետեւաբար ձեզի հետ տակաւին պիտի՝ վիճիմ, – կը պատգամէ Տէրը, –

---

<sup>բ</sup> Եբբ.՝ կարեկցութիւնը

<sup>գ</sup> Եբբ.՝ սրբացուած

<sup>դ</sup> Եբբ.՝ առաջիներն

<sup>ե</sup> Եբբ.՝ անմաքուր ըրիք

<sup>զ</sup> Եբբ.՝ դատ վարեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ու ձեր որդիներուն որդիներուն հետ պիտի վիճիմ:

- 10 Արդարեւ անցէ՛ք Կիտացիներուն կղզիները եւ նայեցէ՛ք,  
**Մա՛րդ** դրկեցէք Կեդար ու լա՛ւ հասկցէք,  
եւ տեսէք թէ այսպիսի բան մը եղե՞ր է.
- 11 Միթէ ազգ մը **իր** աստուածները փոխե՞ր է,  
Թէպէտ անոնք Աստուած չէին.  
Բայց իմ ժողովուրդս իր Փառքը  
Անօգուտ **բանի** հետ փոխանակեց»:
- 12 «Ո՛վ երկինք, ապշէ՛ ասոր վրայ,  
Սահմուկէ՛ ու չափազա՛նց էսուկա, – կը պատգամէ Տէրը, –
- 13 Որովհետեւ իմ ժողովուրդս երկու չարիք գործեց.  
Ջիս՝ կեանքի ջուրին աղբիւրը՝ լքեցին,  
եւ իրենց հորեր փորեցին,  
<sup>Ը</sup>Ճեղքուած հորեր, որ չեն կրնար ջուր պահել:
- 14 Միթէ Իսրայէլ ստրո՞ւկ է, <sup>Թ</sup>ընդոծի՞ն է.  
Ինչո՞ւ կողոպտուեցաւ:
- 15 Անոր դէմ **առիւծի** կորիւնները մռնչեցին  
**եւ իրենց** ձայնը լսել տուին,  
Անոր երկիրը ամայութեան <sup>Վ</sup>վերածեցին.  
Անոր քաղաքները այրեցան, անբնակ եղան»:

## ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀԱԽՍԱՐՄՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆԸ

- 16 «Մեմփացիներուն ու Տափնացիներուն որդիներն անգամ  
**Գլուխիդ** գագաթը կոտրեցին:
- 17 Դուն քեզ ասոր **արժանի** չըրի՞ր՝  
Զու Տէր Աստուածդ լքելով,  
Երբ ան ճամբային մէջ քեզի քալել կու տար:
- 18 Հիմա դուն ի՞նչ **գործ** ունիս Եգիպտացիներուն ճամբան՝  
**Որ** Սիովրի ջուրը խմելու **կ'երթաս**.  
Կամ ի՞նչ **գործ** ունիս Ասորեստանի ճամբան՝  
**Որ Եփրատ** գետին ջուրը խմելու **կ'երթաս**:
- 19 Զու չարութիւնդ քեզ պիտի պատժէ,  
եւ ուխտադրութիւնդ քեզ պիտի յանդիմանէ:  
Պիտի գիտնաս ու տեսնես թէ գէշ եւ դառն **բան** է՝  
Որ քու Տէր Աստուածդ լքած ես,  
Ու մէջդ իմ երկիւղս չկայ»,  
Կը պատգամէ զօրքերու Տէրը՝ Եհովան:

---

<sup>Է</sup> Եբբ.՝ չորցիր

<sup>Ը</sup> Եբբ.՝ Կոտրած

<sup>Թ</sup> Եբբ.՝ ընտանիքի մէջ ծնած ստրո՞ւկ

<sup>Վ</sup> Եբբ.՝ ըրին

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՄԵՐԺԷ ՏԷՐԸ ՊԱՇՏԵԼ

- 20 «Արդարեւ քու լուծդ շատոնց <sup>հ</sup>կոտորեցիր,  
 Կապանքներդ փրցուցիր,  
 Եւ ըսիր. “Ստրուկ պիտի չըլլամ<sup>□</sup>”:  
 Ամէն բարձր բլուրի վրայ,  
 Ամէն կանաչազարդ ծառի տակ  
 Ծռեցար՝ պոռնկեցար:
- 21 Ես քեզ տնկեր էի **իրբ** ընտիր որթատունկ,  
 Ամբողջովին հարազատ սերմ.  
 Ի՞նչպէս <sup>վ</sup>վայրի որթատունկի այլասերած ճիւղերու վերածուեցար ինծի համար:
- 22 Թէեւ բորակով լուացուիս  
 Ու շատ օճառ գործածես,  
 Զու անօրէնութիւնդ առջեւս բիծի պէս կը մնայ,—  
 Կը պատգամէ Տէրը՝ Եհովան:—
- 23 Ի՞նչպէս կրնաս ըսել.  
 “Ես <sup>ի</sup>չապականեցայ,  
 Բահաղներու չհետեւեցայ<sup>□</sup>:  
 Նայէ՛ քու ճամբայիդ՝ ձորին մէջ,  
 Եւ ճանչցի՛ր ինչ որ ըրիր,  
 Ո՛վ իր ճամբաները խաչածեւող արագընթաց տաճիկ ուղտ:
- 24 Անապատի վարժուած վայրենի **մատակ** էջը,  
 Որ իր ցանկութեամբ <sup>ծ</sup>օղը կը ներծծէ,  
 Ո՞վ կրնայ <sup>կ</sup>արգիլել իր կտղուցքէն:  
 Բոլոր զայն փնտռողները չեն պարտասիր.  
 Զայն կը գտնեն իր ամսուան մէջ:
- 25 “Զգուշացի՛ր որ ոտքդ չմերկանայ ու կոկորդդ չծարաւնայ.  
 Բայց դուն կ'ըսես. “ <sup>ձ</sup>Անօգուտ է”, ո՛չ.  
 Զանի օտար **աստուածները** կը սիրեմ,  
 Եւ անոնց պիտի հետեւիմ<sup>□</sup>»:

ԻՍՐԱՅԷԼ Կ՝ԱՐԺԱՆԱՆԱՅ ՊԱՏԻԺԻ

<sup>հ</sup> Եբբ.՝ կոտորեցի, կապանքներդ փրցուցի, ու դուն ըսիր. “Օրէնքը պիտի չանտեսեմ<sup>□</sup> : Սակայն

<sup>վ</sup> Եբբ.՝ օտար

<sup>ի</sup> Եբբ.՝ անմաքուր չեղայ

<sup>կ</sup> Եբբ.՝ հովը

<sup>վ</sup> Եբբ.՝ հեռացնել

<sup>հ</sup> Եբբ.՝ Արգիլէ՛

<sup>ծ</sup> Եբբ.՝ Յոյս չկայ

- 26 «Ինչպէս գողը կ'ամչնայ՝ երբ <sup>1</sup>բռնուի,  
Այդպէս պիտի ամչնայ Իսրայէլի տունը.  
Իրենք, իրենց թագաւորները, իշխանաւորները,  
Քահանաներն ու մարգարէները,
- 27 Որոնք փայտին կ'ըսեն. «Դուն իմ հայրս ես<sup>2</sup>,  
Ու քարին. «Դո՛ւն զիս ծնար<sup>3</sup>:  
Արդարեւ ինծի՝ կռնակ դարձուցից, եւ ո՛չ թէ երես.  
Սակայն իրենց ձախորդութեան ատեն կ'ըսեն.  
«Կանգնէ՛ ու մե՛զ ազատէ<sup>4</sup>»:
- 28 Բայց ո՞ր եմ քու աստուածներդ՝ որ քեզի շինեցիր.  
Եթէ ձախորդութեանդ ատեն քեզ կրնաց ազատել, թող կանգնից.  
Արդարեւ քու աստուածներդ, ո՛վ Յուդա,  
Քու քաղաքներուդ թիւին չափ եղան»:
- 29 «Ինչո՞ւ ինծի հետ կը վիճիք.  
Դուք բոլորդ ինծի դէմ ապստամբեցաք, – կը պատգամէ Տէրը:–
- 30 Ընդունա՛յն ձեր որդիները ծեծեցի.  
Անոնք պատիժը չընդունեցին.  
Ձեր սուրը բնաջնջող առիւծի պէս  
Ձեր մարգարէները սպառեց:
- 31 Ո՛վ սերունդ, ՚նուշադրութի՛ւն դարձուցէք՝ Տէրոջ խօսքին.  
Միթէ ես Իսրայէլի համար անապա՞տ եղայ,  
Կամ մթութեան երկի՞ր մը:  
Իմ ժողովուրդս ինչո՞ւ կ'ըսէ.  
«Մենք կը տիրապետենք.  
Անգամ մըն ալ քեզի պիտի չգանք<sup>5</sup>»:
- 32 Միթէ կոյսը իր գարդերը կը մոռնա՞յ,  
Կամ հարսը՝ իր կամարը.  
Բայց իմ ժողովուրդս անթիւ օրեր զիս մոռցաւ:
- 33 Սէր փնտռելու համար՝ ինչո՞ւ ՚ճամբադ շիտակ կը ցուցնես,  
Այնպէս որ քու ճամբաներդ չար կիներուն ալ սորվեցուցիր:
- 34 Նաեւ քղանցքիդ վրայ  
Անմեղ աղքատներու անձերուն արիւնները գտնուեցան.  
Ջանոնք «գաղտնի տեղեր» չգտայ,  
Հապա այս բոլորին վրայ:
- 35 Բայց դուն կ'ըսես. «Քանի անմեղ եմ՝  
Անոր բարկութիւնը անշուշտ ինձմէ պիտի կասի<sup>6</sup>»:

<sup>1</sup> Եբբ.՝ գտնուի

<sup>2</sup> Եբբ.՝ ծոծրակ

<sup>3</sup> Եբբ.՝ նայեցէք

<sup>4</sup> Այսինքն՝ ընթացքդ

<sup>5</sup> Կամ՝ տուն ծակելու ատեն

Ահա՛ ես քեզի հետ դատ պիտի վարեմ, քանի կ'ըսես.

“Ես չմեղանջեցի<sup>ա</sup>:

**36** Ինչո՞ւ այսչափ կը թափառիս՝ ճամբադ փոխելով.

Դուն Եգիպտոսէն ալ պիտի ամչնաս,

Ինչպէս Ասորեստանէն ամչցար:

**37** Դուն ասկէ՛ ալ պիտի ելլես՝

Չեռքերդ գլուխիդ վրայ դրած,

Քանի որ Տէրը քու վստահութիւններդ մերժեց,

Եւ անոնցմով պիտի չյաջողիս»:

ԱՆՆԱԻԱՏԱՐԻՄ ԻՍՐԱՅԷԼԸ

**3**

«Կ'ըսեն. “Եթէ մարդ մը իր կինը արծակէ,

Ան ալ իր քովէն երթայ եւ ուրիշ ամուսինի մը պատկանի,

Ինք անգամ մըն ալ “այդ կնոջ” կը վերադառնա<sup>ա</sup>”:

Այդ երկիրը ամբողջովին չի՞ պղծուիր:

Իսկ դուն՝ շատ <sup>բ</sup>հոմանիներու հետ պոռնկեցար.

Սակայն ինծի՛ վերադարձիր,– կը պատգամէ Տէրը:–

**2** Աչքերդ վերցո՛ւր բլրակներուն ու նայէ՛,

Ո՞ւր <sup>գ</sup>չպոռնկեցար:

Դուն անոնց համար ճամբաներուն վրայ նստար,

Ինչպէս Արաբը՝ անապատին մէջ,

Եւ քու պոռնկութիւններովդ ու չարութեամբդ երկիրը պղծեցիր:

**3** Ուստի տարափները <sup>դ</sup>դադրեցան,

Եւ վերջին անձրեւը <sup>ե</sup>չեկաւ.

Բայց դուն պոռնիկի ճակատ ունիս,

Կը մերժես խայնիլ:

**4** Միթէ հիմա ալ զիս չե՞ս կոչեր.

“Իմ Հայրս, դուն ես իմ երիտասարդութեանս <sup>զ</sup>մտերիմը”:

**5** Միթէ յաւիտեա՞ն <sup>կ</sup>պիտի բարկանայ՝,

Կամ իր զայրոյթը ընդմիջտ պիտի պահէ:

Ահա՛ դուն այսպէս խօսեցար,

Սակայն չարիք գործեցիր՝ որչափ որ կրցար»:

<sup>ա</sup> Եբր.՝ անոր

<sup>բ</sup> Եբր.՝ բարեկամներու

<sup>գ</sup> Եբր.՝ չզուգաւորուեցար

<sup>դ</sup> Եբր.՝ արգիլուեցան

<sup>ե</sup> Եբր.՝ չեղաւ

<sup>զ</sup> Կամ՝ առաջնորդը

<sup>կ</sup> Եբր.՝ իր բարկութիւնը պիտի պահէ

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ՅՈՒՂԱ ՊԷՏՔ Է ՋՂՋԱՆ

- 6 Յովսիա թագաւորին օրերը՝ Տէրը ինծի ըսաւ.  
«Ուխտադրուժ Իսրայէլի ըրածը տեսա՞ր.  
Ամէն բարձր լերան վրայ  
Եւ ամէն կանաչազարդ ծառի տակ գնաց,  
Ու հոն պոռնկեցաւ:
- 7 Երբ այս բոլորը ըրաւ՝  
Ըսի. «Ինծի՛ վերադարձիր<sup>Բ</sup>, բայց չվերադարձաւ.  
Եւ անոր անհաւատարիմ քոյրը՝ Յուդա **ասիկա** տեսաւ:
- 8 Երբ ուխտադրուժ Իսրայէլի շնութիւն ընելուն պատճառով  
Ջայն արձակեցի եւ անոր տուի ամուսնալուծումի վկայագիրը,  
Տեսայ թէ անոր անհաւատարիմ քոյրը՝ Յուդա չվախցաւ,  
Հապա գնաց եւ ինք ալ պոռնկեցաւ:
- 9 Ան իր աղմկայոյզ պոռնկութեամբ երկիրը պղծեց,  
Քանի քարի ու փայտի հետ շնութիւն ըրաւ:
- 10 Հակառակ այս բոլորին, անոր անհաւատարիմ քոյրը՝ Յուդա **ալ**  
Ամբողջ սիրտով ինծի չվերադարձաւ,  
Հապա՝ կեղծաւորութեամբ», կը պատգամէ Տէրը:
- 11 Տէրը ինծի ըսաւ.  
«Ուխտադրուժ Իսրայէլը ինքզինք անելի արդարացուց՝ քան անհաւատարիմ Յուդան:
- 12 Գնա՛, սա՛ խօսքերը <sup>Բ</sup>արտասանէ դէպի հիւսիս.  
«Վերադարձի՛ր, ո՛վ ուխտադրուժ Իսրայէլ ,– կը պատգամէ Տէրը.–  
Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր,  
Քանի որ ես կարեկից եմ,– կը պատգամէ Տէրը,–  
Յաւիտեան **գայրոյթ** չեմ պահեր:
- 13 Միայն թէ գիտակցի՛ր անօրէնութեանդ,  
Քանի քու Տէր Աստուծոյդ դէմ ապստամբեցար.  
Ամէն կանաչազարդ ծառի տակ  
Քու ճամբաներդ դէպի օտար **աստուածները** տարածեցիր,  
Եւ իմ խօսքս մտիկ չըրիր,– կը պատգամէ Տէրը:–
- 14 Վերադարձէ՛ք, ո՛վ ուխտադրուժ որդիներ,– կը պատգամէ Տէրը,–  
Որովհետեւ ե՛ս եմ ձեր տէրը.  
Չեզ պիտի առնեմ, քաղաքէ մը՝ մէկ **հոգի**,  
Գերդաստանէ մը՝ երկու **հոգի**,  
Ու ձեզ Սիոն պիտի բերեմ:
- 15 Իմ սիրտիս համաձայն հովիւներ պիտի տամ ձեզի,  
Որոնք գիտութեամբ եւ ուշիմութեամբ պիտի հովուեն ձեզ:
- 16 Երբ դուք այդ օրերը երկրին վրայ բազմանաք եւ աճիք,– կը պատգամէ Տէրը,–  
Անգամ մըն ալ պիտի չըսեն. «Տէրոջ ուխտին տապանակը»:  
Ան <sup>Բ</sup>պիտի չմտաբերուի՝»

<sup>Բ</sup> Եբբ.՝ յայտարարէ

<sup>Բ</sup> Եբբ.՝ մարդուս սիրտին մէջ պիտի չբարձրանան

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ու գայն պիտի չյիշեն.

**Զայն** աչքէ պիտի չանցընեն,

**Եւ** անգամ մըն ալ պիտի չշինուի:

**17** Այն ատեն Երուսաղէմը պիտի կոչեն. "Տէրոջ գահը",  
Ու բոլոր ազգերը հոն՝ Երուսաղէմ պիտի հաւաքուին, Տէրոջ անունին համար.  
Անգամ մըն ալ իրենց չար սիրտին կամակորուրթեան պիտի չհետեւին:

**18** Այդ օրերը Յուդայի տունը  
Իսրայէլի տան հետ պիտի ընթանայ,  
Ու **երկուքը** միասին հիւսիսի երկրէն  
Պիտի գան այն երկիրը՝ որ փրկենց հայրերուն ժառանգել տուի□»:

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿՈԱՊԱԾՏՈՒԹԻՒՆԸ

**19** «Ես ըսի. "Ի՛նչպէս կ'ուզեմ՝ քեզ որդիներուն մէջ դնել,  
Ու քեզի տալ **այդ** ցանկալի երկիրը,  
Ազգերուն ամենէն փառաւոր ժառանգութիւնը□:  
Նաեւ ըսի. "Զիս պիտի կոչես. "Իմ հա՛յրս",  
Եւ ինձմէ պիտի չհեռանաս□:

**20** "Ի՛րապէս, ո՛վ Իսրայէլի տունը,  
Ինչպէս կին մը իր <sup>հ</sup>սիրականին անհաւատարիմ կ'ըլլայ,  
Այնպէս ալ դուք ինձի անհաւատարիմ եղաք□, կը պատգամէ Տէրը»:

**21** Բլրակներուն վրայ ձայն մը լսուեցաւ,  
Իսրայէլի որդիներուն լացի **եւ** աղաչանքի **ձայնը**.  
Արդարեւ անոնք իրենց ճամբան ծռեցին,  
Տէրը՝ իրենց Աստուածը մոռցան:

**22** «Ո՛վ ուխտադրուժ որդիներ, վերադարձէ՛ք,  
Ես ձեր ուխտադրութիւնները պիտի բուժեմ»:  
«Ահա՛ մենք քեզի կու գանք,  
Քանի որ դո՛ւն ես Տէրը՝ մեր Աստուածը.

**23** Ի՛րապէս բլուրներու  
Եւ լեռներու բազմութեան **յուսալը** ընդունայն է:  
Ի՛րապէս Իսրայէլի փրկութիւնը Տէրոջմէն՝ մեր Աստուծմէն է.

**24** Սակայն մեր երիտասարդութենէն ի վեր ամօթը սպառեց մեր հայրերուն վաստակը,  
Անոնց ոչխարները եւ արջառները,  
Անոնց որդիներն ու աղջիկները:

**25** Մեր ամօթով կը պառկինք,  
Մեր նախատինքը մեզ կը ծածկէ.  
Արդարեւ մեր երիտասարդութենէն մինչեւ այսօր  
Թէ՛ մենք եւ թէ՛ մեր հայրերը  
Տէրոջ՝ մեր Աստուծոյն դէմ մեղանջեցինք,  
Ու Տէրոջ՝ մեր Աստուծոյն ձայնը մտիկ չըրինք»:

<sup>ժ</sup> Եբր.՝ ձեր

<sup>հ</sup> Եբր.՝ բարեկամին

4

«Եթէ վերադառնաս, ո՛վ Իսրայէլ,– կը պատգամէ Տէրը,–  
Ինծի՛ վերադարձիր.

Եթէ քու պղծութիւններդ իմ առջեւէս հեռացնես,  
Ա՛յ թափառական պիտի չըլլաս:

2 Եթէ ճշմարտութեամբ, իրաւունքով եւ արդարութեամբ  
Երդում ընես. “Տէրը կ’ապրի□,  
Ազգերը անով պիտի օրհնուին  
Ու անով պիտի պարծենան»:

3 Արդարեւ Տէրը Յուդայի ու Երուսաղէմի մարդոց սա՛ կը յայտարարէ.  
«Ձեր խոպան հողե՛րը մշակեցէք,  
Եւ փուշերու մէջ մի՛ սերմանէք:

4 Ո՛վ Յուդայի մարդիկ ու Երուսաղէմի բնակիչներ,  
Տէրո՛ջ համար թլփատուեցէք  
Եւ ձեր սիրտի՛ն թլիփը հանեցէք,  
Որպէսզի իմ ցասումս ձեր չար արարքներուն “պատճառով  
Կրակի պէս<sup>բ</sup> չպոռթկայ ու չայրէ, եւ մարող մը չըլլայ»:

ՅՈՒԴԱ ԳՐԱԻՈՒՄԻ ՄՊԱՌՆԱԼԻՔԻՆ ՏԱԿ

5 «Յուդայի մէջ յայտարարեցէ՛ք,  
Երուսաղէմի մէջ<sup>գ</sup> ծանուցանեցէ՛ք եւ ըսէ՛ք.  
Երկրի՛ն մէջ շեփո՛ր հնչեցուցէք,  
Պարծրածա՛յն գոչեցէք եւ ըսէ՛ք.  
“Հաւաքուեցէ՛ք, ու մտնե՛նք պարսպապատ քաղաքները:

6 Դրօշա՛կ բարձրացուցէք դէպի Սիոն,  
Փախէ՛ք, մի՛ կայնիք.  
Որովհետեւ ես չարիք ու մեծ փլուզում պիտի բերեմ հիւսիսէն□:

7 Առիւծը իր թաւուտէն ելաւ,  
Ազգերը բնաջնջողը մեկնեցաւ,  
Իր տեղէն ելաւ՝ որպէսզի քու երկիրդ ամայի լդարձնէ.  
Քաղաքներդ պիտի անբուին,  
Եւ անոնց մէջ բնակիչ պիտի չըլլայ:

8 Հետեւաբար «քո՛ւրձ հագէք”:

<sup>ա</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>բ</sup> Եբբ.՝ դուրս չելլէ

<sup>գ</sup> Եբբ.՝ լսել տուէք

<sup>դ</sup> Եբբ.՝ Լմա՛ն

<sup>ե</sup> Եբբ.՝ ընէ

<sup>զ</sup> Եբբ.՝ քործո՛վ գօտեւորուեցէք

Հեծեծեցէ՛ք ու գոռացէ՛ք,  
Որովհետեւ Տէրոջ բորբոքած բարկութիւնը մեզմէ չի հեռանար»:

9 «Այդ օրը,– կը պատգամէ Տէրը,–  
Թագաւորին սիրտը եւ իշխանաւորներուն սիրտը պիտի <sup>է</sup>հալի.  
Քահանաները պիտի ապշին,  
Մարգարէները պիտի զարմանան»:

10 Այն ատեն ըսի.  
«Ո՛հ, Տէ՛ր Եհովա,  
Ի՛րապէս դուն այս ժողովուրդն ու Երուսաղէմը մեծապէս հրապուրեցիր՝ ըսելով.  
“Չեզի խաղաղութիւն պիտի ըլլայ».

Մինչդեռ սուրը մինչեւ **անոնց** անձը հասաւ»:

11 Այն ատեն այս ժողովուրդին ու Երուսաղէմին պիտի ըսուի.  
«Այրող հով մը անապատին բլրակներէն **կը փչէ**  
Իմ ժողովուրդիս աղջիկին ճամբային մէջ,  
Ո՛չ թէ հոսելու համար, ո՛չ ալ մաքրելու համար:

12 <sup>Ը</sup>Ասկէ սաստիկ հով մը ինձմէ պիտի գայ՝.  
Հիմա ես ալ անոնց դէմ դատավճիռներ պիտի արձակեմ»:

**ՅՈՒԴԱ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՎ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ**

13 Ահա՛ անիկա ամպերու պէս պիտի <sup>Բ</sup>արշաւէ,  
Եւ անոր կառքերը՝ փոթորիկի պէս.  
Անոր ձիերը արծիւներէն աւելի արագընթաց են.  
Վա՛յ մեզի, քանի որ պիտի բնաջնջուինք:

14 Ո՛վ Երուսաղէմ, լուա՛ սիրտդ չարութենէն,  
Որպէսզի փրկուիս.  
Մինչեւ ե՞րբ չար մտածումներդ քու մէջդ պիտի <sup>Ժ</sup>մնան:

15 Արդարեւ ձայն մը Դանէն կը յայտարարէ,  
Եփրեմի լեռնէն պատուհաս կը ծանուցանէ:

16 **Սա՛**<sup>Ի</sup> գիտցուցէ՛ք ազգերուն,  
՝Եւ իմացուցէ՛ք՝ Երուսաղէմի.  
«Հեռաւոր երկրէ պաշարողներ կու գան,  
Յուդայի քաղաքներուն դէմ իրենց ձայնը **լսել** կու տան:

17 Արտի պահապաններու պէս զայն պիտի շրջապատեն,  
Որովհետեւ ան ինձի դէմ ընդվզեցաւ,– կը պատգամէ Տէրը:–

---

<sup>է</sup> Եբբ.՝ կորսուի  
<sup>Ը</sup> Կամ՝ Սաստիկ հով մը ասկէ պիտի գայ ինձի  
<sup>Բ</sup> Եբբ.՝ բարձրանայ  
<sup>Ժ</sup> Եբբ.՝ գիշերեն  
<sup>Ի</sup> Եբբ.՝ յիշեցուցէ՛ք  
<sup>Լ</sup> Եբբ.՝ Ահա՛ լսել տուէք

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 18 Զու՞ ընթացքդ եւ արարքներդ քեզ ասոց **արժանի** ըրին.  
Ասիկա քու չարութեանդ **պտուղն** է. արդարեւ դառն է,  
Ու մինչեւ քու սիրտդ կը հասնի»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ՎԻՇՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՆԱՄԱՐ

- 19 «Ընդե՛րքս, ընդե՛րքս. **մինչեւ** սիրտիս՝ շտեմարանները՝ ցաւ կը զգամ՝:  
Սիրտս իմ ներսս կ'ալեկոծի, չեմ **կրնար** լռել,  
Զանի դուն, ո՛վ իմ անձս, լսեցիր շեփոփին ձայնը  
Եւ պատերազմին գոչիւնը:  
20 «Փլուզում փլուզումի վրայ՝ կը յայտարարուի,  
Որովհետեւ ամբողջ երկիրը կործանեցաւ.  
Վրաններս յանկարծ կործանեցան,  
Ու խորաններս՝ վայրկենապէս.  
21 Մինչեւ ե՞րբ դրօշակը պիտի տեսնեմ  
Եւ շեփոփին ձայնը պիտի լսեմ:  
22 Արդարեւ իմ ժողովուրդս յիմար է, զիս չճանչցան.  
Անոնք անմիտ որդիներ են,  
Անոնց քով խելք չկայ.  
Անոնք չարիք ընելու համար իմաստուն են,  
Բայց բարիք ընել չեն գիտեր»:

## ԳԱԼԻՔ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՆ ՏԵՍԻԼԸԸ

- 23 Երկրի նայեցայ, եւ ահա՛ ամայի ու դատարկ էր.  
Երկինքին **նայեցայ**, եւ անոր լոյսը չկար:  
24 Լեռներուն նայեցայ, եւ ահա՛ կը ցնցուէին,  
Ու բոլոր բլուրները կ'երերային:  
25 Նայեցայ, եւ ահա՛ մարդ չկար,  
Ու երկինքի բոլոր թռչունները փախած էին:  
26 Նայեցայ, եւ ահա՛ բարեբեր **արտը** անապատ եղած էր,  
Անոր բոլոր քաղաքները փլած էին Տէրոջ ներկայութենէն,  
Անոր բորբոքած բարկութեան ձառքել:  
27 Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ամբողջ երկիրը պիտի աւերուի,  
Բայց ամբողջովին **ամայի** պիտի չընեմ:  
28 Ասոր համար երկիրը պիտի սգայ,

<sup>18</sup> Եբբ.՝ ճամբաներդ

<sup>19</sup> Եբբ.՝ պատերը

<sup>4</sup> Եբբ.՝ երկունքի ցաւ կը քաշեմ

<sup>6</sup> Եբբ.՝ Վարագոյրներս

<sup>8</sup> Եբբ.՝ երեսէն

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ու վերէն երկինքը պիտի մթափնի.

Զանի ես ըսի **եւ** որոշեցի,

Պիտի չզղջամ, անկէ՞ պիտի չհրաժարիմ՞»:

**29** Չիաւորներուն եւ աղեղնաւորներուն աղմուկէն  
«Ամէն քաղաք՝ պիտի փախչի:

Անոնք թանձրախիտ **անտառներու** մէջ պիտի մտնեն,

Ապառաժներու վրայ պիտի մագլցին:

Բոլոր քաղաքները պիտի լքուին,

Ո՛չ մէկ մարդ պիտի բնակի անոնց մէջ:

**30** Իսկ դո՛ւն, ո՛վ կործանուած, ի՞նչ պիտի ընես.

Թէեւ՝ կարմիր հագնիս,

Զեզ ոսկի զարդերով զարդարես,

Եւ՝ աչքերուդ վրայ շատ ծարոյր դնես՝,

Ընդունայն դուն քեզ կը գեղեցկացնես:

**Զու** սիրահարներդ քեզ՝ մերժեցին **եւ** կեանքդ կը փնտռեն:

**31** Որովհետեւ ձայն մը լսեցի՝ երկնող **կնոջ մը ձայնի**ն պէս,

Իր անդրանիկը ծնանողին տագնապի **ձայնի**ն պէս.

Սիոնի աղջիկին ձայնն **է, որ** կը հառաչէ ու ձեռքերը տարածելով՝ **կ'ըսէ.**

«Վա՛յ ինձի,

Զանի որ սպանողներուն առջեւ անձս պարտասած է□»:

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՂԸ

### 5

«Շրջագայեցէ՛ք Երուսաղէմի փողոցներուն մէջ,

Նայեցէ՛ք ու գիտցէ՛ք,

Փնտռեցէ՛ք անոր հրապարակներուն մէջ.

Եթէ մարդ մը գտնէք,

Եթէ իրաւունքը կիրարկող, հաւատարմութիւն փնտռող մը ըլլայ,

Ես այդ **քաղաքին** կը ներեմ:

**2** Թէեւ կ'ըսեն. «Տէրը կ'ապրի□,

Անտարակոյս սուտ երդում կ'ընեն»:

**3** Ո՛վ Տէր, միթէ քու աչքերդ հաւատարմութեան չե՞ն **ճայիր.**

Զանոնք ծեծեցիր, բայց **բ**ցաւ չզգացին՞.

---

<sup>1</sup> **Եբր.**՝ ետ պիտի չդառնամ

<sup>2</sup> **Կամ**՝ Ամբողջ քաղաքը

<sup>3</sup> **Այսինքն**՝ կրկնակի կարմիրով ներկուած կերպասէ հագուստ

<sup>4</sup> **Եբր.**՝ աչքերդ ծարոյրով պատռես

<sup>5</sup> **Կամ**՝ անարգեցին

<sup>6</sup> **Եբր.**՝ կեղծ

<sup>7</sup> **Եբր.**՝ երկունքի ցաւ չքաշեցին

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ջանոնք սպառեցիր, **բայց** մերժեցին պատիժը ընդունիլ:  
Իրենց երեսը ժայռէն անելի կարծրացուցին,  
Ու մերժեցին դարձի գալ:

**4** Ուստի ըսի. «Ի՛րապէս ասոնք <sup>4</sup>թշուառականներ են.

Խենթ են, քանի որ Տէրոջ ճամբան՝  
Իրենց Աստուծոյն կանոնը չեն գիտեր:

**5** Ես մեծերուն պիտի երթամ

Եւ անոնց հետ խօսիմ,  
Որովհետեւ իրենք գիտեն Տէրոջ ճամբան,  
Եւ իրենց Աստուծոյն կանոնը»:

Բայց **ահա՛** ասոնք <sup>7</sup>բոլորն ալ՝ լուծը կոտրեցին,  
Կապերը փրցուցին:

**6** Հետեւաբար անտառին առիւծը պիտի <sup>5</sup>մեռցնէ զիրենք,  
<sup>6</sup>Անապատներուն գայլը պիտի բնաջնջէ զիրենք.

Ինձը պիտի հսկէ իրենց քաղաքներուն վրայ,  
Ո՛վ որ անոնցմէ դուրս ելլէ՝ պիտի բզքտուի.  
Քանի որ իրենց յանցանքները շատցան,  
Եւ իրենց ուխտադրժութիւնները բազմացան:

**7** «Ասոր համար ի՞նչ պէս քեզի ներեմ.

Քու որդիներդ զիս լքեցին,  
Ու չաստուածներով երդում ըրին:  
Երբ զանոնք կշտացուցի, շնութիւն ըրին  
Եւ պոռնկատունը խմբաւորուեցան:

**8** **Լաւ** կերակրուած ձիերու **պէս** կը վազվռտեն,  
Ամէն մարդ իր ընկերին կնոջ կը վրնջէ:

**9** Միթէ ասոնց համար պիտի <sup>5</sup>չպատժե՞մ **զանոնք**, – կը պատգամէ Տէրը, –  
Կամ այսպիսի ազգէ մը իմ անձս վրէժ պիտի չառնէ՞:

**10** Ելէ՛ք անոր պարիսպներուն վրայ ու քանդեցէ՛ք,

Բայց ո՛չ ամբողջովին:  
Հանեցէ՛ք անոր <sup>2</sup>ուռերը,  
Որովհետեւ անոնք Տէրոջ չեն **պատկանիր**:

**11** Արդարեւ Իսրայէլի տունը եւ Յուդայի տունը  
Ինձի յոյժ անհաւատարիմ եղան», կը պատգամէ Տէրը:

## ՏԷՐԸ ԿԸ ՄԵՐԺԷ ԻՍՐԱՅԷԼԸ

---

<sup>4</sup> Եբբ.՝ ցած

<sup>7</sup> Եբբ.՝ բոլորովին

<sup>5</sup> Եբբ.՝ զարնէ

<sup>6</sup> Կամ՝ իրիկուան

<sup>5</sup> Եբբ.՝ չհատուցանե՞մ

<sup>2</sup> Կամ՝ մարտկոցները

- 12 Անոնք Տէրը ուրացան եւ ըսին. «<sup>բ</sup>Ինք չէ՛»,  
Ու մեր վրայ չարիք պիտի չգայ.  
Ո՛չ սուր պիտի տեսնենք, ո՛չ սով:
- 13 Մարգարէները հովի պէս են,  
Անոնց **բերանը Տէրոջ** խօսքը չկայ.  
Այդպէս պիտի ըլլայ անոնց»:
- 14 Հետեւաբար սա՛կը յայտարարէ Տէրը՝ զօրքերու Աստուածը.  
«Քանի դուք այս խօսքը ըսիք,  
Ահա՛ ես իմ խօսքերս քու բերանիդ մէջ կրակ պիտի ընեմ  
եւ այս ժողովուրդը՝ փայտ,  
եւ գանոնք պիտի սպառէ:
- 15 Ահա՛ ես հեռուէն ձեզի դեմ ազգ մը կը բերեմ,  
Ո՛վ Իսրայէլի տունը,– կը պատգամէ Տէրը.–  
Ան <sup>գ</sup>զօրաւոր ազգ է,  
Ան <sup>հ</sup>հին ազգ է,  
Ազգ մը՝ որուն լեզուն չես գիտեր  
Ու խօսածը չես հասկնար:
- 16 Անոնց կապարճը բաց գերեզմանի պէս է.  
Բոլորն ալ զօրաւոր **մարդիկ** են:
- 17 Զու հունձքդ անիկա՛ պիտի ուտէ,  
Զու որդիներուդ եւ աղջիկներուդ ուտելիք հացը:  
Զու ոչխարներդ եւ արջառներդ պիտի ուտէ,  
Զու որթատունկերդ ու թզենիներդ պիտի ուտէ,  
Զու պարսպապատ քաղաքներդ՝ որոնց <sup>լ</sup>ապաւինած ես,  
Սուրով պիտի <sup>խ</sup>կործանէ:
- 18 Բայց այդ օրերն ալ,– կը պատգամէ Տէրը,–  
Չեզ պիտի <sup>ծ</sup>չքնաջնջեմ:
- 19 Եթէ ըսէք.  
“Ի՞նչ պատճառով Տէրը՛ մեր Աստուածը՛ այս բոլորը ըրաւ մեզի□,  
Դուն անոնց պատասխանէ՛.  
“Ինչպէս դուք զիս լքեցիք  
Ու ձեր երկրին մէջ օտար աստուածներու <sup>կ</sup>ծառայեցիք,  
Այնպէս ալ ձերը չեղած երկրի մը մէջ

<sup>բ</sup> Կամ՝ Ան գոյութիւն չունի

<sup>գ</sup> Եբբ.՝ տոկուն

<sup>հ</sup> Եբբ.՝ հնադարեան

<sup>լ</sup> Եբբ.՝ վստահած

<sup>խ</sup> Եբբ.՝ թշուառացնէ

<sup>ծ</sup> Եբբ.՝ չսպառեմ

<sup>կ</sup> Այսինքն՝ պաշտեցիք

Օտարներու պիտի ծառայէք<sup>□</sup>»:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

- 20 Յակոբի տան մէջ սա՛ յայտարարեցէք,  
Ու Յուդայի մէջ՝ ծանուցանելով՝ ըսէ՛ք.
- 21 «Հիմա սա՛ մտիկ ըրէք,  
Ո՛վ անմիտ եւ ծանխելք ժողովուրդ,  
Որ աչքեր ունիք՝ բայց չէք տեսներ,  
Ականջներ ունիք՝ բայց չէք լսեր:
- 22 Պիտի չվախնա՞ք ինձմէ,– կը պատգամէ Տէրը,–  
Պիտի չսարսափի՞ք իմ առջեւ.  
Ե՛ս յաւիտենական կանոնով մը ծովուն սահման դրի աւազը,  
Եւ անկէ չ՛անցնիր.  
Անոր ալիքները կը ՚փրփրին, բայց չեն կրնար յաղթել.  
Անոնք կը գռռան, սակայն անկէ չեն կրնար անցնիլ:
- 23 Իսկ այս ժողովուրդը ապստամբ եւ անհնազանդ սիրտ մը ունի,  
Իրենց ճամբայէն շեղեցան ու գացին,
- 24 Եւ իրենց սիրտին մէջ չըսին.  
“Տէրոջմէն՝ մեր Աստուծմէն վախնանք,  
Որ տեղատարափը, առաջին անձրեւն ու վերջին անձրեւը իր ատենին կու տայ,  
Եւ հունձքի համար որոշուած շաբաթները մեզի կը պահէ<sup>□</sup>»:
- 25 Ձեր անօրէնութիւնները հեռացուցին ասոնք.  
Ձեր մեղքերը ձեզմէ կասեցուցին բարիքը:
- 26 Արդարեւ ամբարիշտներ՝ գտնուեցան իմ ժողովուրդիս մէջ.  
Անոնք կծկուած թռչնորսներու պէս կը դիտեն,  
Որոգայթ կը լարեն, մարդիկ կը բռնեն:
- 27 Ինչպէս վանդակը թռչուններով լեցուն է,  
Այնպէս անոնց տուները խաբէութեամբ լեցուն են.  
Հետեւաբար անոնք մեծցան ու հարստացան,
- 28 Պարարտացան, փայլեցան,  
Եւ չարերուն արարքներն ալ գլեցին անցան:  
Անոնք դատը չեն պաշտպաներ,  
Որքին դատը.  
(Սակայն կը յաջողին.)  
Աղքատին իրաւունքը չեն ՚պաշտպաներ:
- 29 Միթէ ասոնց համար պիտի ՚չպատժե՞մ զանոնք,– կը պատգամէ Տէրը,–

<sup>□</sup> Եբր.՝ լսել տալով

<sup>ծ</sup> Եբր.՝ անսիրտ

<sup>փ</sup> Եբր.՝ տատանին

<sup>գ</sup> Եբր.՝ դատեր

<sup>ւ</sup> Եբր.՝ չհատուցանե՞մ

Կամ այսպիսի ազգէ մը իմ անձս վրէժ պիտի չառնէ՞:

- 30 Երկրին մէջ ապշեցուցիչ ու քստմնելի բան կ'ըլլայ.
- 31 Մարգարէները յսուտ մարգարէութիւն կ'ընեն,  
Զահանաները անոնց <sup>Գ</sup>միջոցով կը տիրապետեն:  
Իմ ժողովուրդս ասիկա կը սիրէ.  
Բայց ի՞նչ պիտի ընէք, **երբ** ասոնց վախճանը **հասնի**»:

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԷ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ

6

Ո՛վ Բենիամինի որդիներ, փախէ՛ք Երուսաղէմի մէջէն,  
Շեփո՛ր հնչեցուցէք Թեկուէի մէջ,  
«Թանձր մո՛ւխ» բարձրացուցէք Բեթաքարմայի վրայ.

Որովհետեւ հիւսիսէն չարիք կ'երեւնայ, ու մեծ փլուզում:

- 2 Սիոնի աղջիկը <sup>Բ</sup>գեղեցիկ ու քնքուշ կնոջ մը նմանցուցի.
- 3 Հովիւները եւ անոնց հօտերը անոր պիտի երթան,  
Անոր դիմացը վրաններ պիտի <sup>Գ</sup>լարեն՝ բոլորաձեւ,  
Իւրաքանչիւրը իր տեղին մէջ պիտի <sup>Դ</sup>արածի:
- 4 «Անոր դէմ պատերա՛զմ <sup>Ե</sup>պատրաստեցէք.  
Ոտքի՛ ելէք, ու կէսօրի՛ն բարձրանանք.  
Վա՛յ մեզի, որովհետեւ օրը կը <sup>Զ</sup>մթննայ,  
Եւ իրիկուան ստուերները կ'երկարին»:
- 5 «Ոտքի՛ ելէք, գիշերը բարձրանանք,  
Ու քանդենք անոր պալատները»:
- 6 Արդարեւ զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ծառեր կտրեցէք եւ հողաբլուր բարձրացուցէք Երուսաղէմի դիմաց:  
Ասիկա <sup>Է</sup>պատժուելու արժանի՝ քաղաք մըն է,  
Ամէնուրեք հարստահարութիւն կայ անոր մէջ:
- 7 Ինչպէս <sup>Ը</sup>աղբիւրը կը <sup>Թ</sup>բխեցնէ իր ջուրերը,

---

- <sup>1</sup> Եբր.՝ կեղծ
- <sup>Գ</sup> Եբր.՝ ձեռքերով
- <sup>Դ</sup> Եբր.՝ Բարձրացող նշան
- <sup>Ե</sup> Եբր.՝ վայելուչ
- <sup>Զ</sup> Եբր.՝ զարնեն
- <sup>Է</sup> Կամ՝ հովուէ
- <sup>Ը</sup> Եբր.՝ սրբացուցէք
- <sup>Թ</sup> Եբր.՝ դառնայ
- <sup>Ժ</sup> Կամ՝ հատուցանուելու արժանի
- <sup>Ի</sup> Եբր.՝ ջրամբարը, կամ՝ ջրհորը

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Այնպէս ալ ան ժկ'արտաբերէ իր չարութիւնը:  
Անոր մէջ բռնութեան ու կործանումի ժխոր կը լսուի.  
Իմ առջեւ շարունակ ՚կսկիծներ եւ ՚վէրքեր կան:

8 Ո՛վ Երուսաղէմ, խրատուէ՛,  
Որպէսզի իմ անձս քեզմէ չզատուի,  
Ու քեզ ամայի եւ անբնակ երկրի մը ՚չվերածեմ»:

## ԱՊՍՏԱՄԲ ԻՍՐԱՅԷԼԸ

9 Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Իսրայէլի մնացորդը ծայգիի պէս  
Բոլորովին ճռաքաղ պիտի ընեն.  
Քու ձեռքդ կողովներուն դարձուր՝ կթողի պէս»:

10 Որո՞ւ խօսիմ, ո՞վ վկայ կանչեմ, որ լսեն.  
Ահա՛ անոնց ականջները անթլփատ են,  
Ու չեն կրնար ուշադիր ըլլալ:  
Ահա՛ Տէրոջ խօսքը անոնց առջեւ նախատուեցաւ.  
Անկէ չեն ախորժիր:

11 Ուստի ես Տէրոջ ցասումով լեցուած եմ.  
**Զայն մէջս** ՚պահելէն հիւծեցայ:  
«**Զայն** ՚թափէ՛ երախաներուն վրայ՝ փողոցը,  
Նաեւ երիտասարդներուն խորհրդածողովին վրայ,  
Քանի որ ամուսինը եւ կինը,  
Ծերն ու ծտարիքաւորը պիտի բռնուին.

12 Անոնց տուները ուրիշներուն պիտի փոխանցուին՝  
Իրենց արտերուն եւ կիներուն հետ,  
Որովհետեւ երկրին բնակիչներուն վրայ  
Իմ ձեռքս պիտի երկարեմ, – կը պատգամէ Տէրը:–

13 Արդարեւ անոնց պզտիկէն մինչեւ մեծը՝  
Բոլորը ազահուրթեան **անձնատուր** են,

---

<sup>բ</sup> Եբբ.՝ փորէ

<sup>ժ</sup> Եբբ.՝ կը փորէ

<sup>ի</sup> Կամ՝ հիւանդութիւններ

<sup>լ</sup> Եբբ.՝ հարուածներ

<sup>խ</sup> Եբբ.՝ չընեն

<sup>ծ</sup> Եբբ.՝ որթատունկի

<sup>կ</sup> Եբբ.՝ պարունակելէն

<sup>հ</sup> Կամ՝ պիտի թափեմ

<sup>ձ</sup> Եբբ.՝ օրերը լեցուածը

Ու մարգարէէն մինչեւ քահանան՝

Բոլորը կեղծիքով կը վարուին:

14 Իմ ժողովուրդիս աղջիկին <sup>ն</sup>վերքը հարեւանցի բուժելով՝ կ'ըսեն.

“Խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն□,

Մինչդեռ խաղաղութիւն չկայ:

15 Միթէ իրենց գարշութիւն գործած ատենը կ'ամչնա՞ն.

Բնա՛ւ չեն ամչնար,

Եւ խպնիլ չեն գիտեր:

Հետեւաբար ինկողներուն հետ պիտի իյնան,

Զիրենք <sup>6</sup>պատժած ատենս պիտի գայթին», կը յայտարարէ Տէրը:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՄԵՐԺԷ ԱՍՏՈՒԾՈՅ ՃԱՄԲԱՆ

16 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Կայնեցէ՛ք ճամբաներուն վրայ ու նայեցէ՛ք,

Հարցուցէ՛ք հնադարեան շաւիղներուն մասին՝

Թէ ո՛րն է բարօրութեան ճամբան,

Եւ քալեցէ՛ք անոր մէջէն,

Որպէսզի հանգիստ գտնէք ձեր անձերուն:

Բայց անոնք պատասխանեցին. **“Անոր մէջէն պիտի չքալենք□:**

17 Նաեւ դէտեր նշանակեցի ձեր վրայ՝ **պատուիրելով.**

“Ուշադի՛ր եղէք շեփորի ձայնին□.

Բայց անոնք պատասխանեցին. “Ուշադիր պիտի չըլլանք□:

18 Ուրեմն, ո՛վ ազգեր, լսեցէ՛ք.

Ո՛վ համայնք, գիտցի՛ր անոնց մէջ եղածը:

19 Լսէ՛, ո՛վ երկիր.

Ահա՛ ես այս ժողովուրդին վրայ չարիք պիտի բերեմ՝

Իրենց մտածումներուն պտուղը,

Որովհետեւ իմ խօսքերուս ուշադիր չեղան,

Եւ օրէնքս ալ մերժեցին:

20 Ինչո՞ւ ինձի Սաբայէն կնդրուկ գայ,

Ու հեռաւոր երկրէ՝ <sup>մ</sup>հոտաւէտ խունկեղէգ.

Ձեր ողջակէզները <sup>լ</sup>ընդունելի չեն,

Եւ ձեր զոհերը ինձի հաճելի չեն:

21 Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ.

“Ահա՛ ես այս ժողովուրդին առջեւ խոչընդոտներ պիտի դնեմ,

Որոնց զարնուելով՝ հայրերն ու որդիները միասին պիտի գայթին,

Դրացին եւ իր բարեկամը պիտի կորսուին□»:

<sup>ն</sup> Եբբ.՝ բեկումը

<sup>6</sup> Եբբ.՝ հատուցանած

<sup>մ</sup> Եբբ.՝ լաւորակ

<sup>լ</sup> Եբբ.՝ հաւանելի

- 22 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ հիւսիսի երկրէն ժողովուրդ մը կու գայ,  
Ու երկրի <sup>6</sup>ծայրերէն մեծ ազգ մը <sup>2</sup>կ'արշաւէ:
- 23 Անոնք աղեղ ու տէգ կը բռնեն,  
Անգութ եւ անողորմ են.  
Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ:  
Անոնք ձիերու վրայ հեծած են,  
Ու պատերազմիկի պէս  
Քեզի դէմ կը շարուին, ո՛վ Սիոնի աղջիկ»:
- 24 Երբ անոր համբաւը լսեցինք՝  
Մեր ձեռքերը թուլցան.  
Տագնապը մեզ համակեց՝  
Ծննդաբերող կնոջ երկունքի ցաւին պէս:
- 25 Դուրս մի՛ ելլէք դէպի արտերը, ու ճամբաներէն մի՛ երթաք,  
Որովհետեւ ամէն կողմ թշնամիին սուրը եւ արհաւիրք կայ:
- 26 Ո՛վ իմ ժողովուրդիս աղջիկը, "քո՛ւրձ հագիր",  
Մոխիրի՛ մէջ թաւալէ,  
Եւ լա՛ց դառնագին կոծով,  
Ինչպէս մէկ հատիկ գաւակի վրայ կը սգան.  
Որովհետեւ կործանողը յանկարծ մեր վրայ պիտի հասնի:
- 27 «Քեզ իմ ժողովուրդիս վրայ կարգեցի իբր <sup>4</sup>քննիչ եւ ամրոց,  
Որպէսզի անոնց ճամբան գիտնաս ու քննես:
- 28 Բոլորը շեղած ապստամբներ են,  
Բանսարկութեան կ'երթան, պղինձ եւ երկաթ են.  
Բոլորը ապականած են:
- 29 Փքոցը հրաբորբոք եղաւ,  
Կապարը կրակէն հատաւ.  
Ձուլագործը ընդունայն կը գտէ,  
Որովհետեւ "խարամը անջատուած չէ":
- 30 Անոնք "անարգ արծաթ  պիտի կոչուին,  
Որովհետեւ Տէրը զանոնք <sup>2</sup>մերժած է»:

---

- <sup>6</sup> Եբր.՝ ցերսի կողմերէն
- <sup>2</sup> Եբր.՝ կ'արթննայ
- <sup>7</sup> Եբր.՝ քուրձո՛վ գօտեւորուէ
- <sup>4</sup> Կամ՝ աշտարակ
- <sup>5</sup> Եբր.՝ գէշ նիւթերը փրցուած չեն
- <sup>2</sup> Կամ՝ անարգած

7

Երեմիայի «ուղղուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ.

- 2 «Տէրոջ տան դո՛ւռը կայնէ,  
Ու հոն սա՛ խօսքը <sup>բ</sup>արտասանէ՛.  
«Տէրոջ խօսքը մտի՛կ ըրէք, ո՛վ ամբողջ Յուդա,  
Որ այս դռներէն կը մտնէք՝  
Տէրոջ երկրպագելու համար:
- 3 Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
"Բարեփոխեցէ՛ք ձեր <sup>գ</sup>ընթացքն ու արարքները,  
Որպէսզի ձեզ **թողում՝ որ** այս տեղը բնակիք:
- 4 Մի՛ վստահիք սուտ խօսքերու՝ ըսելով.  
«Տէրոջ տաճարը, Տէրոջ տաճարը,  
Տէրոջ տաճարը ա՛յս է»:
- 5 Հապա եթէ ձեր ընթացքն ու արարքները բոլորովին բարեփոխէք,  
Եթէ մարդուն եւ իր ընկերին միջեւ  
Իրաւունքը բոլորովին կիրարկէք,
- 6 Գաղթականը, որքն ու այրին չհարստահարէք  
Այս տեղը անմեղ արիւն չթափէք,  
Եւ ուրիշ աստուածներու չհետեւիք՝  
Ձեր ձախորդութեան համար,
- 7 Այն ատեն ձեզ պիտի **թողում՝ որ** այս տեղը բնակիք,  
Ձեր հայրերուն տուած երկրիս մէջ,  
"Դարէ դար":
- 8 Ահա՛ դուք սուտ խօսքերու կը վստահիք,  
Որոնք չեն **կրնար** օգտակար ըլլալ:
- 9 Միթէ գողութիւն, մարդասպանութիւն եւ շնութիւն ընելով,  
«Սուտ երդում ընելով ու Բահաղի խունկ ծխելով,  
Ուրիշ աստուածներու հետեւելով՝ որ չէք ճանչնար,
- 10 **Կրնա՞ք** գալ եւ ինծի ներկայանալ այս տան մէջ՝  
Որ իմ անունովս կոչուած է,  
Եւ ըսել. «Ազատուած ենք, որպէսզի այս բոլոր գարշութիւնները գործենք»:
- 11 Այս տունը, որ իմ անունովս կոչուած է,  
Միթէ աւազակներու քարա՞յր եղաւ ձեր աչքերուն:  
Ահա՛ ես ալ տեսայ,– կը պատգամէ Տէրը:–
- 12 Ուրեմն գացէ՛ք իմ տեղս՝ որ Սելովի մէջ էր,  
Ուր նախապէս իմ անունս բնակեցուցեր էի,

<sup>ա</sup> Եբր.՝ եղած

<sup>բ</sup> Եբր.՝ յայտարարէ՛

<sup>գ</sup> Եբր.՝ ճամբաներն

<sup>դ</sup> Եբր.՝ Յաւիտեճականութենէ յաւիտեճականութիւն

<sup>ե</sup> Եբր.՝ Կեղծ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ու տեսէ՛ք թէ ի՛նչ ըրեր եմ անոր,  
Իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի չարութեան պատճառով:

- 13** Ուստի հիմա, քանի այս բոլոր արարքները գործեցիք, – կը պատգամէ Տէրը, –  
Ու ձեզի խօսեցայ – կանուխ ելլելով խօսեցայ –, բայց մտիկ չըրիք,  
Չեզ կանչեցի, բայց չպատասխանեցիք,  
**14** Ես ալ այս ձեր <sup>ա</sup>պաւիճած տան՝  
Որ իմ անունովս կոչուած է,  
Եւ ձեզի ու ձեր հայրերուն տուած տեղիս  
Պիտի ընեմ այնպէս՝ ինչպէս ըրի Սելովի.  
**15** Չեզ պիտի վտարեմ իմ առջեւ,  
Ինչպէս վտարեցի ձեր բոլոր եղբայրները՝  
Եփրեմի ամբողջ զարմը՝<sup>բ</sup>»:

## ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՆՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

- 16** «Ուստի դուն այս ժողովուրդին համար մի՛ աղօթեր,  
Անոնց համար <sup>է</sup>պաղատանք եւ աղօթք մի՛ մատուցաներ,  
Ու մի՛ բարեխօսեր,  
Զանի որ քեզի մտիկ պիտի չընեմ:  
**17** Չե՞ս տեսներ թէ ի՛նչ կ'ընեն  
Յուդայի քաղաքներուն ու Երուսաղէմի փողոցներուն մէջ. –  
**18** Որդիները փայտ կը ժողվեն,  
Հայրերը կրակ կը վառեն,  
Կիները **խմորի** զանգուած կը շաղեն՝  
Երկինքի թագուհիին բլիթներ շինելու համար,  
Եւ ուրիշ աստուածներու թափելիք նուէրներ <sup>ը</sup>կ'ընծայեն,  
Որպէսզի զիս գրգռեն:  
**19** Միթէ անոնք զի՞ս կը գրգռեն, – կը պատգամէ Տէրը. –  
Իրենց զիրենք **կը գրգռեն**, իրենց երեսին ամօթին համար»:  
**20** Հետեւաբար սա՛ կը յայտարարէ Տէրը՝ Եհովան.  
«Ահա՛ իմ բարկութիւնս ու ցասումս  
Այս տեղին վրայ պիտի թափի,  
Մարդու վրայ եւ անասունի վրայ,  
Դաշտի ծառերուն վրայ  
Ու հողի պտուղներուն վրայ,  
Եւ պիտի բռնկի ու չմարի»:  
**21** Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
«Չեր ողջակէզները աւելցուցէ՛ք ձեր զոհերուն վրայ, եւ մի՛ս կերէք:  
**22** Արդարեւ այն օրը երբ ձեր հայրերը Եփրատի երկրէն հանեցի,  
Ողջակէզի ու զոհի մասին անոնց չխօսեցայ,  
Ո՛չ ալ անոնց հրամայեցի.

<sup>ա</sup> Եբբ.՝ վստահած

<sup>բ</sup> Եբբ.՝ ճիչ

<sup>ը</sup> Եբբ.՝ կը թափեն

- 23 Հապա անոնց սա՛ բանը հրամայեցի՝ ըսելով.  
 “Մտի՛կ ըրէք իմ ձայնս,  
 Ու թէս ձեր Աստուածը պիտի ըլլամ,  
 Դուք ալ իմ ժողովուրդս պիտի ըլլաք”:  
 Բաւեցէ՛ք այն բոլոր ճամբաներուն մէջէն՝ որ ձեզի հրամայեցի,  
 Որպէսզի բարօրութիւն ունենաք<sup>բ</sup>:
- 24 Բայց անոնք մտիկ չըրին եւ ականջ չդարձուցին.  
 Հապա իրենց չար սիրտին կամակորուրեամբ՝  
 Իրենց խորհուրդներուն <sup>ժ</sup>հետեւեցան.  
 Ետեւ <sup>հ</sup>գացին, եւ ո՛չ թէ յառաջ:
- 25 Ձեր հայրերուն Եգիպտոսի երկրէն ելած օրէն մինչեւ այսօր,  
 Իմ բոլոր ծառաներս՝ մարգարէները ձեզի դրկեցի:  
 Ամէն օր կանուխ ելլելով՝ **գանոնք** կը դրկէի.
- 26 Սակայն ինծի մտիկ չըրին եւ իրենց ականջ չդարձուցին,  
 Հապա իրենց պարանոցը խստացուցին.  
 Իրենց հայրերէն անելի՛ չար եղան<sup>լ</sup>»:
- 27 « Դուն այս բոլոր խօսքերը անոնց պիտի ըսես,  
 Բայց քեզի մտիկ պիտի չընեն.  
 Զանոնք պիտի կանչես,  
 Բայց քեզի պիտի չպատասխանեն:
- 28 Այն ատեն անոնց ըսէ՛.  
 “Ահա՛ւասիկ Տէրոջ՝ իր Աստուծոյն ձայնը մտիկ չընող  
 Ու խրատ չընդունող ազգը.  
<sup>ի</sup>Ճշմարտութիւնը կորսուեցաւ, եւ անոնց բերանէն կտրուեցաւ<sup>բ</sup>»:

ՄԵՂՍԱԼԻՑ ԳՈՐԾԵՐ ԵՆՈՎՄԻ ՉՈՐԻՆ ՄԷջ

- 29 «Կտրէ՛ մազերդ ու նետէ՛, ո՛վ Երուսաղէմ,  
 Եւ բլրակներուն վրայ ո՛ղբ բարձրացուր,  
 Բանի որ Տէրը մերժեց ու **երեսէ** ձգեց այն սերունդը՝  
 Որուն դէմ ցասում **ունէր**:
- 30 Արդարեւ Յուդայի որդիները իմ <sup>ժ</sup>առջեւ չարիք գործեցին,– կը պատգամէ Տէրը.–  
 Իրենց պղծութիւնները իմ անունովս կոչուած տան մէջ դրին՝  
 Որպէսզի զայն պղծեն:
- 31 Ենովմի որդիին ձորին մէջ եղող Տոփէթի բարձր տեղերը կառուցանեցին՝

---

- <sup>բ</sup> Եբբ.՝ ես ձեզի Աստուած պիտի ըլլամ, դուք ալ ինծի ժողովուրդ պիտի ըլլաք
- <sup>ժ</sup> Եբբ.՝ մէջէն ընթացան
- <sup>հ</sup> Եբբ.՝ եղան
- <sup>լ</sup> Եբբ.՝ չարիք գործեցին
- <sup>ի</sup> Եբբ.՝ Հաւատարմութիւնը
- <sup>ժ</sup> Եբբ.՝ աչքերուս

Իրենց որդիներն ու աղջիկները կրակով այրելու համար,  
Ինչ որ **անոնց** չհրամայեցի եւ **այդ մասին**<sup>4</sup> չմտածեցի:

**32** Ուստի ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
Երբ ա՛լ Տոփէթ կամ “Ենովմի որդիին ձորը”<sup>5</sup> պիտի ՚չկոչուի,  
Հապա՛ “Ջարդի ձոր”<sup>6</sup>,  
Ու Տոփէթի մէջ **մեռելներ** պիտի թաղեն՝<sup>7</sup> մինչեւ որ ա՛լ տեղ չըլլայ”:

**33** Այս ժողովուրդին դիակները՝  
Երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն ուտելիք պիտի ըլլան,  
Եւ ո՛չ մէկը **զանոնք** պիտի ՚վռնտէ:

**34** Յուդայի քաղաքներէն ու Երուսաղէմի փողոցներէն՝  
Բերկրանքի ձայնը եւ ուրախութեան ձայնը,  
Փեսային ձայնն ու հարսին ձայնը պիտի դադրեցնեմ,  
Որովհետեւ երկիրը պիտի ամայանայ»:

## 8

«Այդ ատեն,– կը պատգամէ Տէրը,–  
Յուդայի թագաւորներուն ոսկորները,  
Անոր իշխանաւորներուն ոսկորները,  
Քահանաներուն ոսկորները,  
Մարգարէներուն ոսկորները,  
Ու Երուսաղէմի բնակիչներուն ոսկորները՝  
Իրենց գերեզմաններէն պիտի հանեն,

**2** Եւ զանոնք պիտի տարածեն արեւին առջեւ, լուսինին առջեւ,  
Ու երկինքի բոլոր զօրքերուն առջեւ,  
Որոնք սիրեցին եւ պաշտեցին,  
Որոնք հետեւեցան,  
Որոնք խորհուրդ հարցուցին ու երկրպագեցին:  
Անոնք պիտի չհաւաքուին եւ չթաղուին.  
Գետինի մակերեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան:

**3** Մահը կեանքէն նախընտրելի պիտի ըլլայ  
Այս չար գերդաստանին բոլոր մնացորդներուն,  
Որոնք մնացած են այն բոլոր տեղերը՝  
Ուր զանոնք արքորեր են», կը պատգամէ զօրքերու Տէրը:

## ՄԵՂՔ ԵՒ ՊԱՏԻԺ

**4** «Անոնց ըսէ՛. Տէրը սա՛ կը յայտարարէ.  
“Միթէ անոնք պիտի իյնան ու պիտի չելլե՞ն».

<sup>4</sup> Եբբ.՝ սիրտիս մէջ չբարձրացաւ

<sup>5</sup> Եբբ.՝ չըսուի

<sup>6</sup> Կամ՝ ուրիշ տեղ չըլլալուն համար

<sup>7</sup> Եբբ.՝ դողացնէ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Կամ **մէկը ճամբայէն** կը շեղի եւ չի<sup>ա</sup> վերադառնար<sup>ա</sup>:

- 5** Ինչո՞ւ այս Երուսաղէմի ժողովուրդը մշտատեւ ուխտադրութեամբ շեղեցաւ.  
Անոնք խաբէութեան կառչեցան, մերժելով դարձի գալ:
- 6** Ուշադիր եղայ ու մտիկ ըրի.  
Անոնք շիտակ չեն խօսիր:  
Ո՛չ մէկը իր չարութեան համար կը զղջայ՝  
Ըսելով. «Ի՞նչ ըրի<sup>ա</sup>.  
Իւրաքանչիւրը իր վագքին կը վերադառնայ,  
Ինչպէս ձին պատերազմին մէջ կը խոյանայ:
- 7** Արագիլն անգամ օդին մէջ իր **գաղթին** եղանակը գիտէ,  
Տատրակը, կռունկն ու ծիծեռնակը  
Իրենց<sup>ա</sup> գալուստի ժամանակին ուշադիր կ'ըլլան,  
Բայց իմ ժողովուրդս Տէրոջ կանոնը չի գիտեր:
- 8** Ի՞նչպէս կ'ըսէք. «Մենք իմաստուն ենք,  
Եւ Տէրոջ օրէնքը մեր քով է<sup>ա</sup>,  
Մինչդեռ ահա՛ դպիրներուն խաբեբայ գրիչը **գայն** կեղծիքի<sup>բ</sup> վերածած է:
- 9** Իմաստունները ամչցան,  
Անոնք զարհուրեցան ու բռնուեցան.  
Ահա՛ Տէրոջ խօսքը<sup>գ</sup> անարգեցին,  
Ա՛յ ի՞նչ իմաստութիւն կայ անոնց քով:
- 10** Ուստի անոնց կիները ուրիշներուն պիտի տամ,  
Անոնց արտերը՝ **իրենց վրայ** տիրողներուն.  
Արդարեւ անոնց պզտիկէն մինչեւ մեծը՝  
Բոլորը ազահութեան **անձնատուր** են,  
Եւ մարգարէէն մինչեւ քահանան՝  
Բոլորը կեղծիքով կը վարուին:
- 11** Իմ ժողովուրդիս աղջիկին<sup>դ</sup> վէրքը հարեւանցի բուժելով՝ կ'ըսեն.  
«Խաղաղութի՛ւն է, խաղաղութի՛ւն<sup>ա</sup>,  
Մինչդեռ խաղաղութիւն չկայ:
- 12** Միթէ կ'ամչնա՞ն իրենց գարշութիւն գործած ատենը.  
Բնա՛ւ չեն ամչնար,  
Ու խպնիլ չեն գիտեր:  
Հետեւաբար ինկողներուն հետ պիտի իյնան,  
Իրենց<sup>ե</sup> պատիժին ատենը պիտի գայթին,– կը յայտարարէ Տէրը:–
- 13** Զանոնք **բոլորովին** պիտի բնաջնջեմ,– կը պատգամէ Տէրը.–  
Որթատունկին վրայ խաղող պիտի չըլլայ,  
Ու թգենիին վրայ թուզ պիտի չըլլայ.

---

<sup>ա</sup> Կամ՝ երթին

<sup>բ</sup> Եբբ.՝ ըրած

<sup>գ</sup> Կամ՝ մերժեցին

<sup>դ</sup> Եբբ.՝ բեկումը

<sup>ե</sup> Եբբ.՝ հատուցումին

**Անոնց** տերեւներն ալ պիտի թառամին,  
Եւ ինչ որ անոնց տուի՝ իրենցմէ պիտի «անհետանայ»:

**14** Մենք ինչո՞ւ նստած **կը մնանք**.  
Հաւաքուեցէ՛ք, պարսպապատ քաղաքներու մէջ մտնենք,  
Ու հո՛ն լուռ կենանք:

Արդարեւ Տէրը՝ մեր Աստուածը մեզ լռեցուց  
Եւ մեզի թունաւոր ջուր խմցուց,  
Քանի որ Տէրոջ դէմ մեղանչեցինք:

**15** Խաղաղութիւն ակնկալեցինք՝ բայց բարիք չեղաւ,  
Բուժումի ժամանակին **սպասեցինք**, սակայն ահա՛ սարսափը **եկաւ**:

**16** Անոր ձիերուն փռնչիւնը Դանէն կը լսուի,  
Անոր երիվարներուն վրնջիւնէն  
Ամբողջ երկիրը կը շարժի.  
Արդարեւ կու գան երկիրն ու զայն լեցնողները,  
Քաղաքը եւ անոր բնակիչները լափելու:

**17** «Արդարեւ ահա՛ ձեր մէջ օձեր,  
Իժեր պիտի դրկեմ, որ էթովչութենէ չեն ազդուիր»  
Եւ ձեզ պիտի խածնեն», կը պատգամէ Տէրը:

**18** Տրտմութենէս **կ'ուզեմ** սփոփուիլ.  
Սիրտս ներսս ուժաթափ է:

**19** Ահա՛ հեռաւոր երկրէ մը **կու գայ**  
Իմ ժողովուրդիս աղջիկին աղաղակին ձայնը.  
«Միթէ Տէրը Սիոնի մէջ չէ՞.  
Անոր Թագաւորը հոն չէ՞»:  
«Ինչո՞ւ իրենց քանդակած քաղաքերով  
Եւ օտարազգիներուն ունայնութիւններով զիս գրգռեցին»:

**20** Հունձքին **ատենը** անցաւ, ամառը վերջացաւ,  
Բայց մենք չփրկուեցանք:

**21** Իմ ժողովուրդիս աղջիկին քվէրքին համար **սիրտս** կոտրած է.  
ՉՊգաւոր եմ, **եւ** ապշութիւնը զիս համակած է:

**22** Միթէ Գաղասադի մէջ բալասան չկա՞յ,  
Հոն բժիշկ չկա՞յ.  
Հապա ինչո՞ւ իմ ժողովուրդիս աղջիկը ի՛ջապաքիւնեցաւ:

## 9

---

<sup>ա</sup> Եբր.՝ անցնի  
<sup>բ</sup> Եբր.՝ չեն հմայուիր  
<sup>գ</sup> Եբր.՝ պատկերներով  
<sup>դ</sup> Եբր.՝ բեկումին  
<sup>ե</sup> Եբր.՝ Սելցած  
<sup>զ</sup> Եբր.՝ առողջութիւնը չբարձրացաւ

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Երանի՛ թէ գլուխս ջուր ըլլար,  
Եւ աչքերս՝ արցունքի աղբիւր,  
Որպէսզի ցերեկ ու գիշեր լայի

Իմ ժողովուրդիս աղջիկին սպաննուածներուն համար:

2 Երանի՛ թէ անապատին մէջ ուղեւորներու իջեւան մը ունենայի,  
Որպէսզի իմ ժողովուրդս լքէի եւ անոնցմէ՝ <sup>ա</sup>հեռանայի.

Արդարեւ բոլորը շնացողներ են,  
Եւ անհաւատարիմներու խմբակ են:

3 «Իրենց լեզուն իրենց աղեղին պէս կը լարեն՝ ստութեան համար,  
Բայց երկրին մէջ <sup>բ</sup>ճշմարտութեան համար չեն զօրանար.

Արդարեւ չարութենէ չարութիւն <sup>գ</sup>կ'երթան,  
Ու զիս չեն ճանչնար, – կը պատգամէ Տէրը: –

4 Իւրաքանչիւրը թող զգուշանայ իր բարեկամէն,  
Բնաւ եղբօր մը մի՛ վստահիք,

Որովհետեւ ամէն եղբայր խաբէութիւն կը **հնարէ**,  
Եւ ամէն բարեկամ բանասարկութեան կ'երթայ.

5 Իւրաքանչիւրը իր բարեկամը կը խաբէ,  
Ու ճշմարտութիւն չի խօսիր:

Անոնք իրենց լեզուները սուտ խօսելու վարժեցուցած են,  
Անօրէնութիւն գործելով կը հիւծին:

6 Զու բնակարանդ խաբէութեան մէջ է.

Խաբէութեան պատճառով կը մերժեն զիս ճանչնալ», կը պատգամէ Տէրը:

7 Հետեւաբար զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ահա՛ զանոնք պիտի գտեմ ու փորձարկեմ,  
Որովհետեւ ի՞նչպէս վարուելու եմ իմ ժողովուրդիս աղջիկին հետ:

8 Անոնց լեզուն մահաբեր նետ է,  
Խաբէութիւն կը խօսի.

Բերանով իր բարեկամին հետ խաղաղութեան մասին կը խօսի,  
Բայց սիրտին մէջ անոր դարան կը պատրաստէ:

9 Միթէ այս բաներուն համար զանոնք պիտի <sup>դ</sup>չպատժե՞մ, – կը պատգամէ Տէրը, –  
Կամ այսպիսի ազգէ մը իմ անձս վրէժ պիտի չառնե՞մ»:

10 Լեռներուն համար լաց ու եղերերգութիւն պիտի բարձրացնեմ,  
Եւ անապատի մարգագետիններուն համար՝ ողբ.

Որովհետեւ այրեցան, ո՛չ մէկը **անկէ** կ'անցնի,  
Ու խաշինքի ձայն չի լսուիր.

Օդին թռչուններէն մինչեւ անասունները փախան, գացին:

11 Երուսաղէմը քարակոյտերու պիտի <sup>ե</sup>վերածեմ,

<sup>ա</sup> Եբր.՝ երթայի

<sup>բ</sup> Եբր.՝ հաւատարմութեան

<sup>գ</sup> Եբր.՝ կ'ելլեն

<sup>դ</sup> Եբր.՝ չհատուցանե՞մ

<sup>ե</sup> Եբր.՝ դարձնեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Շնագայլերու որջի.

Յուդայի քաղաքներն ալ անբնակ ամառաբան պիտի վերածեն:

- 12 Ո՞վ է այն իմաստուն մարդը՝ որ ասիկա հասկնայ,  
Եւ անոր Աստուծոյ բերանը խօսած ըլլայ՝ որ սա՛ յայտնէ,  
Թէ ինչո՛ւ երկիրը կործանած  
Եւ այրած է՝ անապատի պէս,  
Ուրկէ ո՛չ մէկը կ'անցնի:
- 13 Տէրը յայտարարեց.  
«Քանի անոնք լքեցին իմ օրէնքս՝  
Որ իրենց առջեւ դրեր էի,  
Եւ իմ ձայնս մտիկ չընելով՝ անոր համաձայն չընթացան,  
14 Հապա հետեւեցան իրենց սիրտին կամակորոտեան եւ Բահաղներուն,  
Ինչպէս իրենց հայրերը իրենց սորվեցուցած էին,  
15 Զօրքերու Տէրը՝  
Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
“Ահա՛ ես այս ժողովուրդին օշինդր պիտի կերցնեմ,  
Եւ անոնց թունաւոր ջուր պիտի խմցնեմ:
- 16 Զանոնք պիտի ցրուեն այն՝<sup>ա</sup>հեթանոսներուն մէջ,  
Որոնք ո՛չ իրենք ճանչցան, ո՛չ ալ իրենց հայրերը:  
Անոնց վրայ սուր պիտի դրկեմ,  
Մինչեւ որ զանոնք՝<sup>ե</sup>հատցնեմ□»:

## ԵՐՈՒՍԱՂԷՄՅԻՆԵՐԸ ՕԳԼՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԵՆ

- 17 Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Մտածեցէ՛ք ու եղերամայրեր՝ կանչեցէ՛ք՝ որ գան,  
Իմաստուն կիներուն լո՛ւր դրկեցէ՛ք՝ որ գան,  
18 Եւ մեզի համար շուտով եղերերգութեան ձայն բարձրացնեն,  
Որպէսզի մեր աչքերը արցունքներ իջեցնեն,  
Ու մեր կոպերը ջուրեր հոսեցնեն:
- 19 Արդարեւ Սիոնէն եղերերգութեան ձայն լսուեցաւ.  
“Ի՛նչպէս կործանեցանք. յոյժ ամչցանք,  
Որովհետեւ երկիրը լքեցինք,  
Որովհետեւ մեր բնակարաններէն վտարուեցանք□»:
- 20 Ուրեմն, ո՛վ կիներ, մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը,  
Ու ձեր ականջները անոր բերանին խօսքը թող ընդունին.  
Ձեր աղջիկներուն եղերերգութի՛ւն սորվեցուցէք,  
Եւ ամէն կին իր բարեկամուհիին՝ ողբ:  
21 Արդարեւ մահը մեր պատուհաններէն բարձրացաւ,  
Մեր պալատները մտաւ,  
Որպէսզի փողոցներէն երախաները բնաջնջէ,  
Ու հրապարակներէն՝ երիտասարդները:

---

<sup>ա</sup> Կամ՝ ազգերուն

<sup>ե</sup> Եբր.՝ սպառեմ

22 Ըսէ՛. «Տէրը սա՛ կը պատգամէ.

“Մարդոց դիակները պիտի իյնան  
Արտերու մակերեսին վրայ եղող աղբին պէս,  
Կամ հնձողներուն ետեւը մնացած խուրձի պէս,  
Եւ ո՛չ մէկը զանոնք պիտի հաւաքէ□»:

23 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Իմաստունը իր իմաստութեամբ թող չպարծենայ,  
Ու զօրաւորը իր զօրութեամբ թող չպարծենայ,  
Հարուստը իր հարստութեամբ թող չպարծենայ.

24 Հապա ա՛ն որ կը պարծենայ՝ սա՛ բանով թող պարծենայ,  
Թէ կը հասկնայ եւ զիս կը ճանչնայ,  
Ու գիտէ թէ ե՛ս եմ Տէրը,

Որ երկրի վրայ կարեկցութիւն, իրաւունք եւ արդարութիւն կը կիրարկեմ.  
Արդարեւ ես ասո՛նց կը հաճիմ,– կը պատգամէ Տէրը:–

25 Ահա՛ պիտի գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
Երբ բոլոր թլփատուածները պիտի <sup>բ</sup>պատժեմ անթլփատներուն հետ,

26 Եգիպտոսը, Յուդան, Եդովմը,  
Ամմոնի որդիները, Մովաբը,  
Եւ <sup>բ</sup>իրենց մօրուքին ծայրերը կտրող՝՝ անապատի բոլոր բնակիչները.  
Արդարեւ բոլոր ազգերը անթլփատ են,  
Ամբողջ Իսրայէլի տունն ալ սիրտով անթլփատ է»:

ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

10

Ո՛վ Իսրայէլի տունը,  
Մտի՛կ ըրէք Տէրոջ ձեզի ըսած խօսքը:

2 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«<sup>ա</sup>Հեթանոսներուն <sup>բ</sup>բարքերը մի՛ սորվիք,  
Ու երկինքի նշաններէն մի՛ զարհուրիք,  
Քանի հեթանոսները անոնցմէ կը զարհուրին:

3 Արդարեւ ժողովուրդներուն սովորութիւնները ունայնութիւն են.–  
Անտառէն փայտ կը կտրեն,  
Որ արհեստաւորին ձեռքերը դուրով կը <sup>գ</sup>ձեւակերպեն.

4 Զայն արծաթով եւ ոսկիով կը գեղեցկացնեն,  
Զայն գամերով ու մուրճերով կ՛ամրացնեն՝ որպէսզի <sup>դ</sup>չերերայ:

<sup>բ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>բ</sup> Կամ՝ երկրի ծայրերը եղող

<sup>ա</sup> Կամ՝ Ազգերուն

<sup>բ</sup> Եբբ.՝ ճամբաները

<sup>գ</sup> Եբբ.՝ պատրաստեն

<sup>դ</sup> Եբբ.՝ չգայթի

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 5** <sup>Ե</sup> Անոնք արմաւենիի պէս ուղղաձիգ են, բայց չեն խօսիր.  
**Անշուշտ** պէտք է զանոնք կրել, քանի չեն **կրնար** քալել:  
Անոնցմէ մի՛ վախնաք, որովհետեւ չարիք մը չեն **կրնար** ընել,  
Ո՛չ ալ **կարող են** բարիք ընել»:
- 6** Ո՛վ Տէր, ո՛չ մէկը քեզի նման է.  
Դո՛ւն մեծ ես, եւ քու անունդ մեծ է զօրութեամբ:
- 7** Զեզմէ ո՞վ պիտի չվախնայ, ո՞վ ազգերու թագաւոր,  
Զանի որ քեզի կը վայլէ **պատկառանքը**.  
Արդարեւ ազգերուն բոլոր իմաստուններուն մէջ,  
Եւ իրենց բոլոր թագաւորութիւններուն մէջ,  
Ո՛չ մէկը քեզի նման է.
- 8** Իսկ իրենք բոլորն ալ անխելք եւ անմիտ են.  
«Փայտը ունայնութիւններու վարդապետութիւն է»:
- 9** Թարսիսէն <sup>Է</sup> արծաթի թիթեղներ՝ կը բերուին,  
Ու Ուփագէն՝ ոսկի.  
<sup>Ը</sup> Անոնք արհեստաւորին եւ ձուլագործին ձեռքերու գործն են.  
Անոնց հանդերձը <sup>Ք</sup> կապուտակ ու <sup>Ժ</sup> ծիրանի է,  
Բոլորն ալ <sup>Ի</sup> վարպետներու գործեր են:
- 10** Իսկ ճշմարիտ Աստուածը Եհովա՛ն է.  
Ի՛նք է ապրող Աստուածն ու յաւիտենական թագաւորը:  
Երբ զայրանայ՝ երկիրը կը շարժի,  
Եւ ազգերը չեն կրնար անոր սրտմտութեան տոկալ:
- 11** Անոնց սա՛ ըսէք.  
«Այն աստուածները՝ որ երկինքն ու երկիրը՝ չկերտեցին,  
Երկրէն եւ այս երկինքին տակէն պիտի բնաջնջուին»:<sup>Կ</sup>

## ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ ՄԸ

- 12** Ի՛նք երկիրը <sup>Ծ</sup> ստեղծեց իր կարողութեամբ,

---

<sup>Ե</sup> Այսինքն՝ Փայտէ կուռքերը

<sup>Զ</sup> Կամ՝ Ունայնութիւններու վարդապետութիւնը փայտ է

<sup>Է</sup> Երբ.՝ տարածուած արծաթ

<sup>Ը</sup> Այսինքն՝ Փայտէ կուռքերը

<sup>Ք</sup> Այսինքն՝ կապուտակով ներկուած կերպաս

<sup>Ժ</sup> Այսինքն՝ ծիրանիով ներկուած կերպաս

<sup>Ի</sup> Երբ.՝ իմաստուններու

<sup>Լ</sup> Երբ.՝ չըրից

<sup>Կ</sup> Այս համարը քաղղէարէն լեզուով գրուած է

<sup>Ծ</sup> Երբ.՝ շինեց

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Երկրագունդը հաստատեց իր իմաստութեամբ,  
Երկինքը սփռեց իր հանճարով:

- 13 Երբ իր ծայնը **լսել** տայ՝ երկինքի մէջ ջուրերու յորդառատութիւն կ'ըլլայ.  
Երկրի ծայրերէն ամպեր կը բարձրացնէ,  
Անձրեւի համար փայլակներ կը <sup>4</sup>պատրաստէ,  
Ու հով կը հանէ իր շտեմարաններէն:
- 14 Ամէն մարդ ճանաչումէն **գրկուելով** անբան եղաւ.  
Ամէն ձուլագործ **իր** քանդակած կուռքին **պատճառով** ամօթահար եղաւ,  
Որովհետեւ իր <sup>5</sup>ձուլած կուռքերը՝ ստութիւն են,  
Անոնք <sup>6</sup>հոգի չունին:
- 15 Անոնք ունայնութիւն են, զեղծարարութեան գործեր.  
Իրենց <sup>7</sup>պատիժին ատենը պիտի կորսուին:
- 16 Յակոբի Բաժինը ասոնց պէս չէ,  
Որովհետեւ ինք է ամենուն <sup>8</sup>Արարիչը.  
Իսրայէլ իր ժառանգութեան <sup>9</sup>վիճակն է,  
Իր անունը <sup>10</sup>Զօրքերու Տէր՝ է:

## ՄՕՏԵՅՈՂ ԱՔՍՈՐԸ

- 17 Ո՛վ <sup>1</sup>բերդի մէջ բնակող,  
Հաւաքէ՛ **ու հանէ՛** երկրէն իրեղէններդ,  
18 Զանի որ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ այս անգամ երկրին բնակիչները <sup>2</sup>հեռուն պիտի նետեմ,  
Եւ զանոնք պիտի տագնապեցնեմ, որպէսզի **իրենց պատիժը** գտնեն»:
- 19 Վա՛յ ինձի՝ իմ բեկումիս համար.  
Իմ վէրքս անդարմանելի է:  
Սակայն ես ըսի. «Անտարակոյս ասիկա <sup>3</sup>կսկիծս է,  
Զայն պիտի կրեմ»:

---

<sup>4</sup> Կամ՝ շինէ

<sup>5</sup> Եբբ.՝ թափած պատկերը

<sup>6</sup> Կամ՝ շունչ

<sup>7</sup> Եբբ.՝ հատուցումին

<sup>8</sup> Եբբ.՝ Ձեւակերպիչը

<sup>9</sup> Եբբ.՝ գաւազանն

<sup>10</sup> Եբբ.՝ Եհովա Սաբաւովթ

<sup>11</sup> Եբբ.՝ պատնէշի

<sup>12</sup> Եբբ.՝ պարսատիկով

<sup>13</sup> Կամ՝ հիւանդութիւնս

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 20 Իմ վրանս կործանեցաւ, ու բոլոր չուաններս փրթան.  
Որդիներս ինձմէ՝ չհեռացան, ա՛յ չկան.  
Այլևս ո՛չ մէկը վրանս կը լարէ,  
Եւ վարագոյրներս կը կանգնեցնէ:
- 21 Արդարեւ հովիւները անբան եղան  
Ու Տէրը չփնտռեցին.  
Հետեւաբար՝ չյաջողեցան,  
Եւ իրենց ամբողջ հօտը ցրուեցաւ:
- 22 Ահա՛ հիւսիսի երկրէն գոյժի աղմուկ կու գայ,  
Նաեւ մեծ շարժ,  
Որպէսզի Յուդայի քաղաքները ամայութեան շփերածէ,  
Ու շնագայլերու որջի:
- 23 Գիտեմ, ո՛վ Տէր, թէ մարդուն ճամբան իր ձեռքը չէ.  
Քալող մարդը իր քայլերը հաստատելու կարող չէ:
- 24 Ո՛վ Տէր, ՚պատժէ՛ զիս, բայց՝ չափաւորութեամբ.  
Ո՛չ թէ քու բարկութեամբդ, որ զիս չսպառես:
- 25 Զու ցասումդ թափէ՛ քեզ չճանչցող հեթանոսներուն վրայ,  
Եւ անունդ չկանչող գերդաստաններուն վրայ,  
Որովհետեւ Յակոբը կլանեցին.  
Ջայն լափեցին ու՝ հատցուցին,  
Եւ անոր բնակարանը ամայացուցին:

ԵՐԵՄԻԱ ԵՒ ՈՒԽՏԸ

11

Երեմիայի «ուղղուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ. 2 «Մտի՛կ ըրէք այս ուխտին խօսքերը, եւ խօսեցէ՛ք Յուդայի մարդոց ու Երուսաղէմի բնակիչներուն: Դուն անոնց ըսէ՛. 3 «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. "Անիժեալ ըլլայ այն մարդը՝ որ մտիկ չ'ըներ այն ուխտին խօսքերը, 4 որոնք ես ձեր հայրերուն հրամայեցի այն օրը՝ երբ զանոնք հանեցի Եգիպտոսի երկրէն, այդ երկաթի քուրայէն, եւ ըսի. «Ի՛մ ձայնս մտիկ ըրէք, ու գործադրեցէ՛ք զանոնք՝ ձեզի ամբողջ հրամայածիս համաձայն, որպէսզի դուք իմ ժողովուրդս ըլլաք, ես ալ ձեր Աստուածը ըլլամ. 5 որպէսզի հաստատեմ այն երդումը՝ որ ձեր հայրերուն ըրի, անոնց տալու կաթ ու մեղր հոսեցնող երկիր մը, ինչպէս այսօր կ'երեւնայ»<sup>1</sup>»: Ես ալ պատասխանեցի. «Ամէն, ո՛վ Տէր»:

<sup>1</sup> Եբր.՝ դուրս ելան

<sup>2</sup> Կամ՝ ուշիմ չեղան

<sup>3</sup> Եբր.՝ ընէ

<sup>4</sup> Կամ՝ խրատէ՛

<sup>5</sup> Եբր.՝ կանոնին համաձայն

<sup>6</sup> Եբր.՝ սպառեցին

<sup>7</sup> Եբր.՝ եղած

6 Տէրը ինծի ըսաւ. «Սա՛ բոլոր խօսքերը Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ Բարտասանէ՛. “Մտի՛կ ըրէք այս ուխտին խօսքերը եւ գործադրեցէ՛ք զանոնք: 7 Արդարեւ ձեր հայրերը ազդարարեցի, այն օրէն՝ երբ զանոնք Եգիպտոսի երկրէն հանեցի, մինչեւ այսօր. կանուխ ելլելով եւ ազդարարելով՝ ըսի. “Մտի՛կ ըրէք իմ ձայնս”: 8 Բայց անոնք մտիկ չըրին ու իրենց ականջը չդարձուցին, հապա իւրաքանչիւրը իր չար սիրտին կամակորուրթեան համաձայն ընթացաւ: Ուստի ես անոնց վրայ պիտի բերեմ այս ուխտին բոլոր խօսքերը, որոնք ես անոնց հրամայեք էի որ գործադրեն, բայց անոնք չգործադրեցին»:

9 Նաեւ Տէրը ինծի ըսաւ. «Յուդայի մարդոց մէջ ու Երուսաղէմի բնակիչներուն մէջ դաւադրութիւն գտնուեցաւ: 10 Անոնք իմ խօսքերս մտիկ ընել մերժող իրենց նախահայրերուն անօրէնութիւններուն վերադարձան եւ ուրիշ աստուածներու հետեւեցան, որպէսզի զանոնք պաշտեն: Իսրայէլի տունն ու Յուդայի տունը իրենց հայրերուն հետ կնքած ուխտս խզեցին»:

11 շեռեալքար Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ահա՛ ես այնպիսի չարիք մը պիտի բերեմ անոնց վրայ, Որմէ պիտի չկարենան Գազատիլ:

Ինծի պիտի աղաղակեն, բայց անոնց մտիկ պիտի չընեն»:

12 Յուդայի քաղաքներն ու Երուսաղէմի բնակիչները պիտի երթան եւ աղաղակեն այն աստուածներուն՝ որոնց խունկ ծխեր էին, Բայց անոնք բնաւ պիտի չագատեն զիրենք՝ Իրենց ձախորդութեան ժամանակը:

13 Արդարեւ քու աստուածներդ, ո՛վ Յուդա, Զու քաղաքներուդ թիւին չափ եղան. Երուսաղէմի փողոցներուն թիւին չափ Բագիններ՝ կանգնեցուցիք ամօթալի կռապաշտութեան համար, Բագիններ՝ Բահաղի խունկ ծխելու համար:

14 «Ուստի դուն այս ժողովուրդին համար մի՛ աղօթեր, Անոնց համար Դպաղատանք եւ աղօթք մի՛ մատուցաներ. Որովհետեւ այն օրը երբ ինծի գոչեն՝ իրենց վրայ հասած ձախորդութեան համար, Անոնց մտիկ պիտի չընեն»:

15 Իմ սիրելիս ի՞նչ բաժին ունի իմ տանս մէջ, Զանի որ Էշատերուն հետ լրբութիւն՝ գործեր է. Սուրբ Գոհն ալ քեզմէ Էհեռացաւ, Որովհետեւ երբ չարիք գործես՝ կը հրճուիս:

16 Տէրը քու անունդ կոչեց. «Կանաչագարդ, գեղեցիկ ու Բբարեպտուղ ձիթենի»:

<sup>բ</sup> Եբբ.՝ յայտարարէ՛

<sup>գ</sup> Եբբ.՝ դուրս ելլել

<sup>դ</sup> Եբբ.՝ ճիչ

<sup>ե</sup> Կամ՝ շատ լրբութիւններ

<sup>զ</sup> Եբբ.՝ միսն

<sup>է</sup> Եբբ.՝ անցաւ

<sup>ը</sup> Եբբ.՝ գեղեցիկ պտուղով

**Բայց** անոր վրայ մեծ ժխտրի ձայնով կրակ <sup>բ</sup>վառեց,  
եւ անոր ոստերը կոտրեցան:

- 17** Զեզ տնկող զօրքերու Տէրը  
Զեզի դէմ չարիք <sup>գ</sup>վճռեց՝  
Իսրայէլի տան ու Յուդայի տան չարիքին համար,  
Որ անոնք իրենց դէմ գործեցին  
Զիս գրգռելու համար՝ Բահաղի խուճկ ծխելով»:

ԴԱԻ ԵՐԵՄԻԱՅԻ ԿԵԱՆՔԻՆ ԴԷՄ

- 18** Տէրը ինծի գիտցուց, ու ես հասկցայ.  
Այն ատեն ինծի <sup>դ</sup>ցուցուց անոնց **չար** արարքները:
- 19** Իսկ ես սպանդանոց տարուող <sup>ե</sup>գառի **կամ** արջառի՝ պէս էի,  
Չէի գիտեր թէ անոնք ինծի դէմ <sup>զ</sup>ծրագիրներ կը պատրաստէին՝ **ըսելով**.  
«Ծառը իր պտուղով տապալենք,  
եւ զայն կտրենք ապրողներու երկրէն,  
Որ անոր անունը անգամ մըն ալ չյիշուի»:
- 20** Սակայն, ո՛վ զօրքերու Տէր, արդա՛ր Դատաւոր,  
Որ <sup>ը</sup>երիկամունքն ու սիրտը կը քննես,  
Անոնցմէ **առնելիք** վրէժդ **պիտի** տեսնեմ,  
Քանի քեզի՛ <sup>կ</sup>յանձնեցի իմ դատս:
- 21** Ուրեմն Տէրը սա՛ կը յայտարարէ Անաթովթի մարդոց մասին,  
Որոնք քու կեանքդ կը փնտռեն եւ կ'ըսեն.  
«Մի՛ մարգարէանար Տէրոջ անունով,  
Որպէսզի մեր ձեռքերով չմեռնիս»:
- 22** Հետեւաբար զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ ես գանոնք պիտի <sup>ն</sup>պատժեմ.  
Երիտասարդները սուրով պիտի մեռնին,  
Անոնց որդիներն ու աղջիկները սովամահ պիտի ըլլան.
- 23** Անոնք ո՛չ մէկ մնացորդ պիտի ունենան,  
Որովհետեւ ես Անաթովթի մարդոց վրայ չարիք պիտի բերեմ՝

---

<sup>բ</sup> Եբբ.՝ բռնկեցուց

<sup>գ</sup> Եբբ.՝ խօսեցաւ

<sup>դ</sup> Եբբ.՝ ցուցուցիր

<sup>ե</sup> Կամ՝ ընտանեցած գառի

<sup>զ</sup> Եբբ.՝ հնարքներ կը հնարէին

<sup>ը</sup> Այսինքն՝ խիղճն

<sup>կ</sup> Եբբ.՝ յայտնեցի

<sup>ն</sup> Եբբ.՝ հատուցանեմ

Անոնց ձպատիժի տարին»:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ՀԱՐՅԱՊԵՆԷ ՏԷՐԸ

12

Ո՛վ Տէր, դուն արդար ես երբ քեզի հետ «վիճիմ,  
Սակայն քու դատավճիռներուդ մասին պիտի խօսիմ քեզի.  
Ինչո՞ւ ամբարիշտներուն ճամբան կը յաջողի,  
Ու բոլոր Բանհաւատարիմները անդորր են:

2 Դուն զանոնք տնկեցիր, եւ անոնք արմատացան.  
Անոնք կ'աճին ու պտուղ կու տան:  
Դուն անոնց բերանին մօտ ես,  
Բայց անոնց սիրտէն հեռու ես:

3 Իսկ զիս կը ճանչնաս, ո՛վ Տէր.  
Զիս տեսար, ու քեզի հանդէպ տրամադրուած սիրտս քննեցիր:  
ՊՁատէ՛ զանոնք սպանդանոցի ոչխարներու պէս,  
Վերապահէ՛ ջարդի օրուան համար:

4 Մինչեւ ե՞րբ երկիրը պիտի սգայ,  
Եւ բոլոր դաշտերուն բոյսերը պիտի չորնան.  
Անասուններն ու թռչունները կորսուեցան  
«Անոր բնակիչներուն» չարութեան համար,  
Որովհետեւ ըսին. «Անիկա մեր վախճանը պիտի չտեսնէ»:

5 «Եթէ դուն հետեւակներուն հետ վազեցիր եւ քեզ հիւծեցին,  
Հապա է՞ծիաւորներուն հետ ի՞նչպէս պիտի մրցիս.  
Եթէ թխաղաղ երկրի մը՝ մէջ ապահով կը զգաս,  
Ի՞նչ պիտի ընես՝ երբ Յորդանան գետը թորդի:

6 Արդարեւ քու եղբայրներդ ու հօրդ տունն ալ՝  
Անոնք անգամ քեզի անհաւատարիմ եղան.  
Զու տեսէդ բարձրաձայն աղաղակեցին:

ձ Եբր.՝ հատուցումի

ւ Եբր.՝ դատ վարեմ

Բ Եբր.՝ անհաւատարմութեամբ անհաւատարիմները

Գ Եբր.՝ երիկամունքէն

Դ Եբր.՝ Դո՛ւրս հանէ

Ե Եբր.՝ Սրբացո՛ւր

Զ Եբր.՝ Հոն բնակողներուն

Է Եբր.՝ ձիերուն

Ը Եբր.՝ խաղաղութեան երկրին

Թ Եբր.՝ խրոխտանայ

**ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ**

Թէեւ անոնք քեզի լաւ **խօսքեր** ըսեն,  
Դուն անոնց մի՛ հաւատար»:

**ՏԷՐՈՋ ՎԻՇՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ**

- 7 «Իմ տունս լքեցի, ժառանգութիւնս **երեսէ** ձգեցի,  
Անձիս սիրելին իր թշնամիներուն ձեռքը մատնեցի:
- 8 Իմ ժառանգութիւնս անտառի առիւծին պէս եղաւ ինծի.  
Իմ վրաս <sup>d</sup>գոռաց,  
Ուստի գայն ատեցի:
- 9 Իմ ժառանգութիւնս գոյնզգոյն գիշատիչ թռչունի մը **պէս** եղաւ ինծի.  
Գիշատիչ թռչունները ամէն կողմէ անոր դէմ են:  
Եկէ՛ք, հաւաքեցէ՛ք դաշտին բոլոր գազանները,  
Բերէ՛ք որ լափեն:
- 10 Ծատ հովիւներ իմ այգիս փճացուցին,  
Իմ բաժինս կոխկռտեցին,  
Իմ ցանկալի բաժինս ամայի անապատի <sup>h</sup>վերածեցին:
- 11 Զայն ամայութեան <sup>l</sup>վերածեցին,  
**Եւ** ամայի ըլլալով՝ ան իմ առջեւ սուգ պահեց.  
Ամբողջ երկիրը ամայացաւ,  
Զանի ո՛չ մէկը <sup>h</sup>«**անոր** ուշադրութիւն կը դարձնէ»:
- 12 Անապատին բոլոր բլրակներուն վրայ կործանողներ եկան.  
Արդարեւ Տէրոջ սուրը պիտի սպառէ  
Երկրին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը.  
Ո՛չ մէկ մարմինի խաղաղութիւն պիտի ըլլայ:
- 13 Յորեւն սերմանեցին, բայց փուշեր պիտի հնձեն.  
Աշխատանք թափեցին, **սակայն** օգուտ պիտի չունենան.  
Տէրոջ բորբոքած բարկութեան պատճառով  
Ձեր բերքերէն պիտի ամչնաք»:

**ՏԷՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԴՐԱՅԻՆԵՐՈՒՆ**

- 14 Սա՛ կը յայտարարէ Տէրը իմ բոլոր չար դրացիներուս մասին,  
Որոնք կը դպչին այն ժառանգութեան, որ իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի ժառանգել տուի.  
«Ահա՛ ես գանոնք իրենց հողէն պիտի խլեմ.  
Յուդայի տունն ալ անոնց մէջէն պիտի խլեմ:
- 15 Զանոնք խլելէս ետք՝  
Դարձեալ անոնց պիտի գթամ.  
Իւրաքանչիւրը իր ժառանգութեան պիտի վերադարձնեմ,

---

<sup>d</sup> Եբբ.՝ իր ձայնը լսել տուաւ  
<sup>h</sup> Եբբ.՝ դարձուցին  
<sup>l</sup> Եբբ.՝ ըրին  
<sup>h</sup> Եբբ.՝ ասիկա իր սիրտին մէջ կը դնէ

Իւրաքանչիւրը՝ իր երկիրը:

- 16 Եթէ անոնք իմ ժողովուրդիս քարքերը սորվին,  
 Եւ իմ անունովս երդում ընեն՝ **ըսելով**. «Տէրը կ'ապրի□,  
 (Ինչպէս անոնք իմ ժողովուրդիս սորվեցուցին Բահաղի անունով երդում ընել,)»  
 Այն ատեն իմ ժողովուրդիս մէջ պիտի Կհաստատուին:
- 17 Բայց եթէ չհնազանդին,  
 Այդ ազգը **արմատէն** պիտի խլեմ  
 Ու պիտի կորսնցնեմ», կը պատգամէ Տէրը:

ՎՈՒՇԷ ԳՕՏԻՆԵՐԸ

13

Տէրը ինծի սա՛ ըսաւ. «Գնա՛, քեզի գնէ՛ վուշէ գօտի մը, ու զայն մէ՛ջքդ Կկապէ. զայն ջուրի մէջ մի՛ Բթաթխեր»:  
**2** Ուստի Տէրոջ խօսքին համաձայն գօտի մը գնեցի եւ մէջքս կապեցի:  
**3** Երկրորդ անգամ «Տէրը խօսեցաւ» ինծի՛ ըսելով. **4** «Ա՛ն այդ գնած գօտիդ՝ որ մէջքդ է, ու կանգնէ՛, Եփրատ գնա եւ հոն պահէ՛ զայն ժայռին ծակին մէջ»:  
**5** Ես ալ գացի ու զայն Եփրատի **եզերքը** պահեցի, ինչպէս Տէրը ինծի հրամայեց:  
**6** Շատ օրեր ետք Տէրը ինծի ըսաւ. «Կանգնէ՛, Եփրատ գնա, եւ ա՛ն անկէ այն գօտին՝ որ քեզի հրամայեցի հոն պահել»:  
**7** Ուստի Եփրատ գացի, ու փորելով՝ գօտին այդ պահած տեղէս առի. սակայն ահա՛ գօտին Դփտած էր, եւ Եանպէտ եղած:

- 8** «Տէրը խօսեցաւ» ինծի՛ ըսելով.
- 9** «Տէրը սա՛ կը յայտարարէ.  
 «Յուդայի ամբարտաւանութիւնը  
 Ու Երուսաղէմի մեծ ամբարտաւանութիւնը ա՛յդպէս պիտի փճացնեմ»:
- 10** Այս չար ժողովուրդը՝  
 Որ կը մերժէ իմ խօսքերս մտիկ ընել,  
 Իր սիրտին կամակորութեամբ կ'ընթանայ,  
 Եւ ուրիշ աստուածներու կը հետեւի՝  
 Զանոնք պաշտելու եւ անոնց երկրպագելու համար,  
 Այդ անպէտ գօտիին պէս պիտի ըլլայ:
- 11** Արդարեւ ինչպէս գօտին մարդուն մէջքը կը Կկապուի,

---

- <sup>□</sup> Եբր.՝ ճամբաները
- <sup>□</sup> Եբր.՝ կառուցանուի
- <sup>□</sup> Եբր.՝ դիր
- <sup>□</sup> Եբր.՝ դներ
- <sup>□</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ
- <sup>□</sup> Եբր.՝ փճացած
- <sup>□</sup> Եբր.՝ յաջողութիւն չտուող
- <sup>□</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ
- <sup>□</sup> Եբր.՝ փակչի

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ Իսրայելի տունն ու ամբողջ Յուդայի տունը  
Այնպես ինծի՝ կապեր էի, – կը պատգամէ Տէրը, –  
Որպէսզի իմ ժողովուրդս ըլլան,  
Նաեւ՝ անուն, գովաբանութիւն եւ պարծանք.  
Բայց անոնք մտիկ չըրին՝»:

### ԳԻՆԻԻ ԿԱՐԱՍԸ

- 12 «Նաեւ սա՛ խօսքը ըսէ անոնց.  
“Տէրը՝ Իսրայելի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
“Ամէն կարաս գինիով պիտի լեցուի”<sup>□</sup>.  
Բայց անոնք քեզի պիտի ըսեն.  
“Միթէ մենք չե՞նք գիտեր թէ ամէն կարաս գինիով պիտի լեցուի”<sup>□</sup>:
- 13 Դուն ալ ըսէ՛ անոնց.  
“Տէրը սա՛ կը յայտարարէ.  
“Ահա՛ ես այս երկրին բոլոր բնակիչները  
Դաւիթի գահին վրայ բազմող թագաւորները,  
Քահանաներն ու մարգարէները,  
Նաեւ Երուսաղէմի բոլոր բնակիչները գինովութեամբ պիտի լեցնեմ
- 14 Եւ զանոնք իրարու **զարնելով** պիտի ջախջախեմ,  
Հայրերն ու որդիները միասին, – կը պատգամէ Տէրը: –  
**Անոնց** պիտի չարգահատիմ եւ չխղճամ.  
Առանց գթալու զանոնք պիտի բնաջնջեմ”<sup>□</sup>»:

### ԵՐԵՄԻԱ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ԼՊԱՐՏՈՒԹԵՆԷ

- 15 Մտի՛կ ըրէք, ունկնդրեցէ՛ք, մի՛ խրոխտանաք,  
Որովհետեւ Տէրը խօսեցաւ:
- 16 Փա՛ռք տուէք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն,  
Դեռ խաւարը **ձեր վրայ** չբերած,  
Եւ ձեր ոտքերը <sup>բ</sup>մուտ լեռներուն վրայ չսահած.  
Ձեր լոյսի սպասած ատենը  
Ջայն մահուան շուքի <sup>ժ</sup>չփոխած,  
Ու մառախուղի <sup>հ</sup>չվերածած:
- 17 Բայց եթէ մտիկ չընէք,  
**Ձեր** յոխորտանքին համար իմ անձս ծածուկ տեղեր պիտի լայ.  
Աչքերս դառնապէս պիտի լան եւ արցունք՝ թափեն,

---

<sup>բ</sup> Եբբ.՝ փակցուցեր

<sup>բ</sup> Եբբ.՝ մթնշաղի

<sup>ժ</sup> Եբբ.՝ չըրած

<sup>հ</sup> Եբբ.՝ չըրած

<sup>լ</sup> Եբբ.՝ իջեցնեն

Քանի որ Տէրոջ հօտը կը տարագրուի:

- 18 Ըսէ՛ թագաւորին ու <sup>16</sup>մայր-թագուհիին՝.  
« Դուք ձեզ նուաստացուցէ՛ք **ու գետի՛նը** նստեցէք,  
Որովհետեւ ձեր գլուխէն ձեր շքեղ թագը իջաւ»:
- 19 Հարաւային քաղաքները փակուեցան,  
Եւ ո՛չ մէկ բացող կայ.  
Ամբողջ Յուդան տարագրուեցաւ.  
<sup>2</sup>Բոլոր՝ը տարագրուեցան:
- 20 «Վերցուցէ՛ք ձեր աչքերը, ու նայեցէ՛ք հիւսիսի կողմէն եկողներուն.  
Ո՞ւր է քեզի տրուած հօտը, **ո՞ւր են** քու պանծալի ոչխարներդ:
- 21 Ի՞նչ պիտի ըսես՝ երբ քեզ <sup>4</sup>պատժէ,  
Որովհետեւ դո՛ւն անոնց սորվեցուցիր որ քու վրայ պետ եւ գլխաւոր ըլլան.  
Միթէ երկունքի ցաւերը պիտի չբռնե՞ն քեզ՝ ինչպէս ծննդաբերող կինը:
- 22 Եթէ սիրտիդ մէջ ըսես.  
«Ինչո՞ւ այս բաները ինձի հանդիպեցան», **գիտցի՛ր թէ**  
Քու անօրէնութեանդ շատութեան համար է որ փէշերդ բացուեցան,  
Ու կրունկներդ բռնութեամբ մերկացան:
- 23 Միթէ **կարելի՞ է որ** Եթովպիացին իր մորթը փոխէ,  
Կամ ինձը՝ իր խայտուցները,  
Որ դուք ալ՝ չարիք ընել վարժուած ըլլալով՝  
Կարենաք բարիք ընել:
- 24 Ուստի անապատի հովէն <sup>6</sup>քշուող խոզանի պէս  
Պիտի ցրուեմ զանոնք:
- 25 Ա՛յս է քու վիճակդ եւ բաժինդ,  
Որ ես քեզի համար <sup>2</sup>որոշեցի,– կը պատգամէ Տէրը,–  
Քանի որ զիս մոռցար ու ստութեան <sup>7</sup>ապաւիճեցար:
- 26 Ուստի ես ալ քու փէշերդ երեսիդ վրայ <sup>6</sup>վերցուցի,  
Եւ անարգանքդ երեւցաւ:
- 27 Ես տեսայ քու շնութիւններդ ու վրնջիւններդ,  
Լիրբ պոռնկութիւնդ,  
Եւ բլուրներու վրայ **ու** դաշտի մէջ **գործած** պղծութիւններդ:  
Վա՛յ քեզի, ո՛վ Երուսաղէմ.  
Մինչեւ երբ պիտի չմաքրուի՞ս»:

---

<sup>16</sup> Եբբ.՝ տիրուհիին

<sup>2</sup> Եբբ.՝ Ամբողջութեամբ

<sup>4</sup> Եբբ.՝ հատուցանէ

<sup>6</sup> Եբբ.՝ անցնող

<sup>2</sup> Եբբ.՝ չափեցի

<sup>7</sup> Եբբ.՝ վստահեցար

<sup>6</sup> Եբբ.՝ սոթսեցի

ԱՀԱՒՈՐ ԵՐԱՇՏԸ

14

Տէրոջ խօսքը՝ որ Երեմիայի <sup>ա</sup>ուղղուեցաւ երաշտին մասին։

2 Յուդա կը սգայ.

Անոր <sup>բ</sup>քաղաքները կ'ուժաթափին.

Անոնք մռայլ եւ զգետնուած են.

Երուսաղէմէ աղաղակ կը բարձրանայ:

3 Անոնց <sup>գ</sup>ազնուականները իրենց փոքրաւորները ջուրի կը դրկեն,

Որոնք լճակները երթալով՝ ջուր չեն գտներ,

Ու կը վերադառնան իրենց պարապ անօթներով.

Ամչցած եւ խայտառակուած՝ իրենց գլուխը կը ծածկեն:

4 Զանի երկրին վրայ տեղատարափ չկայ՝

Գետինը ճաթած է.

Երկրագործները կ'ամչնան եւ իրենց գլուխը կը ծածկեն:

5 Նոյնիսկ եղնիկը դաշտի մէջ կը ծնանի

Բայց **իր ձագը** կը լքէ՝ դալար չըլլալուն համար:

6 Վայրենի էշերը բլրակներու վրայ կը կայնին

Ու շնագայլերու պէս <sup>դ</sup>օդը կը ներծծեն.

Իրենց աչքերը նուաղած են, որովհետեւ բոյս չկայ:

7 Թէեւ մեր անօրէնութիւնները մեզի դէմ կը վկայեն,

«Կարեկցութեամբ վարուէ՛», ո՛վ Տէր, քու անունիդ համար.

Արդարեւ մեր ուխտադժութիւնները շատ են,

Զեզի դէմ մեղանչած ենք:

8 Ո՛վ Իսրայէլի Յոյսը,

Տագնապի ատեն անոր Փրկիչը,

Ինչո՞ւ երկրին մէջ պանդուխտի պէս ըլլաս,

Գիշերելու համար **ճամբայէն** շեղող ուղեւորի պէս.

9 Ինչո՞ւ շշմած մարդու պէս ըլլաս,

Կամ ազատելու **անկարող** զօրաւոր մարդու մը պէս:

Սակայն դուն մեր մէջտեղն ես, ո՛վ Տէր,

Մենք քու անունովդ կոչուած ենք.

Մեզ **երեսէ** մի՛ ձգեր:

10 Տէրը այս ժողովուրդին համար սա՛ կը յայտարարէ.

«Այսպէս՝ անոնք աստանդական շրջիլը սիրեցին,

Եւ իրենց ոտքերը չզսպեցին.

<sup>ա</sup> Եբբ.՝ եղաւ

<sup>բ</sup> Եբբ.՝ դռները

<sup>գ</sup> Եբբ.՝ երեւելիները

<sup>դ</sup> Եբբ.՝ հովը

<sup>ե</sup> Եբբ.՝ Ըրէ՛

Տէրն ալ անոնց չհաճեցաւ:

Ուրեմն անոնց անօրէնութիւնը պիտի յիշէ,  
Ու անոնց մեղքերը պիտի հատուցանէ»:

**11** Յետոյ Տէրը ինծի ըսաւ.

«Այս ժողովուրդին բարօրութեան համար մի՛ աղօթեր:

**12** Եթէ անոնք ծոմ պահեն՝

Անոնց <sup>ա</sup>պաղատանքը մտիկ պիտի չընեմ.

Եթէ ողջակէզ կամ ընծայ մատուցանեն՝

Անոնց պիտի չհաւանիմ.

Հապա սուրով, սովով եւ ժանտախտով

Պիտի սպառեմ զանոնք»:

**13** Ես ալ ըսի. «Ո՛հ, ո՛վ Տէր Եհովա,

Ահա՛ մարգարէները անոնց կ'ըսեն.

“Սուր պիտի չտեսնէք,

Ու ձեր մէջ սով պիտի չըլլայ.

Հապա ձեզի այս տեղը ճշմարիտ խաղաղութիւն պիտի տամ□»:

**14** Այն ատեն Տէրը ինծի ըսաւ.

«Մարգարէները իմ անունովս ստութիւն կը մարգարէանան.

Ջանոնք ես չդրկեցի, անոնց չհրամայեցի,

Ո՛չ ալ անոնց խօսեցայ:

Անոնք ձեզի <sup>է</sup>սուտ տեսիլքներ, սնտի դիւթութիւններ,

Եւ իրենց սիրտին խաբէութիւնները կը մարգարէանան»:

**15** Ուստի Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Այն մարգարէները՝ որ իմ անունովս կը մարգարէանան  
(Թէպէտ զանոնք ես չդրկեցի)

Ու կ'ըսեն. “Այս երկրին մէջ սուր ու սով պիտի չըլլայ□,

Այդ մարգարէները սուրով եւ սովով պիտի սպառին:

**16** Իսկ այն ժողովուրդը՝ որուն անոնք կը մարգարէանան,

Սուրին ու սովին պատճառով

Երուսաղէմի փողոցները պիտի նետուի.

Ո՛չ մէկը պիտի ունենան՝ որ թաղէ

Ջիրենք, եւ իրենց կիները, որդիներն ու աղջիկները,

Որովհետեւ անոնց վրայ պիտի թափեմ իրենց չարութիւնը»:

**17** «Ուստի անոնց սա՛ խօսքը ըսէ.

“Գիշեր ու ցերեկ աչքերս արցունք պիտի <sup>բ</sup>թափեն

Եւ բնաւ պիտի չդադրին,

Որովհետեւ իմ ժողովուրդիս կոյս աղջիկը մեծ բեկումով,

Յոյժ անդարմանելի հարուածով ջախջախուեցաւ:

**18** Եթէ դաշտը <sup>բ</sup>երթամ,

---

<sup>ա</sup> Եբր.՝ ճիշը

<sup>է</sup> Կամ՝ կեղծ

<sup>բ</sup> Եբր.՝ իջեցնեն

<sup>բ</sup> Եբր.՝ դուրս ելլեմ

Ահա՛ սուրով խոցուածներ կան.  
Եթէ քաղաքը մտնեմ,  
Ահա՛ սովէն տկարացածներ կան:  
Արդարեւ թէ՛ մարգարէն եւ թէ քահանան երկիրը կը շրջին  
Առանց գիտնալու **իրենց ընելիքը**□»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՊԱՂԱՏԻ ԱՍՏՈՒԾՈՅ

- 19 Միթէ Յուդան բոլորովին մերժեցի՞ր.  
Զու անձո՞ր Սիոնէն զգուեցա՞ւ.  
Ինչո՞ւ մեզի այնպէս զարկիր՝ որ մեզի բուժում չըլլայ:  
Մենք խաղաղութիւն ակնկալեցինք, բայց ո՛չ մէկ բարիք ունեցանք.  
Բուժումի ժամանակին **սպասեցինք**, սակայն ահա՛ սարսափը **եկաւ**:
- 20 Մենք, ո՛վ Տէր, կը գիտակցինք մեր ամբարշտութեան  
Ու մեր հայրերուն անօրէնութեան,  
Զանի քեզի դէմ մեղանչեցինք:
- 21 Զու անուցիդ համար մի՛ անարգեր **մեզ**,  
Զու փառքիդ գահը մի՛ ստորնացներ.  
Մեզի հետ **կնքած** ուխտդ յիշէ՛, **զայն** մի՛ խզեր:
- 22 Արդեօք հեթանոսներուն <sup>ժ</sup> չաստուածներուն մէջ տեղատարափ **իջեցնող** կա՞յ,  
Կամ թէ երկինքնե՞րը կու տան տարափները.  
Միթէ դո՛ւն չե՞ս **ասիկա ընողը**, ո՛վ Տէր, մեր Աստուածը:  
Ուստի քեզի կը յուսանք,  
Որովհետեւ դո՛ւն ըրիր ասոնք բոլորը:

ԴԱՏԱՎՃԻՌ ՅՈՒԴԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԵՄ

15

- Տէրը ինծի ըսաւ.  
«Թէեւ Մովսէս ու Սամուէլ ինծի ներկայանան,  
Իմ անձս՝ այս ժողովուրդին պիտի չհաճի».  
Զանոնք առջեւէս վտարէ՛, ու թող դուրս ելլեն:
- 2 Եթէ քեզի ըսեն. «Ո՞ր <sup>բ</sup> երթանք□,  
Անոնց պատասխանէ՛. «Տէրը սա՛ կը յայտարարէ.  
"Մահուան համար **որոշուածները** մահուան **թող երթան**,  
Սուրի համար **որոշուածները**՝ սուրի,  
Սովի համար **որոշուածները**՝ սովի,  
Ու գերութեան համար **որոշուածները**՝ գերութեան"□:
- 3 Անոնց վրայ չորս <sup>գ</sup> տեսակ **պատիժ** պիտի դրկեմ՝,– կը պատգամէ Տէրը.–

---

- <sup>ժ</sup> Եբր.՝ ունայնութիւններուն
- <sup>ա</sup> Եբր.՝ դէպի այս ժողովուրդը պիտի չհակի
- <sup>բ</sup> Եբր.՝ դուրս ելլենք
- <sup>գ</sup> Եբր.՝ գերդաստան պիտի նշանակեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Մեռցնելու համար՝ սուրբ,  
Պատառելու համար՝ շունները,  
Լափելու եւ փճացնելու համար՝  
Երկինքի թռչուններն ու երկրի գազանները:

4 Զանոնք սուկումի պիտի մատնեմ

Երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ,  
Յուդայի թագաւորին՝ Եզեկիայի որդիին Մանասէի պատճառով,  
Երուսաղէմի մէջ անոր ըրածներուն համար»:

5 Ո՞վ պիտի արգահատի քու վրադ, ո՞վ Երուսաղէմ.

Ո՞վ պիտի ցաւակցի քեզի.

Ո՞վ **ճամբայէն** պիտի շեղի՝ քու <sup>Ե</sup>որպիսութիւնդ հարցնելու համար:

6 « Դուն զիս **երեսէ** ձգեցիր, – կը պատգամէ Տէրը, – ու <sup>Գ</sup>կռնակ դարձուցիր՝.

Ես ալ իմ ձեռքս քու վրադ պիտի երկարեմ եւ քեզ բնաջնջեմ.

Արգահատելէն ձանձրացայ:

7 Զանոնք երկրին դռներուն մէջ պիտի հոսեմ՝ **իրբ թէ** հեծանոցով.

Իմ ժողովուրդս **գաւակներէ** պիտի զրկեմ ու բնաջնջեմ,

**Որովհետեւ** անոնք իրենց <sup>Է</sup>ընթացքէն դարձի չեկան:

8 Անոնց այրիները ծովուն աւազէն աւելի շատցուցի իմ առջեւ.

<sup>Ը</sup>Անոնց դէմ ու երիտասարդին՝ մօր դէմ

Կէսօրին կործանող մը բերի.

Անոր վրայ յանկարծ արհաւիրք եւ սուկում ձգեցի:

9 Եօթը **գաւակ** ծնանողը ուժաթափեցաւ,

Իր <sup>Թ</sup>հոգին աւանդեց՝.

Յերեկը անոր արեւը մայր մտաւ,

Անիկա ամչցաւ ու շիկնեցաւ:

Անոնց մնացորդն ալ իրենց թշնամիներուն առջեւ

Սուրի պիտի մատնեմ», կը պատգամէ Տէրը:

## ԵՐԵՄԻԱ ԿԸ ԳԱՆԳԱՏԻ ԱՍՏՈՒԾՈՅ

10 Վա՛յ ինձի, իմ մա՛յրս,

Որ զիս ծնար՝ ամբողջ երկրին համար

Կռիւի մարդ եւ բանավէճի մարդ ըլլալու:

Ես ո՛չ վաշխով փոխ տուի,

Ո՛չ ալ ինձի վաշխով փոխ տուին.

---

<sup>Դ</sup> Եբբ.՝ Զաշկուտելու

<sup>Ե</sup> Եբբ.՝ խաղաղութիւնդ

<sup>Գ</sup> Եբբ.՝ ետեւ գացիր

<sup>Է</sup> Եբբ.՝ ճամբաներէն

<sup>Ը</sup> Կամ՝ Անոնց երիտասարդներուն

<sup>Թ</sup> Եբբ.՝ շունչը փչեց

**Սակայն** բոլորը զիս կ'անհիծեն:

- 11** Տէրը կը յայտարարէ. «Անշո՛ւշտ <sup>ժ</sup>քեզ պիտի ազատեմ՝  
Զու բարօրութեանդ համար՝.  
Անշո՛ւշտ ձախորդութեան ու տագնապի ժամանակ  
Թշնամիիդ դիմել պիտի տամ քեզի:
- 12** Միթէ երկաթը կրնա՞յ <sup>բ</sup>կոտորուիլ, **այսինքն**՝ հիւսիսի երկաթը եւ պղինձը:
- 13** Զու բոլոր մեղքերուդ համար՝ ամբողջ հողամասիդ մէջ  
Զու գոյքերդ ու գանձերդ առանց Վճարումի կողոպուտի պիտի մատնեմ,  
**14** Եւ քեզ թշնամիներուդ հետ պիտի <sup>կ</sup>փոխադրեմ երկիր մը՝ որ չես ճանչնար.  
Արդարեւ իմ բարկութենէս կրակ մը վառուեցաւ,  
**Որ** ձեր վրայ պիտի բորբոքի»:
- 15** Ո՛վ Տէր, դուն **իմ վիճակս** գիտես.  
Յիշէ՛ զիս, այցելէ՛ ինծի՛,  
Ու վրէ՛ժս առ իմ հալածիչներէս.  
Զու համբերատարութեանդ համար զիս մի՛ <sup>ժ</sup>յափշտակեր.  
Գիտցի՛ր թէ քեզի համար նախատինք կրեցի:
- 16** **Երբ** քու խօսքերդ գտայ՝ զանոնք կերայ.  
Զու խօսքդ սիրտիս բերկրանք եւ ուրախութիւն եղաւ՝  
Որովհետեւ քու անունովդ կոչուեցայ,  
Ո՛վ Տէր, զօրքերո՛ւ Աստուած:
- 17** Ծիծաղողներուն խորհրդածողովին մէջ չնստայ ու չհրճուեցայ.  
Զու ձեռքիդ **վրաս ծանրանալուն** պատճառով առանձին նստայ,  
Զանի որ **քու** սրտմտութեամբդ զիս լեցուցիր:
- 18** Ինչո՞ւ իմ կոտտանքս մշտատեւ է,  
Ու վէրքս՝ մահաբեր.  
Ան կը մերժէ բուժուիլ:  
Միթէ դուն <sup>կ</sup>խաբերայ **աղբիւրի**  
Եւ անվստահելի ջուրերու պէ՞ս պիտի ըլլաս ինծի:
- 19** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Եթէ վերադառնաս՝ ե՛ս քեզ պիտի վերադարձնեմ,  
Ու իմ առջեւ պիտի կայնիս:  
Եթէ պատուականը անարգէն <sup>հ</sup>գատես,  
Իմ բերանիս պէս պիտի ըլլաս:  
Անո՛նք քեզի թող վերադառնան,

---

<sup>ժ</sup> Կամ՝ մնացած օրերուդ բարիք պիտի ըլլայ քեզի

<sup>բ</sup> Կամ՝ կոտորել

<sup>կ</sup> Երբ.՝ գինի

<sup>կ</sup> Երբ.՝ անցընեմ

<sup>ժ</sup> Կամ՝ տանիր

<sup>կ</sup> Երբ.՝ ստախօս

<sup>հ</sup> Երբ.՝ դուրս հանես

Բայց դուն անոնց մի՛ վերադառնար:

- 20 Այս ժողովուրդին հանդէպ՝ քեզ պղինձէ ամուր պարիսպ մը պիտի կարգեմ.  
Անոնք պիտի պայքարին քեզի դէմ,  
Բայց պիտի չյաղթեն քեզի.  
Արդարեւ ես քեզի հետ եմ՝  
Քեզ փրկելու եւ ազատելու համար, – կը պատգամէ Տէրը:–
- 21 Քեզ չարերուն ձեռքէն պիտի ազատեմ,  
Ու բռնաւորներուն ձեռքէն պիտի փրկեմ»:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԵՐԵՄԻԱՅԻ ԿԵԱՆՔԻՆ ՀԱՄԱՐ

16

«Տէրը խօսեցաւ՝ ինծի՝ ըսելով.

- 2 «Քեզի կին մի՛ առներ,  
Ու որդիներ եւ աղջիկներ մի՛ ունենար այս տեղը.
- 3 Արդարեւ այս տեղը ծնած որդիներուն եւ աղջիկներուն համար,  
Ջանոնք ծննդաբերող մայրերուն համար,  
Եւ այս երկրին մէջ զանոնք ծնանող հայրերուն համար՝  
Տէրը սա՛ կը յայտարարէ.
- 4 “Անոնք <sup>բ</sup>մահառիթ հիւանդութիւններով՝ պիտի մեռնին.  
Անոնց վրայ պիտի չհեծեծեն եւ անոնք պիտի չթաղուին.  
Աղբի պէս պիտի ըլլան գետինի մակերեսին վրայ:  
Սուրով ու սովով պիտի <sup>գ</sup>բնաջնջուին.  
Անոնց դիակները երկինքի թռչուններուն  
Ու երկրի գազաններուն ուտելիք պիտի ըլլան»:
- 5 Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Սուգի տուն մի՛ մտներ, հեծեծելու մի՛ երթար,  
Անոնց համար մի՛ ողբար.  
Քանի այս ժողովուրդէն <sup>դ</sup>վերցուցի իմ խաղաղութիւնս, – կը պատգամէ Տէրը, –  
Կարեկցութիւնս եւ գթութիւնս:
- 6 Այս երկրին մէջ մեծերն ու պզտիկները  
Պիտի մեռնին, **բայց** պիտի չթաղուին.  
Անոնց համար **մարդիկ** պիտի չհեծեծեն,  
Իրենք զիրենք պիտի չկտրատեն,  
Անոնց համար կնտակ պիտի չըլլան.
- 7 Սգաւորներուն **հետ հաց** պիտի <sup>ե</sup>չկիսեն՝  
Որպէսզի զանոնք մխիթարեն մեռելի մը համար,

<sup>ա</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>բ</sup> Եբր.՝ հիւանդութիւններու մահով

<sup>գ</sup> Եբր.՝ սպառին

<sup>դ</sup> Եբր.՝ հաւաքեցի

<sup>ե</sup> Եբր.՝ չկտրատեն, կամ՝ չբաշխեն

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ո՛չ ալ անոնց մխիթարութեան բաժակը պիտի խմցնեն՝  
հրենց հօր կամ մօր համար:

**8** Խնճոյքի տուն ալ մի՛ մտներ,

Որ անոնց հետ նստիս՝ ուտելու եւ խմելու համար»:

**9** Արդարեւ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛կը յայտարարէ.

«Ահա՛ ես այս տեղէն՝ ձեր աչքերուն առջեւ ու ձեր օրերուն մէջ՝  
Պիտի դադրեցնեմ բերկրանքի ձայնը եւ ուրախութեան ձայնը,  
Փեսային ձայնն ու հարսին ձայնը:

**10** Ու երբ այս բոլոր խօսքերը այս ժողովուրդին յայտարարես, եւ անոնք քեզի հարցնեն.

“Ինչո՞ւ Տէրը այս ամբողջ մեծ չարիքը մեզի դէմ՝ վճռեց,  
եւ ի՞նչ է մեր անօրէնութիւնն ու մեր մեղքը՝  
Որ Տէրոջ՝ մեր Աստուծոյն դէմ գործեր ենք□,

**11** Դուն անոնց պատասխանէ՛.

“Որովհետեւ ձեր հայրերը զիս լքեցին,– կը պատգամէ Տէրը,–  
եւ ուրիշ աստուածներու հետեւեցան,  
Ջանոնք պաշտեցին ու անոնց երկրպագեցին.

Զիս լքեցին եւ իմ օրէնքս չպահեցին:

**12** Իսկ դուք ձեր հայրերէն աւելի է՛ջար եղաք”.

Ահա՛ ինծի մտիկ չընելով՝

Ձեզմէ իւրաքանչիւրը իր չար սիրտին կամակորութեան հետեւեցաւ:

**13** Ուստի ես այս երկրէն ձեզ պիտի նետեմ

Այնպիսի երկիր մը՝ որ չէք ճանչնար,

Ո՛չ դուք, ո՛չ ալ ձեր հայրերը.

Հոն ցերեկ ու գիշեր ուրիշ աստուածներ պիտի պաշտէք,

Որովհետեւ ձեզի ողորմութիւն <sup>g</sup>ցոյց պիտի չտամ□»:

## ՎԵՐԱԴԱՐՁ ԱՔՍՈՐԷՆ

**14** «Հետեւաբար ահա՛ պիտի գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–

Երբ ա՛լ պիտի չըսուի. “Կ’ապրի՛ Տէրը՝

Որ Իսրայէլի որդիները բարձրացուց Եգիպտոսի երկրէն□,

**15** Հապա. “Կ’ապրի՛ Տէրը՝

Որ Իսրայէլի որդիները բարձրացուց հիւսիսի երկրէն,

եւ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք աքսորեր էր□.

Արդարեւ զանոնք պիտի վերադարձնեմ իրենց <sup>p</sup>երկիրը՝

Որ իրենց հայրերուն տուեր եմ»:

## ԳԱԼԻՔ ՊԱՏՈՒՀԱՍԸ

---

<sup>a</sup> Եբբ.՝ խօսեցաւ

<sup>k</sup> Եբբ.՝ չարիք գործեցիք

<sup>g</sup> Եբբ.՝ պիտի չտամ

<sup>p</sup> Եբբ.՝ հողը

- 16 «Ահա՛ ես շատ ձկնորսներ պիտի դրկեմ,– կը պատգամէ Տէրը,–  
Որ զանոնք որսան.  
Յետոյ շատ որսորդներ պիտի դրկեմ,  
Որ զանոնք որսան ամէն լերան վրայէն,  
Ամէն բլուրի վրայէն,  
Ու ժայռերու ծակերէն:
- 17 Արդարեւ իմ աչքերս անոնց բոլոր <sup>ժ</sup>ճամբաներուն վրայ են.  
Իմ երեսէս ծածկուած չեն,  
Անոնց անօրէնութիւնը իմ աչքերուս առջեւէն պահուած չէ:
- 18 Սակայն նախ անոնց անօրէնութիւնն ու մեղքը  
Կրկնապատիկ պիտի հատուցանեմ,  
Քանի իմ երկիրս պղծեցին,  
Եւ իմ ժառանգութիւնս լեցուցին  
Իրենց պղծութիւններուն ու գարշութիւններուն դիակներով»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԸԸ

- 19 Ո՛վ Տէր, իմ գօրութիւնս, իմ ամրոցս,  
Եւ ապաստանարանս՝ տագնապի օրը,  
Երկրի ծայրերէն <sup>Ի</sup>հեթանոսները քեզի պիտի գան  
Ու պիտի ըսեն.  
«Ի՛րապէս մեր հայրերը ստութիւն,  
Ունայնութիւն եւ անօգուտ **բաներ** ժառանգեր են»:
- 20 Միթէ մարդը կրնա՞յ իրեն աստուածներ կերտել,  
Որոնք աստուածներ չեն:
- 21«Հետեւաբար ահա՛ այս անգամ ես անոնց պիտի <sup>Լ</sup>ցուցնեմ,  
Իմ ձեռքս ու գօրութիւնս անոնց պիտի ցուցնեմ,  
Եւ պիտի գիտնան թէ իմ անունս Եհովա է»:

ՅՈՒԴԱՅԻ ՄԵՂԸՆ ՈՒ ՊԱՏԻԺԸ

17

- Յուդայի մեղքը երկաթէ գրիչով,  
Ադամանդի ծայրով գրուած է.  
Անոնց սիրտին տախտակին վրայ  
Եւ իրենց բագիններուն եղջիրներուն վրայ փորագրուած է.
- 2 Որպէսզի իրենց որդիները յիշեն  
Անոնց բագիններն ու աստարովթները,  
**Շինուած** կանաչազարդ ծառերու քով, բարձր բլուրներու վրայ:
- 3 Ո՛վ դաշտի մէջ **գտնուող** <sup>Մ</sup>լեռս,

<sup>ժ</sup> Այսինքն՝ ընթացքին

<sup>Ի</sup> Եբր.՝ ազգերը

<sup>Լ</sup> Եբր.՝ գիտցնեմ

<sup>Մ</sup> Կամ՝ լեռնաբնակ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Քու գոյքերդ, բոլոր գանձերդ

Կողոպուտի պիտի մատնեմ ամբողջ հողամասիդ մէջ՝

Մեղքի համար **կառուցանուած** բարձր տեղերուդ **պատճառով**։

- 4 Իսկ դուն պիտի թողուս քու ժառանգութիւնդ՝ որ քեզի տուի,  
Ու քեզ թշնամիներուդ պիտի հպատակեցնեմ  
Երկրի մը մէջ՝ որ չես ճանչնար.  
Արդարեւ իմ բարկութենէս կրակ մը վառուեցաւ,  
Որ յաւիտեան պիտի բորբոքի»։

## ՋԱՆԱԶԱՆ ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐ

5 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Անիծեա՛լ ըլլայ այն <sup>բ</sup>մարդը՝ որ մարդու կը վստահի,

Մարմինը իրեն բազուկ կ'ընէ,

Եւ որուն սիրտը Տէրոջմէն կը հեռանայ։

6 Անիկա <sup>գ</sup>տափաստանի ցախին՝ պէս պիտի ըլլայ,  
Ու երբ բարիք գայ՝ պիտի <sup>դ</sup>չնշմարէ.

Անապատին խանձուած **տեղերը**,

Աղի եւ անբնակ երկրի մէջ պիտի կենայ»։

7 «Օրհնեա՛լ ըլլայ այն <sup>ե</sup>մարդը՝ որ Տէրոջ կը վստահի,  
Որուն ապահովութիւնը Տէրն է։

8 Ան ջուրերու քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ,  
Որ իր արմատները դէպի հոսանքը երկնցնելով՝  
Տաքութեան գալը չի նշմարեր.  
Հապա անոր տերեւը կանաչ <sup>զ</sup>կը մնայ՝,  
Երաշտի տարին չի մտահոգուիր,  
Ու պտուղ տալէն չի <sup>է</sup>դադրիր»։

9 Սիրտը ամէն **բանէ** աւելի խաբեբայ եւ անուղղայ է,  
Ջայն ո՞վ կրնայ ճանչնալ։

10 «Ես՝ Տէրս՝ սիրտը կը <sup>ը</sup>քննեմ,  
<sup>բ</sup>Խիղճը կը փորձարկեմ,

---

<sup>բ</sup> Եբբ.՝ գորաւոր մարդը

<sup>գ</sup> Եբբ.՝ տափաստանի մէջ զրկուածի

<sup>դ</sup> Եբբ.՝ չտեսնէ

<sup>ե</sup> Եբբ.՝ գորաւոր մարդը

<sup>զ</sup> Եբբ.՝ կ'ըլլայ

<sup>է</sup> Եբբ.՝ հեռանար

<sup>ը</sup> Եբբ.՝ հետազօտեմ

<sup>բ</sup> Եբբ.՝ Երիկամունքը

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Որպէսզի իւրաքանչիւրին հատուցանեմ իր <sup>ժ</sup>ընթացքին համեմատ  
եւ իր արարքներու պտուղին համեմատ»:

- 11** Անիրաւութեամբ հարստութիւն վաստկողը՝  
իւր չածած **հաւկիթները** թխտող կաքաւի **պէս է**.  
Զայն իր օրերու կէսին պիտի թողու,  
եւ իր վախճանին անգգամ պիտի ըլլայ:
- 12** Սկիզբէն մեր սրբարանին տեղը  
Փառաւոր **ու** բարձր գահ է:
- 13** Ո՛վ Տէր, Իսրայէլի՛ Յոյսը,  
Բոլոր քեզ լքողները պիտի ամչնան,  
<sup>Ի</sup>քեզմէ հեռացողները գետինին վրայ պիտի արձանագրուին,  
Որովհետեւ Տէրը՝ կենարար ջուրի աղբիւրը լքեցին:

## ԵՐԵՄԻԱ ԿԸ ԽՆԴՐԷ ՏԷՐՈՋ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

- 14** Ո՛վ Տէր, բուժէ՛ զիս, ու պիտի բուժուիմ.  
Փրկէ՛ զիս, ու պիտի փրկուիմ.  
Որովհետեւ դո՛ւն ես իմ՝ պարծանքս:
- 15** Ահա՛ անոնք ինձի կ'ըսեն.  
«Ո՞ւր է Տէրոջ խօսքը. այժմ թող <sup>Խ</sup>իրագործուի»:
- 16** Իսկ ես չփութացի հովիւ ըլլալ՝ քեզի հետեւելու համար,  
Ու մահաբեր օրուան չփափաքեցայ, **ինչպէս** դուն գիտես.  
Իմ շրթունքէս ելածը քու առջեւ էր:
- 17** Ինձի երկիւղ մի՛ ըլլար,  
Դո՛ւն՝ որ ապաւէնս ես ձախորդութեան օրը:
- 18** Թող ամչնան զիս հալածողները, բայց ես չամչնամ.  
Թող զարհուրին անոնք, բայց ես չզարհուրիմ.  
Բեր՝ ձախորդութեան օրը անոնց վրայ,  
Ու կրկին՝ փլուզումով ջախջախէ զանոնք:

## ՇԱՐԱԹԸ ՊԱՆԵԼ

**19** Տէրը սա՛ ըսաւ ինձի. «Գնա՛ եւ կայնէ՛ ժողովուրդին որդիներուն դուռը, ուրկէ  
Յուդայի թագաւորները կը մտնեն ու կ'ելլեն, ապա Երուսաղէմի բոլոր դռները, **20** եւ ըսէ՛  
անոնց. “Մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը, դո՛ւք՝ Յուդայի թագաւորներ, ամբողջ Յուդա, ու  
Երուսաղէմի բոլոր բնակիչներ, որ այս դռներէն կը մտնէք. Տէրը սա՛ կը յայտարարէ. **21**  
“Ուշադիր եղէք ձեր անձերուն, եւ Շաբաթ օրը բեռ մի՛ կրէք ու Երուսաղէմի դռներէն ներս  
մի՛ բերէք: **22** Շաբաթ օրը ո՛չ բեռ հանեցէք ձեր տուններէն դուրս, ո՛չ ալ որեւէ գործ ըրէք.  
հապա Շաբաթ օրը սրբացուցէ՛ք, ինչպէս ձեր հայրերուն հրամայեցի: **23** Բայց անոնք

<sup>ժ</sup> Եբր.՝ ճամբաներուն

<sup>Ի</sup> Կամ՝ Ինձմէ

<sup>Լ</sup> Եբր.՝ գովաբանութիւնս

<sup>Խ</sup> Եբր.՝ գայ

մտիկ չըրի՞ն եւ իրենց ականջը չդարձուցին, հապա իրենց պարանոցը խստացուցին, որպէսզի մտիկ չընեն ու խրատ չընդունին: **24** Իսկ եթէ ուշադրութեամբ ինծի մտիկ ընէք,– կը պատգամէ Տէրը,– եւ Ծաբաթ օրը այս քաղաքին դռներէն ներս բեռ չբերէք, ու Ծաբաթ օրը սրբացնէք՝ անոր մէջ ո՛չ մէկ գործ ընելով, **25** այն ատեն Դաւիթի գահին վրայ բազմող թագաւորներն ու իշխանաւորները այս քաղաքին դռներէն պիտի մտնեն՝ կառքերու եւ ձիերու վրայ հեծած, թէ՛ իրենք, թէ՛ իրենց իշխանաւորները, Յուդայի մարդիկն ու Երուսաղէմի բնակիչները. եւ այս քաղաքը պիտի բնակուի յաւիտենապէս: **26** Յուդայի քաղաքներէն, Երուսաղէմի շրջակայքէն, Բենիամինի երկրէն, դաշտագետիկէն, լեռներէն ու հարաւէն պիտի գան եւ ողջակէզ ու գոհ, հացի ընծայ եւ կնդրուկ պիտի բերեն, նաեւ շնորհակալութեան ընծաներ պիտի բերեն Տէրոջ տունը: **27** Բայց եթէ ինծի մտիկ չընէք՝ Ծաբաթ օրը սրբացնելու եւ Ծաբաթ օրը բեռ կրելով Երուսաղէմի դռներէն ներս չմտնելու համար, ես ալ անոր դռներուն մէջ կրակ պիտի ՝վառեմ, որ պիտի սպառէ Երուսաղէմի պալատները ու պիտի չմարի՞»:

ԵՐԵՄԻԱ ԲՐՈՒՏԻՆ ՏԱՆ ՄԷՋ

18

Երեմիայի «ուղղուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ. **2** «Կանգնէ՛, եւ իջի՛ր բրուտին տունը. հոն քեզի լսել պիտի տամ իմ խօսքերս»: **3** Ուստի բրուտին տունը իջայ, եւ ահա՛ ան ճախարակով Բկ՝աշխատէր: **4** Կաւէ շինած անօթը բրուտին ձեռքին մէջ փճացաւ. ինք ալ անկէ դարձեալ ուրիշ անօթ մը շինեց, ինչպէս բրուտին «հաճելի եղաւ ընել: **5** Ապա ՝Տէրը խօսեցաւ՝ ինծի՛ ըսելով.

**6** «Միթէ չե՞մ կրնար ձեզի հետ վարուիլ այս բրուտին ըրածի՞ն պէս, Ո՛վ Իսրայէլի տունը,– կը պատգամէ Տէրը.– Ահա՛ ինչպէս է կաւը բրուտին ձեռքին մէջ, Այնպէս էք դուք իմ ձեռքիս մէջ, ո՛վ Իսրայէլի տունը:

**7** Երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսեմ թէ արմատէն պիտի խլեմ, պիտի փլցնեմ ու կործանեմ,

**8** եթէ այդ ազգը՝ որուն դէմ խօսեցայ, իր չարութենէն դարձի գայ, Ես ալ պիտի հրաժարիմ այն չարիքէն՝ որ մտածեր էի անոր ընել:

**9** Իսկ երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսեմ թէ պիտի կառուցանեմ եւ տնկեմ,

**10** եթէ ան իմ ձայնս մտիկ չընելով՝ իմ «առջեսւ չարիք գործէ, Ես ալ պիտի հրաժարիմ այն բարիքէն՝ որ խոստացեր էի անոր ընել:

<sup>2</sup> Եբբ.՝ բռնկեցնեմ

<sup>3</sup> Եբբ.՝ եղած

<sup>4</sup> Եբբ.՝ գործը կ'աշխատէր

<sup>5</sup> Եբբ.՝ աչքերուն ուղիղ

<sup>6</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>7</sup> Եբբ.՝ Այն վայրկեանին երբ

<sup>8</sup> Եբբ.՝ աչքերուս

- 11 Ուստի հիմա խօսէ՛ Յուդայի մարդիկներուն  
Ու Երուսաղէմի բնակիչներուն, եւ ըսէ՛.  
“Տէրը սա՛ կը յայտարարէ.  
"Ահա՛ ես ձեզի համար չարիք կը <sup>Է</sup>ծրագրեմ,  
Ու ձեզի դէմ <sup>Ը</sup>ծրագիր մը կը պատրաստեմ"<sup>Թ</sup>:  
Հիմա ձեզմէ իւրաքանչիւրը իր չար ճամբայէն թող դարձի գայ,  
Եւ ձեր <sup>Ք</sup>ընթացքն ու արարքները բարեփոխեցէ՛ք"<sup>Ք</sup>:
- 12 Բայց անոնք կ'ըսեն. “Յոյս չկայ,  
Որովհետեւ մենք մեր մտածումներուն պիտի հետեւինք,  
Եւ մեզմէ իւրաքանչիւրը իր չար սիրտին կամակորութեամբ պիտի վարուի<sup>Ք</sup>»:

ԺՈՂՈՎՈՒՐ ԴԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՏԷՐԸ

- 13 Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Այժմ հարցուցէ՛ք <sup>Ժ</sup>հեթանոսներուն,  
Թէ ո՞վ լսեր է այսպիսի բան մը.  
Իսրայէլի կոյսը յոյժ քստմնելի բան մը ըրաւ:  
14 Միթէ Լիբանանի ձիւնը դաշտին վէմը կը լքէ՞,  
Կամ հեռուէն եկող պաղ, հոսուն ջուրերը կը ցամքի՞ն:  
15 Սակայն իմ ժողովուրդս զիս մոռցաւ.  
Ունայնութիւններու խունկ ծխեցին,  
Եւ անոնց գայթիլ տուին իրենց ճամբաներուն, հնադարեան ճանապարհներուն մէջ,  
Որպէսզի ուրիշ շաւիղներէ, չհարթուած ճամբայէ մը քալեն:  
16 Այսպէս՝ իրենց երկիրը ամայի <sup>Ի</sup>դարձուցին,  
Ու յաւիտենապէս սուլոցի ենթակայ:  
Անկէ ամէն անցնող պիտի ապշի  
Եւ գլուխը շարժէ:  
17 Զանոնք թշնամիին առջեւ պիտի ցրուեմ՝  
Արեւելեան հովին պէս,  
Անոնց ձախորդութեան օրը  
Իրենց <sup>Լ</sup>կռնակ պիտի ցուցնեմ, եւ ո՛չ թէ՛ երես»:

ԴԱԻ ԵՐԵՄԻԱՅԻ ԴԷՄ

18 Այն ատեն ըսին.

---

- <sup>Է</sup> Եբբ.՝ ձեւակերպեմ
- <sup>Ը</sup> Եբբ.՝ հնարք մը կը հնարեմ
- <sup>Ք</sup> Եբբ.՝ ճամբաներն
- <sup>Ք</sup> Կամ՝ ազգերուն
- <sup>Ի</sup> Եբբ.՝ ըրին
- <sup>Լ</sup> Եբբ.՝ ծոծրակ

«Եկէ՛ք, ծրագիր մը պատրաստենք Երեմիայի դէմ,  
Որովհետեւ քահանայէն օրէնքը պիտի չկորսուի,  
Եւ իմաստունէն՝ խորհուրդը,  
Ու մարգարէէն՝ խօսքը:  
Եկէ՛ք, զինք լեզուով <sup>Խ</sup>սպաննենք,  
Եւ անոր խօսքերէն ո՛չ մէկուն ուշադիր ըլլանք»:

- 19 «Ո՛վ Տէր, ուշադի՛ր եղիր ինծի,  
Ու լսէ՛ ինծի հետ վիճողներուն ծայնը:
- 20 Միթէ բարիքի փոխարէն չարիք կը հատուցանուի՞.  
Բայց անոնք իմ անձիս համար փոս փորեցին:  
Յիշէ՛ թէ քու առջեւ կայնեցայ,  
Որպէսզի անոնց համար բարեխօսեմ,  
Եւ ցատումդ անոնցմէ հեռացնեմ:
- 21 Հետեւաբար սովի՛ մատնէ անոնց որդիները,  
Թափէ՛ անոնց արիւնը սուրի ձեռքով.  
Անոնց կիները գաւակներէ թող զրկուին եւ այրի ըլլան,  
Անոնց ամուսինները թող <sup>Ծ</sup>սպաննուին,  
Ու երիտասարդները պատերազմի մէջ սուրով զարնուին:
- 22 Անոնց տուներէն աղաղակ թող լսուի,  
Երբ յանկարծ ասպատակող գունդ մը բերես անոնց վրայ.  
Արդարեւ զիս բռնելու համար փոս փորեցին,  
Եւ ոտքերուս համար վարմեր պահեցին:
- 23 Դուն, ո՛վ Տէր, գիտես անոնց ամբողջ ծրագիրը ինծի դէմ՝  
**Ջիս** մեռցնելու համար.  
Անոնց անօրէնութիւնը մի՛ քաւեր,  
Անոնց մեղքը քու առջեւէդ մի՛ ջնջեր,  
Հապա անոնք քու առջեւ թող <sup>Կ</sup>տապալին.  
Քու բարկութեանդ ատենը **ա՛յդպէս** վարուէ անոնց հետ»:

ԿՈՏՐԱԾ ԿՈՒԺԸ

19

Տէրը սա՛՞րսաւ. «Գնա՛, բրուտի **ձեռքով շինուած** <sup>Բ</sup>խեցիէ կո՛ւժ մը գնէ, եւ **ա՛ն քեզի հետ**  
ժողովուրդէն **քանի մը** երէցներ ու քահանաներէն **քանի մը** երէցներ: **2** <sup>Գ</sup>Գնա՛ <sup>Դ</sup>խեցիներու

---

- <sup>Խ</sup> Եբր.՝ զարնենք
- <sup>Ծ</sup> Եբր.՝ մահով մեռցուին
- <sup>Կ</sup> Եբր.՝ գայթիւն
- <sup>Ս</sup> Եբր.՝ կը յայտարարէ
- <sup>Բ</sup> Այսինքն՝ թրծուած կաւէ
- <sup>Գ</sup> Եբր.՝ Դո՛ւրս ելիր
- <sup>Դ</sup> Այսինքն՝ թրծուած կաւէ անօթներու

դրան մուտքը եղող Ենովմի որդիին ձորը, եւ հոն Եարտասանէ՝ այն խօսքերը՝ որ քեզի պիտի հաղորդեմ»։ **3** Ըսէ՛. «Ո՛վ Յուդայի թագաւորներ ու Երուսաղէմի բնակիչներ, մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը։ Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես այս տեղին վրայ **այնպիսի** չարիք մը պիտի բերեմ, որ զայն լսողին ականջները պիտի հնչեն։ **4** Արդարեւ անոնք զիս լքեցին, այս տեղը **ինձմէ** օտարացուցին, ու հոս խունկ ծխեցին ուրիշ աստուածներու՝ որ ո՛չ իրենք կը ճանչնային, ո՛չ իրենց հայրերը, ո՛չ ալ Յուդայի թագաւորները, եւ այս տեղը անմեղ արիւնով լեցուցին. **5** Նաեւ Բահաղի բարձր տեղեր կառուցանեցին, որպէսզի իրենց որդիները կրակով այրեն իբր Բահաղի ողջակէզ, ինչ որ ես չհրամայեցի, ո՛չ ալ **այդ մասին** խօսեցայ կամ Գմտածեցի։ **6** Ուստի ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,– երբ անգամ մըն ալ այս տեղը Տոփէթ ու Ենովմի որդիին ձորը պիտի չկոչուի, հապա՛ Ջարդի ձոր։ **7** Այս տեղը Յուդայի եւ Երուսաղէմի ծրագիրը պիտի Կոչնչացնեմ. զանոնք իրենց թշնամիներուն առջեւ սուրով պիտի Գարնեմ, իրենց կեանքը փնտռողներուն ձեռքով։ Անոնց դիակները երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն պիտի տամ իբր ուտելիք։ **8** Այս քաղաքը ամայի եւ սուլոցի **առարկայ** պիտի Դարձնեմ։ Ո՛վ որ անոր քովէն անցնի՝ անոր բոլոր պատուհասներուն պատճառով պիտի ապշի ու սուլէ։ **9** Իրենց որդիներուն միսը եւ իրենց աղջիկներուն միսը պիտի կերցնեմ անոնց. իրարու միս պիտի ուտեն պաշարումի ու տուայտանքի ընթացքին՝ որուն մէջ անոնց թշնամիները եւ անոնց կեանքը փնտռողները զիրենք պիտի ձգեն»։

**10** «Յետոյ այդ կուժը կոտրէ՛ քեզի հետ գացող մարդոց աչքերուն առջեւ, **11** եւ անոնց ըսէ՛. “Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. “Այս ժողովուրդն ու այս քաղաքը այնպէս պիտի կոտրեմ, ինչպէս **մէկը** բրուտի անօթը կը կոտրէ, որ ա՛լ չճորոգուի. **զանոնք** Տոփէթի մէջ պիտի թաղեն՝ Իմինչեւ որ ա՛լ թաղելու տեղ չմնայ”»։ **12** «Ա՛յսպէս պիտի ընեմ այս տեղին եւ անոր բնակիչներուն,– կը պատգամէ Տէրը.– այս քաղաքը Տոփէթի պիտի Վերածեմ։ **13** Երուսաղէմի տուներն ու Յուդայի թագաւորներուն տուները Տոփէթի տեղին պէս անմաքուր պիտի ըլլան՝ Խայն բոլոր տուններուն պատճառով”, որոնց տանիքներուն վրայ երկինքի ամբողջ զօրքին խունկ ծխեցին եւ ուրիշ աստուածներու թափելիք նուէրներ Ծրնծայեցին»։

**14** Երեմիա Տոփէթէն եկաւ, ուր Տէրը զինք ղրկեր էր մարգարէանալու համար, Տէրոջ

<sup>Ե</sup> Եբր.՝ յայտարարէ՛

<sup>Գ</sup> Եբր.՝ սիրտիս մէջ բարձրացաւ

<sup>Կ</sup> Եբր.՝ պարպեմ

<sup>Զ</sup> Եբր.՝ տապալեմ

<sup>Ը</sup> Եբր.՝ ընեմ

<sup>Ժ</sup> Եբր.՝ չբուժուի

<sup>Ի</sup> Կամ՝ ուրիշ թաղելու տեղ չըլլալուն համար

<sup>Լ</sup> Եբր.՝ դարձնեմ

<sup>Խ</sup> Կամ՝ այսինքն՝ այն բոլոր տուները

<sup>Ծ</sup> Եբր.՝ թափեցին

տան գաւիթը կայնեցաւ եւ ամբողջ ժողովուրդին ըսաւ. **15** «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ այս քաղաքին վրայ ու անոր բոլոր <sup>4</sup>գիւղաքաղաքներուն վրայ պիտի բերեմ ամբողջ չարիքը՝ որ <sup>5</sup>վճռեցի անոր դէմ. որովհետեւ իրենց պարանոցը խստացուցին, որպէսզի իմ խօսքերս մտիկ չընեն»:

ԵՐԵՄԻԱՅԻ ԲԱՒՈՒՄԸ ՓԱՍՈՒՐԻ ՆԵՏ

20

Եմմերի որդին՝ Փասուր քահանան, որ նաեւ Տէրոջ տան <sup>6</sup>գլխաւոր վերատեսուչն էր, լսեց այս խօսքերը՝ որ Երեմիա կը մարգարէանար: **2** Ուստի Փասուր Երեմիա մարգարէին զարկաւ, եւ զայն Բենիամինի վերի դրան <sup>7</sup>գելարանը դրաւ, Տէրոջ տան մէջ: **3** Նետեւեալ օրը Փասուր Երեմիան գելարանէն հանեց: Այն ատեն Երեմիա անոր ըսաւ. «Տէրը քու անունդ Փասուր չի կոչեր, հապա՛ <sup>8</sup>Մակոր-Միսսապիպ. **4** որովհետեւ Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես քեզ արհաւիրքի պիտի <sup>9</sup>վերածեմ՝ քեզի ու բոլոր <sup>10</sup>բարեկամներուդ. անոնք իրենց թշնամիներուն սուրով պիտի իյնան, եւ քու աչքերդ պիտի տեսնեն: Ամբողջ Յուդան Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ, ու զանոնք Բաբելոն պիտի տարագրէ եւ սուրով պիտի զարնէ: **5** Նաեւ այս քաղաքին ամբողջ <sup>11</sup>հարստութիւնը, անոր ամբողջ վաստակը, անոր բոլոր պատուական **բաները** պիտի տամ. Յուդայի թագաւորներուն բոլոր գանձերը իրենց թշնամիներուն ձեռքը պիտի յանձնեմ: Զիրենք պիտի կողոպտեն, եւ բռնեն ու Բաբելոն տանին: **6** Դո՛ւն ալ, ո՛վ Փասուր, եւ տանդ բոլոր բնակիչները գերութեան պիտի երթաք. Բաբելոն պիտի երթաս, հոն պիտի մեռնիս ու հոն թաղուիս, թէ՛ դուն եւ թէ բոլոր բարեկամներդ՝ որոնց ստութիւն մարգարէացար»:

ԵՐԵՄԻԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ ԱՍՏՈՒԾՈՅ

- 7** Զիս հրապուրեցիր, ո՛վ Տէր, ու ես հրապուրուեցայ.  
Դուն ինձմէ զօրաւոր ես, եւ յաղթեցիր:  
Ամէն օր հեգնանքի առարկայ եղայ,  
Բոլորը զիս կը ծաղրեն.
- 8** Որովհետեւ ամէն անգամ որ խօսիմ՝ կ'աղաղակեմ,  
Բռնութիւն ու կործանում կը յայտարարեմ.

---

- <sup>4</sup> Եբբ.՝ քաղաքներուն
- <sup>6</sup> Եբբ.՝ խօսեցայ
- <sup>7</sup> Եբբ.՝ առաջնորդ
- <sup>8</sup> Այսինքն՝ տանջարանը
- <sup>9</sup> Այսինքն՝ ամէն կողմէ արհաւիրք
- <sup>10</sup> Եբբ.՝ դարձնեմ
- <sup>11</sup> Եբբ.՝ սիրելիներուդ
- <sup>12</sup> Եբբ.՝ գանձը

Տէրոջ խօսքը ամբողջ օրը <sup>Է</sup>ճախատինքի եւ ծանակի կ'ենթարկէ զիս<sup>Ը</sup>:

- 9 Եթէ ըսեմ. «Ջինք պիտի չյիշատակեմ,  
Անգամ մըն ալ իր անունով պիտի չխօսիմ»,  
Սիրտիս մէջ կրակ մը կը վառի,  
Ու ոսկորներուս մէջ կը փակուի.  
**Ջայն**<sup>Ը</sup> կրելու համար կը հիւծիմ, բայց չեմ կրնար:
- 10 Արդարեւ շատերու չարախօսութիւնը լսեցի.  
Ամէն կողմ արհաւիրք կար:  
«<sup>Բ</sup>Բամբասեցէ՛ք, մենք ալ բամբասենք», **ըսին.**  
Բոլոր <sup>Ժ</sup>մտերիմներս իմ կաղալս կը դիտէին՝ **ըսելով.**  
«Թերեւս հրապուրուի, ու մենք անոր յաղթենք  
Եւ անկէ մեր վրէժը առնենք»:
- 11 Բայց Տէրը ինծի հետ է՝ զօրաւոր <sup>Ի</sup>ախոյեանի պէս.  
Հետեւաբար հալածիչներս պիտի գայթին ու չյաղթեն.  
Անոնք յոյժ պիտի ամչնան, քանի որ <sup>Լ</sup>պիտի չյաջողին<sup>Ը</sup>.  
**Իրենց կրելիք** յաւիտեանական ճախատինքը պիտի չմոռցուի:
- 12 Բայց ո՛վ զօրքերու Տէր, որ արդարը կը փորձարկես,  
<sup>Խ</sup>Երիկամունքն ու սիրտը կը տեսնես,  
Պիտի տեսնեմ քու վրէժխնդրութիւնդ անոնց վրայ,  
Քանի որ քեզի <sup>Ծ</sup>յանձնեցի իմ դատս:
- 13 Տէրո՛ջ երգեցէք, Տէ՛րը գովաբանեցէք,  
Որովհետեւ աղքատին անձը չարագործներուն ձեռքէն ազատեց:
- 14 Անհծեա՛լ ըլլայ այն օրը՝ երբ ես ծնայ.  
Իմ մօրս զիս ծնած օրը օրհնեալ չըլլայ:
- 15 Անհծեա՛լ ըլլայ այն մարդը՝ որ իմ հօրս ւնտիս բերաւ,  
Եւ զայն **յոյժ** ուրախացուց՝ ըսելով.  
«Արու <sup>Կ</sup>գաւակ մը ծնաւ քեզի<sup>Ը</sup>»:
- 16 Այդ մարդը այն քաղաքներուն պէս թող ըլլայ՝  
Որոնք Տէրը կործանեց առանց արգահատելու.  
Ան առտուն աղաղակ թող լսէ,

<sup>Է</sup> Եբբ.՝ ճախատինք եւ ծանակ կ'ըլլայ ինծի

<sup>Ը</sup> Եբբ.՝ պարունակելու

<sup>Բ</sup> Եբբ.՝ Յայտարարեցէ՛ք

<sup>Ժ</sup> Եբբ.՝ խաղաղութեան մարդիկս

<sup>Ի</sup> Եբբ.՝ բռնաւորի

<sup>Լ</sup> Կամ՝ ուշիմ պիտի չըլլան

<sup>Խ</sup> Այսինքն՝ Խիղճն

<sup>Ծ</sup> Եբբ.՝ յայտնեցի

<sup>Կ</sup> Եբբ.՝ որդի

Ու կէսօրին՝ գոռում:

17 Ինչո՞ւ **Տէրը մօրս** արգանդէն զիս չմեռցուց,  
Որ մայրս ինձի գերեզման ըլլար  
Եւ անոր արգանդը յաւիտեան յղի մնար:

18 Ինչո՞ւ **մօրս** արգանդէն ելայ՝  
Որ տաժանք ու տրտմութիւն տեսնեմ,  
Եւ օրերս ամօթով սպառիմ:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՈՒՇԱԿՈՒԻ

21

**Ահա՛ւասիկ** Տէրոջմէն Երեմիայի «ուղղուած խօսքը, երբ Սեղեկիա թագաւորը Մեղքիայի որդիին՝ Փասուրը ու Մասսիայի որդիին՝ Սոփոնիա քահանան անոր ղրկեց՝ ըսելով. **2** «Կ'աղերսե՛նք, մեզի համար Տէրոջ խորհո՛ւրդ հարցուր, որովհետեւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը մեզի դէմ կը պատերազմի. թերեւս Տէրը մեզի հետ վարուի իր բոլոր սքանչելիքներուն համեմատ, եւ ան՝ մեզմէ հեռանայ՝»:

**3** Երեմիա անոնց ըսաւ. «Սեղեկիայի սա՛ ըսէք. «Տէրը՝ Իսրայելի Աստուածը սա՛ կը յայտարարէ. **4** "Ահա՛ ես ձեր ձեռքերուն մէջ եղող պատերազմական զէնքերը պիտի դարձնեմ, որոնցմով դուք կը պատերազմիք պարիսպին դուրսէն ձեզ պաշարող Բաբելոնի թագաւորին եւ Զաղդէացիներուն դէմ, ու զանոնք այս քաղաքին մէջ պիտի հաւաքեմ: **5** Ե՛ս ալ ձեզի դէմ պիտի պատերազմիմ երկարած ձեռքով եւ ուժեղ բազուկով, բարկութեամբ, ցասումով ու մեծ զայրոյթով: **6** Այս քաղաքին բնակիչները՝ թէ՛ մարդ եւ թէ՛ անասուն՝ պիտի զարնեմ. անոնք մեծ ժանտախտով պիտի մեռնին: **7** Անկէ ետք,– կը պատգամէ Տէրը,– Յուդայի թագաւորը՝ Սեղեկիան, անոր ծառաներն ու ժողովուրդը, եւ այս քաղաքին մէջ ժանտախտէն, սուրէն ու սովէն ճողոպրածները պիտի մատնեմ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը, անոնց թշնամիներուն ձեռքը եւ անոնց կեանքը փնտռողներուն ձեռքը: Զանոնք սուրի բերանէ պիտի անցընէ. անոնց պիտի չխղճայ, պիտի չարգահատի ու չգթայ"□»:

**8** «Այս ժողովուրդին ըսէ՛. "Տէրը սա՛ կը յայտարարէ. "Ահա՛ ձեր առջեւ կը դնեմ կեանքի ճամբան եւ մահուան ճամբան: **9** Ո՛վ որ այս քաղաքին մէջ կը կենայ՝ սուրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի. իսկ ո՛վ որ դուրս ելլէ եւ ձեզ պաշարող Զաղդէացիներուն յանձնուի՝ ողջ պիտի մնայ. անոր կեանքը ակարի մը պէս պիտի ըլլայ իրեն: **10** Արդարեւ իմ երեսս այս քաղաքին դէմ "ուղղեցի՝ չարիք **բերելու** համար, եւ ո՛չ թէ բարիք,– կը պատգամէ Տէրը.– ան Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի յանձնուի, ինք ալ զայն կրակով պիտի այրէ"□»:

ՅՈՒԴԱՅԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆ ԴՍԱՍՏԱՆԸ

**11** «Յուդայի թագաւորին տան մասին լսեցէ՛ք Տէրոջ խօսքը. **12** "Ո՛վ Դաւիթի տունը, Տէրը սա՛ կը յայտարարէ. "Առտուն Դարդարութեամբ դատեցէք եւ ազատեցէ՛ք

<sup>u</sup> Եբր.՝ եղած

<sup>p</sup> Եբր.՝ մեր վրայէն բարձրանայ

<sup>q</sup> Եբր.՝ դրի

<sup>r</sup> Եբր.՝ իրաւունքով

յափշտակութեան ենթարկուողը հարստահարիչին ձեռքէն, որպէսզի ձեր չար արարքներուն պատճառով իմ ցասումս կրակի պէս չպռռթկայ ու ո՛չ մէկը կարենայ զայն մարել<sup>□</sup>»: 13 «Ահա՛ ես ձեզի դէմ եմ, ո՛վ հովիտին՝ լեռնադաշտի վէմին բնակիչները,– կը պատգամէ Տէրը:– Դուք կ'ըսէք. “Ո՞վ պիտի իջնէ մեզի դէմ, կամ ո՞վ պիտի մտնէ մեր բնակավայրերը<sup>□</sup>: 14 Բայց ես ձեզի պիտի հատուցանեմ ձեր արարքներու պտուղին համեմատ,– կը պատգամէ Տէրը:– անոր անտառին մէջ կրակ պիտի <sup>ե</sup>վառեմ, եւ զայն շրջապատող ամէն ինչ պիտի սպառէ<sup>□</sup>»:

ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ՅՈՒԴԱՅԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆ

22

Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Յուդայի թագաւորին տո՛ւնը իջիր,  
Ու հոն սա՛ խօսքը ըսէ.

2 “Ո՛վ Դաւիթի գահին վրայ բազմող Յուդայի թագաւոր,  
Մտի՛կ ըրէ Տէրոջ խօսքը,  
Թէ՛ դուն, թէ՛ քու ծառաներդ ու ժողովուրդդ,  
Որ այս դռներէն կը մտնէք:

3 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
“Իրաւո՛ւնք եւ արդարութի՛ւն կիրարկեցէք.  
Ազատեցէ՛ք յափշտակութեան ենթարկուողը հարստահարիչին ձեռքէն.  
Գաղթականը, որքը եւ այրին  
Մի՛ կեղեքէք, բռնութիւն մի՛ բանեցնէք,  
Եւ այս տեղը անմեղ արիւն մի՛ թափէք:

4 Արդարեւ եթէ ի՛րապէս այս խօսքը գործադրէք,  
Դաւիթի գահին վրայ բազմող թագաւորները՝  
Կառքերու եւ ձիերու վրայ հեծած՝  
Այս տան դռներէն պիտի մտնեն,  
Մի՛րե՛նք, եւ իրենց ծառաներն ու ժողովուրդդ:

5 Բայց եթէ այս խօսքերը մտիկ չընէք,  
Բի՛մ անձիս վրայ՝ երդում կ'ընեմ,– կը պատգամէ Տէրը,–  
Թէ այս տունը աւերակ պիտի ըլլայ<sup>□</sup>»:

6 Որովհետեւ Յուդայի թագաւորին տան մասին՝  
Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Դուն ինձի Գաղաադի պէս  
Ու Լիբանանի գագաթին պէս ես,  
Սակայն անշուշտ քեզ անապատի  
Եւ անբնակ քաղաքներու պիտի <sup>գ</sup>վերածեմ,

<sup>ե</sup> Եբբ.՝ բռնկեցնեմ

<sup>ւ</sup> Եբբ.՝ ի՛նք

<sup>բ</sup> Եբբ.՝ ինձմով

<sup>գ</sup> Եբբ.՝ ընեմ

- 7 Ու քեզի դէմ բնաջնջողներ պիտի <sup>7</sup>պատրաստեմ.  
Իւրաքանչիւրը իր զէնքով **պիտի գայ**,  
Եւ քու ընտիր մայրիներդ պիտի կտրեն  
Ու կրակը ձգեն»:
- 8 Այս քաղաքէն շատ ազգեր պիտի անցնին  
Եւ իրարու ըսեն.  
“Ինչո՞ւ Տէրը այս մեծ քաղաքին հետ այսպէս վարուեցաւ□:
- 9 Ու պիտի պատասխանեն. “Որովհետեւ Տէրոջ՝ իրենց Աստուծոյն ուխտը լքեցին,  
Եւ ուրիշ աստուածներու երկրպագեցին ու զանոնք պաշտեցին□:
- 10 Մեռնողին համար մի՛ լաք,  
Անոր համար մի՛ ողբաք.  
**Հապա** գացողի՛ն համար դառնապէս լացէք,  
Որովհետեւ ա՛յլ պիտի չվերադառնայ  
Եւ իր <sup>5</sup>ծննդավայրը պիտի չտեսնէ»:
- 11 Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ  
Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Սեղղումի մասին,  
Որ իր հօր՝ Յովսիայի տեղ թագաւորեց  
Ու այս տեղէն դուրս ելաւ.  
«Ան ա՛յլ հոս պիտի չվերադառնայ,
- 12 Հապա իր տարագրուած տեղը պիտի մեռնի.  
Ա՛յլ այս երկիրը պիտի չտեսնէ»:
- 13 «Վա՛յ անոր՝ որ իր տունը անարդարութեամբ կը կառուցանէ,  
Եւ իր վերնատունները՝ անիրաւութեամբ.  
Որ իր ընկերը առանց վճարումի կ'աշխատցնէ,  
Ու անոր <sup>9</sup>գործը չի վարձատրեր”.
- 14 Որ կ'ըսէ.  
“Ինծի ընդարձակ տուն  
Ու հանգստաւէտ վերնատուններ կառուցանեմ□,  
Եւ իրեն պատուհաններ կը բանայ,  
**Զայն** մայրիի **փայտով** կը պատէ  
Ու <sup>5</sup>նօթով կը ներկէ:
- 15 Արդեօք պիտի թագաւորե՞ս  
Մայրիի **փայտերու** <sup>2</sup>զարդարանքովդ:  
Միթէ քու հայրդ, որ կերաւ ու խմեց,  
Իրաւունք եւ արդարութիւն կիրարկեց,  
Բարօրութիւն չունեցա՞ւ:
- 16 Դժբախտին եւ աղքատին դատը պաշտպանեց,

<sup>7</sup> Եբբ.՝ սրբացնեմ

<sup>5</sup> Եբբ.՝ ծնունդի երկիրը

<sup>9</sup> Եբբ.՝ գործին վարձք չի տար

<sup>5</sup> Այսինքն՝ բարձրորակ կարմիր ներկով

<sup>2</sup> Եբբ.՝ բորբոքումովդ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ուստի **անոր** բարիք եղաւ:

Միթէ զիս ճանչնալը ասիկա չէ՞, – կը պատգամէ Տէրը:–

- 17** Սակայն քու աչքերդ ու սիրտդ  
Միայն ազահութեանդ **ուղղուած** են,  
Որպէսզի անմեղ արիւն թափես,  
Եւ հարստահարութիւն ու վայրագութիւն բանեցնես»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ՅՈՎԱԿԻՄԻ ՄԱՍԻՆ

- 18** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ  
Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի մասին.  
«Անոր վրայ պիտի չհեծեծեն՝ **ըսելով**.  
“Վա՛յ, եղբայրս, կամ. “Վա՛յ քոյրս.  
Անոր վրայ պիտի չհեծեծեն՝ **ըսելով**.  
“Վա՛յ, իմ տէ՛րս, կամ. “Վա՛յ **անոր** պատիւին»:
- 19** Ան իշու թաղումով պիտի թաղուի.  
Պիտի քաշկռտուի,  
Ու Երուսաղէմի դռներէն դուրս նետուի»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՄԱՍԻՆ

- 20** «Լիբանան՝ բարձրացիր եւ աղաղակէ՛.  
Չայնդ **լսե՛լ** տուր Բասանի մէջ,  
Եւ աղաղակէ՛ Աբիրամէ.  
Որովհետեւ քու բոլոր հոմանիւներդ ջախջախուեցան:
- 21** Երբ դուն անդորրութեան մէջ էիր՝ քեզի խօսեցայ,  
**Բայց** դուն ըսիր. “Մտիկ չեմ ըներ»:  
Քու երիտասարդութենէդ ի վեր ա՛յս է **ընթացքդ**,  
Որ իմ խօսքս մտիկ չընես:
- 22** Քու բոլոր հովիւներդ հովին ճարակ պիտի ըլլան,  
Ու հոմանիւներդ գերութեան պիտի երթան:  
Անշուշտ այն ատեն պիտի ամչնաս եւ խայտառակուիս  
Ամբողջ չարութեանդ համար:
- 23** Ո՛վ Լիբանանի մէջ բնակող  
Ու մայրիներու մէջ բոյն ունեցող,  
Ո՛րչափ ողորմելի պիտի ըլլաս՝ երբ վրադ երկունքի ցաւեր հասնին,  
Ծննդաբերող **կնոջ** երկունքի ցաւին պէս»:

## ՅԵՔՈՆԻԱՅԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

- 24** «Ես կ'ապրի՛մ, – կը պատգամէ Տէրը, –  
Ո՛վ Յուդայի թագաւոր, Յովակիմի որդի՝ Յեքոնիա.  
Թէեւ իմ աջ ձեռքիս մէջ կնիք ըլլաս,  
Անկէ ալ քեզ պիտի փրցնեմ:

---

<sup>բ</sup> Եբբ.՝ ճամբարդ

- 25 Զեզ պիտի մատնեմ կեանքդ փնտռողներուն ձեռքը,  
Այն մարդոց ձեռքը՝<sup>d</sup> որոնցմէ դուն կը վախնաս.—  
Բաբելոնի Նաբուգոդոնոսր թագաւորին ձեռքը,  
Ու Զադդէացիներուն ձեռքը:
- 26 Զեզ ու մայրդ՝ որ քեզ ծնաւ,  
Օտար երկիր պիտի նետեմ՝  
Ուր ծնած չէք,  
Եւ հոն պիտի մեռնիք.
- 27 Պիտի չվերադառնան այն երկիրը՝  
Ուր վերադառնալ՝<sup>h</sup> կը տենչան՝»:
- 28 Միթէ այս մարդը՝ Յեքոնիա արհամարհուած ու կոտորած սափո՞ր մըն է,  
Կամ թէ այնպիսի անօ՞թ մը՝ որմէ ո՛չ մէկը կ'ախորժի:  
Ինչո՞ւ ինք եւ իր զարմը վտարուեցան,  
Ու նետուեցան երկիր մը՝ որ չէին ճանչնար:
- 29 Ո՛վ երկիր, երկիր, երկիր,  
Մտի՛կ ըրէ Տէրոջ խօսքը:
- 30 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Իբր անգաւա՛կ արձանագրեցէք այս մարդը,  
Մարդ մը՝ որ իր օրերուն մէջ պիտի չյաջողի.  
Արդարեւ անոր զարմէն ո՛չ մէկը պիտի յաջողի  
Դաւիթի գահին վրայ բազմիլ,  
Ու երբեք Յուդայի վրայ տիրել»:

ՅՈՅՍ ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ

23

- «Վա՛յ այն հովիւներուն,  
Որոնք իմ արօտիս ոչխարները կը կորսնցնեն եւ կը ցրուեն», կը պատգամէ Տէրը:
- 2 Հետեւաբար Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ  
Այն հովիւներուն մասին՝ որ իմ ժողովուրդս կը հովուեն.  
«Դուք իմ ոչխարներս ցրուեցիք ու զանոնք քշեցիք,  
Զանոնք չխնամեցիք:  
Ահա՛ ես ձեր չար արարքներու համար  
«Չեզ պիտի պատժեմ»,— կը պատգամէ Տէրը:—
- 3 Իսկ իմ ոչխարներուս մնացորդը պիտի հաւաքեմ  
Այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք քշեր էի.  
Զանոնք իրենց արօտավայրերը պիտի վերադարձնեմ,  
Ուր պիտի աճին եւ շատնան:
- 4 Անոնց վրայ հովիւներ պիտի նշանակեմ՝ որ զանոնք հովուեն.

<sup>d</sup> Եբր.՝ որոնց երեսէն

<sup>h</sup> Եբր.՝ իրենց անձը կը բարձրացնեն

<sup>i</sup> Եբր.՝ Զօրաւոր մարդ

<sup>u</sup> Եբր.՝ Չեզի պիտի այցելեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Անոնք ա՛լ պիտի չվախնան ու չզարհուրին,  
եւ անոնցմէ ո՛չ մէկը պիտի պակսի», կը պատգամէ Տէրը:

- 5 «Ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
երբ Դաւիթէն արդար Շառաւիղ մը պիտի հանեն,  
Թագաւոր մը՝ որ ուշիմութեամբ պիտի թագաւորէ,  
Ու երկրին մէջ իրաւունք եւ արդարութիւն կիրարկէ:
- 6 Անոր օրերը Յուդա պիտի ազատի,  
Իսրայէլ ապահովութեամբ բնակի,  
եւ սա՛ է անոր անունը՝ որով պիտի կոչուի.  
“Տէրը՝ մեր արդարութիւնը”:
- 7 Հետեւաբար ահա՛ պիտի գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
երբ ա՛լ պիտի չըսուի. “Կ’ապրի՛ Տէրը՝  
Որ Իսրայէլի որդիները Եգիպտոսի երկրէն բարձրացուց”,
- 8 Հապա. “Կ’ապրի՛ Տէրը՝  
Որ Իսրայէլի գարմը բարձրացուց ու բերաւ հիւսիսի երկրէն,  
Նաեւ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք աքսորեր էի,  
եւ անոնք իրենց հողին վրայ պիտի բնակին»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

- 9 Մարգարէներուն համար սիրտս իմ ներսս կոտրած է.  
Բոլոր ոսկորներս կը դողան.  
Գինով մարդու պէս,  
եւ <sup>բ</sup>գինիէն նուաճուած՝ <sup>գ</sup>մարդու պէս եղայ՝  
Տէրոջ պատճառով եւ անոր սուրբ խօսքերուն պատճառով:
- 10 Արդարեւ երկիրը շնացողներով լեցուած է.  
Երկիրը կը սգայ անէծքին պատճառով.  
Անապատին մարգագետինները չորցան:  
Անոնց վազքը չարաղէտ է.  
Անոնց գօրութիւնը անիրաւ է:
- 11 «Արդարեւ թէ՛ մարգարէն եւ թէ քահանան <sup>դ</sup>ապականած են.  
Անոնց չարութիւնը իմ տանս մէջ ալ գտայ,– կը պատգամէ Տէրը:–
- 12 Հետեւաբար անոնց ճամբաները  
Մթութեան մէջ զիրենք պիտի սահեցնեն.  
Անոնք հոն պիտի հրուին եւ իյնան,  
Որովհետեւ ես <sup>ե</sup>պատիժի տարին  
Անոնց վրայ չարիք պիտի բերեմ,– կը պատգամէ Տէրը:–
- 13 Սամարիայի մարգարէներուն մէջ  
Անպատշաճութիւն տեսայ.

---

<sup>բ</sup> Եբբ.՝ գինին գլուխը անցած

<sup>գ</sup> Եբբ.՝ գօրաւոր մարդու

<sup>դ</sup> Եբբ.՝ պղծուած

<sup>ե</sup> Եբբ.՝ հատուցումի

Բահաղի **անունով** կը մարգարէանան  
Եւ իմ ժողովուրդս՝ Իսրայելը կը մոլորեցնեն:

**14** Երուսաղէմի մարգարէներուն մէջ քստմնելի **բան** մը տեսայ.  
Անոնք շնութիւն կ'ընեն ու ստութեան մէջ կ'ընթանան,  
Չարագործներուն ձեռքերը կ'ուժովցնեն,  
Որպէսզի ո՛չ մէկը դարձի գայ իր չարութենէն.  
Անոնք բոլորը ինծի Սողոմի պէս եղան,  
Եւ անոր բնակիչները՝ Գոմորի պէս»:

**15** Հետեւաբար գօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ մարգարէներուն մասին.  
«Ահա՛ ես անոնց օշինդր պիտի կերցնեմ,  
Անոնց թունաւոր ջուր պիտի խմցնեմ,  
Որովհետեւ Երուսաղէմի մարգարէներէն ամբարշտութիւն ելաւ  
Եւ ամբողջ երկրին մէջ **տարածուեցաւ**»:

**16** Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ձեզի մարգարէացող մարգարէներուն խօսքերը մտիկ մի՛ ընէք.  
Անոնք ունայնութեան կը տանին ձեզ.  
Իրենց սիրտին տեսիլքը կը խօսին,  
Ո՛չ թէ Տէրոջ բերանէն:

**17** Անոնք զիս անարգողներուն կը խօսին ու կ'ըսեն.  
“Տէրը ըսաւ. “Ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ”<sup>□</sup>,  
Եւ իրենց սիրտին կամակորոտեան մէջ բոլոր ընթացողներուն կ'ըսեն.  
“Ձեր վրայ չարիք պիտի չգայ”<sup>□</sup>»:

**18** **Անոնցմէ** ո՞վ <sup>գ</sup>ներկայ եղաւ՝ Տէրոջ խորհրդածողովին,  
**Զայն** տեսաւ եւ անոր խօսքը լսեց.  
Ո՞վ ուշադիր եղաւ անոր խօսքին, ու մտիկ ըրաւ:

**19** Ահա՛ Տէրոջ մրրիկը ցասումով <sup>է</sup>բարձրացաւ.  
Ան <sup>բ</sup>սաստիկ մրրիկ է,  
Ամբարիշտներուն գլուխին վրայ պիտի <sup>բ</sup>պայթի:

**20** Տէրոջ բարկութիւնը պիտի չհեռանայ,  
Մինչեւ որ իր սիրտին <sup>գ</sup>մտածումները չիրագործէ ու չհաստատէ.  
Վերջին օրերը ասիկա <sup>հ</sup>բոլորովին պիտի հասկնաք:

**21** Այս մարգարէները ես չղրկեցի, բայց անոնք կը վազեն.  
Ես անոնց չխօսեցայ, բայց անոնք կը մարգարէանան:

**22** Իսկ եթէ անոնք իմ խորհրդածողովիս ներկայ եղած  
Եւ իմ խօսքս ժողովուրդիս լսել տուած ըլլային,

---

<sup>գ</sup> Եբր.՝ կայնեցաւ

<sup>է</sup> Եբր.՝ դուրս ելաւ

<sup>բ</sup> Եբր.՝ ցաւալի

<sup>բ</sup> Եբր.՝ ցաւցնէ

<sup>գ</sup> Եբր.՝ մտադրութիւնները

<sup>հ</sup> Եբր.՝ հասկնալով

Ջանոնք իրենց չար լընթացքէն

Ու չար արարքներէն պիտի հեռացնէին»:

- 23 «Միթէ ես միայն մօտակայի՞ն Աստուածն եմ,
   
իսկ հեռաւորին Աստուածը չե՞մ,– կը պատգամէ Տէրը:–
- 24 Կամ թէ մէկը կրնա՞յ ծածուկ տեղեր պահուրտիլ՝
   
Որ ես զինք չտեսնեմ,– կը պատգամէ Տէրը:–
   
Միթէ երկինքն ու երկիրը լեցնողը ես չե՞մ», կը պատգամէ Տէրը:
- 25 «Իմ անունովս ստուրթիւն մարգարէացող մարգարէներուն ըսածները լսեցի,
   
Որոնք կ'ըսեն. “Երազ տեսայ, երազ տեսայ”:
- 26 Մինչեւ ե՞րբ ասիկա ստուրթիւն մարգարէացող մարգարէներուն սիրտին մէջ պիտի
   
ըլլայ,
   
Որոնք իրենց սիրտին խաբէութիւններով կը մարգարէանան:
- 27 Անոնք իրենց երազներով – որ իրարու կը պատմեն –
   
Կը մտածեն իմ անունս մոռցնել տալ ժողովուրդիս ,
   
ինչպէս իրենց հայրերը Բահաղի պատճառով իմ անունս մոռցան:
- 28 Երազ ունեցող մարգարէն երազը թող պատմէ,
   
իսկ իմ խօսքս ունեցողը՝<sup>Խ</sup>հաւատարմութեամբ թող հաղորդէ իմ խօսքս.
   
Յարդը ի՞նչ արժէք ունի ցորենին քով,– կը պատգամէ Տէրը:–
- 29 Միթէ իմ խօսքս կրակի պէս չէ՞,– կը պատգամէ Տէրը,–
   
Կամ ժայռը ծփշրող ուռի պէս չէ՞»:
- 30 «Հետեւաբար ահա՛ ես այն մարգարէներուն դէմ եմ,– կը պատգամէ Տէրը,–
   
Որոնք իմ խօսքերս իրարմէ կը գողնան:
- 31 Ահա՛ ես այն մարգարէներուն դէմ եմ,– կը պատգամէ Տէրը,–
   
Որոնք իրենց լեզուները կը գործածեն, ու կ'ըսեն. “Ի՞նք պատգամեց”:
- 32 Ահա՛ ես այն ՚սուտ երազներ մարգարէացողներուն դէմ եմ,– կը պատգամէ Տէրը,–
   
Որոնք զանոնք կը պատմեն, եւ իմ ժողովուրդս կը մոլորեցնեն
   
իրենց ստուրթիւններով ու սնապարծութեամբ:
   
Ես զանոնք չըրկեցի, ո՛չ ալ անոնց հրամայեցի.
   
Ուստի անոնք այս ժողովուրդին բնա՛ւ օգտակար պիտի չըլլան», կը պատգամէ Տէրը:

ՏԵՐՈՋ ՊԱՏԳԱՄԸ

- 33 «Եթէ այս ժողովուրդը,
   
Կամ մարգարէ մը, կամ քահանայ մը,
   
Զեզի հարցնէ. “Ի՞նչ է Տէրոջ պատգամը”,
   
Անոնց պատասխանէ՛. “Ի՞նչ պատգամ”»:
   
«Ես ձեզ անշուշտ երեսէ պիտի ձգեմ,– կը պատգամէ Տէրը:–
- 34 Այն մարգարէն, կամ քահանան, կամ ժողովուրդը՝
   
Որ կ'ըսէ. “Տէրոջ պատգամը”,

<sup>1</sup> Եբր.՝ ճամբաներէն

<sup>Խ</sup> Եբր.՝ ճշմարտութեամբ

<sup>ծ</sup> Եբր.՝ ցրուող

<sup>Կ</sup> Կամ՝ կեղծ

Այդ մարդն ու անոր տունը պիտի 'պատժեմ:

- 35 Իւրաքանչիւրը՝ իր ընկերին,  
Իւրաքանչիւրը՝ իր եղբօր սա՛ թող ըսէ.  
“Տէրը ի՞նչ պատասխանեց,  
Տէրը ի՞նչ խօսեցաւ:
- 36 Ա՛յ Տէրոջ պատգամը մի՛ յիշատակէք,  
Որովհետեւ իւրաքանչիւրին խօսքը պիտի ըլլայ իր պատգամը,  
Որովհետեւ դուք ապրող Աստուծոյն,  
Ջօրքերու Տէրոջ՝ մեր Աստուծոյն խօսքը խեղաթիւրեցիք<sup>□</sup>:
- 37 Մարգարէին սա՛ ըսէ.  
“Տէրը քեզի ի՞նչ պատասխանեց,  
Տէրը ի՞նչ խօսեցաւ:
- 38 Իսկ եթէ ըսէք. “Տէրոջ պատգամը”,  
Այն ատեն Տէրը սա՛ կը յայտարարէ.  
“Քանի սա՛ խօսքը կ'ըսէք. «Տէրոջ պատգամը»,  
Թէպէտ ես ձեզի լուր դրկեցի եւ ըսի. «Մի՛ ըսէք. “Տէրոջ պատգամը<sup>□</sup>»,
- 39 Ահա՛ ես ձեզ բոլորովին պիտի մոռնամ.  
**Երեսէ** պիտի ձգեմ ձեզ եւ այն քաղաքը՝ որ ձեզի ու ձեր հայրերուն տուի,  
**Եւ պիտի վտարեմ** ձեզ իմ ներկայութենէս:
- 40 Ձեր վրայ յաւիտենական նախատինք  
Ու յաւիտենական խայտառակում պիտի դնեմ,  
Որ պիտի չմոռցուի<sup>□</sup>»:

ԵՐԿՈՒ ԿՈՂՈՎ ԹՈՒՋ

24

Երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը երուսաղէմէն տարագրեց եւ Բաբելոն տարաւ Յուդայի թագաւորը, Յովակիմի որդին՝ Յեքոնիան , նաեւ Յուդայի իշխանաւորները, “հիւսններն ու դարբինները, Տէրը ինծի սա՛ տեսիլքը տեսնել տուաւ...– ահա՛ Տէրոջ տաճարին առջեւ դրուած երկու կողով թուզ կար. 2 մէկ կողովին մէջ շատ լաւ թուզեր կային՝ կանխահաս թուզերու պէս, իսկ միւս կողովին մէջ շատ գէշ թուզեր կային, որոնք կարելի չէր ուտել՝ ա՛յնքան որ գէշ էին: 3 Տէրը ինծի ըսաւ. «Ո՛վ Երեմիա, ի՞նչ կը տեսնես»: Ես ալ ըսի. «Թուզեր. լաւ թուզերը շատ լաւ են, իսկ գէշերը՝ շատ գէշ, ու կարելի չէ զանոնք ուտել՝ ա՛յնքան որ գէշ են»:

4 Այն ատեն <sup>բ</sup>Տէրը խօսեցաւ՝ ինծի՝ ըսելով. «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. 5 “Այս լաւ թուզերուն պէս պիտի ճանչնամ Յուդայէն տարագրուածները, որ այս տեղէն Քաղդէացիներուն երկիրը դրկեցի՝ **իրենց** բարիքին համար: 6 Իմ աչքերս անոնց վրայ պիտի ‘սեւեռեմ՝ բարիքի համար, եւ զանոնք այս երկիրը պիտի վերադարձնեմ. զանոնք պիտի կառուցանեմ, ո՛չ թէ փլցնեմ. զանոնք պիտի տնկեմ, ո՛չ թէ

<sup>բ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>ա</sup> Կամ՝ արհեստաւորներն

<sup>բ</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>գ</sup> Եբբ.՝ դնեմ

խլեմ: 7 Անոնց այնպիսի սիրտ մը պիտի տամ, որ զիս ճանչնան թէ ե՛ս եմ Տէրը: Անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան, ու ես անոնց Աստուածը պիտի ըլլամ, քանի իրենց ամբողջ սիրտով ինծի պիտի վերադառնան: 8 Իսկ այս գէշ թուգերուն մասին, որոնք ա՛յնքան գէշ են՝ որ կարելի չէ ուտել, ի՛րապէս Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ա՛յդպէս պիտի դարձնեմ Յուդայի թագաւորը՝ Սեդեկիան, անոր իշխանաւորներն ու Երուսաղէմի մնացորդը, որոնք այս երկրին մէջ մնացած են, նաեւ Եգիպտոսի երկրին մէջ բնակողները: 9 Զանոնք երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ սուկումի ու ծախորդութեան պիտի մատնեմ, որպէսզի նախատինք, Դնշաւակ, կատակի առարկայ եւ անէծք ըլլան այն բոլոր տեղերը՝ ուր զանոնք պիտի աքսորեմ: 10 Անոնց վրայ սուր, սով ու ժանտախտ պիտի դրկեմ, մինչեւ որ Կանհետանան այն հողին վրայէն՝ որ իրենց եւ իրենց հայրերուն տուի»:

ՀԻՒՍԻՍԷՆ ԵԿՈՂ ԹՇՆԱՄԻՆ

25

Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի չորրորդ տարին, որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին առաջին տարին էր, ամբողջ Յուդայի ժողովուրդին մասին Երեմիայի “ուղղուած խօսքը, 2 որ Երեմիա մարգարէն ամբողջ Յուդայի ժողովուրդին եւ բոլոր Երուսաղէմի բնակիչներուն հաղորդեց՝ ըսելով. 3 «Յուդայի թագաւորին՝ Ամոնի որդիին Յովսիայի տասներեքերորդ տարիէն մինչեւ այսօր, որ քսաներեք տարի է, Տէրոջ խօսքը ինծի Դնշաւակեցաւ ու ես ձեզի հաղորդեցի՝ կանուխ ելլելով, բայց մտիկ չըրիք: 4 Տէրը ձեզի դրկեց իր բոլոր ծառաները՝ մարգարէները – կանուխ ելլելով դրկեց –, բայց մտիկ չըրիք ու ձեր ականջը չդարձուցիք՝ մտիկ ընելու համար: 5 Անոնք կ’ըսէին. “Ձեզմէ իւրաքանչիւրը թող դարձի գայ իր չար Գնթաքքէն եւ չար արարքներէն, որպէսզի Դարէ դար” բնակիք այն հողին վրայ՝ որ Տէրը ձեզի ու ձեր հայրերուն տուաւ: 6 Ուրիշ աստուածներու մի՛ հետեւիք՝ զանոնք պաշտելու եւ անոնց երկրպագելու համար, ու զիս մի՛ գրգռէք ձեր ձեռքերուն գործերով, որպէսզի ձեզի չարիք չընեմ: 7 Բայց դուք ինծի մտիկ չըրիք,– կը պատգամէ Տէրը,– որպէսզի զիս ձեր ձեռքերուն գործերով գրգռէք՝ ձեր ծախորդութեան համար:

8 «Հետեւաբար զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. 9 “Քանի իմ խօսքերս մտիկ չըրիք, ահա՛ ես պիտի Կանչեմ եւ առնեմ բոլոր հիւսիսի գերդաստանները,– կը պատգամէ Տէրը,– նաեւ իմ ծառաս՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը, ու զանոնք պիտի բերեմ այս երկրին դէմ, անոր բնակիչներուն դէմ, եւ այս բոլոր շրջակայ ազգերուն դէմ: Զանոնք պիտի անճիտեմ, ապշութեան ու սուլոցի ենթակայ ընեմ, եւ յաւիտենապէս աւերակ դարձնեմ: 10 Անկէ պիտի դադրեցնեմ բերկրանքի ծայնը եւ ուրախութեան ծայնը, փեսային

<sup>7</sup> Եբբ.՝ առակ

<sup>8</sup> Եբբ.՝ սպառնից

<sup>9</sup> Եբբ.՝ եղած

<sup>10</sup> Եբբ.՝ եղաւ

<sup>1</sup> Եբբ.՝ ճամբայէն

<sup>2</sup> Եբբ.՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

<sup>3</sup> Եբբ.՝ մարդ դրկեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ձայնն ու հարսին ձայնը, ջաղացքին ձայնը եւ ճրագին լոյսը: **11** Այս ամբողջ երկիրը ււերակ ու ամայութիւն պիտի ըլլայ, եւ այս ազգերը եօթանասուն տարի Բաբելոնի թագաւորին պիտի ծառայեն<sup>ա</sup>:

**12** «Երբ եօթանասուն տարին լրանայ, Բաբելոնի թագաւորը եւ այդ ազգը պիտի պատժեն իրենց անօրէնութեան համար. նաեւ Քաղղէացիներուն երկիրը **պիտի պատժեն**,<sup>բ</sup> կը պատգամէ Տէրը,<sup>բ</sup> եւ զայն յաւիտենապէս ամայի պիտի հրարձեն: **13** Այդ երկրին վրայ «պիտի իրագործեն» այն բոլոր խօսքերս՝ որ անոր դէմ արտասանեցի, **այսինքն՝** ամէն ինչ որ այս գիրքին մէջ գրուած է, որ Երեմիա մարգարէացաւ բոլոր ազգերուն դէմ: **14** Արդարեւ շատ ազգեր եւ մեծ թագաւորներ գիրքնք ալ պիտի ստրկացնեն, ու ես անոնց պիտի հատուցանեմ իրենց արարքներուն եւ իրենց ձեռքերու գործերուն համեմատ<sup>գ</sup>»:

## ԱԶԳԵՐՈՒՆ ԴՏԱՍՏԱՆԸ

**15** Արդարեւ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ թըսաւ ինծի. «Ա՛ն ձեռքէս այս ցասումի գինիին բաժակը, եւ խմցո՛ւր զայն այն բոլոր ազգերուն՝ որոնց քեզ կը ղրկեմ: **16** Անոնք պիտի խմեն ու տատանին, եւ պիտի խենթանան այն սուրին պատճառով՝ որ անոնց մէջ պիտի ղրկեմ»: **17** Ուստի Տէրոջ ձեռքէն առի բաժակը, ու ժխմցուցի այն բոլոր ազգերուն՝ որոնց Տէրը զիս ղրկեց.— **18** Երուսաղէմի, Յուդայի քաղաքներուն, անոր թագաւորներուն եւ իշխանաւորներուն, որպէսզի զանոնք ււերակ, ամայութիւն, սուլոցի **պատճառ** ու անէծք դարձնէ, ինչպէս այսօր **կ'երեւնայ**. **19** Եգիպտոսի Փարաւոն թագաւորին եւ անոր ծառաներուն, իշխանաւորներուն ու ամբողջ ժողովուրդին. **20** նաեւ բոլոր իսառնածիներուն եւ Հուսի երկրին բոլոր թագաւորներուն. Փղշտացիներու երկրին բոլոր թագաւորներուն, **այսինքն՝** Ասկաղոնի, Գազայի, Ակկարոնի եւ Ազովտոսի մնացորդին. **21** Եդոմի, Մովաբի, ու Ամմոնի որդիներուն. **22** Տիրոսի բոլոր թագաւորներուն, Սիդոնի բոլոր թագաւորներուն, եւ ծովուն միւս կողմը եղող՝ Կղզիներու թագաւորներուն. **23** Դեդանի, Թեմայի, Բուզի, ու բոլոր <sup>դ</sup>**իրենց մօրուքին** ծայրերը կտրողներուն<sup>դ</sup>. **24** Արաբիայի բոլոր թագաւորներուն եւ անապատը բնակող խառնածիներու բոլոր թագաւորներուն. **25** <sup>ե</sup>Զամբրիի բոլոր թագաւորներուն, Եղամի բոլոր թագաւորներուն ու Մարաստանի բոլոր թագաւորներուն. **26** հիւսիսի բոլոր թագաւորներուն, մօտ կամ հեռու եղողներուն, ասոնց եւ

<sup>ա</sup> Եբր.՝ հատուցանեմ

<sup>բ</sup> Եբր.՝ ընեմ

<sup>բ</sup> Եբր.՝ բերել պիտի տամ

<sup>բ</sup> Եբր.՝ կը յայտարարէ

<sup>գ</sup> Կամ՝ հրամցուցի

<sup>գ</sup> Կամ՝ Արաբներուն

<sup>դ</sup> Կամ՝ ծովեզերեայ երկիրներու

<sup>դ</sup> Կամ՝ երկրի ծայրերը եղողներուն

<sup>ե</sup> Կամ՝ Զեմրանացիներու

անոնց, ու երկրագունդի մակերեսին վրայ եղող երկրի բոլոր թագաւորներուն. անոնցմէ ետքն ալ՝ <sup>4</sup>Սիսակի թագաւորը պիտի խմէ: **27** «Անոնց ըսէ՛. “Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Խմեցէ՛ք, գինովցէ՛ք ու փսխեցէ՛ք. ինկէ՛ք եւ ա՛լ ոտքի մի՛ ելլէք այն սուրին պատճառով՝ որ ձեր մէջ պիտի դրկեմ”<sup>5</sup>: **28** Եթէ մերժեն բաժակը քու ձեռքէդ առնել՝ խմելու համար, անոնց ըսէ՛. “Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. “Անշո՛ւշտ պիտի խմէք. **29** որովհետեւ ահա՛ ես սկսայ իմ անունովս կոչուած քաղաքին վրայ չարիք բերել. միթէ դուք անպատի՞ժ պիտի մնաք: **Ո՛չ**, անպատիժ պիտի չմնաք, քանի որ երկրի բոլոր բնակիչներուն վրայ սուրը պիտի կանչեմ”, կը պատգամէ զօրքերու Տէրը<sup>6</sup>»:

**30** «Ուստի դուն այս բոլոր խօսքերը անոնց դէմ մարգարէանալով՝ անոնց ըսէ՛.

“Տէրը բարձր **վայրէն** պիտի <sup>6</sup>գոչէ,

եւ իր սուրբ բնակավայրէն իր ձայնը **լսել** պիտի տայ.

իւր բնակարանին դէմ ահարկու ձայնով պիտի գոչէ,

**Խաղող** կոխողներու ճիչին պէս՝

Երկրի բոլոր բնակիչներուն դէմ պիտի <sup>8</sup>աղաղակէ:

**31** **Անոր** ժխտը մինչեւ երկրի ծայրերը պիտի հասնի,

Որովհետեւ Տէրը ազգերուն հետ վէճ ունի.

Ան ամէն մարմինի հետ դատ պիտի վարէ,

եւ ամբարիշտները սուրի պիտի մատնէ<sup>7</sup>, կը պատգամէ Տէրը»:

**32** Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ահա՛ չարիքը ազգէ ազգ պիտի <sup>7</sup>փոխանցուի.

Երկրի ծագերէն մեծ մորիկ մը պիտի <sup>6</sup>բարձրանայ:

**33** Այդ օրը Տէրոջմէն մեռցուածները՝

Երկրի **մէկ** ծայրէն մինչեւ **միւս** ծայրը պիտի ըլլան:

Անոնց վրայ պիտի չհեծեծեն,

Անոնք պիտի չհաւաքուին ու չթաղուին.

Գետինի մակերեսին վրայ աղբի պէս պիտի ըլլան»:

**34** «Գոռացէ՛ք, ո՛վ հովիւներ, եւ աղաղակեցէ՛ք.

**Մոխրիի՛ մէջ** թաւալեցէք, ո՛վ հօտին երեւելիները.

Որովհետեւ ձեր մորթուելու եւ ցիրուցան ըլլալու <sup>5</sup>ժամանակը հասած է՝,

Ու ցանկալի իրի պէս պիտի իյնաք:

**35** Հովիւները փախչելու տեղ պիտի չունենան,

Ո՛չ ալ հօտին երեւելիները՝ ազատելու **միջոց**:

**36** Հովիւներուն աղաղակին ձայնը

եւ հօտին երեւելիներուն ոռնալու **ձայնը** պիտի լսուի,

Որովհետեւ Տէրը անոնց արօտները կործանեց:

<sup>4</sup> **Հաւանաբար՝** Բաբելոնի

<sup>6</sup> **Եբր.**՝ մռնչէ

<sup>8</sup> **Եբր.**՝ պատասխանէ

<sup>7</sup> **Եբր.**՝ դուրս ելլէ

<sup>6</sup> **Եբր.**՝ արթննայ

<sup>5</sup> **Եբր.**՝ օրերը լրացած են

- 37 Տէրոջ բարկութեան բորբոքումին՝ առջեւ՝  
Խաղաղաւէտ մարգագետինները լռութեան դատապարտուեցան:
- 38 Առիւծի կորիւնի պէս իր՝ բնակարանը լքեց,  
Քանի որ անոնց երկիրը պիտի ամայանայ  
Կեղեքողին բորբոքումին առջեւ,  
Անոր բարկութեան բորբոքումին առջեւ»:

ԵՐԵՄԻԱ ԴԱՏԻ ԿԸ ԲԵՐՈՒԻ

26

Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի թագաւորութեան սկիզբը, սա՛ խօսքը՝ Խուղղուեցաւ Տէրոջմէն՝ ըսելով. 2 «Տէրը սա՛ կը յայտարարէ. “Տէրոջ տան գաւիթը կայնէ՛, ու Տէրոջ տունը երկրպագելու եկող Յուդայի բոլոր քաղաքներուն արտասանէ՛ այն բոլոր խօսքերը, որոնք քեզի հրամայեցի՝ անոնց ըսելու համար. ո՛չ մէկ խօսք պակսեցուր: 3 Թերեւս մտիկ ընեն եւ իւրաքանչիւրը իր չար ճամբայէն դարձի գայ, ես ալ հրաժարիմ այն չարիքէն՝ որ կը մտածեմ անոնց ընել, իրենց չար արարքներուն պատճառով: 4 Անոնց ըսէ՛. “Տէրը սա՛ կը յայտարարէ. «Եթէ ինծի մտիկ չընելով՝ ձեր առջեւ դրած օրէնքիս մէջ չընթանաք, 5 ու ձեզի դրկած ծառաներուս՝ մարգարէներուն խօսքերը մտիկ չընէք, – որոնք կանուխ ելլելով դրկեցի, բայց դուք մտիկ չըրիք, – 6 այս տունը Սելովի պէս պիտի ՚ընեն, եւ այս քաղաքը անէծք դարձնեմ երկրի բոլոր ազգերուն»<sup>□</sup>»:

7 Քահանաները, մարգարէներն ու ամբողջ ժողովուրդը լսեցին, երբ Երեմիա Տէրոջ տան մէջ այս խօսքերը կ'արտասանէր: 8 Երբ Երեմիա անարտեց այն բոլոր խօսքերը՝ որ Տէրը իրեն հրամայեւ էր ըսել ամբողջ ժողովուրդին, քահանաները, մարգարէներն ու ամբողջ ժողովուրդը զինք բռնեցին եւ ըսին. «Դուն անպատճառ պիտի մեռնիս: 9 Ինչո՞ւ Տէրոջ անունով մարգարէացար՝ ըսելով. “Այս տունը Սելովի պէս պիտի ըլլայ, եւ այս քաղաքը աներակ պիտի ըլլայ՝ առանց բնակիչի<sup>□</sup>»: Ամբողջ ժողովուրդը Երեմիայի շուրջ հաւաքուեցաւ Տէրոջ տան մէջ:

10 Երբ Յուդայի իշխանաւորները այս բաները լսեցին, թագաւորին տունէն Տէրոջ տունը բարձրացան եւ Տէրոջ տան նոր դրան մուտքը նստան: 11 Քահանաներն ու մարգարէները խօսեցան իշխանաւորներուն եւ ամբողջ ժողովուրդին, ու ըսին. «Այս մարդը մեռնելու արժանի է, քանի որ այս քաղաքին դէմ մարգարէացաւ, ինչպէս դուք ձեր ականջներով լսեցիք»:

12 Իսկ Երեմիա բոլոր իշխանաւորներուն եւ ամբողջ ժողովուրդին ըսաւ. «Տէ՛րը զիս դրկեց որ մարգարէանամ՝ այս տան ու այս քաղաքին դէմ արտասանելով ձեր լսած բոլոր խօսքերը: 13 Ուստի հիմա բարեփոխեցէ՛ք ձեր ճշմարտացքն ու արարքները, եւ մտիկ ըրէք ձեր Աստուծոյն ձայնը. Տէրն ալ ձեր դէմ ՚վճռած չարիքէն պիտի հրաժարի: 14 Իսկ ես ահա՛

<sup>1</sup> Եբր.՝ երեսէն

<sup>6</sup> Եբր.՝ մացառուտը, կամ՝ տաղաւարը

<sup>ա</sup> Եբր.՝ եղաւ

<sup>բ</sup> Եբր.՝ դարձնեմ

<sup>գ</sup> Եբր.՝ ճամբաներն

<sup>դ</sup> Եբր.՝ խօսած

ձեր ձեռքն եմ. վարուեցէ՛ք ինձի հետ՝ ինչպէս որ «ձեզի հաճելի եւ ուղիղ թուի»<sup>15</sup> Սակայն լա՛ւ գիտցէք թէ եթէ զիս մեռցնէք, անշուշտ անմեղ արիւնին պատիժը պիտի դնէք ձեր վրայ, այս քաղաքին վրայ եւ անոր բնակիչներուն վրայ. որովհետեւ ճշմարտապէս Տէ՛րը զիս ձեզի դրկեց, որպէսզի այս բոլոր խօսքերը ձեր ականջներուն ըսեմ»:

**16** Այն ատեն իշխանաւորներն ու ամբողջ ժողովուրդը քահանաներուն եւ մարգարէներուն ըսին. «Այս մարդը մեռնելու արժանի չէ, որովհետեւ Տէրոջ՝ մեր Աստուծոյն անունով մեզի խօսեր է»:<sup>17</sup> Նաեւ երկրին երէցներէն քանի մը մարդիկ կանգնեցան եւ ժողովուրդին ամբողջ համախմբումին ըսին. **18** «Յուդայի Եզեկիա թագաւորին օրերը՝ Մորստացի Միքիա մարգարէացաւ եւ ամբողջ Յուդայի ժողովուրդին ըսաւ. “Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. “Սիոն արտի պէս պիտի հերկուի, Երուսաղէմ՝ աւերակի շեղջերու պիտի Վերածուի, ու Տէրոջ տան լեռը՝ անտառի բարձունքներու”<sup>19</sup> Միթէ Յուդայի Եզեկիա թագաւորն ու ամբողջ Յուդան զայն մեռցուցի՞ն. ան Տէրոջմէ չվախցա՞ւ եւ Տէրոջ էջպաղատեցա՞ւ. Տէրն ալ անոնց դէմ վճռած չարիքէն հրաժարեցաւ: Ուրեմն մենք մեծ չարիք մը ըրած կ’ըլլանք մեր անձերուն»:

**20** Նաեւ Կարիաթ-Յարիմէն մարդ մը կար, Սեմայիայի որդին՝ Ուրիա, որ Տէրոջ անունով կը մարգարէանար: Ան այս քաղաքին դէմ եւ այս երկրին դէմ մարգարէացաւ՝ Երեմիայի բոլոր խօսքերուն համաձայն: **21** Երբ Յովակիմ թագաւորն ու անոր բոլոր գօրաւորները եւ բոլոր իշխանաւորները անոր խօսքերը լսեցին, թագաւորը <sup>22</sup>քանաց որ զայն մեռցնէ. բայց Ուրիա ասիկա լսելով՝ վախցաւ, ու փախաւ Եգիպտոս գնաց: **22** Յովակիմ թագաւորը մարդիկ դրկեց Եգիպտոս. Աքոբորի որդին՝ Եղնաթանը, եւ անոր հետ **քանի մը** մարդիկ Եգիպտոս **դրկեց**: **23** Անոնք Ուրիան Եգիպտոսէն հանեցին ու Յովակիմ թագաւորին բերին. ան ալ զինք սուրով զարկաւ, եւ անոր դիակը ժողովուրդին որդիներուն գերեզմանները նետեց: **24** Բայց Սափանի որդիին՝ Աքիկամի ձեռքը Երեմիայի հետ էր, որպէսզի ան ժողովուրդին ձեռքը չմատնուի՝ մեռցուելու համար:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ԿՐԷ ԵԶԻ ԼՈՒԾԸ

**27**

Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Սեդեկիայի թագաւորութեան սկիզբը, Երեմիայի սա՛ խօսքը՝ «ուղղուեցաւ Տէրոջմէն՝ ըսելով. «Տէրը ինձի սա՛ ըսաւ. **2** “Կապե՛ր ու լուծե՛ր շինէ քեզի, եւ դի՛ր զանոնք վիզիդ վրայ: **3** Երուսաղէմ՝ Յուդայի Սեդեկիա թագաւորին եկած պատգամաւորներուն ձեռքով դրկէ՛ զանոնք Եդովմի թագաւորին, Մովաբի թագաւորին, Ամմոնի որդիներուն թագաւորին, Տիրոսի թագաւորին ու Սիդոնի թագաւորին, **4** եւ հրամայէ՛ անոնց որ իրենց տէրերուն ըսեն. “Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «Ձեր տէրերուն սա՛ ըսէք. **5** “Ե՛ս Բստեղծեցի երկիրը, մարդը, ու երկրի մակերեսին վրայ եղող անասունը՝ իմ մեծ կարողութեամբս եւ երկարած

<sup>15</sup> Եբբ.՝ ձեր աչքերուն լաւ եւ ուղիղ ըլլայ

<sup>16</sup> Եբբ.՝ ըլլայ

<sup>17</sup> Եբբ.՝ երեսին չպաղատեցա՞ւ

<sup>18</sup> Եբբ.՝ փնտռեց

<sup>19</sup> Եբբ.՝ եղաւ

<sup>20</sup> Եբբ.՝ ըրի

բազուկովս, ու զանոնք կու տամ որո՛ւն որ «ինծի հաճելի թուի» տալ: 6 Ուստի հիմա այս բոլոր երկիրները կը յանձնեմ իմ ծառայիս՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը. դաշտի գազաններն ալ անոր կու տամ, որպէսզի անոր ծառայեն: 7 Բոլոր ազգերն ալ պիտի ծառայեն անոր, անոր որդիին, եւ անոր որդիին որդիին, մինչեւ որ անոր երկրին ժամանակն ալ հասնի, ու շատ ազգեր եւ մեծ թագաւորներ զինք ալ ստրկացնեն: 8 Այն ազգը կամ թագաւորութիւնը որ չի ծառայեր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին եւ իր վիզը չի դնէր Բաբելոնի թագաւորին լուծին տակ, այդ ազգը սուրով, սովով ու ժանտախտով պիտի <sup>Գ</sup>պատժեմ,– կը պատգամէ Տէրը,– մինչեւ որ զիրենք անոր ձեռքով սպառեմ<sup>Դ</sup>:

9 «Դուք մտիկ մի՛ ընէք ձեր մարգարէներուն, դիւթերուն, երազատեսներուն, գուշակներուն եւ կախարդներուն, որոնք ձեզի կ'ըսեն. “Բաբելոնի թագաւորին պիտի չծառայէք<sup>Ե</sup>: 10 Արդարեւ անոնք ձեզի ստութիւն կը մարգարէանան, որպէսզի ձեր հողին վրայէն ձեզ հեռացնեն, ու ես ձեզ աքսորեմ եւ կորսուիք: 11 Բայց իր վիզը Բաբելոնի թագաւորին լուծին տակ դնող եւ անոր ծառայող ազգը անշուշտ իր հողին վրայ հանգիստ պիտի թողում,– կը պատգամէ Տէրը,– ու պիտի մշակէ զայն եւ անոր վրայ պիտի բնակի»<sup>Զ</sup>»:

12 Յուդայի Սեդեկիա թագաւորին ալ հաղորդեցի այս բոլոր խօսքերը՝ ըսելով. «Ձեր վիզը դրէ՛ք Բաբելոնի թագաւորին լուծին տակ, ու ծառայեցէ՛ք իրեն եւ իր ժողովուրդին՝ որպէսզի ապրիք: 13 Ինչո՞ւ դուն ու ժողովուրդդ սուրով, սովով եւ ժանտախտով մեռնիք, ինչպէս Տէրը Բաբելոնի թագաւորին չծառայող ազգին դէմ <sup>Է</sup>վճռեր է: 14 Դուք մտիկ մի՛ ընէք այն մարգարէներուն խօսքերը, որոնք ձեզի կ'ըսեն. “Բաբելոնի թագաւորին պիտի չծառայէք<sup>Ը</sup>, որովհետեւ անոնք ձեզի ստութիւն կը մարգարէանան: 15 Արդարեւ “ես զանոնք չղրկեցի<sup>Թ</sup>,– կը պատգամէ Տէրը,– “հապա անոնք իմ անունովս ստութիւն կը մարգարէանան, որպէսզի ես ձեզ աքսորեմ, եւ դուք ու ձեզի մարգարէացող մարգարէները կորսուիք<sup>Ժ</sup>»:

16 Ես քահանաներուն եւ այս ամբողջ ժողովուրդին ըսի. «Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ձեր մարգարէներուն խօսքերը մտիկ մի՛ ընէք, որոնք ձեզի կը մարգարէանան՝ ըսելով. “Ահա՛ Տէրոջ տան անօթները հի՛մա՝ շուտով Բաբելոնէն պիտի վերադարձուին”, քանի որ անոնք ձեզի ստութիւն կը մարգարէանան: 17 Անոնց մտիկ մի՛ ընէք. ծառայեցէ՛ք Բաբելոնի թագաւորին, որպէսզի ապրիք. ինչո՞ւ այս քաղաքը ւերակ ըլլայ: 18 Իսկ եթէ անոնք մարգարէներ են, եթէ անոնց քով Տէրոջ խօսքը կայ, այժմ թող բարեխօսեն զօրքերու Տէրոջ, որպէսզի Տէրոջ տան մէջ, Յուդայի թագաւորին տան մէջ ու Երուսաղէմի մէջ մնացած անօթները Բաբելոն չտարուին<sup>Ի</sup>»: 19 Արդարեւ զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ սիւներուն, ծովին, մեքենովթներուն եւ այս քաղաքին մէջ մնացած անօթներուն մասին, 20 որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը չգրաւեց՝ երբ Յուդայի թագաւորը, Յովակիմի որդին՝ Յեքոնիան, եւ Յուդայի ու Երուսաղէմի բոլոր ազնուականները Երուսաղէմէն Բաբելոն տարագրեց. 21 ի՛րապէս զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ Տէրոջ տան մէջ, Յուդայի թագաւորին տան մէջ ու Երուսաղէմի մէջ մնացած անօթներուն մասին. 22 «Անոնք Բաբելոն պիտի տարուին, եւ հոն պիտի մնան մինչեւ այն օրը՝ երբ զանոնք <sup>Լ</sup>փնտռեմ,– կը պատգամէ Տէրը.– յետոյ

<sup>Գ</sup> Եբր.՝ իմ աչքերուս ուղիղ ըլլայ  
<sup>Դ</sup> Եբր.՝ հատուցանեմ  
<sup>Ե</sup> Եբր.՝ խօսեր  
<sup>Զ</sup> Եբր.՝ աչքէ անցընեմ

զանոնք պիտի բարձրացնեն եւ այս տեղը պիտի վերադարձնեն»:

ԵՐԵՄԻԱ ԵՒ ԱՆԱՆԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ

28

Նոյն տարին, Յուդայի թագաւորին՝ Սեդեկիայի թագաւորութեան սկիզբը, չորրորդ տարուան հինգերորդ ամիսը, Գաբաւոնէն եղող Ազուրի որդին՝ Անանիա մարգարէն, Տէրոջ տան մէջ՝ քահանաներուն եւ ամբողջ ժողովուրդին «ներկայութեան ինծի ըսաւ. **2** «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛կը յայտարարէ. «Բաբելոնի թագաւորին լուծը կոտրեցի: **3** Լման երկու տարիէն՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին այս տեղէն գրաւած ու Բաբելոն տարած Տէրոջ տան բոլոր անօթները այս տեղը պիտի վերադարձնեն: **4** Նաեւ Յուդայի թագաւորը, Յովակիմի որդին՝ Յեքոնիան, ու Բաբելոն գացած Յուդայի բոլոր տարագիրները այս տեղը պիտի վերադարձնեն,– կը պատգամէ Տէրը,– որովհետեւ Բաբելոնի թագաւորին լուծը պիտի կոտրեմ»:

**5** Երեմիա մարգարէն պատասխանեց Անանիա մարգարէին՝ Տէրոջ տան մէջ կայնող քահանաներուն եւ ամբողջ ժողովուրդին ներկայութեան: **6** Երեմիա մարգարէն ըսաւ. «Ամէ՛ն. Տէրը ա՛յդպէս ընէ: Տէրը քու մարգարէացած խօսքերդ թող իրագործէ, եւ Տէրոջ տան անօթներն ու բոլոր տարագիրները Բաբելոնէն այս տեղը վերադարձնէ: **7** Սակայն այժմ մտի՛կ ըրէ սա՛ խօսքս՝ որ քու ականջներուդ եւ ամբողջ ժողովուրդին ականջներուն կ'ըսեմ. **8** «Ինձմէ առաջ ու քեզմէ առաջ եղող հին դարերու մարգարէները՝ պատերազմ, չարիք ու ժանտախտ մարգարէացան շատ երկիրներու եւ մեծ թագաւորութիւններու դէմ: **9** Երբ մարգարէ մը խաղաղութիւն կը մարգարէանայ եւ այդ մարգարէին խօսքը կ'իրագործուի, ա՛յդ ատեն կը հասկցուի թէ ան ճշմարտապէս Տէրոջմէն ղրկուած մարգարէ մըն է»:

**10** Այն ատեն Անանիա մարգարէն Երեմիա մարգարէին վիզէն լուծը առաւ ու զայն կոտրեց: **11** Ապա Անանիա ամբողջ ժողովուրդին ներկայութեան ըսաւ. «Տէրը սա՛ կը յայտարարէ. «Լման երկու տարիէն՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին լուծը ա՛յսպէս պիտի կոտրեմ բոլոր ազգերու վիզին վրայէն»:

Երեմիա մարգարէն ալ իր ճամբան գնաց: **12** Անանիա մարգարէին՝ Երեմիա մարգարէին վիզին վրայէն լուծը կոտրելէն ետք, «Տէրը խօսեցաւ» Երեմիայի՝ ըսելով. **13** «Գնա՛ եւ Անանիայի ըսէ՛. «Տէրը սա՛ կը յայտարարէ. "Դուն փայտէ լուծերը կոտրեցիր, սակայն անոնց տեղ երկաթէ լուծեր պիտի շինես"»: **14** Արդարեւ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛կը յայտարարէ. «Այս բոլոր ազգերուն վիզին վրայ երկաթէ լուծ դրի, որպէսզի Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ծառայեն, եւ անոր պիտի ծառայեն: Դաշտի գազաններն ալ անոր տուի»:

**15** Երեմիա մարգարէն Անանիա մարգարէին ըսաւ. «Այժմ լսէ՛, ո՛վ Անանիա. Տէրը քեզ ղրկած չէ, ու դուն այս ժողովուրդը **մղեցիր**՝ որ ստութեան վստահի: **16** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ ես քեզ երկրի մակերեսէն պիտի վտարեմ. դուն այս տարի պիտի մեռնիս, որովհետեւ Տէրոջ դէմ ապստամբութիւն յայտարարեցիր»:

**17** Եւ Անանիա մարգարէն այդ տարին մեռաւ՝ եօթներորդ ամսուան մէջ:

ԵՐԵՄԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԲԱԲԵԼՈՆԻ ՀՐԵԱՆԵՐՈՒՆ

<sup>u</sup> Երբ.՝ աչքերուն առջեւ

<sup>p</sup> Երբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

29

Ահա՛ւասիկ այն «նամակին խօսքերը, որ Երեմիա մարգարէն Երուսաղէմէն ղրկեց տարագիրներէն մնացած երէցներուն, քահանաներուն, մարգարէներուն եւ ամբողջ ժողովուրդին, որոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէն Բաբելոն փոխադրեր էր, <sup>2</sup> (Յեքոնիա թագաւորին, Բմայր-թագուհիին», պալատականներուն, Յուդայի ու Երուսաղէմի իշխանաւորներուն, <sup>3</sup> հիւսններուն եւ դարբիններուն Երուսաղէմէն ելլելէն ետք.) <sup>3</sup> Սափանի որդիին՝ Եղեասայի ու Զեղկիայի որդիին՝ Գամարիայի ձեռքով (որոնք Յուդայի թագաւորը՝ Սեդեկիա Բաբելոն ղրկեր էր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին,) ըսելով.

<sup>4</sup> «Սա՛ կը յայտարարէ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը բոլոր տարագիրներուդ, որ Երուսաղէմէն Բաբելոն փոխադրեր եմ. <sup>5</sup> “Տունե՛ր կառուցանեցէք ու բնակեցէ՛ք. պարտէզներ տնկեցէք ու անոնց պտո՛ւղը կերէք: <sup>6</sup> Կիներ՛ առէք, ու որդիներ եւ աղջիկներ ծնանեցէք. նաեւ ձեր որդիներուն կիներ առէք, ու ձեր աղջիկները ամուսիններու՛ տուէք, որպէսզի որդիներ եւ աղջիկներ ծնանին. հող բազմացէ՛ք, մի՛ քիչնաք: <sup>7</sup> Այն քաղաքին խաղաղութի՛նը ուզեցէք՝ ուր ձեզ փոխադրեր եմ, եւ անոր համար Տէրո՛ջ աղօթեցէք, որովհետեւ անոր խաղաղութեամբ ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ: <sup>8</sup> Արդարեւ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ձեր մէջ եղող ձեր մարգարէներն ու ձեր դիւթերը ձեզ թող չհրապուրեն, եւ մտիկ մի՛ ընէք ձեր ներազատեսներուն, <sup>9</sup> որովհետեւ իմ անունովս ստութիւն կը մարգարէանան ձեզի. ես զանոնք չղրկեցի, կը պատգամէ Տէրը: <sup>10</sup> Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ. “Երբ Բաբելոնի եօթանասուն տարին լրանայ, ձեզի պիտի այցելեմ ու ձեզի տուած իմ բարի խոստումս պիտի իրագործեմ՝ ձեզ այս տեղը վերադարձնելով, <sup>11</sup> քանի որ ձեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ,— կը պատգամէ Տէրը.— **անոնք**՝ բարօրութեան ծրագիրներ են, ո՛չ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար: <sup>12</sup> Դուք ինծի պիտի գոչէք, պիտի երթաք եւ ինծի աղօթէք, ու ձեզի մտիկ պիտի ընեմ: <sup>13</sup> Զիս պիտի փնտռէք եւ պիտի գտնէք, որովհետեւ ձեր ամբողջ սիրտով զիս պիտի որոնէք, <sup>14</sup> եւ ալ “ձեզի պիտի յայտնուիմ”,— կը պատգամէ Տէրը:— Ձեզ գերութենէն պիտի վերադարձնեմ. ձեզ պիտի հաւաքեմ բոլոր ազգերէն եւ այն բոլոր տեղերէն՝ ուր ձեզ աքսորեր էի,— կը պատգամէ Տէրը:— Ձեզ պիտի վերադարձնեմ այն տեղը, ուրկէ ձեզ փոխադրեր էի»: <sup>15</sup> (Արդարեւ դուք ըսիք թէ Տէրը մեզի Բաբելոնի մէջ մարգարէներ հանեց:)

<sup>16</sup> Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ Դաւիթի գահին վրայ բազմող թագաւորին մասին եւ այս քաղաքին մէջ բնակող ամբողջ ժողովուրդին մասին, ձեզի հետ տարագրութեան չգացող ձեր եղբայրներուն մասին. <sup>17</sup> «Ձօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես անոնց մէջ պիտի ղրկեմ սուրը, սովն ու ժանտախտը, եւ զանոնք շատ գէշ թուզերու պիտի վերածեմ, որոնք այ՛նքան գէշ են՝ որ կարելի չէ ուտել: <sup>18</sup> Զանոնք սուրով, սովով ու

<sup>1</sup> Եբր.՝ գրութեան

<sup>2</sup> Եբր.՝ տիրուհիին

<sup>3</sup> Կամ՝ արհեստաւորներուն

<sup>4</sup> Եբր.՝ տեսնել տուած երազներուն

<sup>5</sup> Եբր.՝ խաղաղութեան

<sup>6</sup> Եբր.՝ ձեզմէ պիտի գտնուիմ

<sup>7</sup> Եբր.՝ դարձնեմ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ժանտախտով պիտի հալածեմ, եւ զանոնք սոսկումի պիտի մատնեմ երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ. **զանոնք** անէծքի, ապշութեան, սուլոցի ու նախատինքի **ենթակայ պիտի ընեմ** այն բոլոր ազգերուն մէջ՝ ուր զանոնք պիտի աքսորեմ: **19** Արդարեւ իմ խօսքերս մտիկ չըրին, – կը պատգամէ Տէրը, – երբ իմ ծառաներս՝ մարգարէները անոնց ղրկեցի: Կանուխ ելլելով **զանոնք** ղրկեցի, բայց մտիկ <sup>բ</sup>չըրին, – կը պատգամէ Տէրը: – **20** Ուրեմն մտիկ ըրէք Տէրոջ խօսքը, դո՛ւք՝ բոլոր տարագիրներդ, որ Երուսաղէմէն Բաբելոն վտարեցի: **21** Իմ անունովս ձեզի ստութիւն մարգարէացող Կովղիայի որդիին՝ Աքաաբի մասին, ու Մասսիայի որդիին՝ Սեդեկիայի մասին զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. "Ահա՛ ես զանոնք Բաբելոնի Լաբուզոդոնոսոր թագաւորին ձեռքը պիտի մատնեմ, ու ձեր աչքերուն առջեւ զիրենք պիտի զարնէ: **22** Բաբելոն եղող Յուդայի բոլոր տարագիրներուն մէջ՝ անոնց **պատիժէն սա՛** անէծքը պիտի առնուի՝ ըսելով. «Տէրը քեզ Բաբելոնի թագաւորին կրակի մէջ խորոված Սեդեկիայի եւ Աքաաբի պէս ընէ»: **23** Արդարեւ անոնք Իսրայէլի մէջ անզգամութիւն գործեցին. իրենց ընկերներուն կիներուն հետ շնութիւն ըրին, եւ իմ անունովս սուտ խօսքեր արտասանեցին, որ ես իրենց չհրամայեցի. բայց ես գիտեմ ու վկայ եմ", կը պատգամէ Տէրը□»:

## ՍԵՄԱՅԻԱՅԻ ՆԱՄԱԿԸ

**24** Նեհելամացի Սեմայիայի ըսէ՛. **25** «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. "Դուն Երուսաղէմ եղող ամբողջ ժողովուրդին, Մասսիայի որդիին՝ Սոփոնիա քահանային ու բոլոր քահանաներուն քու անունովդ նամակներ ղրկեցիր՝ ըսելով. **26** "Տէրը քեզ Յովիադա քահանային տեղ քահանայ կարգեց՝ որպէսզի Տէրոջ տան վերատեսուչ ըլլաս, եւ ամէն խելագար մարդ՝ որ ինքզինք մարգարէ **կը ձեւացնէ՛**"՝ գելարանի եւ <sup>գ</sup>անուրի մէջ դնես: **27** Ուրեմն ինչո՞ւ ձեզի իմարգարէացող Անաթովթացի Երեմիան չսաստեցիր, **28** որովհետեւ ան մեզի **նամակ** ղրկեց Բաբելոն՝ ըսելով. «Այս **տարագրութիւնը** երկար պիտի ըլլայ. տունե՛ր կառուցանեցէք ու **մէջը** բնակեցէք, պարտէզներ տնկեցէք եւ անոնց պտուղը կերէք»□»: **29** Սոփոնիա քահանան կարդաց այս նամակը Երեմիա մարգարէին ականջներուն: **30** Ապա ՚Տէրը խօսեցաւ" Երեմիայի՝ ըսելով. **31** «Բոլոր տարագիրներուն **լո՛ւր** ղրկէ եւ ըսէ՛. "Նեհելամացի Սեմայիայի մասին Տէրը սա՛ կը յայտարարէ. "Քանի Սեմայիա ձեզի մարգարէացաւ, թէպէտ ես զայն չղրկեցի, ու ձեզի ստութեան վստահիլ տուաւ, **32** Տէրը սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ ես Նեհելամացի Սեմայիան եւ անոր զարմը պիտի <sup>հ</sup>պատժեմ. ո՛չ մէկ մարդ պիտի ունենայ՝ որ այս ժողովուրդին մէջ բնակի, ո՛չ ալ պիտի տեսնէ այն բարիքը՝ որ իմ ժողովուրդիս պիտի ընեմ, – կը պատգամէ Տէրը, – որովհետեւ Տէրոջ դէմ ապստամբութիւն յայտարարեց»□»:

<sup>բ</sup> Եբր.՝ չըրիք

<sup>գ</sup> Այսինքն՝ տանջարանի

<sup>դ</sup> Այսինքն՝ երկաթէ օղակի

<sup>ե</sup> Կամ՝ ինքզինք մարգարէ **ձեւացնող**

<sup>զ</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>հ</sup> Եբր.՝ հատուցանեմ

30

Երեմիայի «ուղղուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ. **2** «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «Քեզի համար գրէ՛ բոլոր քեզի ըսած խօսքերս գիրքի մը մէջ: **3** Արդարեւ ահա՛ պիտի գան օրերը,– կը պատգամէ Տէրը,– երբ իմ ժողովուրդիս՝ Իսրայէլի եւ Յուդայի գերիները պիտի վերադարձնեմ,– կը յայտարարէ Տէրը:– Զանոնք պիտի վերադարձնեմ այն երկիրը՝ որ իրենց հայրերուն տուի, որպէսզի անոր տիրանան»<sup>1</sup>»:

**4** Ահա՛ւասիկ Իսրայէլի մասին ու Յուդայի մասին Տէրոջ ըսած խօսքերը.–

**5** «Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Սարսափի ձայն մը լսեցինք.

Երկիւղ կայ, ո՛չ թէ խաղաղութիւն:

**6** Ուրեմն հարցուցէ՛ք ու տեսէ՛ք,

Արդեօք «այր մարդը՝ **զաւակ** կը ծնանի<sup>2</sup>.

Ինչո՞ւ ամէն <sup>3</sup>կտրիճ

Ծննդաբերող **կնոջ** պէս ձեռքերը մէջքը **դրած է,**

Ու բոլոր երեսները դեղին դարձած են:

**7** Վա՛յ, որովհետեւ ատիկա մեծ օր է. անոր նմանը չկայ:

Ատիկա Յակոբի տագնապի ժամանակն է,

Բայց անկէ պիտի ազատի<sup>4</sup>»:

**8** «Արդարեւ այդ օրը,– կը պատգամէ զօրքերու Տէրը,–

Անոր լուծը քու վիզիդ վրայէն պիտի կտտրեմ,

Կապերդ պիտի փրցնեմ,

Եւ անգամ մըն ալ օտարները <sup>5</sup>զայն պիտի չստրկացնեն.

**9** Հապա անոնք պիտի ծառայեն իրենց Տէր Աստուծոյն,

Ու Դաւիթ թագաւորին՝

Որ ես անոնց պիտի հանեմ»:

**10**«Ուստի դուն մի՛ վախնար, ո՛վ իմ ծառաս Յակոբ,– կը պատգամէ Տէրը,–

Ո՛վ Իսրայէլ, մի՛ զարհուրիր.

Որովհետեւ ահա՛ ես քեզ պիտի ազատեմ հեռաւոր **երկրէն,**

Եւ քու զարմդ՝ իրենց գերութեան երկրէն:

Յակոբ պիտի վերադառնայ, ու հանդարտ եւ անխռով պիտի ըլլայ.

Ո՛չ մէկը **զիցք** պիտի դողացնէ:

**11** Արդարեւ ես քեզի հետ եմ,– կը պատգամէ Տէրը,– քեզ ազատելու համար.

Պիտի <sup>6</sup>բնաջնջեմ այն բոլոր ազգերը՝

Որոնց մէջ քեզ ցրուեցի,

<sup>1</sup> Եբր.՝ եղած

<sup>2</sup> Եբր.՝ Սարսուռի

<sup>3</sup> Եբր.՝ արուն

<sup>4</sup> Եբր.՝ զօրաւոր մարդ

<sup>5</sup> Այսինքն՝ Յակոբը

<sup>6</sup> Եբր.՝ սպառեմ

Բայց քեզ պիտի չբնաջնջեմ,  
Հապա քեզ <sup>է</sup> չափաւորութեամբ պիտի <sup>Է</sup> պատժեմ,  
Սակայն քեզ բոլորովին անմեղ պիտի չսեպեմ»:

- 12 Արդարեւ Տէրը սա՛ կը պատգամէ.  
«Քու փլուզումդ մահաբեր է, ու վէրքդ՝ անդարմանելի.
- 13 **Ջայն** <sup>բ</sup> խնամելու համար քու դատդ պաշտպանող մը չկայ,  
Քեզի համար դեղ **ու** զօրացուցիչ չկայ:
- 14 Քու բոլոր հոմանիւներդ քեզ մոռցան,  
Քեզ չեն փնտռեր.  
Որովհետեւ քեզ թշնամիի մը <sup>ժ</sup> հարուածով զարկի՞,  
Անգութ **մէկու** մը պատիժով,  
Քու բազմաթիւ անօրէնութիւններուդ համար,  
**Քանի** մեղքերդ շատցան:
- 15 Քու փլուզումիդ համար ինչո՞ւ կ'աղաղակես:  
Քու կոտտանքդ մահաբեր է.  
Այս բաները քու բազմաթիւ անօրէնութիւններուդ համար քեզի ըրի,  
**Քանի** քու մեղքերդ շատցան:
- 16 Հետեւաբար բոլոր անոնք՝ որ քեզ կը <sup>ի</sup> կլլեն, պիտի կլլուին.  
Քու բոլոր հակառակորդներդ գերութեան պիտի երթան.  
Քեզ յափշտակողները պիտի յափշտակուին,  
Ու բոլոր քեզ կողոպտողները կողոպտուելու պիտի մատնեմ:
- 17 Արդարեւ 'պիտի ապաքինիս'  
Եւ քու վէրքդ պիտի բուժեմ, – կը յայտարարէ Տէրը, –  
Որովհետեւ քեզ “Աքսորական  կոչեցին, **եւ ըսին**.  
“Այս այն Սիոնն է՝ որ ո՛չ մէկը կը փնտռէ »:
- 18 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ ես Յակոբի վրաններուն գերիները պիտի վերադարձնեմ,  
Եւ անոր բնակարաններուն պիտի գթամ.  
Քաղաքը իր փլատակներուն վրայ պիտի կառուցանուի,  
Ու պալատը <sup>ի</sup> նախկինին պէս՝ պիտի բնակուի:
- 19 Անոնց մէջէն ներքող պիտի <sup>ժ</sup> լսուի,  
Նաեւ խայտացողներու ձայնը:

<sup>է</sup> Եբր.՝ կանոնին համաձայն

<sup>Է</sup> Կամ՝ խրատեմ

<sup>բ</sup> Եբր.՝ վիրակապով փաթթելու

<sup>ժ</sup> Կամ՝ վէրքով վիրաւորեցի

<sup>ի</sup> Եբր.՝ լափեն

<sup>լ</sup> Եբր.՝ առողջութիւնդ պիտի բարձրացնեմ

<sup>ի</sup> Եբր.՝ իր սովորութեան համաձայն

<sup>ժ</sup> Եբր.՝ ելլէ

Զանոնք պիտի բազմացնեմ եւ պիտի չքիչնան,  
Զանոնք պիտի փառաւորեմ ու պիտի չստորնանան:

20 Անոնց որդիները վաղեմի **օրերուն** պէս պիտի ըլլան,  
Անոնց համայնքը իմ առջեւ պիտի հաստատուի,  
Եւ բոլոր զիրենք տանջողները պիտի <sup>4</sup>պատժեմ:

21 Անոնց <sup>6</sup>ազնուականները իրենցմէ պիտի ըլլան,  
Անոնց ղեկավարն ալ իրենց մէջէն պիտի ելլէ:  
Զայն պիտի մօտեցնեմ, եւ ինծի պիտի մօտենայ.

Որովհետեւ ո՞վ է ան՝ որ <sup>8</sup>ինքնիրեն կը համարձակի՝ ինծի մօտենալ,– կը պատգամէ  
Տէրը:

22 Դուք իմ ժողովուրդս պիտի ըլլաք,  
Ես ալ ձեր Աստուածը պիտի ըլլամ»:

23 Ահա՛ Տէրոջ մրրիկը ցատումով <sup>7</sup>բարձրացաւ.  
Ան <sup>6</sup>յարատել մրրիկ է,  
Ամբարիշտներուն գլուխին վրայ պիտի <sup>4</sup>պայթի:

24 Տէրոջ բորբոքած բարկութիւնը պիտի չհեռանայ,  
Մինչեւ որ իր սիրտին <sup>1</sup>մտածումները չիրագործէ ու չհաստատէ.  
Վերջին օրերը ասիկա պիտի հասկնաք:

ԻՍՐԱՅԷԼ ՏՈՒՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

31

«Այն ատեն,– կը պատգամէ Տէրը,–  
Իսրայէլի բոլոր գերդաստաններուն Աստուածը պիտի ըլլամ,  
Անոնք ալ իմ ժողովուրդս պիտի ըլլան»:

2 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Սուրէն վերապրող ժողովուրդը անապատին մէջ շնորհք գտաւ,  
Երբ <sup>3</sup>Իսրայէլ կ'երթար հանգստանալու»:

3 Տէրը <sup>2</sup>վաղուց ինծի երեւցաւ՝ **ըսելով.**

«Զեզ յաւիտենական սիրով սիրեցի.

<sup>4</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>6</sup> Եբբ.՝ երեւելիները

<sup>8</sup> Եբբ.՝ իր սիրտը կ'երաշխաւորէ

<sup>7</sup> Եբբ.՝ դուրս ելաւ

<sup>6</sup> Եբբ.՝ բնակող

<sup>4</sup> Եբբ.՝ ցաւցնէ

<sup>1</sup> Եբբ.՝ մտադրութիւնները

<sup>3</sup> Կամ՝ կ'երթայի Իսրայէլը խաղաղեցնելու

<sup>2</sup> Եբբ.՝ հեռուէն

Հետեւաբար «քեզ կարեկցութեամբ **իճծի** քաշեցի»:

- 4** Քեզ դարձեալ պիտի կառուցանեմ, ու դուն պիտի կառուցանուիս, ո՛վ Իսրայէլի կոյսը:  
Դա՛րձեալ՝ քու թմբուկներովդ զարդարուած՝  
Խայտացողներու պարիմ պիտի միանաս:
- 5** Դա՛րձեալ Սամարիայի լեռներուն վրայ այգիներ պիտի տնկես.  
Տնկողները պիտի տնկեն եւ անոնց պտուղը պիտի ուտեն:
- 6** Արդարեւ պիտի գայ օրը՝ երբ  
Եփրեմի լերան վրայ պահապանները պիտի գոչեն.  
«Կանգնեցէ՛ք, ու դէպի Սիոն բարձրանանք, Տէրոջ՝ մեր Աստուծոյն»<sup>4</sup>»:
- 7** Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Յակոբի համար ուրախութեամբ ցնծացէք,  
Ազգերու գլուխին համար ցնծութեամբ աղաղակեցէք.  
«Չայն բարձրացուցէք», գովաբանեցէ՛ք եւ ըսէ՛ք.  
«Ո՛վ Տէր, փրկէ՛ քու ժողովուրդդ,  
Իսրայէլի մնացորդը»<sup>5</sup>:
- 8** Ահա՛ ես զանոնք հիւսիսի երկրէն պիտի բերեմ,  
Զանոնք երկրի ծագերէն պիտի հաւաքեմ,  
Եւ անոնց հետ՝ կոյրն ու կաղը,  
Յի՛ին եւ ծննդաբերող **կիճը**, **բոլորը** միասին.  
Մեծ համախմբում մը հոս պիտի վերադառնայ:
- 9** Լալով պիտի գան, եւ աղաչանքներով զանոնք պիտի բերեմ.  
Անոնց քալել պիտի տամ դէպի ջուրերու վտակները՝  
Ուղիղ ճամբայէ մը, որուն մէջ պիտի չգայթին.  
Որովհետեւ Իսրայէլի հայր եղայ  
Ու Եփրեմ իմ անդրանիկս է:
- 10** «Ո՛վ ազգեր, մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը,  
Յայտարարեցէ՛ք հեռաւոր կղզիներուն եւ ըսէ՛ք.  
«Իսրայէլը ցրուողը զայն պիտի հաւաքէ.  
Զայն պիտի պահպանէ, ինչպէս հովիւը իր հօտը **կը պահպանէ**»<sup>6</sup>:
- 11** Արդարեւ Տէրը փրկեց Յակոբը,  
Ու զայն իրմէ ուժեղին ձեռքէն ազատեց:
- 12** Անոնք պիտի գան եւ Սիոնի բարձունքին վրայ ցնծութեամբ **գոչեն**.  
Պիտի «խուժեն դէպի Տէրոջ բարիքները,  
**Այսինքն**՝ ցորենը, քաղցուն ու իւղը,  
Եւ ոչխարներն ու արջառները:  
Անոնց անձերը ոռոգուած պարտէզի պէս պիտի ըլլան,  
Անգամ մըն ալ պիտի չմարին:
- 13** Այն ատեն կոյսը պարելով պիտի ուրախանայ,  
Նաեւ երիտասարդներն ու ծերերը՝ միասին:

<sup>4</sup> Կամ՝ երկարաձգեցի քեզի կարեկցիլ

<sup>5</sup> Եբբ.՝ դուրս ելլես

<sup>6</sup> Եբբ.՝ Լսել տուէք

<sup>7</sup> Եբբ.՝ հոսին գետի պէս

Արդարեւ անոնց սուգը բերկրանքի պիտի փոխեմ,  
եւ անոնց տրտմութենէն զիրենք հանգստացնելով՝ պիտի ուրախացնեմ:

14 Բահանաներուն անձերը պարարտութեամբ պիտի յագեցնեմ,  
եւ իմ ժողովուրդս իմ բարիքներովս պիտի կշտանայ», կը պատգամէ Տէրը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՒԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԱՆԴԷՊ

15 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ,  
եղերերգութեան ու դառնագին լացի ձայն.  
Ռաքէլ իր որդիներուն համար կու լար,  
եւ կը մերժէր իր որդիներուն համար մխիթարուիլ,  
Որովհետեւ անոնք չկային»:

16 Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Դադրեցո՛ւր ձայնդ լալէն,  
եւ աչքերդ՝ արցունք թափելէն.  
Արդարեւ քու <sup>Բ</sup>աշխատանքդ պիտի վարձատրուի՝,– կը պատգամէ Տէրը,–  
Ու թշնամիին երկրէն պիտի վերադառնան:

17 Զու ապագայիդ համար յոյս կայ,– կը պատգամէ Տէրը,–  
Զանի որդիներդ իրենց հողամասը պիտի վերադառնան:

18 Ի՛րապէս Եփրեմի սա՛ ողբը լսեցի.

“Զիս պատժեցիր, ու ես պատժուեցայ  
Լուծի չվարժուած զուարակի պէս.  
Զիս վերադարձո՛ւր, որպէսզի դարձի գամ,  
Որովհետեւ ո՛վ Տէր, դո՛ւն ես իմ Աստուածս:

19 Ի՛րապէս դարձի գալէս ետք զղջացի,

Գիտակցելէս ետք ազդրիս զարկի.  
Ամչցայ եւ խայտառակուեցայ,  
Որովհետեւ երիտասարդութեանս նախատիները կը կրեմ<sup>Է</sup>:

20 Միթէ Եփրեմ ինձի համար պատուական որդի<sup>Ը</sup> է,  
<sup>Թ</sup>Սիրական զաւա՞կ է.

Որովհետեւ իրեն դէմ խօսելէս ետք՝  
Շարունակ զինք կը յիշեմ,  
Հետեւաբար իմ ընդերքս կ'ալեկոծի իրեն համար.  
Անշո՛ւշտ իրեն պիտի գթամ,– կը պատգամէ Տէրը:–

21 Նշանասիւնե՛ր կանգնեցուր քեզի, ձողանշաննե՛ր <sup>Գ</sup>ցցէ քեզի,  
Ի՛նչադարութի՛ւնդ դարձուր՝ պողոտային՝ քու գացած ճամբայիդ:

<sup>Է</sup> Եբր.՝ Արգիլէ՛

<sup>Ը</sup> Եբր.՝ գործիդ վարձք պիտի ըլլայ

<sup>Թ</sup> Եբր.՝ Հաճելի

<sup>Գ</sup> Եբր.՝ դիր

<sup>Ի</sup> Եբր.՝ Սիրտդ դիր

**ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ**

Վերադարձի՛ր, ո՛վ Իսրայելի կոյսը,

Վերադարձի՛ր այս քաղաքներդ:

**22** Մինչեւ ե՞րբ 'թափառաշրջիկ պիտի ըլլաս",

Ո՛վ ուխտադրուժ աղջիկ.

Որովհետեւ Տէրը երկրի վրայ նոր բան մը ստեղծեց.–

«Կի՛նը պիտի ծղարպասէ կ'մարդը»:

**ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԱՐԳԱԻԱՃՈՒՄԸ**

**23** Զօրքերու Տէրը՝ Իսրայելի Աստուածը սա՛ կը յայտարարէ.

«Դա՛րձեալ Յուդայի երկրին մէջ

եւ անոր քաղաքներուն մէջ սա՛ խօսքը պիտի ըսեն՝

Երբ զանոնք գերութենէն վերադարձնեմ.

“Տէրը քեզ օրհնէ,

Ո՛վ արդարութեան բնակարան, սո՛ւրբ լեռ□:

**24** Հոն միասին պիտի բնակին՝ Յուդայի եւ իր բոլոր քաղաքներուն մէջ՝

Երկրագործներն ու ‘հօտաղները:

**25** Արդարեւ պարտասած անձը պիտի յագեցնեմ,

եւ ամէն մարած անձ պիտի ձկշտացնեմ»:

**26** <sup>1</sup>Երբ արթնցայ՝ նկատեցի՝ թէ

Զունս ինձի քաղցր եղած էր:

**27** «Ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–

Երբ Իսրայելի տունն ու Յուդայի տունը

Մարդու սերմ եւ անասունի սերմ պիտի ցանեմ:

**28** Ինչպէս խլելու, փլցնելու, քանդելու,

Կործանելու եւ ‘տրտմեցնելու համար

Անոնց վրայ հսկեցի,

Նոյնպէս ալ կառուցանելու եւ տնկելու համար

Անոնց վրայ պիտի հսկեմ,– կը պատգամէ Տէրը:–

**29** Այդ օրերը անգա՛մ մըն ալ պիտի չըսեն.

“Հայրերը ազոխ կերան,

Ու որդիներո՛ւն ակռաները մառին□.

---

<sup>1</sup> Եբբ.՝ պիտի քաշուիս

<sup>10</sup> Եբբ.՝ Է՛գը

<sup>2</sup> Եբբ.՝ շրջապատէ

<sup>4</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդը

<sup>6</sup> Եբբ.՝ հօտերուն հետ մեկնողները

<sup>8</sup> Եբբ.՝ լեցնել

<sup>11</sup> Եբբ.՝ Ասոր վրայ արթնցայ ու նայեցայ

<sup>16</sup> Եբբ.՝ չարիք ընելու

- 30 Հապա ամէն մարդ ի՞ր անօրէնութեան համար պիտի մեռնի.  
Ո՛վ որ ազոխ ուտէ,  
Անո՞ր ակռաները պիտի առնեն»:
- 31 «Ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
Երբ Իսրայէլի տան հետ ու Յուդայի տան հետ  
Նոր ուխտ մը պիտի կնքեմ:
- 32 Ո՛չ թէ այն ուխտին պէս՝ որ անոնց հայրերուն հետ կնքեցի,  
Այն օրը երբ անոնց ձեռքէն բռնեցի՝  
Ջանոնք Եգիպտոսի երկրէն հանելու համար.  
Որովհետեւ անոնք իմ ուխտս խզեցին,  
Թէեւ անոնց վրայ տիրողը ե՛ս էի,– կը պատգամէ Տէրը:–
- 33 Հապա այդ օրերէն ետք՝  
Իսրայէլի տան հետ կնքելիք ուխտս սա՛ է,– կը պատգամէ Տէրը.–  
Իմ օրէնքս անոնց ներսը պիտի դնեմ,  
Ու գայն անոնց սիրտին վրայ պիտի գրեմ.  
Ես անոնց Աստուածը պիտի ըլլամ,  
Անոնք ալ իմ ժողովուրդս պիտի ըլլան:
- 34 Անոնք ա՛լ պիտի չտորվեցնեն՝ իւրաքանչիւրը իր ընկերին,  
Իւրաքանչիւրը իր եղբօր՝ ըսելով.  
“Տէ՛րը ճանչցիր□.  
Հապա անոնց պգտիկէն մինչեւ մեծը՝  
Բոլորն ալ զիս պիտի ճանչնան,– կը պատգամէ Տէրը,–  
Որովհետեւ անոնց անօրէնութիւնը պիտի ներեմ,  
Եւ ա՛լ անոնց մեղքը պիտի չյիշեմ»:
- 35 Սա՛ կը յայտարարէ Տէրը,  
Որ արեւը <sup>1</sup>հաստատեց օրուան լոյսին համար,  
Ու գիշերուան լոյսին համար լուսինին եւ աստղերուն կանոններ **դրաւ**,  
Որ ծովը կը խաղաղեցնէ՝ երբ անոր ալիքները գոռան.  
Անոր անունը <sup>2</sup>“Ջօրքերու Տէր” է:
- 36 «Եթէ այս կանոնները իմ <sup>2</sup>առջեւս դադրին”,– կը պատգամէ Տէրը,–  
Իսրայէլի զարմն ալ իմ առջեւս ազգ ըլլալէ պիտի դադրի <sup>3</sup>”ընդմիջտ»:
- 37 Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Եթէ **կարելի** ըլլայ վերէն երկինքը չափել,  
Ու վարէն երկրի հիմերը հետազօտել,  
Ես ալ **կրնամ** Իսրայէլի ամբողջ զարմը մերժել՝  
Իրենց բոլոր ըրածներուն համար», կը պատգամէ Տէրը:
- 38 «Ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–

---

<sup>1</sup> Այսինքն՝ գրգռուեցան

<sup>2</sup> Երբ.՝ դրաւ

<sup>3</sup> Երբ.՝ Եհովա Սաբաւովթ

<sup>2</sup> Երբ.՝ առջեւէս հեռանան

<sup>3</sup> Երբ.՝ բոլոր օրերը

Երբ Անանայելի աշտարակէն մինչեւ Անկիւնի դուռը՝  
Քաղաքը Տէրոջ համար պիտի կառուցանուի.

39 Չափելու լարը դարձեալ անոր դիմացէն  
Դուրս պիտի ելլէ մինչեւ Գարէբի բլուրը,  
Եւ պիտի դառնայ դէպի Գոաթ:

40 Դիակներուն ու մոխիրներուն ամբողջ հովիտը,  
Նաեւ բոլոր արտերը՝ մինչեւ Կեդրոնի ձորը,  
Մինչեւ Ձիերու դրան անկիւնը՝ դէպի արեւելք,  
Սուրբ պիտի ըլլան Տէրոջ.  
Ա՛յ երբեք պիտի չխլուին ու չփլչին»:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ԳՆԷ ԱՐՏ ՄԸ

32

Յուդայի Սեդեկիա թագաւորին տասներորդ տարին, **այսինքն՝** Նաբուգոդոնոսորի տասնութերորդ տարին, **ահա՛ւասիկ** Տէրոջմէն Երեմիայի «ուղղուած խօսքը: 2 Այդ ատեն Բաբելոնի թագաւորին զօրագունդը Երուսաղէմը կը պաշարէր, ու Երեմիա մարգարէն Յուդայի թագաւորին տունը եղող բանտին բակին մէջ արգելափակուած էր: 3 Արդարեւ Յուդայի Սեդեկիա թագաւորը զայն արգելափակած էր՝ ըսելով. «Ինչո՞ւ մարգարէացար եւ ըսիր. «Տէրը սա՛ կը յայտարարէ. "Ահա՛ ես այս քաղաքը Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ, ու զայն պիտի գրաւէ: 4 Յուդայի Սեդեկիա թագաւորը Քաղդէացիներուն ձեռքէն պիտի չազատի. հապա անշուշտ Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնուի, անոր հետ բերան բերանի պիտի խօսի, եւ իր աչքերը անոր աչքերը պիտի տեսնեն: 5 Ան Սեդեկիան Բաբելոն պիտի տանի, ու ան հոն պիտի մնայ մինչեւ որ ես անոր այցելեմ,– կը պատգամէ Տէրը.– եթէ Քաղդէացիներուն դէմ պատերազմիք՝ պիտի չյաջողիք"»:

6 Այն ատեն Երեմիա ըսաւ. «<sup>բ</sup>Տէրը խօսեցաւ՝ ինծի՛ ըսելով. 7 "Ահա՛ քու հօրեղբօրդ՝ Սեղղումի որդին՝ Անամայել քեզի պիտի գայ եւ ըսէ. "Անաթովթի մէջ եղող արտս գնէ՛ քեզի համար, որովհետեւ փրկելու իրաւունքը քո՛ւկդ է՝ որ գնես"»: 8 Տէրոջ խօսքին համաձայն իմ հօրեղբօրս որդին՝ Անամայել ինծի եկաւ բանտին բակը, եւ ինծի ըսաւ. «Կ՛աղերսեմ, Բենիամինի երկիրը՝ Անաթովթի մէջ ունեցած արտս գնէ՛, որովհետեւ ժառանգութեան իրաւունքը քուկդ է, ու դո՛ւն փրկագին **տալու ես. ուստի** գնէ՛ քեզի համար»: Այն ատեն գիտցայ թէ ասիկա Տէրոջ խօսքն էր: 9 Ուստի հօրեղբօրս որդիէն՝ Անամայելէն գնեցի Անաթովթի մէջ եղող արտը, ու դրամը՝ տասնեօթը սիկղ արծաթ՝ կշռեցի **եւ տուի** անոր: 10 Վաւերագիր մը գրեցի, կնքեցի ու վկաներու **ներկայութեան** արծաթը կշիռքով կշռեցի: 11 Ստացուածքին վաւերագիրը – թէ՛ <sup>գ</sup>օրէնքին ու սովորութեան համաձայն կնքուածը, թէ՛ ալ բաց եղածը – առի, 12 եւ ստացուածքին վաւերագիրը Մասսիայի որդիին՝ Ներիայի որդիին Բարուքի տուի, հօրեղբօրս **որդիին՝** Անամայելի <sup>դ</sup>ներկայութեան, ստացուածքի վաւերագիրին մէջ ստորագրող վկաներու ներկայութեան, բանտի բակին մէջ կեցող բոլոր Հրեաներուն ներկայութեան: 13 Անոնց ներկայութեան՝

<sup>ա</sup> Երբ.՝ եղած  
<sup>բ</sup> Երբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ  
<sup>գ</sup> Երբ.՝ պատուէրին  
<sup>դ</sup> Երբ.՝ աչքերուն առջեւ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Բարուքի պատուէր տուի եւ ըսի. **14** «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ա՛ն այս վաւերագիրները – այս կնքուած ստացուածքին վաւերագիրը եւ այս բաց վաւերագիրը – ու զանոնք դի՛ր ՚խեցիէ անօթի մը մէջ, որպէսզի շատ օրեր ՝մնան: **15** Որովհետեւ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Այս երկրին մէջ դա՛րձեալ տուներ, արտեր եւ այգիներ պիտի գնուին»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ԱՂՕԹԸ

**16** Ստացուածքին վաւերագիրը Ներիայի որդիին՝ Բարուքի տալէս ետք, Տէրոջ աղօթեցի՛ ըսելով. **17** «Ո՛հ, Տէ՛ր Եհովա, ահա՛ դուն քու մեծ կարողութեամբդ եւ երկարած բազուկովդ երկինքն ու երկիրը ՚ստեղծեցիր. ո՛չ մէկ բան քեզի համար դժուարին է: **18** Դուն հազարաւոր սերունդներու հետ կարեկցութեամբ կը վարուիս, սակայն հայրերուն անօրէնութեան պատիժը անոնցմէ ետք իրենց որդիներուն ծոցը կու տաս. դուն մեծ եւ հզօր Աստուած ես, եւ <sup>բ</sup>քու անունդ Զօրքերու Տէր՝ է: **19** Դուն խորհուրդով մեծ ես, ու գործով՝ զօրաւոր. քու աչքերդ մարդոց որդիներուն ամբողջ ՞ընթացքին վրայ բաց են՝ իւրաքանչիւրին իր ընթացքին համեմատ եւ իր արարքներու պտուղին համեմատ հատուցանելու համար: **20** Դուն Եգիպտոսի երկրին մէջ նշաններ ու հրաշքներ ըրիր, նաեւ մինչեւ այսօր՝ Իսրայէլի մէջ ու բոլոր մարդոց մէջ, քեզի անուն վաստկելով՝ ինչպէս այսօր կ՛երեւայ: **21** Զու ժողովուրդդ՝ Իսրայէլը Եգիպտոսի երկրէն հանեցիր նշաններով եւ հրաշքներով, ուժեղ ձեռքով, երկարած բազուկով ու մեծ արհաւիրքներով: **22** Անոնց տուիր այս երկիրը, որուն համար իրենց հայրերուն երդում ըրեր էիր՝ իրենց տալու, երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը հոսեցնէ: **23** Անոնք մտան եւ անոր տիրացան, բայց քու ձայնդ մտիկ չըրին ու քու օրէնքիդ համաձայն չընթացան. անոնք չգործադրեցին ամէն ինչ որ անոնց հրամայեր էիր՝ որպէսզի գործադրեն, ուստի այս ամբողջ չարիքը անոնց ՝վրայ բերիր՝: **24** Ահա՛ հողաբլուրները քաղաքին ՚դէմ բարձրացան՝, որպէսզի զայն գրաւեն. սուրին, սովին ու ժանտախտին պատճառով՝ քաղաքը պիտի մատնուի անոր դէմ պատերազմող Զաղդէացիներուն ձեռքը. ինչ որ ՚վճռեցիր՝ ՚կ՛իրագործուի, եւ ահա՛ կը տեսնես: **25** Բայց դուն, ո՛վ Տէր Եհովա, ինձի ըսիր. “Քեզի համար ա՛րտը գնէ դրամով, ու վկաներ կանչէ՞, մինչ քաղաքը Զաղդէացիներուն ձեռքը կը մատնուի»:

<sup>ա</sup> Այսինքն՝ թրծուած կաւէ

<sup>բ</sup> Կամ՝ գոյատեւեն

<sup>գ</sup> Եբր.՝ ըրիր

<sup>դ</sup> Եբր.՝ իր անունը Եհովա Սաբաուվթ

<sup>ե</sup> Եբր.՝ ճամբաներուն

<sup>զ</sup> Եբր.՝ հանդիպիլ տուիր

<sup>է</sup> Եբր.՝ հասան

<sup>զ</sup> Եբր.՝ խօսեցար

<sup>ը</sup> Եբր.՝ կ՛ըլլայ

**26** Այն ատեն <sup>՝</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ ըսելով. **27** «Ահա՛ ե՛ս եմ Եհովան, ամէն մարմինի Աստուածը. միթէ՞ ինծի համար դժուարին բան մը կա՞յ: **28** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ ես այս քաղաքը Քաղդէացիներուն ձեռքը եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը պիտի մատնեմ, ու զայն պիտի գրաւէ: **29** Այս քաղաքին դէմ պատերազմող Քաղդէացիները պիտի մտնեն, այս քաղաքը կրակով պիտի վառեն, ու զայն պիտի այրեն այն տուներուն հետ՝ որոնց տանիքներուն վրայ Բահաղի խունկ կը ծխէին եւ ուրիշ աստուածներու թափելիք նուէրներ՝ <sup>4</sup>կ'ընծայէին՝ զիս գրգռելու համար: **30** Արդարեւ Իսրայէլի որդիներն ու Յուդայի որդիները իրենց մանկութենէն ի վեր իմ առջեւ միայն չարիք գործեցին, որովհետեւ Իսրայէլի որդիները իրենց ձեռքերուն գործերով անդադար զիս գրգռեցին<sup>5</sup>, – կը պատգամէ Տէրը:– **31** Արդարեւ այս քաղաքը՝ իր կառուցումի օրէն մինչեւ այսօր՝ իմ բարկութեանս եւ ցասումիս համար եղաւ, որպէսզի զայն երեսիս առջեւէն հեռացնեմ՝ **32** Իսրայէլի որդիներուն ու Յուդայի որդիներուն ամբողջ չարիքին պատճառով, որ զիս գրգռելու համար գործեցին թէ՛ իրենք, թէ՛ ալ իրենց թագաւորները, իշխանաւորները, քահանաներն ու մարգարէները, նաեւ Յուդայի մարդիկն ու Երուսաղէմի բնակիչները: **33** Ինծի՝ կռնակ դարձուցին, եւ ո՛չ թէ՛ երես: Թէպէտ անոնց սորվեցուցի – կանուխ ելլելով սորվեցուցի –, անոնք մտիկ չըրին՝ որ խրատ ընդունին: **34** Հապա իմ անունովս կոչուած տան մէջ իրենց պղծութիւնները դրին՝ զայն պղծելու համար: **35** Ենովմի որդիին ձորին մէջ եղող Բահաղի բարձր տեղերը կառուցանեցին, որպէսզի իրենց որդիներն ու աղջիկները Մողոքի համար կրակէ անցընեն, ինչ որ անոնց չհրամայեցի. **բնա՛ւ**՝ <sup>ձ</sup>չմտածեցի որ անոնք այս գարշութիւնը գործեն՝ Յուդայի մեղանչել տալու համար»:

ՅՈՅՍԻ ԽՈՍՏՈՒՄ ՄԸ

**36** «Ուստի հիմա Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ այս քաղաքին մասին, որ կ'ըսէք թէ “սուրով, սովով եւ ժանտախտով Բաբելոնի թագաւորին ձեռքը կը մատնուի<sup>6</sup>»: **37** Ահա՛ ես զանոնք պիտի հաւաքեմ այն բոլոր երկիրներէն՝ ուր զանոնք իմ բարկութեամբս, ցասումովս ու մեծ զայրոյթովս աքսորեցի, զանոնք այս տեղը պիտի վերադարձնեմ, եւ ապահովութեամբ պիտի բնակեցնեմ: **38** Անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան, ես ալ անոնց Աստուածը պիտի ըլլամ: **39** Անոնց մէկ սիրտ ու մէկ ճամբայ պիտի տամ, որպէսզի <sup>7</sup>ընդմիջտ ինձմէ վախնան, իրենց եւ իրենցմէ ետք իրենց որդիներուն բարիքին համար: **40** Անոնց հետ յաւիտեանական ուխտ մը պիտի կնքեմ, որ իրենցմէ չհեռանամ՝ իրենց բարիք ընելու համար, եւ իմ վախս անոնց սիրտին մէջ պիտի դնեմ, որպէսզի ինձմէ չհեռանան: **41** Անոնց բարիք ընելով՝ անոնցմով պիտի բերկրիմ, ու զանոնք ճշմարտապէս այս երկրին մէջ պիտի տնկեմ՝ ամբողջ սիրտովս եւ ամբողջ անձովս»: **42** Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ. «Ինչպէս այս ժողովուրդին վրայ այս ամբողջ մեծ չարիքը բերի, նոյնպէս անոնց վրայ պիտի բերեմ այն ամբողջ բարիքը՝ որ

<sup>՝</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>4</sup> Եբբ.՝ կը թափէին

<sup>6</sup> Եբբ.՝ ծոծրակ

<sup>ձ</sup> Եբբ.՝ սիրտիս մէջ չբարձրացաւ

<sup>7</sup> Եբբ.՝ բոլոր օրերը

անոնց խոստացայ: **43 Դա՛րձեալ** արտեր պիտի գնուին այս երկրին մէջ, որուն համար կ'ըսէք. «Ամայացած է՝ առանց մարդու եւ անասունի, **ու** Զաղդէացիներուն ձեռքը մատնուած է»: **44** Բեցիամիցի երկրին մէջ, Երուսաղէմի շրջակայքը եւ Յուդայի քաղաքներուն մէջ, լեռնային քաղաքներուն մէջ, դաշտագետիցի քաղաքներուն մէջ ու հարաւային քաղաքներուն մէջ՝ **մարդիկ** դրամով արտեր պիտի գնեն, վաւերագիրներ պիտի գրեն, կնքեն եւ վկաներ կանչեն, որովհետեւ զանոնք գերութենէն պիտի վերադարձնեն», կը պատգամէ Տէրը:

ՅՈՅՍԻ ՈՒՐԻՇ ԽՈՍՏՈՒՄ ՄԸ

33

Երկրորդ անգամ «Տէրը խօսեցաւ» Երեմիայի, երբ ան տակաւին բանտին բակին մէջ արգելափակուած էր, **եւ** ըսաւ. **2** «Սա՛ կը յայտարարէ Տէրը, <sup>բ</sup>այս քաղաքը՝ շինող Տէրը, որ զայն հաստատելու համար զայն ձեւակերպեց, որուն անունը Եհովա է. **3** «Ինձի՛ գոչէ, ու քեզի պատասխանեմ. քեզի մեծ եւ <sup>գ</sup>խորհրդաւոր բաներ յայտնեմ՝ որ չես գիտեր»: **4** Արդարեւ այս քաղաքին տուններուն ու Յուդայի թագաւորներուն տուններուն մասին – որոնք հողաբլուրներուն եւ սուրին պատճառով փլած են – Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. **5** “ <sup>դ</sup>Զաղդէացիներուն դէմ՝ պատերազմելու կու գան. սակայն այդ **տունները** մեռած մարդոց դիակներով պիտի լեցուին, որոնք իմ բարկութեամբս ու ցասումովս պիտի զարնեմ. որովհետեւ ես այս քաղաքէն իմ երեսս ծածկեցի՝ իրենց ամբողջ չարութեան համար: **6** Ահա՛ անոր առողջութիւն ու դարման պիտի բերեմ եւ զանոնք պիտի բուժեմ, ու խաղաղութեան եւ <sup>ե</sup>ապահովութեան առատութիւնը անոնց պիտի յայտնեմ: **7** Յուդայի գերիներն ու Իսրայէլի գերիները պիտի վերադարձնեմ, եւ զանոնք նախկինին պէս պիտի <sup>զ</sup>հաստատեմ: **8** Ջանոնք պիտի մաքրեմ ինձի դէմ <sup>է</sup>գործած իրենց բոլոր անօրէնութիւններէն, ու պիտի ներեմ իրենց բոլոր անօրէնութիւնները՝ **որոնցմով** ինձի դէմ մեղանչեցին եւ ապստամբեցան: **9** Ասիկա ինձի բերկրանքի անուն, գովաբանութիւն ու պարծանք պիտի ըլլայ երկրի բոլոր ազգերուն մէջ: Անոնք պիտի լսեն այն ամբողջ բարիքին մասին՝ որ ես իրենց պիտի ընեմ. ուստի պիտի վախճան եւ սասանին այն ամբողջ բարիքին ու <sup>բ</sup>յաջողութեան համար՝ որ ես այս **քաղաքին** պիտի <sup>բ</sup>ջնորհեմ»:»:

- <sup>ա</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ
- <sup>բ</sup> Եբբ.՝ զայն
- <sup>գ</sup> Եբբ.՝ արգելափակուած
- <sup>դ</sup> Կամ՝ Զաղդէացիները
- <sup>ե</sup> Եբբ.՝ ճշմարտութեան
- <sup>զ</sup> Եբբ.՝ կառուցանեմ
- <sup>է</sup> Եբբ.՝ մեղանչած
- <sup>ը</sup> Եբբ.՝ խաղաղութեան
- <sup>բ</sup> Եբբ.՝ ընեմ

10 Տէրը սա՛ կը յայտարարէ. «Այս տեղին մէջ,– որուն համար կ’ըսէք. “Անապատ դարձած է՝ առանց մարդու եւ անասունի<sup>ժ</sup>, այսինքն՝ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ, որոնք ամայացած են՝ առանց մարդու, բնակիչի եւ անասունի,– դարձեալ պիտի լսուին 11 բերկրանքի ձայնը եւ ուրախութեան ձայնը, փեսային ձայնն ու հարսին ձայնը. նաեւ անոնց ձայնը, որ Տէրոջ տունը շնորհակալութեան ընծաներ բերելով՝ կ’ըսեն. “Ներբողեցէ՛ք զօրքերու Տէրը, որովհետեւ Տէրը բարի է, որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է<sup>Է</sup>. արդարեւ այս երկրին գերիները իրենց նախկին վիճակին պիտի վերադարձնեն»», կը յայտարարէ Տէրը: 12 Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. «Այս տեղին մէջ, որ անապատ դարձած է՝ առանց մարդու եւ անասունի, եւ անոր բոլոր քաղաքներուն մէջ դարձեալ հօտեր պառկեցնող հովիւներու բնակարաններ պիտի ըլլան: 13 Լեռնային քաղաքներուն մէջ, դաշտագետիկի քաղաքներուն մէջ ու հարաւային քաղաքներուն մէջ, նաեւ Բեցհամիցի երկրին մէջ, Երուսաղէմի շրջակայքը եւ Յուդայի քաղաքներուն մէջ՝ հօտերը դարձեալ գիրենք համրողին ձեռքերուն տակէն պիտի անցնին», կը յայտարարէ Տէրը:

14 «Ահա՛ պիտի գան օրերը,– կը պատգամէ Տէրը,– երբ Իսրայէլի տան համար ու Յուդայի տան համար՝ տուած բարի խոստումս պիտի իրագործեմ: 15 Այդ օրերը եւ այդ ատեն՝ Դաւիթէն արդարութեան Ծառաւիղ մը պիտի բուսցնեմ, ու ան երկրին մէջ իրաւունք եւ արդարութիւն պիտի կիրարկէ: 16 Այդ օրերը Յուդա պիտի ազատի ու Երուսաղէմ ապահովութեամբ պիտի բնակի, եւ ահա՛ւասիկ անոր անունը՝ որով պիտի կոչուի. “Տէրը՝ մեր արդարութիւնը<sup>Է</sup>»: 17 Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ. «Դաւիթէն Իսրայէլի տան գահին վրայ բազմող մարդ պիտի չպակսի: 18 Ո՛չ ալ Ղեւտացի քահանաներէն՝ ամէն ատեն” ողջակէզ մատուցանող, հացի ընծայի հետ խունկ ծխող ու զոհ ընծայող մարդ պիտի պակսի իմ առջեւ»:

19 <sup>Խ</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ ըսելով. «Տէրը սա՛ կը յայտարարէ. 20 “Եթէ կարենաք ցերեկուան ուխտս եւ գիշերուան ուխտս խզել, որ ցերեկն ու գիշերը իրենց ժամանակին չըլլան, 21 իմ ծառայիս՝ Դաւիթի հետ կնքած ուխտս ալ պիտի խզուի, որ իր գահին վրայ թագաւորող որդի չունենայ. նոյնպէս ալ ինծի պաշտօն կատարող Ղեւտացի քահանաներուն հետ կնքած ուխտս: 22 Ինչպէս երկինքի զօրքերը չեն հաշուուիր ու ծովուն աւազը չի չափուիր, նոյնպէս պիտի բազմացնեմ իմ ծառայիս՝ Դաւիթի զարմը եւ ինծի պաշտօն կատարող Ղեւտացիները<sup>Է</sup>»:

23 <sup>Ծ</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ ըսելով. 24 «Չե՞ս նկատեր թէ ի՛նչ կը խօսի այս ժողովուրդը՝ ըսելով. “Տէրը իր ընտրած երկու գերդաստանները մերժեց<sup>Է</sup>: Անոնք իմ ժողովուրդս կ’անարգեն, որպէսզի ան իրենց առջեւ ազգ չսեպուի: 25 Տէրը սա՛ կը յայտարարէ. “Եթէ ցերեկուան ու գիշերուան հետ ուխտ ըրած չեմ, եւ երկինքին ու երկրին կանոններ դրած չեմ, 26 Յակոբի եւ իմ ծառայիս՝ Դաւիթի զարմն ալ պիտի մերժեմ,

---

<sup>ժ</sup> Եբր.՝ խոստացած

<sup>Է</sup> Եբր.՝ Դաւիթի համար

<sup>Է</sup> Եբր.՝ ամբողջ օրը

<sup>Խ</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>Ծ</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>Է</sup> Եբր.՝ տեսներ

որպեսզի ա՛լ անոր զարմէն <sup>6</sup>կառավարիչներ չնշանակեմ՝ Աբրահամի, Իսահակի ու Յակոբի զարմին վրայ. որովհետեւ <sup>8</sup>զանոնք գերութենէն՝ պիտի վերադարձնեմ եւ անոնց պիտի գթամ<sup>9</sup>»:

ՊԱՏԳԱՄ ՄԸ ՍԵՂԵԿԻԱՅԻ

34

Երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը՝ իր ամբողջ զօրագունդով, երկրի բոլոր թագաւորութիւններով՝ որոնց վրայ ինք կը տիրէր, ու բոլոր ժողովուրդներով Երուսաղէմի դէմ եւ անոր բոլոր քաղաքներուն դէմ կը պատերազէր, Տէրոջմէն Երեմիայի սա՛ խօսքը <sup>10</sup>ուղղուեցաւ.

**2** «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Գնա՛, Յուդայի Սեղեկիա թագաւորին խօսէ՛ եւ անոր ըսէ՛. “Տէրը սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ այս քաղաքը Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնեմ, ու զայն կրակով պիտի այրէ: **3** Դուն անոր ձեռքէն պիտի չազատիս, հապա անշուշտ պիտի բռնուիս եւ անոր ձեռքը մատնուիս. քու աչքերդ Բաբելոնի թագաւորին աչքերը պիտի տեսնեն, անոր բերանը քու բերանիդ պիտի խօսի, ու Բաբելոն պիտի երթաս»”: **4** Սակայն մտի՛կ ըրէ Տէրոջ խօսքը, ո՛վ Սեղեկիա, Յուդայի՛ թագաւոր. Տէրը քեզի համար սա՛ կը յայտարարէ. “Դուն սուրով պիտի չմեռնիս, **5** հապա խաղաղութեամբ պիտի մեռնիս: Ինչպէս քեզմէ առաջ եղող քու հայրերուդ՝ նախկին թագաւորներուն համար **խունկեր** ծխեցին, նոյնպէս քեզի համար պիտի ծխեն. «Վա՛յ, իմ տէ՛րս» ըսելով՝ քու վրադ պիտի հեծեծեն, որովհետեւ ե՛ս ըսի այս խօսքը”, կը պատգամէ Տէրը<sup>11</sup>»:

**6** Ուստի Երեմիա մարգարէն այս բոլոր խօսքերը Յուդայի Սեղեկիա թագաւորին ըսաւ՝ Երուսաղէմի մէջ, **7** մինչ Բաբելոնի թագաւորին զօրագունդը կը պատերազմէր Երուսաղէմի դէմ ու Յուդայի միւս բոլոր քաղաքներուն դէմ, Լաքիսի եւ Ազեկայի դէմ, քանի որ Յուդայի քաղաքներէն ասոնք մնացած էին **իբր** պարսպապատ քաղաք:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ ԽԱՐԵՊԱՏԻՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

**8** Ահա՛ւասիկ Տէրոջմէն Երեմիայի <sup>12</sup>ուղղուած խօսքը, երբ Սեղեկիա թագաւորը Երուսաղէմի մէջ եղող ամբողջ ժողովուրդին հետ ուխտ կնքեց, որ ազատագրութիւն յայտարարեն. **9** որպէսզի իւրաքանչիւրը ազատ արձակէ իր երբայեցի ստրուկն ու երբայեցի ստրկուհին, եւ **ա՛լ** ո՛չ մէկը ստրկացնէ իր եղբայրը՝ Հրեան: **10** Բոլոր իշխանաւորներն ու ամբողջ ժողովուրդը՝ որոնք այս <sup>13</sup>ուխտը կնքած՝ էին՝ հնազանդեցան, որպէսզի իւրաքանչիւրը ազատ արձակէ իր ստրուկն ու ստրկուհին, եւ ա՛լ զանոնք չստրկացնէ. հնազանդեցան ու **զանոնք** արձակեցին: **11** Բայց անկէ ետք <sup>14</sup>հրաժարեցան,

<sup>6</sup> Եբբ.՝ չառնեմ կառավարիչներ **ըլլալու**

<sup>8</sup> Եբբ.՝ անոնց գերութիւնը

<sup>10</sup> Եբբ.՝ եղաւ

<sup>12</sup> Եբբ.՝ եղած

<sup>13</sup> Եբբ.՝ ուխտին մէջ մտած

<sup>14</sup> Եբբ.՝ ետ դարձան

իրենց ազատ արձակած ստրուկներն ու ստրկուհիները վերադարձուցին, եւ զանոնք <sup>Ե</sup>բռնադատեցին որ ստրուկ եւ ստրկուհի ըլլան:

**12** Ուստի «Տէրը խօսեցաւ» Երեմիայի՝ ըսելով. **13** «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «Ես ձեր հայրերուն հետ ուխտ կնքեցի այն օրը՝ երբ զանոնք հանեցի Եգիպտոսէն՝ ստրկութեան տունէն, եւ ըսի. **14** "Եօթը տարուան վախճանին, ձեզմէ իւրաքանչիւրը ազատ պիտի արձակէ իր երբայեցի եղբայրը՝ որ <sup>Ե</sup>իրեն ծախուած է. վեց տարի քեզի ստրուկ ըլլալէ ետք՝ զայն քովէդ ազա՛տ արձակէ: Բայց ձեր հայրերը ինծի մտիկ չըրին, եւ իրենց ականջը չդարձուցին: **15** Դուք <sup>Ը</sup>ատեն մը դարձի եկաք, եւ ըրիք ինչ որ իմ <sup>Ք</sup>առջեւ ուղիղ է՝ իւրաքանչիւրը իր ընկերին ազատագրութիւնը յայտարարելով. նաեւ իմ առջեւ ուխտ կնքեցիք այն տան մէջ՝ որ իմ անունովս կոչուած է: **16** Բայց **յետոյ** հրաժարելով՝ իմ անունս աղարտեցիք. <sup>Գ</sup>բոլորդ ալ ձեր՝ ազատ արձակած եւ իրենց <sup>Ի</sup>կամքին **ձգուած** ստրուկներն ու ստրկուհիները վերադարձուցիք, զանոնք բռնադատելով որ ձեզի ստրուկ եւ ստրկուհի ըլլան»:

**17** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ. «Դուք ինծի մտիկ չըրիք, ու **ձեզմէ** իւրաքանչիւրը իր եղբօր եւ իր ընկերին ազատագրութիւնը չյայտարարեց. ուստի ես ձեզի համար սուրին, ժանտախտին ու սովին <sup>Լ</sup>ազատութիւն պիտի տամ»,– կը պատգամէ Տէրը,– եւ ձեզ երկրի բոլոր թագաւորութիւններուն մէջ սուկումի պիտի մատնեմ: **18** Իմ ուխտս անտեսող ու իմ առջեւ իրենց կնքած ուխտին խօսքերը <sup>Խ</sup>չգործադրող մարդիկը պիտի մատնեմ. (որոնք զուարակը երկուքի կտրելով անոր կտորներուն մէջտեղէն անցան.) **19** **այսինքն՝** Յուդայի իշխանաւորներն ու Երուսաղէմի իշխանաւորները, պալատականները, քահանաներն ու երկրին ամբողջ ժողովուրդը, որոնք զուարակին կտորներուն մէջտեղէն անցան, **20** զանոնք պիտի մատնեմ իրենց թշնամիներուն ձեռքը եւ իրենց կեանքը փնտռողներուն ձեռքը. անոնց դիակները երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն ուտելիք պիտի ըլլան: **21** Յուդայի Սեղեկիա թագաւորը եւ անոր իշխանաւորները պիտի մատնեմ իրենց թշնամիներուն ձեռքը, իրենց կեանքը փնտռողներուն ձեռքը, ու ձեզմէ <sup>Ծ</sup>հեռացող Բաբելոնի թագաւորին զօրագունդին ձեռքը»: **22** «Ահա՛ ես հրամայեցի,– կը պատգամէ Տէրը,– եւ զանոնք այս քաղաքը պիտի վերադարձնեմ. անոր դէմ պիտի պատերազմին, զայն պիտի գրաւեն ու կրակով այրեն. այսպէս՝ Յուդայի քաղաքները

<sup>Ե</sup> Եբր.՝ նուաճեցին

<sup>Գ</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>Ե</sup> Եբր.՝ քեզի

<sup>Ը</sup> Եբր.՝ օր

<sup>Ք</sup> Եբր.՝ աչքերուս

<sup>Գ</sup> Եբր.՝ ձեզմէ իւրաքանչիւրը իր

<sup>Ի</sup> Եբր.՝ անձին

<sup>Լ</sup> Եբր.՝ ազատագրութիւն պիտի յայտարարեմ

<sup>Խ</sup> Եբր.՝ չհաստատող

<sup>Ծ</sup> Եբր.՝ բարձրացող

ամայութեան պիտի <sup>4</sup>վերածեմ, առանց բնակիչի»:

ԵՐԵՄԻԱ ԵՒ ՌԵԶԱԲԵԱՆՆԵՐԸ

35

Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի օրերը, Երեմիայի «ուղղուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ. **2** «Գնա՛ Ռեքաբեաններուն տունը, խօսէ՛ անոնց հետ, տա՛ր զանոնք Տէրոջ տունը՝ սենեակներէն մէկուն մէջ, եւ գինի՛ խմցուր անոնց»:

**3** Ես ալ առի Զաբասսինիայի որդիին՝ Երեմիայի որդին՝ Յեզոնիան, անոր եղբայրներն ու բոլոր որդիները, եւ Ռեքաբեաններուն ամբողջ տունը, **4** ու զանոնք Տէրոջ տունը տարի – Աստուծոյ մարդուն՝ Յեգոդիայի որդիին Անանի որդիներուն սենեակը –, որ Սեղղումի որդիին՝ Մասսիա դռնապանին սենեակին վրայ եղող իշխանաւորներուն սենեակին քով էր: **5** Ռեքաբեաններու տան որդիներուն առջեւ գինիով լեցուն սկահակներ ու բաժակներ դրի, եւ անոնց ըսի. «Գինի՛ խմեցէք»:

**6** Անոնք պատասխանեցին. «Գինի չենք խմեր. քանի որ մեր հայրը, Ռեքաբի որդին՝ Յովնադաբ, մեզի հրամայեց. “Դուք ու ձեր որդիները երբեք գինի մի՛ խմէք. **7** տուն մի՛ կառուցանէք, սերմ մի՛ ցանէք, այգի մի՛ տնկէք եւ մի՛ ունենաք, հապա ձեր բոլոր օրերը վրաններու՝ մէջ բնակեցէք, որպէսզի ձեր պանդխտացած <sup>բ</sup>երկրին վրայ շատ օրեր ապրիք»: **8** Ուստի մեր հօր՝ Ռեքաբի որդիին Յովնադաբի խօսքը մտիկ ըրինք՝ ամբողջ մեզի պատուիրածին համաձայն. մեր բոլոր օրերուն մէջ՝ մենք, մեր կիները, մեր որդիներն ու աղջիկները գինի չենք խմեր, **9** մեր բնակութեան համար տուներ չենք կառուցաներ, այգի, արտ եւ ցանք չենք ունենար. **10** հապա վրաններու մէջ կը բնակինք, ու հնազանդելով՝ մեր հօր Յովնադաբի ամբողջ մեզի հրամայածը կը գործադրենք: **11** Բայց երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը այս երկրին դէմ բարձրացաւ, ըսինք. “Եկէ՛ք Երուսաղէմ երթանք, Զաղդէացիներու զօրագունդին եւ <sup>գ</sup>Ասորիներու զօրագունդին <sup>դ</sup>առջեւէն. այսպէս՝ Երուսաղէմ կը բնակինք»:

**12** Այն ատեն «Տէրը խօսեցաւ» Երեմիայի՝ ըսելով. **13** «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Գնա՛ եւ ըսէ՛ Յուդայի մարդոց ու Երուսաղէմի բնակիչներուն. “Իմ խօսքերս մտիկ ընելու համար խրատ չէ՞ք ընդունիր, – կը պատգամէ Տէրը: – **14** Ռեքաբի որդիին՝ Յովնադաբի խօսքերը – որ իր որդիներուն հրամայեր էր գինի չխմել – <sup>գ</sup>գործադրուեցան, որովհետեւ իրենց հօր հրամանին հնազանդելով՝ մինչեւ այսօր չեն խմեր. իսկ ես ձեզի խօսեցայ – կանուխ ելլելով խօսեցայ –, սակայն ինծի մտիկ չըրիք: **15** Իմ բոլոր ծառաներս՝ մարգարէները ձեզի դրկեցի – կանուխ ելլելով դրկեցի – եւ ըսի. «**Չեզմէ** իւրաքանչիւրը իր չար ճամբայէն թող դարձի գայ. բարեփոխեցէ՛ք ձեր արարքները, ուրիշ աստուածներու մի՛ հետեւիք եւ զանոնք մի՛ պաշտէք, որպէսզի բնակիք

---

<sup>4</sup> Եբբ.՝ դարձնեմ

<sup>ա</sup> Եբբ.՝ եղած

<sup>բ</sup> Եբբ.՝ հողին

<sup>գ</sup> Եբբ.՝ Արամացիներու, այսինքն՝ Սուրիացիներու

<sup>դ</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>ե</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>զ</sup> Եբբ.՝ հաստատուեցան

այն «երկրին մէջ» որ ձեզի ու ձեր հայրերուն տուի»։ Բայց ձեր ականջը չդարձուցիք եւ ինծի մտիկ չըրիք։ **16** Ի՛րապէս Ռեքաբի որդիին՝ Յովնադաբի որդիները իրենց հօր պատուիրած հրամանը՝ գործադրեցին, բայց այս ժողովուրդը ինծի մտիկ չըրաւ<sup>Կ</sup>։ **17** Հետեւաբար Տէրը – զօրքերու Աստուածը, Իսրայէլի Աստուածը – սա՛կը յայտարարէ. «Ահա՛ ես Յուդայի ու Երուսաղէմի բոլոր բնակիչներուն վրայ պիտի բերեմ այն ամբողջ չարիքը՝ որ անոնց դէմ՝ վճռեր էի. որովհետեւ անոնց խօսեցայ, բայց մտիկ չըրին. զանոնք կանչեցի, բայց չպատասխանեցին<sup>Զ</sup>»։

**18** Երեմիա Ռեքաբեաններու տան ըսաւ. «Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛կը յայտարարէ. «Քանի ձեր հօր՝ Յովնադաբի պատուէրին հնազանդեցաք, անոր բոլոր հրամանները պահեցիք, եւ ամէն ինչ որ ձեզի պատուիրեց՝ գործադրեցիք, **19** զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛կը յայտարարէ. "Ռեքաբեան Յովնադաբէն իմ առջեւ կայնող մարդ՝ զնդմիշտ պիտի չպակսի"<sup>Է</sup>»։

ԲԱՐՈՒՔ ԿԸ ԿԱՐԴԱՅ ՊԱՏԱՏԸ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

36

Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի չորրորդ տարին, Երեմիայի սա՛կ խօսքը՝ «նուղուեցաւ Տէրոջմէն՝ որ ըսաւ. **2** «Քեզի գիրքի պատա՛տ մը առ, ու գրէ՛ անոր վրայ այն բոլոր խօսքերը՝ որ քեզի ըսի Իսրայէլի դէմ, Յուդայի դէմ ու բոլոր ազգերուն դէմ, այն օրէն ի վեր՝ երբ սկսայ քեզի հետ խօսիլ – Յովսիայի օրերէն – մինչեւ այսօր։ **3** Երբ Յուդայի տունը լսէ այն ամբողջ չարիքին մասին՝ որ կը մտածեմ իրենց ընել, թերեւս իւրաքանչիւրը իր չար ճամբայէն դարձի գայ, որպէսզի ես անոնց անօրէնութիւնն ու մեղքը ներեմ»։

**4** Ուստի Երեմիա Ներիայի որդին՝ Բարուքը կանչեց, եւ Բարուք Երեմիայի բերանէն գիրքի պատատի մը վրայ գրեց Տէրոջ անոր ըսած բոլոր խօսքերը։ **5** Յետոյ Երեմիա Բարուքի հրամայեց. «Ես հոս արգելափակուած եմ. չեմ կրնար Տէրոջ տունը երթալ։ **6** Ուստի դո՛ւն գնա, ու ծոմապահութեան օրը՝ Տէրոջ տան մէջ ժողովուրդին ականջներուն կարդա՛ Տէրոջ խօսքերը, այն պատատէն՝ որուն վրայ իմ բերանէս գրեցիր. նաեւ զանոնք կարդա՛ իրենց քաղաքներէն եկող ամբողջ Յուդայի ականջներուն։ **7** Թերեւս իրենց աղաչանքը Տէրոջ առջեւ՝ քննկայանայ, եւ իւրաքանչիւրը իր չար ճամբայէն դարձի գայ. քանի որ մեծ է այն բարկութիւնն ու ցասումը՝ որ Տէրը այս ժողովուրդին դէմ՝ վճռեր է»։ **8** Ուստի Ներիայի որդին՝ Բարուք գործադրեց ամէն ինչ որ Երեմիա մարգարէն իրեն հրամայեր էր, եւ այդ գիրքէն Տէրոջ խօսքերը կարդաց Տէրոջ տան մէջ։

**9** Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի հինգերորդ տարին, իններորդ

<sup>Կ</sup> Եբր.՝ հողիւն վրայ

<sup>Զ</sup> Եբր.՝ հաստատեցին

<sup>Է</sup> Եբր.՝ խօսեր

<sup>Ը</sup> Եբր.՝ բոլոր օրերը

<sup>Թ</sup> Եբր.՝ եղաւ

<sup>Ձ</sup> Եբր.՝ իյնայ

<sup>Ղ</sup> Եբր.՝ խօսեր

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

ամիսը, Տէրոջ առջեւ ծոմապահութիւն յայտարարեցին Երուսաղէմի ամբողջ ժողովուրդին, ու Յուդայի քաղաքներէն Երուսաղէմ եկող ամբողջ ժողովուրդին: **10** Բարուք **այդ** գիրքէն Երեմիայի խօսքերը կարդաց ամբողջ ժողովուրդին ականջներուն՝ Տէրոջ տան մէջ, Սափան դպիրին որդիին՝ Գամարիայի սենեակը, վերի գաւիթը՝ Տէրոջ տան նոր դրան մուտքը:

## ՊԱՏԱՏԸ ԿԸ ԿԱՐԴԱՅՈՒԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒՆ

**11** Սափանի որդիին՝ Գամարիայի որդիին՝ Միքիա, երբ գիրքէն Տէրոջ բոլոր խօսքերը լսեց, **12** թագաւորին տունը՝ դպիրին սենեակը իջաւ. եւ ահա՛ բոլոր իշխանաւորները հոն նստած էին.– Եղիսամա դպիրը, Սեմայիայի որդիին՝ Դաղայիա, Աքոբորի որդիին՝ Եղնաթան, Սափանի որդիին՝ Գամարիա, Անանիայի որդիին՝ Սեդեկիա, ու բոլոր իշխանաւորները: **13** Միքիա անոնց հաղորդեց այն բոլոր խօսքերը՝ որ լսեր էր, երբ Բարուք ժողովուրդին ականջներուն **այդ** գիրքէն կը կարդար: **14** Բոլոր իշխանաւորները քուսիի որդիին՝ Սեդեմիայի որդիին՝ Նաթանիայի որդիին Յուդին ղրկեցին Բարուքի՝ ըսելով. «Ժողովուրդին ականջներուն կարդացած պատատդ ձե՛ռքդ առ ու **հո՛ւ** եկուր»: Ուստի Ներիայի որդիին՝ Բարուք պատատը ձեռքը առաւ եւ անոնց գնաց: **15** Անոնք իրեն ըսին. «Կ՛աղերսե՛նք, նստե՛ ու մեր ականջներո՛ւն **ալ** կարդա զայն»: Ուստի Բարուք անոնց ականջներուն կարդաց: **16** Երբ այդ բոլոր խօսքերը լսեցին, վախով իրարու նայեցան եւ Բարուքի ըսին. «Անշուշտ այդ բոլոր խօսքերը թագաւորին պիտի հաղորդենք»: **17** Ապա Բարուքի հարցուցին. «Կ՛աղերսե՛նք, պատմե՛ մեզի թէ ի՛նչպէս գրեցիր այդ խօսքերը անոր բերանէն»: **18** Բարուք անոնց պատասխանեց. «Այս բոլոր խօսքերը ան ինծի՝ հաղորդեց իր բերանով, ու ես զանոնք մելանով **այս** գիրքին մէջ գրեցի»: **19** Այն ատեն իշխանաւորները Բարուքի ըսին. «Գնա՛, պահուրտէ՛, թէ՛ դուն եւ թէ Երեմիա. ո՛չ մէկը թող գիտնայ թէ ո՛ր էք»:

## ԹԱԳԱԻՈՐԸ ԿԸ ՎԱՌԷ ՊԱՏԱՏԸ

**20** Յետոյ անոնք բակը գացին՝ թագաւորին քով – բայց պատատը Եղիսամա դպիրին սենեակը տեղաւորած էին – եւ **այդ** բոլոր խօսքերը թագաւորին ականջներուն հաղորդեցին: **21** Ուստի թագաւորը Յուդին ղրկեց՝ որ **այդ** պատատը բերէ, ան ալ զայն առաւ Եղիսամա դպիրին սենեակէն. Յուդի զայն կարդաց թագաւորին ականջներուն ու թագաւորին քով կայնող բոլոր իշխանաւորներուն ականջներուն: **22** Իններորդ ամիսը ըլլալով՝ թագաւորը ձմեռնատան մէջ նստած էր, եւ առջեւը վառուած կրակարան մը կար: **23** Երբ Յուդի երեք կամ չորս էջ կարդաց, <sup>բ</sup>թագաւորը զայն զմելիով կտրեց ու կրակարանի կրակին մէջ նետեց, մինչեւ որ ամբողջ պատատը կրակարանի կրակին մէջ <sup>գ</sup>սպառեցաւ: **24** Թագաւորը եւ իր բոլոր ծառաները՝ որ այս բոլոր խօսքերը կը լսէին՝ չվախցան, ո՛չ ալ իրենց հագուստը պատռեցին. **25** Նոյնիսկ երբ Եղնաթան, Դաղայիա ու Գամարիա թագաւորին դիմեցին որ պատատը չայրէ, անոնց մտիկ չըրաւ: **26** Յետոյ թագաւորը հրամայեց թագաւորի որդիին՝ Յերամէլի, Եզրիէլի որդիին՝ Սարայիայի, եւ Աբդիէլի որդիին՝ Սեդեմիայի, որ Բարուք դպիրն ու Երեմիա մարգարէն բռնեն. բայց Տէրը

<sup>բ</sup> Եբր.՝ յայտարարեց

<sup>գ</sup> Եբր.՝ ան

<sup>դ</sup> Եբր.՝ հատաւ

զանոնք է պահեց:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ԳՐԷ ՈՒՐԻՇ ՊԱՏԱՏ ՄԸ

27 Թագաւորը այդ պատատն ու Երեմիայի բերանէն Բարուքի գրած խօսքերը այրելէն ետք՝<sup>Ե</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ ըսելով. 28 «Դա՛րձեալ քեզի ուրիշ պատատ մը առ, եւ գրէ՛ անոր վրայ բոլոր նախկին խօսքերը՝ որ Յուդայի Յովակիմ թագաւորին այրած առաջին պատատին մէջ էին: 29 Իսկ Յուդայի Յովակիմ թագաւորին ըսէ՛. “Տէրը սա՛ կը յայտարարէ. “Դուն այդ պատատը այրեցիր՝ ըսելով. «Ինչո՞ւ անոր վրայ գրեցիր թէ Բաբելոնի թագաւորը անպատճառ պիտի գայ, այս երկիրը պիտի կործանէ, եւ անկէ մարդն ու անասունը պիտի թահանէ»<sup>Գ</sup>»:

30 «Հետեւաբար Տէրը Յուդայի Յովակիմ թագաւորին մասին սա՛ կը յայտարարէ. “Ան ո՛չ մէկը պիտի ունենայ՝ որ Դաւիթի գահին վրայ բազմի, եւ անոր դիակը ցերեկը ժտաքուրեան մէջ ու գիշերը սառնամանիքի մէջ պիտի ձգուի: 31 Իրեն, իր զարմին, եւ իր ծառաներուն պիտի հատուցանեմ իրենց անօրէնութիւնը, եւ իրենց, Երուսաղէմի բնակիչներուն ու Յուդայի մարդոց վրայ պիտի բերեմ այն ամբողջ չարիքը՝ որ անոնց դէմ վճռեցի, բայց անոնք մտիկ չըրին»<sup>Դ</sup>»:

32 Երեմիա ուրիշ պատատ մը առաւ ու զայն Ներիայի որդիին՝ Բարուք դպիրին տուաւ: Ան ալ անոր վրայ Երեմիայի բերանէն գրեց Յուդայի Յովակիմ թագաւորին կրակով այրած գիրքին բոլոր խօսքերը. անոնց պէս ուրիշ շատ խօսքեր ալ ակելցան անոնց վրայ:

ՍԵՂԵԿԻԱՅԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԵՐԵՄԻԱՅԻ

37

Յովսիայի որդին՝ Սեղեկիա թագաւորը Յովակիմի որդիին՝ Յեքոնիայի տեղ թագաւորեց. Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զինք Յուդայի վրայ թագաւոր նշանակեց: 2 Բայց ո՛չ ինք, ո՛չ իր ծառաները, ո՛չ ալ երկրին ժողովուրդը մտիկ ըրին Տէրոջ ըսած խօսքերը՝ Երեմիա մարգարէին միջոցով:

3 Սեղեկիա թագաւորը Սեղեմիայի որդին՝ Յուքադը եւ Մասսիայի որդին՝ Սոփոնիա քահանան Երեմիա մարգարէին ղրկեց՝ ըսելով. «Կ՛աղերսե՛մ, մեզի համար աղօթէ՛ մեր Տէր Աստուծոյն»:<sup>Ե</sup> 4 Այդ ատեն Երեմիա ժողովուրդին մէջ կը մտնէր ու կ'ելլէր. զինք տակաւին բանտը դրած չէին: 5 Փարաւոնի զօրագունդը Եգիպտոսէն ելեր էր. երբ Երուսաղէմը պաշարող Զաղդէացիները թայդ լուրը լսեցին, Երուսաղէմէն հեռացան:

<sup>Ե</sup> Եբբ.՝ ծածկեց

<sup>Զ</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>Գ</sup> Եբբ.՝ դադրեցնէ

<sup>Դ</sup> Եբբ.՝ չորութեան

<sup>Ե</sup> Եբբ.՝ ձեռքով

<sup>Զ</sup> Եբբ.՝ անոնց

<sup>Է</sup> Եբբ.՝ պաշարումը հանեցին

6 Այն ատեն <sup>7</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիա մարգարէին՝ ըսելով. «Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. 7 “Ինծի խորհուրդ հարցնելու համար ձեզ ինծի դրկող Յուդայի թագաւորին սա՛ ըսէք. “Ահա՛ ձեզի օգնութեան համար դուրս ելլող Փարաւոնի զօրագունդը իր երկիրը՝ Եգիպտոս պիտի վերադառնայ: 8 Զաղդէացիներն ալ պիտի վերադառնան եւ այս քաղաքին դէմ պիտի պատերազմին. զայն պիտի գրաւեն ու կրակով այրեն”<sup>9</sup>: 9 Տէրը սա՛ կը յայտարարէ. “Մի՛ հրապուրէք ձեր անձերը՝ ըսելով. “Զաղդէացիները անշուշտ մեզմէ պիտի երթան”, որովհետեւ պիտի չերթան: 10 Արդարեւ թէեւ ձեզի դէմ պատերազմող Զաղդէացիներուն ամբողջ զօրագունդը զարնէք եւ անոնցմէ միայն քանի մը խոցուած մարդիկ մնան, անոնցմէ իւրաքանչիւրը իր վրանին մէջ պիտի կանգնի, եւ այս քաղաքը կրակով պիտի այրեն”<sup>11</sup>»:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԻ ՈՒ ԿԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԻ

11 Երբ Զաղդէացիներուն զօրագունդը Փարաւոնի զօրագունդին պատճառով Երուսաղէմէն հեռացաւ, 12 Երեմիա Երուսաղէմէն ելաւ որ Բենիամինի երկիրը երթայ՝ անկէ իր բաժինը առնելու ժողովուրդին մէջ: 13 Երբ ան Բենիամինի դուռն էր, հոն <sup>14</sup>նոստիկանապետ մը կար, Անանիայի որդիին՝ Սեղեմիայի որդին, Յերիա անունով: Ան Երեմիա մարգարէն բռնեց եւ ըսաւ. «Դուն Զաղդէացիներուն «կողմը կ'անցնիս»<sup>15</sup>: 14 Երեմիա պատասխանեց. “Սուտ է, ես Զաղդէացիներու կողմը չեմ անցնիր<sup>16</sup>. բայց ան իրեն մտիկ չըրաւ: Յերիա Երեմիան ձերբակալեց ու զինք տարաւ իշխանաւորներուն: 15 Իշխանաւորները Երեմիայի զայրացան, զինք ծեծեցին եւ բանտարկեցին Յովնաթան դպիրին տան մէջ. արդարեւ այդ տունը բանտ ըրեր էին:

16 Երբ Երեմիա բանտը եւ խուցերը մտաւ, <sup>17</sup>ու երկար ժամանակ հոն մնաց, 17 Սեղեկիա թագաւորը մարդ դրկեց եւ զայն բերել տուաւ: Թագաւորը զայն ծածկաբար հարցուփորձեց իր տան մէջ, եւ ըսաւ. «Արդեօք Տէրոջմէն խօսք մը կա՞յ»:<sup>18</sup> Երեմիա պատասխանեց. «Կայ»: Նաեւ ըսաւ. «Դուն Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի մատնուիս»:<sup>19</sup> 18 Յետոյ Երեմիա Սեղեկիա թագաւորին ըսաւ. «Զեզի, կամ ծառաներուդ, կամ այս ժողովուրդին դէմ ի՞նչպէս մեղանչեցի, որ զիս բանտը դրիք: 19 Ո՞ւր են ձեր մարգարէները, որոնք ձեզի կը մարգարէանային՝ ըսելով. “Բաբելոնի թագաւորը ձեզի դէմ եւ այս երկրին դէմ պիտի չգայ”<sup>20</sup>: 20 Հիմա կ'աղերսեմ, ո՛վ թագաւոր, իմ տէ՛րս, մտի՛կ ըրէ. թող աղաչանքս <sup>21</sup>քեզմէ ընդունուի”, ու զիս մի՛ վերադարձներ Յովնաթան դպիրին տունը, որ հոն չմեռնիմ»:<sup>21</sup> 21 Սեղեկիա թագաւորը հրամայեց որ Երեմիան բանտին բակը տեղաւորուի, եւ ամէն օր հացագործներուն փողոցէն հացի նկանակ մը տրուի անոր, մինչեւ որ քաղաքին ամբողջ հացը հատաւ: Այսպէս՝ Երեմիա բանտին բակին մէջ մնաց:

<sup>7</sup> Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ

<sup>8</sup> Եբբ.՝ վերատեսչութեան տէր

<sup>9</sup> Եբբ.՝ կ'իյնաս

<sup>10</sup> Կամ՝ Կեղծիք

<sup>11</sup> Եբբ.՝ ու Երեմիա

<sup>12</sup> Եբբ.՝ քու առջեւդ իյնայ

Մատթանի որդի՝ Սափատիա, Փասուրի որդի՝ Գոդոդիա, Սեղեմիայի որդի՝ Յուքազ ու Սեղքիայի որդի՝ Փասուր լսեցին Երեմիայի ըսած խօսքերը ամբողջ ժողովուրդին. ան ըսաւ. «Տէրը սա՛ կը յայտարարէ. **2** “Այս քաղաքին մէջ կեցողը սուրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնի: Իսկ ո՛վ որ Զաղդէացիներուն “յանձնուի, ողջ պիտի մնայ. անոր կեանքը անարի մը պէս պիտի ըլլայ իրեն, ու պիտի ապրի”<sup>ա</sup>: **3** Տէրը սա՛ կը յայտարարէ. “Այս քաղաքը անպատճառ Բաբելոնի թագաւորին զօրագունդին ձեռքը պիտի մատնուի, որ զայն պիտի գրաւէ”<sup>բ</sup>: **4** Իշխանաւորները թագաւորին ըսին. «Կ’աղերսե՛նք, թող այս մարդը մեռցուի, որովհետեւ այս քաղաքին մէջ մնացած պատերազմիկներուն ձեռքերն ու ամբողջ ժողովուրդին ձեռքերը կը թուլցնէ՝ անոնց այսպիսի խօսքեր ըսելով. արդարեւ այս մարդը այս ժողովուրդին խաղաղութիւնը չ’ուզեր, հապա՛ անոր չարիքը»<sup>գ</sup>: **5** Սեղեկիա թագաւորը ըսաւ. «Ահա՛ անկա ձեր ձեռքն է, որովհետեւ թագաւորը ձեզի հակառակ ոչինչ կրնայ ընել»<sup>դ</sup>: **6** Ուստի Երեմիան բռնեցին ու զայն թագաւորին որդիին՝ Սեղքիայի գուրը նետեցին, որ բանտին բակին մէջ էր. Երեմիան պարաններով իջեցուցին: Այդ գուրին մէջ ջուր չկար, հապա միայն <sup>ե</sup>սիկ. ուստի Երեմիա սիկին մէջ մխրճուեցաւ:

**7** Երբ թագաւորին տունը եղող պալատականներէն Եթովպիացի Աբդեմելէք լսեց թէ Երեմիան գուրը <sup>զ</sup>ձգեցին, թագաւորը Բենիամինի դուռը բազմած էր: **8** Աբդեմելէք թագաւորին տունէն ելաւ ու թագաւորին խօսեցաւ՝ ըսելով. **9** «Ո՛վ թագաւոր, իմ տէ՛րս, այս մարդիկը չարիք գործեցին՝ **այդ** բոլորը Երեմիա մարգարէին ընելով **եւ** զայն գուրը նետելով. արդարեւ ան իր եղած տեղը անօթութենէն <sup>է</sup>պիտի մեռնի”, որովհետեւ քաղաքին մէջ ա՛լ հաց չկայ»<sup>զ</sup>: **10** Թագաւորը Եթովպիացի Աբդեմելէքի հրամայեց. «Ասկէ երեսո՛ւն մարդ առ քեզի հետ, ու գուրէն հանէ՛ Երեմիա մարգարէն՝ քանի մեռած չէ»<sup>զ</sup>: **11** Ուստի Աբդեմելէք իրեն հետ առաւ մարդիկը, եւ թագաւորին տունը գնաց՝ շտեմարանին տակ. անկէ մաշած քորջեր ու մաշած ցնցոտիներ առաւ, եւ զանոնք պարաններով գուրը՝ Երեմիայի իջեցուց: **12** Եթովպիացի Աբդեմելէք Երեմիայի ըսաւ. «Դի՛ր **այս** մաշած քորջերն ու ցնցոտիները անութներուդ տակ՝ պարաններուն տակ»<sup>զ</sup>: Երեմիա ալ այդպէս ըրաւ: **13** Երեմիան պարաններով քաշեցին եւ զինք գուրէն դուրս հանեցին. ու Երեմիա բանտին բակին մէջ մնաց:

ՍԵՂԵԿԻԱ ԿԸ ԴԻՄԷ ԵՐԵՄԻԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

**14** Սեղեկիա թագաւորը **մարդ** ղրկեց, Երեմիա մարգարէն իր քով բերել տուաւ՝ Տէրոջ տան երրորդ մուտքը, ու թագաւորը Երեմիայի ըսաւ. «Քեզի բան մը պիտի հարցնեմ. ոչինչ պահէ ինձմէ»<sup>ա</sup>: **15** Երեմիա Սեղեկիայի պատասխանեց. «Եթէ քեզի իմացնեմ, զիս **անշուշտ** պիտի չմեռցնե՞ս. ու եթէ քեզի խորհուրդ տամ, ինձի մտիկ պիտի չընես»<sup>ա</sup>: **16** Բայց Սեղեկիա թագաւորը Երեմիայի ծածկաբար երդում ըրաւ եւ ըսաւ. «Մեզի այս հոգին

<sup>ա</sup> Եբր.՝ քով դուրս ելլէ  
<sup>բ</sup> Այսինքն՝ յատակի տիղմ  
<sup>գ</sup> Եբր.՝ դրին  
<sup>դ</sup> Կամ՝ արդէն կը մեռնի

«ստեղծող Տէրը կ'ապրի. քեզ պիտի չմեռցնեմ, ո՛չ ալ քեզ պիտի մատնեմ այս մարդոց ձեռքը, որոնք քու կեանքդ կը փնտռեն»։ **17** Այն ատեն Երեմիա Սեղեկիայի ըսաւ. «Տէրը, զօրքերու Աստուածը, Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Եթէ ‘յօժարութեամբ յանձնուիս” Բաբելոնի թագաւորին իշխանաւորներուն, քու անձդ ողջ պիտի մնայ, եւ այս քաղաքը կրակով պիտի չայրի. դուն ու տունդ պիտի ապրիք։ **18** Բայց եթէ չյանձնուիս Բաբելոնի թագաւորին իշխանաւորներուն, այս քաղաքը Զաղդէացիներուն ձեռքը պիտի մատնուի, որոնք զայն կրակով պիտի այրեն, եւ դուն անոնց ձեռքէն պիտի չազատիս»։ **19** Սեղեկիա թագաւորը Երեմիայի ըսաւ. «Զաղդէացիներուն ‘կողմը անցած” Հրեաներէն կը զարհուրիմ, որ զիս անոնց ձեռքը չմատնեն ու անոնք զիս չանպատուեն»։ **20** Երեմիա պատասխանեց. «Պիտի չմատնեն. կ'աղերսե՛մ, մտի՛կ ըրէ Տէրոջ խօսքը՝ որ քեզի կ'ըսեմ, որպէսզի քեզի բարիք ըլլայ եւ անձդ ողջ մնայ։ **21** Բայց եթէ մերժես յանձնուիլ, ահա՛ւասիկ Տէրոջ ինծի ցոյց տուած Ետեփիքը.— **22** Ահա՛ Յուդայի թագաւորին տունը մնացած բոլոր կիները Բաբելոնի թագաւորին իշխանաւորներուն պիտի Թտարուին, եւ այդ **կիները** պիտի ըսեն. “Քեզի խաղաղութիւն **ծանուցանող** մարդիկդ կրցան քեզ համոզել”։ **Երբ** ոտքերդ տիղմին մէջ մխրճուեցան, անոնք ետ քաշուեցան»։ **23** Զու բոլոր կիներդ ու որդիներդ Զաղդէացիներուն պիտի Իտանին. դուն ալ անոնց ձեռքէն պիտի չազատիս, հապա Բաբելոնի թագաւորին ձեռքով պիտի բռնուիս, եւ դուն Կատճառ պիտի ըլլաս որ այս քաղաքը կրակով այրի”»։ **24** Սեղեկիա Երեմիայի ըսաւ. «Այս խօսքերուն ո՛չ մէկը թող տեղեկանայ, որ դուն չմեռնիս։ **25** Եթէ իշխանաւորները լսեն թէ քեզի հետ խօսեցայ, ու քեզի գան եւ ըսեն. “Այժմ իմացո՛ւր մեզի, ի՞նչ խօսեցար թագաւորին հետ. մեզմէ մի՛ պահեր, որ քեզ չմեռցնենք. թագաւորը քեզի հետ ի՞նչ խօսեցաւ», **26** պատասխանէ՛ անոնց. “Ես թագաւորին առջեւ աղաչանքս Դներկայացուցի՝ որ զիս Յովնաթանի տունը չվերադարձնէ, որ հոն չմեռնիմ»։ **27 Արդարեւ** բոլոր իշխանաւորները Երեմիայի եկան եւ զինք հարցուփորձեցին. ինք ալ անոնց իմացուց այս բոլոր խօսքերուն համաձայն՝ որ թագաւորը հրամայեր էր։ Ուստի Իրեն հետ խօսելէն դադրեցան”, որովհետեւ Կաղտնիքը չյայտնուեցաւ”։ **28** Երեմիա բանտին բակին մէջ մնաց՝ մինչեւ Երուսաղէմի գրաւումի օրը. ինք **հոն** էր երբ Երուսաղէմ գրաւուեցաւ։

<sup>ե</sup> Եբբ.՝ ընող

<sup>զ</sup> Եբբ.՝ յանձնուելով յանձնուիս

<sup>է</sup> Եբբ.՝ քով ինկած

<sup>ը</sup> Եբբ.՝ բանը

<sup>թ</sup> Եբբ.՝ դուրս հանուիս

<sup>ժ</sup> Կամ՝ Զու խաղաղութեանդ մարդիկը քեզ համոզեցին ու քեզի յաղթեցին

<sup>ի</sup> Եբբ.՝ դուրս հանեն

<sup>լ</sup> Եբբ.՝ այս քաղաքը կրակով պիտի այրես

<sup>խ</sup> Եբբ.՝ ձգեցի

<sup>ծ</sup> Եբբ.՝ լռեցիս

<sup>կ</sup> Եբբ.՝ բանը չլսուեցաւ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԿՈՒՄԸ

39

Յուդայի Սեդեկիա թագաւորին իններորդ տարին, տասներորդ ամիսը, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրագունդերով Երուսաղէմ եկաւ, ու զայն պաշարեցին: 2 Սեդեկիայի տասնմէկերորդ տարին, չորրորդ ամիսը, ամսուան իննին քաղաքին պարիսպը ճեղքուեցաւ, 3 եւ Բաբելոնի թագաւորին բոլոր իշխանաւորները, այսինքն՝ Ներգեղսարասար, Սամեգարնաբաւ, Սարսեքիմ՝ պալատականներու պետը, Ներգեղսարասար մոգպետն՝ ու Բաբելոնի թագաւորին բոլոր մնացած իշխանաւորները մտան եւ միջին դուռը՝ գրաւեցին:

4 Երբ Յուդայի Սեդեկիա թագաւորն ու բոլոր պատերազմիկները զանոնք տեսան, փախան եւ գիշերուան մէջ քաղաքէն դուրս ելան՝ թագաւորին պարտէզին ճամբայէն, երկու պարիսպներուն մէջտեղի դռնէն: 5 Զաղդէացիներուն զօրագունդերը զանոնք հետապնդեցին, ու Երիքովի դաշտերուն մէջ Սեդեկիայի հասան: Զայն բռնեցին եւ Եմաթի երկիրը՝ Ռեբղա բարձրացուցին, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին առջեւ, որ անոր դատավճիռը արձակեց: 6 Բաբելոնի թագաւորը Ռեբղայի մէջ Սեդեկիայի որդիները անոր աչքերուն առջեւ մորթեց. Բաբելոնի թագաւորը Յուդայի բոլոր ազնուականներն ալ մորթեց: 7 Յետոյ Սեդեկիայի աչքերը կտրցուց, ու զայն պղինձէ շղթաներով կապեց՝ որպէսզի Բաբելոն տանի: 8 Զաղդէացիները կրակով այրեցին թագաւորին տունը եւ ժողովուրդին տուները, ու Երուսաղէմի պարիսպները փլցուցին: 9 Նաբուգարդան թիկնապահապետը Բաբելոն փոխադրեց քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացորդը, իր «կողմը անցած»՝ դասալիքները եւ ժողովուրդին ուրիշ մնացորդները: 10 Սակայն Նաբուգարդան թիկնապահապետը Յուդայի երկրին մէջ թողուց ժողովուրդին չքաւորները՝ որ ոչինչ ունէին, ու նոյն օրը անոնց այգիներ եւ արտեր տուաւ:

ԵՐԵՄԻԱ ՎԵՐՍՏԻՆ Կ'ԱԶԱՏԻ

11 Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը Երեմիայի համար Նաբուգարդան թիկնապահապետին պատուիրեց. 12 «Ա՛ն զայն ու «հո՛գ տար անոր»: ո՛չ մէկ չարիք ըրէ անոր, հապա վարուէ՛ անոր հետ ինչպէս որ ինք քեզի ըսէ»: 13 Նաբուգարդան թիկնապահապետը, Նաբուսազաբան պալատականներու պետը, Ներգեղսարասար մոգպետը եւ Բաբելոնի թագաւորին բոլոր պետերը մարդ դրկեցին, 14 Երեմիան բանտին բակէն բերել տուին ու զինք յանձնեցին Սափանի որդիին՝ Աքիկամի որդիին՝ Գոդոդիայի, որպէսզի զայն տունը՝ տանի: Այսպէս ան ժողովուրդին մէջ բնակեցաւ:

<sup>u</sup> Կամ՝ Սարսեքիմ, Ռաբսարիս, Ներգեղսարասար, Ռաբմագ  
<sup>p</sup> Եբր.՝ նստան  
<sup>q</sup> Եբր.՝ քով ինկած  
<sup>r</sup> Եբր.՝ ինկողները  
<sup>t</sup> Եբր.՝ աչքդ անոր վրայ թող ըլլայ  
<sup>e</sup> Եբր.՝ դուրս հանէ

15 ԿՏէրը խօսեցաւ՝ Երեմիայի, երբ ան բանտին բակին մէջ արգելափակուած էր, ըսելով. 16 «Գնա՛ ու Եթովպիացի Աբդեմելէքի ըսէ՛. “Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես այս քաղաքին մասին ըսած խօսքերս պիտի թիրազործեմ չարիքի համար, ո՛չ թէ բարիքի, եւ այդ օրը քու Քառջեւդ պիտի կիրարկուիմ: 17 Այդ օրը քեզ պիտի ազատեմ,– կը պատգամէ Տէրը,– ու պիտի չմատնուիս այն մարդոց ձեռքը՝ որոնցմէ կը վախնաս: 18 Արդարեւ քեզ անշուշտ պիտի ազատեմ, եւ սուրով պիտի չիյնաս. կեանքդ քեզի աւարի մը պէս պիտի ըլլայ, քանի որ ինծի վստահեցար”, կը պատգամէ Տէրը»:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ՄՆԱՅ ԳՈՂՈՂԻԱՅԻ ԶՈՎ

40

“Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ Նաբուզարդան թիկնապահապետին զինք Ռամայէն արձակելէն ետք. երբ ան զինք բերել տուաւ, շղթաներով կապուած էր Բաբելոն փոխադրուող Երուսաղէմի ու Յուդայի բոլոր տարագիրներուն մէջ:

2 Թիկնապահապետը Երեմիան ընդունելով՝ անոր ըսաւ. «Տէրը՝ քու Աստուածդ այս տեղին դէմ այս չարիքը Քվճած էր: 3 Տէրը գայն ՚իրազործեց, եւ իր ըսածին համաձայն վարուեցաւ, քանի որ Տէրոջ դէմ մեղանչեցիք եւ անոր խօսքը մտիկ չըրիք. ուստի այս բանը ձեզի պատահեցաւ: 4 Ահա՛ հի՛մա՝ ա՛յսօր քու ձեռքերուդ շղթաները կը քակեմ. եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քեզի հաճելի՝ է՝ եկո՛ւր, ու քեզի հոգ պիտի տանիմ՝. բայց եթէ ինծի հետ Բաբելոն երթալը քեզի անհաճոյ՝ է՝ հրաժարէ՛: Ահա՛ ամբողջ երկիրը քու առջեւդ է. ո՛ւր որ քեզի հաճելի եւ ուղիղ թուի՝, հո՛ն գնա՛»: 5 Զանի տակաւին չէր պատասխաներ, Նաբուզարդան ըսաւ. «Կա՛մ գնա՛ Սափանի որդիին՝ Աքիկամի որդիին՝

- Կ Եբբ.՝ Տէրոջ խօսքը եղաւ
- Ը Եբբ.՝ բերեմ
- Ք Եբբ.՝ երեսիդ
- Մ Եբբ.՝ Այն խօսքը որ Տէրոջմէն եղաւ
- Բ Եբբ.՝ խօսած
- Գ Եբբ.՝ բերաւ
- Դ Եբբ.՝ եղաւ
- Ե Եբբ.՝ աչքերուդ լաւ
- Վ Եբբ.՝ աչքս քու վրայ պիտի ըլլայ
- Կ Եբբ.՝ աչքերուդ գէշ
- Ը Եբբ.՝ աչքերուդ լաւ եւ ուղիղ ըլլայ
- Ք Կամ՝ վերադառնար

**ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ**

Գողողիայի, որ Բաբելոնի թագաւորը Յուդայի քաղաքներուն վրայ վերատեսուչ նշանակեր է, ու բնակէ՛ անոր հետ ժողովուրդին մէջ, կա՛մ ալ գնա՛ ուր որ ժքեզի հաճելի թուի՝»։ Ապա թիկնապահապետը անոր պաշար եւ պարգեւ տուաւ, ու զայն արձակեց։ **6** Երեմիա Մասփա գնաց, Աքիկամի որդիին՝ Գողողիայի քով, եւ անոր հետ բնակեցաւ երկրին մէջ մնացած ժողովուրդին մէջ։

**ԳՈՂՈՂԻԱ՝ ՅՈՒՂԱՅԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ**

(Դ. Թագ. 25. 22 -24 )

**7** Երբ դաշտը եղող բոլոր զօրապետները – թէ՛ իրենք, թէ՛ իրենց մարդիկը – լսեցին թէ Բաբելոնի թագաւորը Աքիկամի որդին՝ Գողողիան երկրին վրայ վերատեսուչ նշանակեր է եւ Բաբելոն չտարագրուած մարդիկը, կիները, մանուկներն ու երկրին չքաւորները անոր յանձներ է, **8** Մասփա եկան՝ Գողողիայի քով, այսինքն Նաթանիայի որդին՝ Իսմայէլ, Կարէի որդիները՝ Յոհանան եւ Յովնաթան, Թանհումէթի որդին՝ Սարայիա, Նետոփաթացի Եփայի որդիները, ու Մաքաթի որդին՝ Յեզոնիա – թէ՛ իրենք, թէ՛ իրենց մարդիկը։ **9** Մասփանի որդիին՝ Աքիկամի որդին՝ Գողողիա անոնց եւ իրենց մարդոց երդում ըրաւ՝ ըսելով. «Քաղդէացիներուն ծառայելէն մի՛ վախճաք. այս երկրին մէջ բնակեցէք եւ Բաբելոնի թագաւորին ծառայեցէք, ու ի՛գոհ պիտի ըլլաք։ **10** Ես ահա՛ Մասփա կը բնակիմ, որպէսզի մեզի եկող Քաղդէացիներուն՝ ներկայանամ։ Իսկ դուք գինի՛, ամառնային պտուղ եւ ի՛նչ խամբարեցէք, դրէ՛ք ձեր անօթներուն մէջ, ու բնակեցէ՛ք ձեր տիրացած քաղաքներուն մէջ»։ **11** Սովաբի, Ամմոնի որդիներուն, Եդովմի եւ բոլոր երկիրներուն մէջ եղող բոլոր Հրեաներն ալ՝ երբ լսեցին թէ Բաբելոնի թագաւորը Հրէաստանի մէջ մնացորդ թողուցեր է եւ անոնց վրայ Մասփանի որդիին՝ Աքիկամի որդին՝ Գողողիան վերատեսուչ նշանակեր է, **12** բոլոր Հրեաները իրենց աքսորուած բոլոր տեղերէն վերադարձան եւ Յուդայի երկիրը՝ Մասփա եկան, Գողողիայի քով, ու յոյժ շատ գինի եւ ամառնային պտուղներ ամբարեցին։

**ԳՈՂՈՂԻԱ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻ**

(Դ. Թագ. 25. 25 -26 )

**13** Կարէի որդին՝ Յոհանան ու դաշտը եղող բոլոր զօրապետները Մասփա եկան՝ Գողողիայի քով, **14** եւ անոր ըսին. «Գիտե՞ս թէ Ամմոնի որդիներուն թագաւորը՝ Բաալիս Նաթանիայի որդին Իսմայէլը դրկեց քեզ մեռցնելու համար»։ Բայց Աքիկամի որդին՝ Գողողիա անոնց չհաւատաց։ **15** Յետոյ Կարէի որդին՝ Յոհանան Մասփայի մէջ Գողողիայի հետ ծածկաբար խօսեցաւ՝ ըսելով. «Հիմա երթամ ու Նաթանիայի որդին՝ Իսմայէլը զարնեմ. ո՛չ մէկը կը գիտնայ։ Ինչո՞ւ ան քեզ զարնէ, քովդ հաւաքուած բոլոր Հրեաները ցրուին, եւ Յուդայի մնացորդը կորսուի»։ **16** Աքիկամի որդին՝ Գողողիա Կարէի

---

<sup>ժ</sup> Եբր.՝ աչքերուդ ուղիղ ըլլայ  
<sup>Ի</sup> Եբր.՝ լաւ  
<sup>Լ</sup> Եբր.՝ առջեւ կայնիմ  
<sup>Խ</sup> Եբր.՝ ժողվեցէք  
<sup>Յ</sup> Եբր.՝ գրաւած

որդիին՝ Յոհաննանի պատասխանեց. «Այդ բանը մի՛ ըներ, որովհետեւ դուն Իսմայելի մասին սուտ կը խօսիս»:

41

Եօթներորդ ամիսը, թագաւորական զարմէն եղող Եղիսամայի որդիին՝ Նաթանիայի որդիին՝ Իսմայել, թագաւորին պետերէն մէկը, տասը մարդով Մասփա եկաւ Աքիկամի որդիին՝ Գոդոդիայի քով, ու հոն՝ Մասփայի մէջ միասին հաց կերան: 2 Նաթանիայի որդիին՝ Իսմայել եւ իրեն հետ եղող տասը մարդը կանգնեցան, Սափանի որդիին՝ Աքիկամի որդիին՝ Գոդոդիան սուրով զարկին. այսպէս մեռցուցին ան՝ որ Բաբելոնի թագաւորը երկրին վրայ վերատեսուչ նշանակեր էր: 3 Իսմայել նաեւ զարկաւ Գոդոդիայի հետ Մասփա եղող բոլոր Հրեաներն ու հոն գտնուող Զաղդէացիները՝ պատերազմիկները:

4 Գոդոդիայի «սպաննուելուն»<sup>ա</sup> հետեւեալ օրը, մինչ ո՛չ մէկը գիտէր, 5 Սիւքէմէն, Սելովէն ու Սամարիայէն ութսուն մարդ եկաւ. իրենց մօրուքը ածիլած էին, հագուստները պատռած, եւ իրենք զիրենք կտրատած: Իրենց ձեռքը ընծաներ ու կնդրուկ ունէին՝ Տէրոջ տունը տանելու համար: 6 Նաթանիայի որդիին՝ Իսմայել Մասփայէն ելաւ զանոնք դիմաւորելու. ան գացած ատենը լալով կ'երթար: Երբ անոնց հանդիպեցաւ՝ անոնց ըսաւ. «Աքիկամի որդիին՝ Գոդոդիայի քով եկէք»: 7 Երբ անոնք քաղաքին մէջտեղը հասան, Նաթանիայի որդիին՝ Իսմայել – ինք եւ իրեն հետ եղող մարդիկը – զանոնք մորթեց ու նետեց գուբին մէջ: 8 Անոնց մէջ տասը մարդ գտնուեցաւ, որ Իսմայելի ըսին. «Մեզ մի՛ մեռցներ, որովհետեւ մենք դաշտը ցորենի, գարիի, իւղի եւ մեղրի պահուած պաշարներ ունինք»: Ուստի ան հրաժարեցաւ, ու զանոնք իրենց եղբայրներուն հետ չմեռցուց:

9 Այն գուբը՝ որուն մէջ Իսմայել Գոդոդիայի «պատճառով բոլոր սպաննած մարդոց դիակները նետեց, այն գուբն էր՝ որ Ասա թագաւորը շիներ էր Իսրայելի Բաասա թագաւորին «պատճառով. Նաթանիայի որդիին՝ Իսմայել զայն սպաննուածներով լեցուց:

10 Իսմայել Մասփայի մէջ եղող ժողովուրդին ամբողջ մնացորդը գերեվարեց, թագաւորին աղջիկներն ու Մասփա մնացած ամբողջ ժողովուրդը, որոնք Նաբուգարդան թիկնապահապետը Աքիկամի որդիին՝ Գոդոդիայի յանձներ էր: Նաթանիայի որդիին՝ Իսմայել զանոնք գերեվարելով գնաց որպէսզի Ամմոնի որդիներուն քով անցնի:

11 Երբ Կարէի որդիին՝ Յոհաննան, եւ իրեն հետ եղող բոլոր զօրապետները լսեցին Նաթանիայի որդիին՝ Իսմայելի ըրած ամբողջ չարիքը, 12 իրենց բոլոր մարդիկը առին ու Նաթանիայի որդիին՝ Իսմայելի դէմ պատերազմելու գացին. զինք Գաբաւոնի յորդառատ ջուրերուն քով գտան: 13 Երբ Իսմայելի հետ եղող ամբողջ ժողովուրդը Կարէի որդիին՝ Յոհաննանը եւ անոր հետ եղող զօրապետները տեսաւ, ուրախացաւ: 14 Իսմայելի Մասփայէն գերեվարած ամբողջ ժողովուրդը դիմաշրջեցաւ, ու վերադառնալով Կարէի որդիին՝ Յոհաննանի քով գնաց: 15 Իսկ Նաթանիայի որդիին՝ Իսմայել ութ մարդով Յոհաննանի առջեւէն խոյս տուաւ, եւ Ամմոնի որդիներուն քով գնաց:

16 Այն ատեն Կարէի որդիին՝ Յոհաննան, եւ իրեն հետ եղող զօրապետները առին ժողովուրդին ամբողջ մնացորդը, որ Նաթանիայի որդիին՝ Իսմայելի քովէն

<sup>ա</sup> Եբր.՝ զարնուելուն

<sup>բ</sup> Եբր.՝ երկրորդ

<sup>գ</sup> Կամ՝ հետ

<sup>դ</sup> Եբր.՝ երեսէն վախճալով



**գտնել** պիտի տամ. ան ձեզի պիտի գթայ, ձեզ ձեր <sup>Է</sup>երկիրը պիտի վերադարձնե<sup>Է</sup>: **13** Բայց եթե ըսէք. “Այս երկրին մէջ չենք բնակիր<sup>Է</sup>, ու Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ձայնը մտիկ չընելով՝ **14** ըսէք. “Ո՛չ, հապա Եգիպտոսի երկիրը պիտի երթանք, ուր պատերազմ պիտի չտեսնենք, շեփորի ձայն պիտի չլսենք եւ հացի համար պիտի չանօթենանք, ու հո՛ն պիտի բնակինք<sup>Է</sup>, **15** ուրեմն հիմա մտիկ ըրէք Տէրոջ խօսքը, ո՛վ Յուդայի մնացորդը. զօրքերու Տէրը, Իսրայէլի Աստուածը, սա՛ կը յայտարարէ. “Եթե՛ ձեր երեսը <sup>Ը</sup>ի՛րապէս ուղղէք՝ Եգիպտոս երթալու, ու հոն երթաք պանդխտանալու համար, **16** այն սուրը՝ որմէ կը վախնաք, հոն՝ Եգիպտոսի երկրին մէջ ձեր վրայ պիտի հասնի, եւ այն սովը՝ որմէ կը զարհուրիք, հոն՝ Եգիպտոսի մէջ ձեր **եսեւէն** պիտի հասնի, ու հոն պիտի մեռնիք: **17** Այն բոլոր մարդիկը, որ իրենց երեսը կ’ողողեն Եգիպտոս երթալու՝ հոն պանդխտանալու համար, սուրով, սովով եւ ժանտախտով պիտի մեռնին. անոնցմէ ո՛չ մէկը պիտի վերապրի կամ ազատի այն չարիքին առջեւէն՝ որ անոնց վրայ պիտի բերեմ<sup>Է</sup>»:

**18** Արդարեւ զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «Ինչպէս իմ բարկութիւնս եւ ցասումս Երուսաղէմի բնակիչներուն վրայ թափուեցան, այնպէս իմ ցասումս ձեր վրայ պիտի թափուի՝ երբ Եգիպտոս հասնիք. նողկանքի, ապշութեան, անէծքի ու նախատինքի **ենթակայ** պիտի ըլլաք, եւ ա՛յ այս տեղը պիտի չտեսնէք»: **19** Ո՛վ Յուդայի մնացորդը, Տէրը ձեզի համար ըսաւ. «Եգիպտոս մի՛ երթաք». **ուստի** լա՛ւ գիտցէք թէ այսօր ձեզ ազդարարեցի: **20** Արդարեւ դուք ձեր անձը <sup>Թ</sup>խաբեցիք, երբ զիս Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ղրկեցիք՝ ըսելով. «Մեզի համար Տէրոջ՝ մեր Աստուծոյն աղօթէ՛, ու Տէրոջ՝ մեր Աստուծոյն ըսած ամէն ինչ մեզի հաղորդէ՛, եւ պիտի ընենք»: **21** Ես այսօր ձեզի հաղորդեցի, բայց դուք մտիկ չըրիք Տէրոջ՝ ձեր Աստուծոյն ձայնը, ո՛չ ալ այն բոլոր **խօսքերը**՝ որոնց համար զիս ձեզի ղրկեց: **22** Ուրեմն հիմա լա՛ւ գիտցէք թէ դուք սուրով, սովով ու ժանտախտով պիտի մեռնիք այն տեղը՝ ուր կը բաղձաք երթալ հոն պանդխտանալու համար:

ԵՐԵՄԻԱ ԿԸ ՏԱՐՈՒԻ ԵԳԻՊՏՈՍ

43

Երբ Երեմիա աւարտեց ամբողջ ժողովուրդին հաղորդել Տէրոջ՝ իրենց Աստուծոյն բոլոր խօսքերը, որոնց համար Տէրը՝ անոնց Աստուածը՝ զինք իրենց ղրկեր էր, **այսինքն**՝ այս բոլոր խօսքերը, **2** Ովսիայի որդին՝ Ազարիա, Կարէի որդին՝ Յոհանան, եւ բոլոր հպարտ մարդիկը Երեմիայի ըսին. «Դուն սո՛ւտ կը խօսիս. Տէրը՝ մեր Աստուածը քեզ չղրկեց, որ **մեզի** ըսես. “Եգիպտոս մի՛ երթաք հոն պանդխտանալու համար<sup>Է</sup>: **3** Հապա Ներիայի որդին՝ Բարուք քեզ մեզի դէմ կը դրդէ, որ մեզ Զաղդէացիներուն ձեռքը մատնէ, որպէսզի մեզ մեռցնեն կամ մեզ Բաբելոն տարագրեն»: **4** Կարէի որդին՝ Յոհանան, բոլոր զօրապետներն ու ամբողջ ժողովուրդը Տէրոջ ձայնը մտիկ չըրին, որ Յուդայի երկրին մէջ բնակին: **5** Հապա Կարէի որդին՝ Յոհանան եւ բոլոր զօրապետները առին Յուդայի ամբողջ մնացորդը,– անոնք որ Յուդայի երկրին մէջ բնակելու համար վերադարձած էին այն բոլոր ազգերէն՝ ուր արքայութեան ժամանակէն,– **6 այսինքն**՝ “այր մարդիկը”, կիներն ու

<sup>Է</sup> Եբբ.՝ հողը

<sup>Ը</sup> Եբբ.՝ դնելով դնէք

<sup>Թ</sup> Եբբ.՝ մոլորեցուցիք

<sup>Մ</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդիկը

մանուկները, թագաւորին աղջիկները, Նաբուզարդան թիկնապահապետին ձգած բոլոր անձերը Սափանի որդիին՝ Աքիկամի որդիին՝ Գողողիայի քով, նաեւ Երեմիա մարգարէն եւ Ներիայի որդին՝ Բարուքը, **7** ու Եգիպտոսի երկիրը տարին, որովհետեւ Տէրոջ ձայնը մտիկ չըրին, եւ մինչեւ Տափնաս գացին:

**8** Տափնասի մէջ <sup>բ</sup>Տէրը խօսեցաւ՝ Երեմիայի՝ ըսելով. **9** «Ձեռքդ մե՛ծ քարեր առ, ու Յուդայի մարդոց աչքերուն առջեւ թաղէ՛ զանոնք աղիւսի փուռին կաւին մէջ, որ Տափնաս եղող Փարաւոնի տան մուտքին կը գտնուի, **10** եւ ըսէ՛ անոնց. “Ջօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես մարդ պիտի ղրկեմ, իմ ծառաս՝ Բաբելոնի Նաբուզոդոնոսոր թագաւորը բերել պիտի տամ, եւ անոր գահը այս իմ թաղած քարերուս վրայ պիտի դնեմ. ան իր ամպհովանին անոնց վրայ պիտի տարածէ: **11** Երբ գայ՝ Եգիպտոսի երկիրը պիտի զարնէ. մահուան համար եղողները մահուան պիտի մատնէ, գերութեան համար եղողները՝ գերութեան, իսկ սուրի համար եղողները՝ սուրի: **12** Եգիպտոսի աստուածներուն տուններուն մէջ կրակ պիտի Վառեմ. ան զանոնք պիտի այրէ ու գերեվարէ. Եգիպտոսի երկիրը պիտի հագնի՝ ինչպէս հովիւը իր հագուստը կը հագնի, եւ անկէ խաղաղութեամբ պիտի ելլէ: **13** Եգիպտոսի երկրին մէջ եղող “Արեւի տան” արձաններն ալ պիտի կոտորտէ, ու Եգիպտոսի աստուածներուն տուները կրակով պիտի այրէ”□»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԳԱՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԻՍՐԱՅԵԼԱՅԻՆԵՐՈՒՆ

44

Ահա՛ւասիկ Եգիպտոսի երկրին մէջ բնակող բոլոր Հրեաներուն համար, այսինքն Մագդող, Տափնաս, Մեմփիս, ու Պաթուրէսի երկրին մէջ բնակողներուն համար Երեմիայի “ուղղուած խօսքը **Տէրոջմէն**՝ որ ըսաւ.

**2** «Ջօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Դուք տեսաք այն բոլոր ձախորդութիւնները՝ որ Երուսաղէմի վրայ ու բոլոր Յուդայի քաղաքներուն վրայ բերի. ահա՛ անոնք այսօր ակերակ են, եւ անոնց մէջ բնակող չկայ, **3** զիս գրգռելու համար իրենց գործած չարիքներուն պատճառով, որովհետեւ գացին խունկ ծխեցին եւ ուրիշ աստուածներ պաշտեցին, որ ո՛չ իրենք ճանչցեր էին, ո՛չ դուք, ո՛չ ալ ձեր հայրերը: **4** Ես ձեզի ղրկեցի իմ բոլոր ծառաներս՝ մարգարէները – կանուխ ելլելով ղրկեցի – եւ ըսի. “Այդ գարշելի բանը մի՛ ընէք, որ ես կ’ատեմ”: **5** Բայց մտիկ չըրին ու իրենց ականջը չդարձուցին՝ որ իրենց չարութենէն դարձի գան եւ ուրիշ աստուածներու խունկ չծխեն: **6** Ուստի իմ ցասումս ու բարկութիւնս թափուեցան, եւ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ <sup>բ</sup>բորբոքեցան. ուստի անոնք ակերակ եւ ամայի եղան, ինչպէս այսօր կ’երեւնայ□: **7** Ուրեմն հիմա Տէրը՝ զօրքերու Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Ինչո՞ւ դուք ձեր անձին դէմ այս մեծ չարիքը կը գործէք, որ Յուդայի մէջէն այր մարդն ու կինը, երախան եւ ծծկերը բնաջնջել կու տաք, այնպէս որ ձեզի ո՛չ մէկ

<sup>բ</sup> Եբր.՝ Տէրոջ խօսքը եղաւ  
<sup>գ</sup> Եբր.՝ բռնկեցնեմ  
<sup>դ</sup> Կամ՝ Արեգ քաղաքի  
<sup>ւ</sup> Եբր.՝ եղած  
<sup>բ</sup> Եբր.՝ բռնկեցան

ճողոպրած մնայ: **8** Ձեր ձեռքերուն գործերով զիս կը գրգռէք՝ ուրիշ աստուածներու խունկ ծխելով Եգիպտոսի մէջ, ուր դուք եկաք հոն պանդխտանալու համար. ուստի պիտի բնաջնջուիք ու երկրի բոլոր ազգերուն մէջ անէծք եւ նախատինք ըլլաք: **9** Միթէ մոռցա՞ք ձեր հայրերուն չարութիւնները, Յուդայի թագաւորներուն չարութիւններն ու անոնց կիներուն չարութիւնները, նաեւ ձեր չարութիւնները եւ ձեր կիներուն չարութիւնները, որ գործուեցան Յուդայի երկրին մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ: **10** Անոնք մինչեւ այսօր՝ չխոնարհեցան եւ չվախցան, ու ձեր առջեւ եւ ձեր հայրերուն առջեւ օրէնքիս ու կանոններուս համաձայն չընթացան: **11** Հետեւաբար զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ ես իմ երեսս ձեզի դէմ՝ Կոլոնիէմ՝ չարիքի եւ ամբողջ Յուդան կոտորելու համար: **12** Պիտի առնեմ Յուդայի ճողոպրածները, որոնք իրենց երեսը ուղղեցին Եգիպտոսի երկիրը երթալու՝ հոն պանդխտանալու համար, ու բոլորը պիտի սպառնին եւ իյնան Եգիպտոսի երկրին մէջ. սուրով, սովով պիտի սպառնին. պզտիկէն մինչեւ մեծը սուրով ու սովով պիտի մեռնին, եւ նողկանքի, ապշութեան, անէծքի ու նախատինքի **եւթակայ** պիտի ըլլան: **13** Եգիպտոսի երկրին մէջ բնակողները պիտի՝ «պատժեմ, ինչպէս Երուսաղէմը սուրով, սովով ու ժանտախտով պատժեցի: **14** Յուդայի ճողոպրածներէն, այսինքն Եգիպտոս պանդխտանալու գացողներէն ո՛չ մէկը պիտի վերապրի կամ ազատի՝ որ Յուդայի երկիրը վերադառնայ, ուր անոնք՝ «կը տենչան»՝ վերադառնալ՝ հոն բնակելու համար. արդարեւ պիտի չվերադառնան՝ բացի քանի մը ազատածներէ»:

**15** Այն բոլոր մարդիկը՝ որ գիտէին թէ իրենց կիները ուրիշ աստուածներու խունկ կը ծխէին, նաեւ հոն կայնող բոլոր կիները՝ մեծ համախմբումով, ու Եգիպտոսի երկրին մէջ՝ Պաթուրէս բնակող ամբողջ ժողովուրդը Երեմիայի պատասխանեցին. **16** «Տէրոջ անունով մեզի ըսած խօսքիդ մասին՝ մենք քեզի մտիկ պիտի չընենք: **17** Հապա անշուշտ պիտի գործադրենք մեր բերանէն ելած ամէն խօսք, երկինքի թագուհիին խունկ ծխելով եւ անոր թափելիք նուէրներ կ'ընծայելով, ինչպէս ըրինք մենք ու մեր հայրերը, մեր թագաւորները եւ մեր իշխանաւորները՝ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ. որովհետեւ **այդ ատեն** հացով կը կշտանայինք, բարօրութիւն ունէինք եւ չարիք չէինք տեսներ: **18** Սակայն այն ատենէն ի վեր՝ երբ դադարեցուցինք երկինքի թագուհիին խունկ ծխելն ու անոր թափելիք նուէրներ ընծայելը, ամէն **բանի** կարօտ եղանք, եւ սուրով ու սովով սպառեցանք: **19** Երբ երկինքի թագուհիին խունկ կը ծխէինք եւ անոր թափելիք նուէրներ կ'ընծայէինք, միթէ առանց մեր ամուսիններուն **արտօնութեա՞ն** զայն պաշտելու համար բլիթներ կը շինէինք ու անոր թափելիք նուէրներ կ'ընծայէինք»:

**20** Այն ատեն Երեմիա ամբողջ ժողովուրդին – «այր մարդոց», կիներուն եւ իրեն այսպէս պատասխանող ժողովուրդին – ըսաւ. **21** «Միթէ այն խունկը՝ որ Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ կը ծխէիք,– դուք ու ձեր հայրերը, ձեր

---

<sup>4</sup> Եբբ.՝ իրենց անձերը չճգմեցին

<sup>7</sup> Եբբ.՝ կը դնեմ

<sup>8</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>9</sup> Եբբ.՝ իրենց անձը կը բարձրացնեն

<sup>5</sup> Եբբ.՝ թափելով

<sup>6</sup> Եբբ.՝ զօրաւոր մարդոց

թագաւորները, ձեր իշխանաւորներն ու երկրին ժողովուրդը,– Տէրը զայն չիշէ՞ց եւ անոր մասին Թճմտածե՞ց: **22** Տէրը ձեր չար արարքներուն ու ձեր գործած գարշութիւններուն պատճառով ա՛լ չկրցաւ հանդուրժել. ուստի ձեր երկիրը ակերակ, ամայի, անիծեալ եւ անբնակ եղաւ, ինչպէս այսօր **Կ'երեւնայ: 23** Զանի դուք խունկ ծխեցիք ու Տէրոջ դէմ մեղանչեցիք՝ Տէրոջ ձայնը մտիկ չընելով եւ անոր օրէնքին, կանոններուն ու վկայութիւններուն համաձայն չընթանալով, այս չարիքը ձեզի պատահեցաւ, ինչպէս այսօր **Կ'երեւնայ»:**

**24** Երեմիա ամբողջ ժողովուրդին եւ բոլոր կիներուն ըսաւ. «Մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը, ո՛վ ամբողջ Յուդա, որ Եգիպտոսի երկրին մէջ էք: **25** Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ. “Դուք ու ձեր կիները ձեր բերանով խօսեցաք, ձեր ձեռքերով՝ գործադրեցիք եւ ըսիք. “Մեր ըրած ուխտը անշո՛ւշտ պիտի կատարենք, **այսինքն** երկինքի թագուհիին խունկ պիտի ծխենք, ու անոր թափելիք նուէրներ պիտի ընծայենք”: Այո՛, դուք ձեր ուխտերը պիտի հաստատէք. այո՛, ձեր ուխտերը պիտի կատարէք: **26** Հետեւաբար մտի՛կ ըրէք Տէրոջ խօսքը, ո՛վ ամբողջ Յուդա, որ Եգիպտոսի երկրին մէջ կը բնակիք. “Ահա՛ ես իմ մեծ անունովս երդում ըրի,– կը յայտարարէ Տէրը,– որ անգամ մըն ալ իմ անունս չկանչուի Եգիպտոսի ամբողջ երկրին մէջ Յուդայի մարդու մը բերանէն՝ ըսելով. «Տէրը՝ Եհովան կ'ապրի»: **27** Ահա՛ ես անոնց վրայ կը հսկեմ չարիքի համար, ո՛չ թէ բարիքի համար. Եգիպտոսի երկրին մէջ եղող Յուդայի բոլոր մարդիկը սուրով ու սովով պիտի սպառննան՝ մինչեւ որ հատնին: **28** Սակաւաթիւ մարդիկ՝ սուրէն ազատելով՝ Եգիպտոսի երկրէն պիտի վերադառնան Յուդայի երկիրը, ու Եգիպտոսի երկիրը պանդխտանալու գացող Յուդայի բոլոր ճողոպրածները պիտի գիտնան թէ որո՞նց խօսքը պիտի իրագործուի, ի՞նչ թէ իրենցը: **29** Եւ սա՛ ձեզի նշան պիտի ըլլայ,– կը պատգամէ Տէրը,– թէ այս տեղը ձեզ պիտի ՚պատժեմ, որպէսզի գիտնաք թէ իմ խօսքս ձեր վրայ անշուշտ պիտի իրագործուի չարիքի համար”□: **30** Տէրը սա՛ կը յայտարարէ.– “Ահա՛ ես Եգիպտոսի Փարաւոն Վափառ թագաւորը իր թշնամիներուն ձեռքը եւ իր կեանքը փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ. ինչպէս Յուդայի Սեդեկիա թագաւորը իր թշնամիին ու իր կեանքը փնտռող Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին ձեռքը մատնեցի□»:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄԸ ԲԱՐՈՒՔԻ

45

**Ահա՛ւասիկ** Երեմիա մարգարէին խօսքը, որ Ներիայի որդիին՝ Բարուքի ուղղեց, երբ ան այս խօսքերը Երեմիայի բերանէն գիրքի մը մէջ կը գրէր, Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի չորրորդ տարին. ան ըսաւ. **2** «Ո՛վ Բարուք, Տէրը՝ Իսրայէլի Աստուածը քեզի համար սա՛ կը յայտարարէ. **3** “Դուն ըսիր. “Այժմ վա՛յ ինձի, որովհետեւ Տէրը իմ կոտտանքիս վրայ տրտմութիւն ակելցուց. իմ հառաչանքէս յոգնեցայ, ու հանգստութիւն չեմ գտներ”□: **4** Անոր սա՛ ըսէ. “Տէրը սա՛ կը յայտարարէ. “Ահա՛ ես իմ կառուցանածս պիտի փլցնեմ եւ իմ տնկածս պիտի խլեմ, այսինքն՝ այս ամբողջ երկիրը: **5** Դուն քեզի համար մեծագործութիւններ՞ կը փնտռես. մի՛ փնտռեր, քանի որ ահա՛ ես ամէն մարմինի վրայ չարիք պիտի բերեմ,– կը պատգամէ Տէրը.– բայց քու կեանքդ քեզի ակարի մը պէս

<sup>բ</sup> Եբբ.՝ սիրտին մէջ չբարձրացա՞ւ  
<sup>գ</sup> Եբբ.՝ լրացուցիք  
<sup>դ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

պիտի տամ այն բոլոր տեղերուն մէջ՝ ուր պիտի երթաս՝»:

ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՊԱՐՏՈՒԻ ՆԱԲՈՒԳՈՂՈՆՍՈՐԷՆ

46

Տէրոջ խօսքը, որ Երեմիա մարգարէին «ուղղուեցաւ՝ ազգերուն մասին. 2 Եգիպտոսի համար, Եգիպտացիներու թագաւորին՝ Փարաւոն Նեքաւովի զօրագունդին մասին, որ Զարքամիս էր՝ Եփրատ գետին քով, երբ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը զայն <sup>բ</sup>պարտութեան մատնեց՝ Յուդայի թագաւորին՝ Յովսիայի որդիին Յովակիմի չորրորդ տարին.–

- 3 «Վահա՛ն եւ ասպա՛ր պատրաստեցէք Ու պատերազմի՛ մօտեցէք.
- 4 Ձիերը լծեցէք, եւ դո՛ւք, ո՛վ ձիաւորներ, հեծէ՛ք. Սաղաւարտներո՛վ կայնեցէք, Նիզակները փայլեցուցէք ու զրահները հագէք:
- 5 Բայց ի՞նչ կը տեսնեմ. անոնք զարհուրած են, ու կը նահանջեն. Անոնք զօրաւորներն անգամ կը ջախջախուին, Եւ <sup>գ</sup>խուճապահար կը փախչին՝ առանց <sup>դ</sup>ետել դառնալու՞. Ամէն կողմէ արհաւիրք կայ,– կը պատգամէ Տէրը:–
- 6 Թեթեւաշարժը թող չփախչի, Ո՛չ ալ զօրաւորը խոյս տայ. Անոնք գայթելով պիտի իյնան Հիւսիսային կողմը, Եփրատ գետին ափին:
- 7 Ո՞վ է ասիկա՝ որ <sup>ե</sup>գետի պէս կը բարձրանայ, Որուն ջուրերը գետերու պէս <sup>զ</sup>կը փրփրին՞.
- 8 Եգիպտոս գետի պէս կը բարձրանայ, Եւ անոր ջուրերը գետերու պէս կը փրփրին: Ան կ'ըսէ. «Ես պիտի բարձրանամ, երկիրը պիտի ծածկեմ, Զաղաքն ու անոր բնակիչները պիտի բնաջնջեմ»:
- 9 Ո՛վ ձիեր, բարձրացէ՛ք. ո՛վ կառքեր, մոլեգնեցէ՛ք. Թող դուրս ելլեն զօրաւորները.– Վահան բռնող Եթովպիացիները եւ <sup>է</sup>Փուլթացիները, Աղեղ բռնող ու լարող Ղուդացիները:
- 10 Արդարեւ այսօր զօրքերու Տէրոջ՝ Եհովայի վրէժխնդրութեան օրն է,

<sup>ա</sup> Եբր.՝ եղաւ

<sup>բ</sup> Եբր.՝ զարկաւ

<sup>գ</sup> Եբր.՝ փախուստով

<sup>դ</sup> Եբր.՝ իրենց երեսը դարձնելու

<sup>է</sup> Կամ՝ Նեղոսի

<sup>զ</sup> Եբր.՝ կը տատանին

<sup>է</sup> Կամ՝ Լիպիացիները

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Որ իր հակառակորդներէն վրէժ առնէ.  
Սուրը պիտի սպառէ եւ կշտանայ,  
Անոնց արիւնով պիտի գինովնայ.  
Որովհետեւ զօրքերու Տէրը՝ Եհովան զոհ ունի,  
Հիւսիսի երկրին մէջ, Եփրատ գետին եզերքը:

- 11 Գաղաա՛դ բարձրացիր ու բալասա՛ն առ,  
Ո՛վ Եգիպտոսի կոյս աղջիկ.  
Դեղերը ընդունայն կը շատցնես,  
Քեզի բժշկութիւն չկայ:
- 12 Ազգերը քու անարգանքդ լսեցին,  
Եւ աղաղակդ <sup>բ</sup>երկրագունդը լեցուց.  
Քանի որ զօրաւորը զօրաւորին վրայ գայթեցաւ,  
Երկուքը միասին ինկան»:

## ՆԱԲՈՒԳՈՂՆՈՍՈՐԻ ԳԱԼՈՒՍԸ

13 **Ահա՛ւասիկ** այն խօսքը, որ Տէրը Երեմիա մարգարէին ուղղեց՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին գալուստին մասին, Եգիպտոսի երկիրը զարնելու համար.–

- 14 «Յայտարարեցէ՛ք Եգիպտոսի մէջ, <sup>բ</sup>ժանուցանեցէ՛ք Մագդողի մէջ,  
Ծանուցանեցէ՛ք Մեմփիսի ու Տափնասի մէջ,  
Եւ ըսէ՛ք. “Կայնէ՛ ու պատրաստուէ՛,  
Որովհետեւ քու շուրջդ սուրը պիտի սպառէ□:”
- 15 Ինչո՞ւ քու զօրաւորներդ <sup>գ</sup>անհետացան.  
Անոնք **չկրցան** դիմանալ, որովհետեւ Տէ՛րը զանոնք <sup>հ</sup>վար ձգեց”:
- 16 Գայթողները շատցուց. անոնք իրարու վրայ կ’իյնան  
Եւ կ’ըսեն. “Կանգնէ՛, կեղեքողին սուրին պատճառով  
Վերադառնա՛նք մեր ժողովուրդին ու մեր <sup>լ</sup>ծննդավայրը□:”
- 17 Հոն կը գոչէին.  
“Եգիպտոսի Փարաւոն թագաւորը **միայն** ժխտը մըն է.  
Ան **իր սահմանուած** ատենը անցուց□»:
- 18 «Ես կ’ապրիմ,– կը պատգամէ այն թագաւորը՝  
Որուն անունը <sup>ն</sup>Զօրքերու Տէր” է.–  
Ինչպէս Թաբոր լեռներուն մէջ է,  
Ինչպէս Կարմեղոս մինչեւ ծովը **կը հասնի,**  
**Այնպէս** ան պիտի գայ:

---

<sup>բ</sup> Եբր.՝ երկիրը

<sup>գ</sup> Եբր.՝ լսել տուէք

<sup>գ</sup> Եբր.՝ քշուեցան տարուեցան

<sup>հ</sup> Եբր.՝ հրեց

<sup>լ</sup> Եբր.՝ ծնունդի երկիրը

<sup>ն</sup> Եբր.՝ Եհովա Սաբաւովթ

- 19 Ո՛վ Եգիպտոս բնակող աղջիկ,  
Քեզի համար տարագրութեան գոյքե՛ր պատրաստէ.  
Որովհետեւ Մեմփիս ամայի պիտի ըլլայ,  
Տոչորուած, առանց բնակիչի»:
- 20 «Եգիպտոս յոյժ գեղեցիկ երինջ մըն է,  
Բայց կոտորածը կու գայ, հիւսիսէն կու գայ:
- 21 Իր մէջ վարձկան **գինուորները** գիրցուած զուարակներու պէս են.  
Սակայն անո՛նք ալ **կռնակ** դարձուցին, միասին փախան, չդիմացան.  
Արդարեւ անոնց վրայ հասաւ իրենց ձախորդութեան օրը,  
Եւ իրենց <sup>՝</sup>պատիժի ժամանակը»:
- 22 «Անոր ձայնը օծի **ձայնից** պէս <sup>4</sup>կը լսուի՞»,  
Քանի որ զօրագունդով մը կը քալեն,  
Եւ իրեն դէմ տապարներով կու գան՝  
Փայտահատներու պէս:
- 23 Իր անտառը պիտի կտրեն,– կը պատգամէ Տէրը,–  
Թէպէտ ան <sup>6</sup>անթափանցելի է.  
Որովհետեւ անոնք մարախներէն շատ են,  
Անթիւ են:
- 24 Եգիպտոսի աղջիկը ամօթահար պիտի ըլլայ.  
Հիւսիսի ժողովուրդին ձեռքը պիտի մատնուի»:
- 25 Զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը կը յայտարարէ.  
«Ահա՛ ես <sup>ձ</sup>Նովի Ամոնը՞՝ եւ Փարաւոնը,  
Եգիպտոսը, իր աստուածներն ու թագաւորները,  
Այսինքն Փարաւոնը եւ անոր վստահողները պիտի <sup>7</sup>պատժեմ.
- 26 Զանոնք պիտի մատնեմ իրենց կեանքը փնտռողներուն ձեռքը,  
Բաբելոնի Նաբուգոդոնոսը թագաւորին ձեռքը  
Եւ անոր ծառաներուն ձեռքը.  
Անկէ ետք պիտի բնակուի՝ վաղեմի օրերուն պէս», կը պատգամէ Տէրը:

ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ԱԶԱՏԷ

- 27 «Բայց դուն մի՛ վախնար, ո՛վ իմ ծառաս Յակոբ,  
Եւ մի՛ զարհուրիր, ո՛վ Իսրայէլ.  
Որովհետեւ ահա՛ ես քեզ հեռուէն պիտի ազատեմ,  
Ու քու զարմը՝ իր գերութեան երկրէն:  
Յակոբ պիտի վերադառնայ, հանդարտ եւ անխռով պիտի ըլլայ,  
Ու ո՛չ մէկը **գինք** պիտի դողացնէ»:

<sup>՝</sup> Եբբ.՝ հատուցումի

<sup>4</sup> Եբբ.՝ կու գայ

<sup>6</sup> Եբբ.՝ անհետազօտելի

<sup>ձ</sup> Այսինքն՝ Նովի Ամոն չաստուածը

<sup>7</sup> Եբբ.՝ հատուցանեմ

28 « Դուն մի՛ վախճար, ո՛վ իմ ծառաս Յակոբ,– կը պատգամէ Տէրը,–  
Որովհետեւ ես քեզի հետ եմ:  
Պիտի՛ բնաջնջեմ այն բոլոր ազգերը՝  
Որոնց մէջ քեզ աքսորեցի.  
Իսկ քեզ պիտի չբնաջնջեմ,  
Հապա քեզ՝ չափաւորութեամբ պիտի յպատժեմ.  
Քեզ բոլորովին անմեղ պիտի չսեպեմ»:

ՓՂՇՏԱՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

47

Տէրոջ խօսքը, որ Երեմիա մարգարէին «ուղղուեցաւ Փղշտացիներուն մասին՝ դեռ Փարաւոն Գազան չզարկած.–

2 «Տէրը սա՛ կը յայտարարէ.

“Ահա՛ հիւսիսէն ջուրեր կը բարձրանան,  
Որոնք յորդահոս վտակի պէս պիտի ըլլան.  
Անոնք պիտի ողողեն երկիրը եւ՝ զայն լեցնողները”;

Քաղաքն ու անոր բնակիչները:

Մարդիկ պիտի աղաղակեն,  
Երկրին բոլոր բնակիչները պիտի գոռան

3 Անոր երկվարներուն սմբակներուն ձայնէն,  
Անոր կառքերուն՝ շաչիւնէն,

Անոր անիւներուն շառաչիւնէն:

Հայրերը **իրենց** որդիներուն՝ պիտի չնային՝

**իրենց** ձեռքերուն թուլնալուն պատճառով,

4 Բոլոր Փղշտացիները բնաջնջելու,  
Եւ Տիւրոսի ու Սիդոնի

Բոլոր վերապրող օգնականները կոտորելու եկող օրուան պատճառով.

Արդարեւ Տէրը պիտի բնաջնջէ Փղշտացիները,  
Կափթոր կղզիին մնացորդները:

5 Գազայի վրայ կնտութիւն հասաւ,  
Ասկաղոն իր հովիտին մնացորդով կործանեցաւ.

Մինչեւ ե՞րբ դուն քեզ պիտի կտրատես:

6 Ո՛վ Տէրոջ սուրը,

<sup>6</sup> Եբր.՝ սպառեմ

<sup>4</sup> Եբր.՝ կանոնին համաձայն

<sup>1</sup> Կամ՝ խրատեմ

<sup>ա</sup> Եբր.՝ եղաւ

<sup>բ</sup> Եբր.՝ անոր լիութիւնը

<sup>գ</sup> Եբր.՝ շարժումէն

<sup>դ</sup> Եբր.՝ **իրենց** երեսը պիտի չդարձնեն

Մինչեւ ե՞րբ պիտի չհանդարտիս.  
Վերադարձի՛ր քու պատեանդ,  
Խաղաղէ՛ ու լռէ՛:

7 Ի՞նչպէս կրնայ հանդարտ կենալ,  
Քանի Տէրը անոր պատուէր տուեր է  
Ասկաղոցի ու ծովեզերքին դէմ.  
Հո՛ն էղրկեր է զայն□»:

ՄՈՎԱՔԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

48

Մովաբի մասին զօրքերու Տէրը՝  
Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
«Վա՛յ Նաբաւի, որովհետեւ կործանեցաւ.  
Կարիաթէմ ամօթահար եղաւ եւ գրաւուեցաւ.  
Մասգաբ ամօթահար եղաւ ու զարհուրեցաւ:

2 Մովաբ ա՛լ պիտի չգովուի:  
Եսերոցի մէջ անոր դէմ չարիք հնարեցին՝ ըսելով.  
“Եկէ՛ք, զայն ազգ ըլլալէ “դադրեցնենք□:  
Դո՛ն ալ, ո՛վ Մադմէն, լռութեան պիտի դատապարտուիս.  
Սուրը քեզի կը հետելի:

3 Որոնայիմէն աղաղակի ձայն կու գայ.  
“Կործանում ու մեծ փլուզում կայ□:

4 Մովաբ ջախջախուեցաւ,  
Անոր փոքրերը աղաղակ Բբարձրացուցին,

5 Քանի որ Ղուիթի զառիվերէն  
Դառն լացով պիտի ելլեն,  
Եւ Որոնայիմի զառիվայրէն  
Թշնամիները փլուզումի աղաղակ լսեցին:

6 Փախէ՛ք, ազատեցէ՛ք ձեր անձը,  
“Անապատի՛ ցախին” պէս եղէք:

7 Արդարեւ դո՛ն ալ պիտի գրաւուիս,  
Քանի որ քու գործերուդ ու գանձերուդ վստահեցար.  
Քամովս տարագրութեան պիտի երթայ՝  
Իր քուրմերուն եւ իշխանաւորներուն հետ:

8 Ամէն քաղաքի դէմ կործանողը պիտի գայ.  
Ո՛չ մէկ քաղաք պիտի ազատի.  
Հովիտը պիտի կորսուի ու լեռնադաշտը կործանի,  
Ինչպէս Տէրը ըսաւ»:

<sup>ե</sup> Եբբ.՝ սահմաններ

<sup>ւ</sup> Եբբ.՝ կտրեցնք

<sup>բ</sup> Եբբ.՝ լսել տուիցն

<sup>գ</sup> Եբբ.՝ Անապատի՛ մէջ զրկուածի

- 9 «Թեև՛ր տուէք Մովսբի՛ որպէսզի թռչելով փախչի,  
Քանի որ անոր քաղաքները ամայի պիտի ըլլան՝ առանց ոեւէ բնակիչի:
- 10 Անհծեա՛լ ըլլայ Տէրոջ գործը՝ ՚խաբէութեամբ կատարողը.  
Անհծեա՛լ ըլլայ իր սուրը արիւնէն՝ ՚խնայողը»:

ՄՈՎԱԲԻ ԶԱՂԱՔՆԵՐՈՒՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

- 11 «Մովսբ իր մանկութենէն ի վեր անխռով էր,  
**Գինիի պէս** իր մրուրին վրայ՝ ՚կը հանգչէր՝».  
Անօթէ անօթ չթափուեցաւ,  
Տարագրութեան չգնաց.  
Հետեւաբար իր համը իր մէջ մնաց,  
Եւ բուրմունքը չփոխուեցաւ:
- 12 Բայց ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
Երբ անոր փոխամանողներ պիտի դրկեմ,  
Ու զայն պիտի ՚փոխամանեն.  
Անոր անօթները պիտի պարպեն,  
Եւ կարասները պիտի կոտորեն:
- 13 Մովսբ Քամովսէն պիտի ամչնայ,  
Ինչպէս Իսրայէլի տունը իր ապահովութիւնը **եղող** Բեթէլէն ամչցաւ:
- 14 Ի՞նչպէս կ'ըսէք. «Մենք զօրաւոր  
Ու պատերազմի համար կտրիճ մարդիկ ենք»:
- 15 Մովսբ կործանեցաւ, եւ անոր քաղաքներուն **մուխը** բարձրացաւ.  
Անոր ընտիր երիտասարդները սպանդանոց իջան,–  
Կը պատգամէ այն Թագաւորը՝ որուն անունը՝ **Զօրքերու Տէր**՝ է:–
- 16 Մովսբի ձախորդութիւնը հասնելու մօտ է,  
Եւ անոր չարիքը յոյժ կը շտապէ:
- 17 Դո՛ւք բոլորդ՝ որ անոր շուրջն էք, ողբացէ՛ք անոր վրայ.  
Դո՛ւք բոլորդ՝ որ անոր անունը գիտէք՝ ըսէք.  
«Ի՛նչպէս կոտրեցաւ զօրաւոր գաւազանը,  
Շքեղ ցուպը»:
- 18 Ո՛վ Դեբոնի մէջ բնակող աղջիկ,  
Իջի՛ր փառքէն եւ նստէ՛ր զ**ետիցի** վրայ.  
Արդարեւ Մովսբը կործանողը քեզի դէմ պիտի բարձրանայ,  
Ու պարիսպներդ պիտի քանդէ:

<sup>7</sup> Կամ՝ թուկութեամբ

<sup>8</sup> Եբբ.՝ արգիլողը

<sup>9</sup> Եբբ.՝ հանդարտ կը կենար

<sup>10</sup> Այսինքն՝ ամանէ մը ուրիշ աման փոխադրեն

<sup>11</sup> Եբբ.՝ Եհովա Սաբաւովթ

<sup>12</sup> Եբբ.՝ ծարաւուտ

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 19 Ճամբային վրայ կայնէ՛ եւ դիտէ՛,  
Ո՛վ Արոէրի բնակիչ.  
Հարցուփորձէ՛ փախչողն ու խոյս տուողը,  
Եւ ըսէ՛. “Ի՞նչ փատահեցաւ□:
- 20 Մովաբ ամօթահար եղաւ, որովհետեւ խորտակուեցաւ.  
Գոռացէ՛ք եւ աղաղակեցէ՛ք,  
Հռչակեցէ՛ք Առնոնի մէջ Մովաբի կործանումը:
- 21 Լեռնադաշտի երկրին,  
Քողոնի, Յասսայի ու Մեփայաթի վրայ դատաստան հասաւ,
- 22 Նաեւ Դեբոնի, Նաբաւի, Բեթդեբլաթէմի,  
23 Կարիաթէմի, Բեթգամովղի, Բեթմաւոնի,  
24 Կարիոթի, Բոսրայի  
Ու Մովաբի երկրին բոլոր քաղաքներուն վրայ,  
Թէ՛ հեռաւոր եւ թէ մօտաւոր:
- 25 Մովաբի եղջիւրը կոտրուեցաւ  
Ու բազուկը բեկանուեցաւ», կը պատգամէ Տէրը:

ՄՈՎԱԲԻ ԶԱՂԱՔՆԵՐԸ ՊԻՏԻ ԿՈՐԾԱՆԻՆ

- 26 «Գինովցուցէ՛ք զայն,  
Որովհետեւ Տէրոջ դէմ՝ հպարտացաւ.  
Մովաբ թող իր փսխունքին մէջ թաւալի,  
Եւ ինք ալ հեգնանքի առարկայ ըլլայ:
- 27 Արդարեւ իսրայէլ քեզի հեգնանքի առարկայ չեղա՞ւ.  
Միթէ ան գողերու մէ՞ջ գտնուեցաւ,  
Որ դուն գլուխ կը շարժէիր երբ անոր մասին խօսէիր:
- 28 “Ո՛վ Մովաբի բնակիչներ,  
Քաղաքները լքեցէ՛ք, ժայռի խռոչներո՛ւն մէջ բնակեցէք.  
Աղանիհի՛ն պէս եղէք, որ իր բոյնը վիհի բացուածքին՝ քովերը կը շինէ□:
- 29 Մովաբի ամբարտաւանութիւնը լսեցինք.  
Ան յոյժ ամբարտաւան է:  
Անոր խրոխտութիւնը, ամբարտաւանութիւնը, յոխորտանքը  
Ու սիրտին գոռոզութիւնը լսեցինք:
- 30 “Ես անոր ցատումը գիտեմ,– կը պատգամէ Տէրը,–  
Բայց ընդունայն է.  
Անոր զրաբանութիւնները պիտի չկատարուի□:
- 31 Ուստի Մովաբի համար պիտի գոռամ,  
Ամբողջ Մովաբի համար պիտի աղաղակեմ.  
Կիր–Հարէսի մարդոց համար պիտի հառաչեմ:
- 32 Ո՛վ Սեբամայի որթատունկ, քու վրադ Յազերի լացով պիտի լամ.  
Քու ուռերդ ծովէն անցնելով

---

<sup>d</sup> Եբբ.՝ եղաւ  
<sup>b</sup> Եբբ.՝ ինքզինք մեծցուց  
<sup>c</sup> Եբբ.՝ կողմերը

**ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ**

Մինչեւ Յագերի ծովը հասեր էին.

Զու ամառնային պտուղիդ վրայ եւ այգեկութիդ վրայ կործանողը ինկաւ:

**33** Բարեբեր **արտերէն** եւ Մովաբի երկրէն  
Ուրախութիւնն ու ցնծութիւնը պիտի <sup>Խ</sup>անհետանան.  
Հնձաններէն գինին դադրեցուցի.

**Յ**նծութեան ճիշով **խաղող** պիտի չկոխուի,  
եւ **լսուած** ճիշը **ցնծութեան** ճիշ պիտի չըլլայ:

**34** Եսերոնի <sup>Յ</sup>աղաղակին պատճառով՝ իրենց ձայնը **լսել** տուին  
Մինչեւ Եղէաղէ, մինչեւ Յասսա,  
Սեգովրէն մինչեւ Որոնայիմ, <sup>Կ</sup>Եգղա-Սելիսիա՝,  
Զանի որ Նեմերիմի ջուրերն ալ ամայացան:

**35** Մովաբի բարձր տեղը **ողջակէզ** մատուցանողը  
եւ իր աստուածներուն խունկ ծխողը  
Պիտի <sup>Դ</sup>հանեմ,- կը պատգամէ Տէրը:-

**36** Այս պատճառով իմ սիրտս Մովաբի համար սրինգներու պէս պիտի հնչէ.  
Կիր-Հարէսի մարդոց համար ալ իմ սիրտս սրինգներու պէս պիտի հնչէ,  
Որովհետեւ անոնց վաստկած հարստութիւնը կորսուեցաւ:

**37** Արդարեւ ամէն գլուխ պիտի կնտուի,  
եւ ամէն մօրուք պիտի կտրուի.  
Բոլոր ձեռքերուն վրայ ճեղքեր պիտի ըլլան,  
Ու բոլոր մէջքերուն վրայ՝ քուրձ:

**38** Մովաբի բոլոր տանիքներուն վրայ  
եւ անոր հրապարակներուն մէջ միայն կոծ պիտի ըլլայ,  
Որովհետեւ Մովաբը կոտորեցի այնպիսի անօթի մը պէս՝  
Որմէ ո՛չ մէկը կ'ախորժի,- կը պատգամէ Տէրը:-

**39** <sup>Ի</sup>՛նչպէս Մովաբ կոտորեցաւ,  
ի՛նչպէս ամօթով <sup>Կ</sup>կռնակ դարձուց<sup>Գ</sup>, պիտի գոռան.  
Մովաբ հեգնանքի ու երկիւղի **պատճառ** պիտի ըլլայ  
Բոլոր իր շուրջը եղողներուն»:

**ՄՈՎԱԲԻ ԱԶԱՏՈՒՄ ՉԿԱՅ**

**40** Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ **թշնամի**ն արծիւի պէս պիտի սաւառնի,  
եւ իր թելերը Մովաբի վրայ պիտի տարածէ.

**41** <sup>Ղ</sup>Քաղաքները կը գրաւուին՝,

<sup>Խ</sup> Եբբ.՝ հաւաքուին

<sup>Յ</sup> Կամ՝ աղաղակէն

<sup>Կ</sup> Կամ՝ երեք տարեկան երինջի պէս

<sup>Դ</sup> Եբբ.՝ դադրեցնեմ

<sup>Կ</sup> Եբբ.՝ ծոծրակ

<sup>Ղ</sup> Կամ՝ Կարիոթը կը գրաւուի

Եւ ամրոցները կը նուաճուին:

Այդ օրը՝ Մովսէսի գօրաւորներուն սիրտը  
հր՝ երկունքին մէջ եղող կնոջ սիրտին պէս պիտի ըլլայ:

42 Մովսէս ժողովուրդը ըլլալէն պիտի <sup>Դ</sup>դադրի,  
Որովհետեւ Տէրոջ դէմ հպարտացաւ:

43 Ո՛վ Մովսէսի բնակիչ,  
Երկիւղ, գուբ ու վարմ կը հասնին քու վրայ,– կը պատգամէ Տէրը:–

44 Երկիւղէն փախչողը գուբը պիտի իյնայ,  
Եւ գուբէն վեր ելլողը վարմի մէջ պիտի բռնուի,  
Զանի որ անոր վրայ, Մովսէսի վրայ,  
Անոնց <sup>Կ</sup>պախչող տարին պիտի բերեն,– կը պատգամէ Տէրը:–

45 «Ոյժէն փախչողները՝ Եսեբոնի հովանիին տակ կայնեցան.  
Բայց Եսեբոնէն կրակ ելաւ,  
Սեհոնի մէջէն՝ բոց,  
Ու Մովսէսի ծայրը  
Եւ աղաղակողներուն գագաթը սպառեց:

46 Վա՛յ քեզի, Մովսէս.  
Զամովսի ժողովուրդը կորսուեցաւ,  
Որովհետեւ քու որդիներդ գերի տարուեցան,  
Եւ աղջիկներդ գերութեան գացին:

47 Բայց վերջին օրերը  
Մովսէսի գերիները պիտի վերադարձնեն», կը պատգամէ Տէրը:  
Մովսէսի դատաստանը մինչեւ հոս է:

ԱՄՄՈՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

49

Ամմոնի որդիներուն մասին Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Միթէ Իսրայէլ որդիներ չունի՞».

Միթէ ան ժառանգորդ չունի՞».

Ինչո՞ւ <sup>Մ</sup>Մեղքոմ Գադի <sup>Բ</sup>տիրացաւ,

Եւ իր ժողովուրդը անոր քաղաքներուն մէջ բնակեցաւ:

2 Հետեւաբար ահա՛ կու գան օրերը,– կը պատգամէ Տէրը,–  
Երբ Ամմոնի որդիներու Ռաբբային մէջ  
Պատերազմի գոչիւն լսել պիտի տամ.

<sup>Գ</sup> Եբր.՝ տագնապին

<sup>Դ</sup> Եբր.՝ կտրուի

<sup>Ե</sup> Եբր.՝ հատուցումի

<sup>Կ</sup> Կամ՝ Փախչողները ոյժէ ինկած՝

<sup>Մ</sup> Կամ՝ իրենց թագաւորը

<sup>Բ</sup> Այսինքն՝ ժառանգ եղաւ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ան ամայի փլատակ պիտի ըլլայ,  
Անոր <sup>9</sup>գիւղերը կրակով պիտի այրուին,  
Եւ Իսրայէլ <sup>7</sup>իրեն տիրացողներուն պիտի տիրանայ», – կը յայտարարէ Տէրը:–

**3** Գոռա՛, ո՛վ Եսեբոն, որովհետեւ Գայի կործանեցաւ:

Աղաղակեցէ՛ք, ո՛վ Ռաբբայի աղջիկներ,  
<sup>6</sup>«Քո՛ւրձ հագէք», հեծեծեցէ՛ք,

Ու ցանկապատէ՛ ցանկապատ շրջագայեցէք.

Որովհետեւ Մեղքոմ տարագրութեան պիտի երթայ  
Իր քուրմերուն եւ իշխանաւորներուն հետ:

**4** Ինչո՞ւ **քու** հովիտներովդ կը պարծենաս.

Քու հովիտդ <sup>9</sup>հալեցաւ, ո՛վ ուխտադրուժ աղջիկ:

Դուն գանձերուդ վստահած էիր

**Ու կ'ըսէիր**. «Ո՞վ ինձի դէմ կրնայ գալ»:

**5** Ահա՛ ես <sup>5</sup>քեզի դէմ՝ երկիւղ պիտի բերեմ

Բոլոր շուրջդ եղողներէն,–

Կը պատգամէ զօրքերու Տէրը՝ Եհովան,–

Եւ պիտի <sup>2</sup>ցրուիք՝ իւրաքանչիւրը իր առջեւի **ճամբան երթալով**.

Ո՛չ մէկը պիտի հաւաքէ <sup>8</sup>փախստականները:

**6** Անկէ ետք Ամմոնի որդիներուն գերիները

Պիտի վերադարձնեմ», կը պատգամէ Տէրը:

## ԵԴՈՎՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

**7** Եդովմի մասին զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Միթէ Թեմանի մէջ ա՛լ իմաստութիւն չկա՞յ.

Խելացիներէն խորհուրդը կորսուեցա՞ւ.

Անոնց իմաստութիւնը <sup>9</sup>փարատեցա՞ւ:

**8** Փախէ՛ք, **կռնա՛կ** դարձուցէք, խորո՛ւնկ **տեղեր** բնակեցէք,

Ո՛վ Դեդանի բնակիչներ.

Որովհետեւ Եսաւի ձախորդութիւնը իր վրայ պիտի բերեմ,

<sup>1</sup>«Զի՛նք պատժած» ժամանակս:

---

<sup>9</sup> Եբբ.՝ աղջիկները

<sup>7</sup> Այսինքն՝ զինք ժառանգողները պիտի ժառանգէ

<sup>6</sup> Եբբ.՝ քուրձն՝վ գօտեւորուեցէք

<sup>9</sup> Եբբ.՝ հոսեցաւ

<sup>5</sup> Կամ՝ քու վրայդ

<sup>2</sup> Եբբ.՝ քշուիք

<sup>8</sup> Եբբ.՝ թափառականները

<sup>9</sup> Եբբ.՝ տարածուեցա՞ւ

<sup>1</sup> Եբբ.՝ իրեն հատուցանած

- 9 Եթէ քեզի այգի կթողներ գայիս,  
Միթէ ճիւղեր պիտի չթողուի՞ն:  
Եթէ գիշերը գողեր գայիս,  
Իրենց բաւարար ըլլալու չափ պիտի փճացնէին:  
10 Բայց ես եսաւր բոլորովին մերկացուցի,  
Անոր ծածուկ տեղերը բացի.  
Ուստի չկրցաւ պահուրտիլ:  
Անոր լգաւակները, եղբայրներն ու դրացիները բնաջնջուեցան,  
Եւ ինք չկայ:  
11 Թո՛ղ որբերդ, ես զանոնք ողջ կը պահեմ.  
Քու այրիներդ ինձի թող վստահին»:  
12 Արդարեւ Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ահա՛ անոնք՝<sup>10</sup> որ պարտաւոր չէին՝ բաժակը խմել, անշուշտ պիտի խմեն.  
Իսկ դուն բոլորովին անպատի՞ժ պիտի մնաս:  
Անպատիժ պիտի չմնաս,  
Հապա անպատճառ պիտի խմես.  
13 Որովհետեւ իմ անձիս վրայ՝ երդում կ'ընեմ, – կը պատգամէ Տէրը, –  
Թէ Բոսրա ամայութիւն, նախատինք, աւերակ եւ անէծք պիտի ըլլայ.  
Անոր բոլոր քաղաքները յաւիտենապէս աւերակ պիտի ըլլան»:  
14 Տէրոջմէն լուր մը լսեցի,  
Եւ Վագգերուն դեսպան ղրկուած է՝ ըսելու.  
«Հաւաքուեցէ՛ք ու գացէ՛ք անոր դէմ,  
Ոտքի՛ ելէք՝ պատերազմելու»:  
15 Արդարեւ ահա՛ քեզ ազգերուն մէջ պզտիկ դարձուցի,  
Եւ մարդոց մէջ՝ արհամարհուած:  
16 Քու ահռելիութիւնդ, սիրտիդ հպարտութիւնը քեզ հրապուրեցին,  
Ո՛վ ժայռի խորշերուն մէջ բնակող.  
Ու բլուրներու բարձունքը գրաւող.  
Թէեւ քու բոյնդ արծիւին պէս ՚բարձր տեղեր շինես՝,  
Քեզ անկէ պիտի իջեցնեմ, – կը պատգամէ Տէրը: –  
17 Եդովմ ամայի պիտի ըլլայ.  
Ո՛վ որ անոր քովէն անցնի՝ պիտի ապշի,  
Եւ անոր բոլոր պատուհասներուն համար պիտի սուլէ:  
18 Սողոմի ու Գոմորի եւ ճրջակայ քաղաքներուն՝ կործանումին պէս, – կը յայտարարէ  
Տէրը, –

---

<sup>1</sup> Եբր.՝ զարմը

<sup>10</sup> Եբր.՝ որոնց դատավճիռը չէր

<sup>10</sup> Եբր.՝ ինձմով

<sup>4</sup> Կամ՝ հեթանոսներուն

<sup>6</sup> Եբր.՝ բարձրացնես

<sup>8</sup> Եբր.՝ անոնց դրացիներուն

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Ո՛չ մէկը պիտի կենայ հոն,

Ո՛չ ալ մարդու որդի պիտի բնակի անոր մէջ:

19 Ահա՛ թշնամի՜ն առիւծի պէս կը բարձրանայ Յորդանանի նողողուած **ափերէն՝**

Տոկուն բնակարանին դէմ.

Բայց՝ զինք վայրկենապէս պիտի փախցնեմ՝<sup>1</sup>անկէ,

Եւ ո՞վ ընտիր է՝ որ անոր վրայ նշանակեմ:

Արդարեւ ո՞վ ինծի նման է.

Ո՞վ ինծի պիտի հանդիպի,

Ո՞վ է այն հովիւը՝ որ ինծի պիտի դիմադրէ:

20 Հետեւաբար լսեցէ՛ք Տէրոջ՝ տուած որոշումը Եդովմի մասին,

Ու մտածած ծրագիրը Թեմանի բնակիչներուն մասին.

Հօտին ամենէն փոքրը անպատճառ զանոնք պիտի <sup>2</sup>քշէ,

Անշուշտ անոնց բնակարանները իրենց նպատճառով պիտի ամայացնէ:

21 Անոնց անկումին աղմուկէն <sup>3</sup>երկրագունդը պիտի շարժի.

**Անոնց** աղաղակին ձայնը մինչեւ Կարմիր ծովը պիտի լսուի:

22 Ահա՛ թշնամի՜ն արծիւի պէս բարձրանալով կը սաւառնի,

Եւ իր թելերը Բոսրայի վրայ կը տարածէ.

Այն օրը Եդովմի գօրաւորներուն սիրտը

Իր տերկունքին մէջ եղող կնոջ սիրտին պէս պիտի ըլլայ:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

23 Դամասկոսի մասին.—

«Եմաթ եւ Արփաթ ամչցան,

Քանի որ չարագուշակ լուր լսեցին **ու** հալեցան:

Ծովուն մէջ զարհուրանք կայ.

Ան չի կրնար հանդարտիլ:

24 Դամասկոս տկարացաւ,

**Կռնակ** դարձուց փախչելու համար.

Արհաւիրքը զինք համակած է.

<sup>1</sup> Եբբ.՝ խրոխտ

<sup>6</sup> Կամ՝ զանոնք, **այսինքն՝** Եդովմայեցիները

<sup>1</sup> Եբբ.՝ վազցնեմ

<sup>1</sup> **Այսինքն՝** Եդովմէն

<sup>6</sup> Եբբ.՝ խորհած

<sup>2</sup> Եբբ.՝ քաշկռտէ

<sup>6</sup> Կամ՝ հետ

<sup>4</sup> Եբբ.՝ երկիրը

<sup>4</sup> Եբբ.՝ տագնապին

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Տագնապն ու երկունքի ցաւերը բռնեցին զինք՝ ինչպէս ծննդաբերող **կինը**։

- 25** (Ի՛նչպէս լքուեցաւ գովելի բերդաքաղաքը,  
Իմ բերկրանքիս քաղաքը։)
- 26** Հետեւաբար անոր երիտասարդները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան,  
Ու բոլոր պատերազմիկները  
Այն օրը պիտի շքնաջնջուին,– կը պատգամէ զօրքերու Տէրը։–
- 27** Դամասկոսի պարիսպին մէջ կրակ պիտի ՚վառեմ,  
Եւ Բենադադի պալատները պիտի սպառէ»։

## ԿԵԴԱՐԻ ՅԵՂԻՆ ԵՒ ՀԱՍՈՐ ԶԱՂԱՔԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

- 28** Կեդարի մասին ու Հասորի թագաւորութիւններուն մասին, որոնք Բաբելոնի  
Նաբուգոդոնոսոր թագաւորը զարկաւ, Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Ոտքի՛ ելէք, բարձրացէ՛ք Կեդարի դէմ,  
Եւ բնաջնջեցէ՛ք՝ արեւելքիները.
- 29** Անոնց վրաններն ու հօտերը պիտի գրաւուին,  
Անոնց վարագոյրները, բոլոր գոյքերը  
Եւ ուղտերը պիտի փոխադրուին,  
Ու անոնց պիտի գոչեն.  
“Ամէն կողմէ արհաւիրք կայ□։
- 30** Փախէ՛ք, շուտով՝ հեռացէ՛ք, խորո՛ւնկ **տեղեր** բնակեցէ՛ք,  
Ո՛վ Հասորի բնակիչներ,– կը պատգամէ Տէրը.–  
Արդարեւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը  
Չեզի դէմ որոշում մը տուաւ,  
Չեզի դէմ ծրագիր մը մտածեց։
- 31** Ոտքի՛ ելէք ու բարձրացէ՛ք անդորրութեան **եւ** ապահովութեան մէջ բնակող ազգին  
դէմ,– կը պատգամէ Տէրը.–  
Ան ո՛չ դռներ ունի, ո՛չ ալ նիգեր, եւ առանձին կը Վբնակի։
- 32** Անոնց ուղտերը պիտի կողոպտուին,  
Ու անոնց խաշիներին բազմութիւնը պիտի յափշտակուի.  
**Իրենց մօրուքին** ծայրը կտրողները ամէն հովի պիտի ցրուեն,  
Եւ անոնց ձախորդութիւնը ամէն կողմէ պիտի բերեն,– կը պատգամէ Տէրը։–
- 33** Հասոր շնագայլերու որջ,  
Յաւիտենական ամայութիւն պիտի ըլլայ.  
Ո՛չ մէկը պիտի կենայ հոն,  
Ո՛չ ալ մարդու որդի պիտի բնակի անոր մէջ»։

## ԵՂԱՄԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

---

<sup>2</sup> Եբբ.՝ լռեն

<sup>2</sup> Եբբ.՝ բռնկեցնեմ

<sup>4</sup> Եբբ.՝ արեւելքի որդիները

<sup>4</sup> Եբբ.՝ բնակից

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

34 Յուդայի թագաւորին՝ Սեդեկիայի թագաւորութեան սկիզբը, Եղամի մասին Երեմիա մարգարէին տուողուած խօսքը Տէրոջմէն՝ որ ըսաւ.

35 «Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.

“Ահա՛ ես պիտի կոտորեմ Եղամի աղեղը,  
Անոնց գլխաւոր զօրութիւնը:

36 Եղամի վրայ չորս հովերը պիտի բերեմ երկինքի չորս ծայրերէն,  
Զանոնք այս բոլոր հովերուն պիտի ցրուեմ,

Ու պիտի չըլլայ ազգ մը՝ ուր Եղամի արտրականները չհասնին:

37 Եղամացիները իրենց թշնամիներուն առջեւ

Եւ իրենց կեանքը փնտռողներուն առջեւ պիտի զարհուրեցնեմ,

Ու անոնց վրայ չարիք պիտի բերեմ,

**Այսինքն՝** իմ բորբոքած բարկութիւնս, – կը պատգամէ Տէրը:–

Անոնց ետեւէն սուրը պիտի դրկեմ,

Մինչեւ որ զանոնք ՚հատցնեմ:

38 Իմ գահս Եղամի մէջ պիտի դնեմ,

Եւ անկէ պիտի բնաջնջեմ թագաւորն ու իշխանաւորներ, – կը պատգամէ Տէրը:–

39 Բայց վերջին օրերը

Եղամի գերիները պիտի վերադարձնեմ<sup>□</sup>», կը պատգամէ Տէրը:

## ԲԱԲԵԼՈՆԻ ԳՐԱԻՈՒՄԸ

### 50

Բաբելոնի մասին – Զաղդէացիներու երկրին մասին – Երեմիա մարգարէին միջոցով Տէրոջ ըսած խօսքը.–

2 «Յայտարարեցէ՛ք ազգերուն մէջ.

<sup>Բ</sup>Ծանուցանեցէ՛ք եւ դրօշա՛կ բարձրացուցէք

Ծանուցանեցէ՛ք ու մի՛ ծածկէք, **եւ** ըսէ՛ք.

“Բաբելոն գրաւուեցաւ, Բէլ ամօթահար եղաւ.

Մարովդաք խորտակուեցաւ,

Անոր կուռքերը ամօթահար եղան,

Անոր չաստուածները կոտորուեցան<sup>□</sup>:

3 Արդարեւ անոր դէմ հիւսիսէն ազգ մը բարձրացաւ՝

Որ անոր երկիրը ամայի պիտի ՚դարձնէ.

Հոն ո՛չ մէկը պիտի բնակի,

Մարդ թէ անասուն պիտի փախչին երթան»:

## ԻՍՐԱՅԵԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

---

<sup>□</sup> Եբր.՝ եղած

<sup>Բ</sup> Եբր.՝ սպառեմ

<sup>ւ</sup> Եբր.՝ ձեռքով

<sup>Բ</sup> Եբր.՝ լսել տուէք

<sup>Գ</sup> Եբր.՝ ընէ

- 4 «Այդ օրերը եւ այդ ատենը, – կը պատգամէ Տէրը, –  
Իսրայէլի որդիները – իրենք եւ Յուդայի որդիները – միասին պիտի գան,  
Զալելով ու լալով պիտի գան,  
Եւ Տէրը՝ իրենց Աստուածը պիտի փնտռեն:
- 5 Սիոնի ճամբան պիտի հարցնեն՝  
Իրենց երեսը դէպի հոն **ուղղելով եւ ըսելով.**  
“Եկէ՛ք, Տէրո՛ջ յարինք  
Յաւիտենական ու անմոռաց ուխտով մը□:
- 6 Իմ ժողովուրդս կորսուած ոչխարներու **պէս** եղաւ.  
Իրենց հովիւները զանոնք մոլորեցուցին՝  
Անոնց <sup>7</sup>թափառիլ տալով լեռներու վրայ,  
**իրենք ալ լեռնէ լեռ ու բլուրէ բլուր** գացին,  
Եւ իրենց մակաղատեղը մոռցան:
- 7 Բոլոր զանոնք գտնողները զիրենք լափեցին.  
Իրենց հակառակորդները ըսին.  
“Մենք յանցաւոր չենք,  
Որովհետեւ անոնք մեղանչեցին արդարութեան բնական եղող Տէրոջ դէմ,  
Իրենց հայրերուն յոյսը եղող Տէրոջ դէմ□:
- 8 Բաբելոնէն փախէ՛ք,  
Զաղդէացիներու երկրէն ելէ՛ք,  
Եւ հօտերուն առջեւէն **գացող** նոխազներո՛ւն պէս եղէք.
- 9 Արդարեւ ահա՛ ես Բաբելոնի դէմ  
Հիւսիսի երկրէն մեծ ազգերու համախմբում մը  
Պիտի արթնցնեմ ու բարձրացնեմ:  
Անոր առջեւ **պատերազմի** պիտի շարուին,  
Եւ ան պիտի գրաւուի:  
Անոնց նետերը՝ <sup>8</sup>ճարպիկ զօրաւոր **մարդու նետերուն** պէս են.  
Ո՛չ մէկը պարապ պիտի վերադառնայ:
- 10 Զաղդէաստանը աւար պիտի ըլլայ,  
Ու զայն թալլողները պիտի կշտանան», կը պատգամէ Տէրը:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԿՈՒՄԸ

- 11 «Զանի դուք ուրախացաք եւ հրճուեցաք,  
Ո՛վ իմ ժառանգութեանս կողոպտիչները,  
Յատկեցէ՛ք <sup>9</sup>դալարի մէջ **արածող**՝ երինջի պէս,  
Վրնջեցէ՛ք երիվարներու պէս:
- 12 Ձեր մայրը յոյժ ամչցաւ,  
Ձեզ ծնանողը պիտի շիկնի.  
Ահա՛ ան ազգերուն յետինը,

<sup>7</sup> Եբբ.՝ դառնալ

<sup>8</sup> Եբբ.՝ ուշիմ

<sup>9</sup> Կամ՝ ցորեն ծեծող

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Անապատ, անջրդի եւ անբնակ երկիր պիտի ըլլայ:

- 13 Տէրոջ զայրոյթին պատճառով՝ ան պիտի չբնակուի,  
Հապա ամբողջովին ամայի պիտի ըլլայ.  
Ո՛վ որ Բաբելոնի քովէն անցնի՝  
Անոր պատուհասներուն վրայ  
Պիտի ապշի ու սուլէ:
- 14 Բաբելոնի դէմ **պատերազմի՝** շարունեցէք՝ բոլորածեւ,  
Ո՛վ բոլոր աղեղ լարողներ.  
Անոր նետեցէ՛ք, նետին մի՛ խնայէք,  
Զանի որ ան Տէրոջ դէմ մեղանչեց:
- 15 Անոր դէմ ամէ՛ն կողմէ գոչեցէ՛ք.  
Ան է՝ անձնատուր եղաւ՝,  
Անոր հիմերը տապալեցան,  
Անոր պարիսպները փլան,  
Որովհետեւ ասկա Տէրոջ վրէժխնդրութիւնն է:  
Վրէ՛ժ առէք իրմէ,  
Վարունեցէ՛ք իրեն հետ՝ ինչպէս ինք վարունեցաւ:
- 16 Բաբելոնէն կոտորեցէ՛ք սերմանողը եւ հունձքի ժամանակ մանգաղ բռնողը.  
Կոտորող սուրին <sup>բ</sup>պատճառով՝  
Իւրաքանչիւրը իր ժողովուրդին պիտի վերադառնայ,  
Իւրաքանչիւրը իր երկիրը պիտի փախչի»:

## ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

- 17 «Իսրայէլ մոլորեալ ոչխար մըն է,  
Առիւծներէն <sup>բ</sup>հալածուած.  
Նախ Ասորեստանի թագաւորը զայն լափեց,  
Իսկ այս վերջինը՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը՝ անոր ոսկորները կոտրեց:
- 18 Հետեւաբար զօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.  
“Ահա՛ ես Բաբելոնի թագաւորն ու անոր երկիրը պիտի <sup>գ</sup>պատժեմ,  
Ինչպէս Ասորեստանի թագաւորը պատժեցի.
- 19 Իսկ Իսրայէլը իր արօտավայրերը պիտի վերադարձնեմ,  
Ու Կարմեղոսի եւ Բասանի մէջ պիտի արածի.  
Անոր անձը Եփրեմի լեռնակողմը  
Ու Գաղաադի մէջ պիտի կշտանայ :
- 20 Այդ օրերը եւ այդ ատենը, – կը պատգամէ Տէրը, –  
Իսրայէլի անօրէնութիւնը պիտի փնտռուի,  
Բայց **անօրէնութիւն** պիտի չըլլայ.  
Յուդայի մեղքերը **պիտի փնտռուին,**

<sup>հ</sup> Եբբ.՝ իր ձեռքը տուաւ

<sup>բ</sup> Եբբ.՝ երեսէն

<sup>գ</sup> Եբբ.՝ քշուած

<sup>դ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

Բայց պիտի չգտնուին.

Որովհետեւ պիտի ներեմ անոնց՝ որ **ողջ** թողուցած պիտի ըլլամ»:

**ԲԱՔԵԼՈՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ**

- 21** Բարձրացի՛ր ՚Սերաթայիմի երկրին դէմ  
Ու ՚Փակուդի բնակիչներուն դէմ,  
Աւերէ՛ զանոնք  
Եւ անճիտէ՛,– կը պատգամէ Տէրը.–  
Վարուէ՛ ամբողջ քեզի հրամայածիս համաձայն:
- 22** Երկրին մէջ պատերազմի ձայն  
Ու մեծ փլուզում կայ.
- 23** Ի՛նչպէս ամբողջ երկրի ուռը կոտորուեցաւ ու փշրուեցաւ,  
Ի՛նչպէս Բաբելոն ազգերուն մէջ ամայութիւն եղաւ:
- 24** Զեզի որոգայթ լարեցի եւ բռնուեցար, ո՛վ Բաբելոն,  
Բայց դուն չգիտցար.  
Գտնուեցար ու ձերբակալուեցար,  
Որովհետեւ Տէրոջ դէմ մաքառեցար:
- 25** Տէրը իր գինանոցը բացաւ  
Եւ իր սրտմտութեան զէնքերը դուրս հանեց,  
Որովհետեւ ասկա զօրքերու Տէրոջ՝ Եհովայի գործն է  
Զաղդէացիներու երկրին մէջ.
- 26** Եկէ՛ք անոր դէմ **երկրի** ծայրէն,  
Բացէ՛ք անոր շտեմարանները,  
Դիզեցէ՛ք զայն <sup>Խ</sup>շեղջերու պէս,  
Եւ անճիտեցէ՛ք զայն.  
Անկէ ոչինչ թող մնայ:
- 27** <sup>Ծ</sup>Կոտորեցէ՛ք անոր բոլոր ցուլերը,  
Թող անոնք սպանդանոցը իջնեն.  
Վա՛յ անոնց, քանի որ անոնց օրը,  
Անոնց <sup>Կ</sup>պատիժի ատենը հասած է:
- 28** Բաբելոնի երկրէն փախչողներուն եւ ազատածներուն ձայնը **կու գայ**,  
Սիոնի մէջ յայտարարելու Տէրոջ՝ մեր Աստուծոյն վրէժխնդրութիւնը,  
Անոր տաճարին վրէժխնդրութիւնը:
- 29** «Աղեղնաւորներ կանչեցէք Բաբելոնի դէմ.  
Ո՛վ բոլոր աղեղ լարողներ,  
Բանակեցէ՛ք անոր դէմ՝ բոլորածեւ.

---

<sup>Ի</sup> Այսինքն՝ Ապստամբութեան

<sup>Լ</sup> Այսինքն՝ Այցելութեան

<sup>Խ</sup> Եբր.՝ դէզերու

<sup>Ծ</sup> Եբր.՝ Աւերեցէ՛ք

<sup>Կ</sup> Եբր.՝ հատուցումի

Ո՛չ մէկը անկէ թող ազատի:

Հատուցանեցէ՛ք անոր՝ իր արարքներուն համեմատ,  
Վարուցեցէ՛ք անոր հետ՝ իր բոլոր ըրածներուն համեմատ.  
Արդարեւ ան հպարտացաւ Տէրոջ դէմ,  
Իսրայէլի Սուրբին դէմ:

**30** Հետեւաբար անոր երիտասարդները իր հրապարակներուն մէջ պիտի իյնան,  
Եւ անոր բոլոր պատերազմիկները  
Այդ օրը պիտի ՚բնաջնջուին,– կը պատգամէ Տէրը:–

**31** Ահա՛ ես քեզի դէմ եմ, ո՛վ հպարտ,–  
Կը պատգամէ զօրքերու Տէրը՝ Եհովան,–  
Քանի որ հասած է քու օրդ, <sup>ձքեզ</sup> պատժելուս՝՝ ատենը:

**32** Հպարտը գայթելով պիտի իյնայ,  
Եւ ո՛չ մէկը զայն պիտի կանգնեցնէ:  
Անոր քաղաքներուն մէջ կրակ պիտի <sup>ն</sup>վառեն,  
Որ անոր ամբողջ շրջակայքը սպառէ»:

**33** Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Իսրայէլի որդիներն ու Յուդայի որդիները միասին հարստահարուեցան.  
Անոնց բոլոր գերեվարները իրենց կառչեցան,  
Եւ մերժեցին զիրենք արձակել:

**34** **Սակայն** իրենց Փրկարարը ուժեղ է,  
Անոր անունը Զօրքերու Տէր է.  
Ան անշուշտ իրենց իրաւունքը պիտի պաշտպանէ,  
Որպէսզի երկիրը խաղաղեցնէ,  
Ու Բաբելոնի բնակիչները վրդովէ:

**35** Տէրը կը պատգամէ թէ սուր **պիտի հասնի** Զաղդէացիներուն վրայ,  
Բաբելոնի բնակիչներուն վրայ,  
Անոր իշխանաւորներուն եւ իմաստուններուն վրայ.

**36** Սուր՝ ստախօսներուն վրայ, ու պիտի խենթանան.  
Սուր՝ անոր զօրաւորներուն վրայ, եւ պիտի զարհուրին.

**37** Սուր՝ անոր ձիերուն ու կառքերուն վրայ,  
Սուր՝ անոր մէջ եղող բոլոր խառնածիներուն վրայ,  
Որոնք կիներու պէս պիտի ըլլան.  
Սուր՝ անոր գանձերուն վրայ, որոնք պիտի կողոպտուին.

**38** Չորութիւն՝ անոր ջուրերուն վրայ, որոնք պիտի ցամքին.  
Որովհետեւ ան <sup>6</sup>կուռքերու երկիր է,  
Եւ **իրենց** կուռքերով կը խենթանան:

**39** Հետեւաբար **հոն** <sup>ւ</sup>վայրենի կատուներ՝՝ ու բորենիներ պիտի բնակին,

---

<sup>6</sup> Եբբ.՝ լռեն

<sup>8</sup> Եբբ.՝ քեզի հատուցանելուս

<sup>7</sup> Եբբ.՝ բռնկեցնեմ

<sup>6</sup> Եբբ.՝ քանդակուած պատկերներու

<sup>ւ</sup> Կամ՝ անապատի գազաններ

Հոն ջայլամներ պիտի բնակին.

Ան ընդմիջտ պիտի չբնակուի,

Սերունդէ սերունդ անբնակ պիտի ըլլայ:

40 Աստուծոյ կործանած Սողոմոնն ու Գոմորին  
Եւ յշրջակայ քաղաքներուն՝ պէս, – կը պատգամէ Տէրը, –  
Ո՛չ մէկը պիտի կենայ հոն,  
Ո՛չ ալ մարդու որդի պիտի բնակի անոր մէջ»:

41 «Ահա՛ հիւսիսէն ժողովուրդ մը կու գայ,  
Մեծ ազգ մը ու շատ թագաւորներ  
Երկրի ծագերէն՝ կ'արշաւեն:

42 Անոնք աղեղ ու տէգ կը բռնեն.  
Անգութ եւ անողորմ են:  
Անոնց ձայնը ծովու պէս կը գոռայ:  
Անոնք ձիերու վրայ հեծած են,  
Ու պատերազմիկի պէս  
Զեզի դէմ կը շարուին, ո՛վ Բաբելոնի աղջիկ:

43 Երբ Բաբելոնի թագաւորը շայս լուրը լսեց՝  
Անոր ձեռքերը թուլցան.  
Տագնապը զինք համակեց՝  
Ծննդաբերող կնոջ երկունքի ցաւին պէս:

44 Ահա՛ թշնամին առիւծի պէս կը բարձրանայ Յորդանանի ռողողուած ափերէն՝  
Տոկուն բնակարանին դէմ.  
Բայց չզինք վայրկենապէս պիտի փախցնեն շանկէ,  
Եւ ո՞վ ընտիր է՝ որ անոր վրայ նշանակեմ:  
Արդարեւ ո՞վ ինծի նման է.  
Ո՞վ ինծի պիտի հանդիպի,  
Ո՞վ է այն հովիւր՝ որ ինծի պիտի դիմադրէ:

45 Հետեւաբար լսեցէ՛ք Տէրոջ ՚տուած որոշումը Բաբելոնի մասին,  
Ու մտածած ծրագիրը Զաղդէացիներու երկրին մասին.  
Հօտին ամենէն փոքրը անպատճառ զանոնք պիտի քշէ.

<sup>1</sup> Եբր.՝ անոնց դրացիներուն

<sup>6</sup> Եբր.՝ կ'արթննան

<sup>2</sup> Եբր.՝ անոր

<sup>n</sup> Եբր.՝ խրոխտ

<sup>է</sup> Կամ՝ զանոնք, այսինքն՝ Եդովմայեցիները

<sup>ւ</sup> Եբր.՝ վազցնեն

<sup>2</sup> Այսինքն՝ Եդովմէն

<sup>n</sup> Եբր.՝ խորհած

<sup>ւ</sup> Եբր.՝ քաշկռտէ

Անշուշտ **անոնց** բնակարանները իրենց <sup>Վ</sup>պատճառով պիտի ամայացնէ:

**46** Բաբելոնի գրաւումին աղմուկէն <sup>Ս</sup>երկրագունդը կը շարժի,  
Եւ ազգերուն մէջ աղաղակ կը լսուի»:

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՆԱՉԱՌ ԴԱՏԱՍՏԱՆԸ

**51**

Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ահա՛ ես Բաբելոնի դէմ,

Եւ <sup>Ս</sup>իմ հակառակորդներուս՝ <sup>Ք</sup>մէջտեղը բնակողներուն դէմ

Կործանարար հով մը պիտի բարձրացնեմ:

**2** Բաբելոնի դէմ <sup>Գ</sup>հոսողներ պիտի դրկեմ՝

Որոնք զայն պիտի հոսեն եւ անոր երկիրը պիտի պարպեն,

Որովհետեւ ամէն կողմէ պիտի <sup>Դ</sup>գան անոր դէմ՝ ճախորդութեան օրը:

**3** Աղեղնաւորը թող լարէ իր աղեղը <sup>Ե</sup>աղեղնաւորին դէմ,

Եւ իր զրահին մէջ <sup>Գ</sup>հպարտացողին դէմ:

Անոր երիտասարդներուն մի՛ խնայէք,

Անոր ամբողջ զօրքը անճիտեցէք:

**4** Զաղդէացիներուն երկրին մէջ <sup>Է</sup>սպաննուածներ պիտի իյնան,

Եւ անոր փողոցներուն մէջ՝ խոցուածներ.

**5** Արդարեւ Իսրայէլ ու Յուդա իրենց Աստուծմէն՝

Զօրքերու Տէրոջմէն <sup>Ը</sup>չլքուեցան,

Թէպէտ իրենց երկիրը յանցանքով լեցուեցաւ

Իսրայէլի Սուրբին դէմ»:

**6** Փախէ՛ք Բաբելոնի մէջէն,

Իւրաքանչիւրը իր անձը թող ազատէ՛

Որպէսզի անոր անօրէնութեամբ <sup>Ք</sup>չբնաջնջուիք.

---

<sup>Վ</sup> Կամ՝ հետ

<sup>Ս</sup> Եբբ.՝ երկիրը

<sup>Ս</sup> Եբբ.՝ ինծի դէմ կանգնողներուն

<sup>Ք</sup> Եբբ.՝ սիրտը

<sup>Գ</sup> Կամ՝ օտարներ

<sup>Դ</sup> Եբբ.՝ ըլլան

<sup>Ե</sup> Եբբ.՝ աղեղ լարողին

<sup>Գ</sup> Եբբ.՝ ինքզինք բարձրացնողին

<sup>Է</sup> Եբբ.՝ խոցոտուածներ

<sup>Ը</sup> Եբբ.՝ չայրիացան

<sup>Ք</sup> Եբբ.՝ չլռէք

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Քանզի ասիկա Տէրոջ վրէժխնդրութեան ատենն է,  
Ի՛նք պիտի հատուցանէ անոր վարձատրութիւնը:

**7** Բաբելոն Տէրոջ ձեռքին մէջ՝

Ամբողջ՝՝երկրագունդը գինովցնող ոսկի բաժակ մը եղաւ.

Ազգերը խմեցին անոր գինիէն,

Հետեւաբար ազգերը խենթացան:

**8** Բաբելոն յանկարծ տապալեցաւ ու ջախջախուեցաւ.

Գոռացէ՛ք անոր վրայ,

Բալասա՛ն առէք անոր ի՛վէրքին համար,

Թերեւս բուժուի:

**9** Փորձեցինք Բաբելոնը բուժել, բայց չբուժուեցաւ.

Լքեցէ՛ք զայն, ու մեզմէ իւրաքանչիւրը իր երկիրը թող երթայ.

Արդարեւ անոր դատաստանը մինչեւ երկինք հասաւ,

Մինչեւ նօսր ամպերը բարձրացաւ:

**10** Տէրը մեր արդարութիւնը **երեւան** հանեց.

Եկէ՛ք, ու Սիոնի մէջ պատմենք

Տէրոջ՝ մեր Աստուծոյն գործը:

**11** Փայլեցուցէ՛ք նետերը, ՚բռնեցէ՛ք վահանները.

Տէրը Մարերու թագաւորներուն հոգին արթնցուց,

Քանի որ իր մտադրութիւնը Բաբելոնի դէմ է՝ զայն կործանելու համար.

Արդարեւ ա՛յս է Տէրոջ վրէժխնդրութիւնը,

Իր տաճարին վրէժխնդրութիւնը:

**12** Դրօշա՛կ բարձրացուցէք Բաբելոնի պարիսպներուն դէմ,

Պահակագո՛ւնդը ուժովցուցէք,

Պահապաննե՛ր նշանակեցէք, դարաննե՛ր պատրաստեցէք,

Քանի որ Տէրը որոշեց **եւ** գործադրեց

Ինչ որ Բաբելոնի բնակիչներուն դէմ խօսած էր:

**13** Ո՛վ յորդառատ ջուրերու քով բնակող **ու** շատ գանձեր ունեցող,

Քու վախճանդ հասաւ, ազահութեանդ չափը **լեցուեցաւ**:

**14** Զօրքերու Տէրը իր անձին վրայ երդում ըրաւ՝ **ըսելով**.

«Անշուշտ ջորեակի **բազմութեան** չափ մարդոցմով քեզ պիտի լեցնեմ,

Որոնք քեզի դէմ **յադրութեան** ճիչ պիտի ՚բարձրացնեն»:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ ՄԸ

**15** Երկիրը իր կարողութեամբ <sup>ժ</sup>ստեղծեց,

Երկրագունդը իր իմաստութեամբ հաստատեց,

---

<sup>ժ</sup> Եբբ.՝ երկիրը

<sup>Ի</sup> Եբբ.՝ կոտտանքին

<sup>Լ</sup> Եբբ.՝ լեցուցէ՛ք

<sup>Խ</sup> Եբբ.՝ կանչեմ

<sup>Ն</sup> Եբբ.՝ շինեց

Երկինքը իր հանճարով սփռեց:

- 16 Երբ իր ծայնը **լսել** տայ՝ երկինքի մէջ ջուրերու յորդառատութիւն կ'ըլլայ.  
Երկրի ծայրերէն ամպեր կը բարձրացնէ,  
Անձրեւի համար փայլակներ կը <sup>4</sup>պատրաստէ,  
Ու հով կը հանէ իր շտեմարաններէն:
- 17 Ամէն մարդ ճանաչումէն **գրկուելով** անբան եղաւ.  
Ամէն ձուլագործ **ի**ր քանդակած կուռքին **պատճառով** ամօթահար եղաւ,  
Որովհետեւ իր <sup>5</sup>ձուլած կուռքերը՝ ստութիւն են,  
Անոնք <sup>6</sup>հոգի չունին:
- 18 Անոնք ունայնութիւն են, զեղծարարութեան գործեր.  
Իրենց <sup>7</sup>պատիժին ստենը պիտի կորսուին:
- 19 Յակոբի Բաժինը անոնց պէս չէ,  
Որովհետեւ ինք է բոլորին <sup>8</sup>Արարիչը.  
Իսրայէլ իր ժառանգութեան <sup>9</sup>վիճակն է,  
Իր անունը՝ <sup>10</sup>Զօրքերու Տէր՝ է:
- 20 « Դուն՝ իմ կռանս <sup>11</sup>ես, պատերազմական <sup>2</sup>գործիքս.  
Քեզմով՝ <sup>12</sup>պիտի ջախջախեմ՝՝ ազգերը,  
Քեզմով՝ պիտի կործանեմ թագաւորութիւնները.
- 21 Քեզմով՝ պիտի ջախջախեմ ձին եւ անոր հեծեալը,  
Քեզմով՝ պիտի ջախջախեմ կառքն ու անոր մէջ նստողը.
- 22 Քեզմով՝ պիտի ջախջախեմ մարդը եւ կինը,  
Քեզմով՝ պիտի ջախջախեմ ծերն ու պատանին,  
Քեզմով՝ պիտի ջախջախեմ երիտասարդն ու կոյսը.
- 23 Քեզմով՝ պիտի ջախջախեմ հովիւը եւ անոր հօտը,  
Քեզմով՝ պիտի ջախջախեմ երկրագործն ու անոր **եզներուն** զոյգը.  
Քեզմով՝ պիտի ջախջախեմ կուսակալներն ու նախարարները,
- 24 Եւ Բաբելոնի ու Բաղդէաստանի բոլոր բնակիչներուն  
Պիտի հատուցանեմ իրենց ամբողջ չարիքը՝

---

<sup>4</sup> Կամ՝ շինէ

<sup>5</sup> Եբբ.՝ թափած պատկերը

<sup>6</sup> Կամ՝ շունչ

<sup>7</sup> Եբբ.՝ հատուցումին

<sup>8</sup> Եբբ.՝ Չեւակերպիչը

<sup>9</sup> Եբբ.՝ գաւազանն

<sup>10</sup> Եբբ.՝ Եհովա Սարաւովթ

<sup>11</sup> Կամ՝ եղար

<sup>12</sup> Կամ՝ զէնքս

<sup>13</sup> Կամ՝ ջախջախեցի

Որ գործեցին Սիոնի մէջ, ձեր աչքերուն առջեւ,– կը պատգամէ Տէրը:–

25 Ո՛վ ամբողջ չերկրագունդը կործանող «ապականիչ լեռ,

Ահա՛ ես քեզի դէմ եմ,– կը պատգամէ Տէրը.–

Իմ ձեռքս քու վրադ պիտի երկարեմ,

Քեզ ժայռերէն վար պիտի գլորեմ,

Եւ քեզ այրուած լեռի պիտի շփերածեմ:

26 Քեզմէ անկիւնի քար ու հիմի քար պիտի <sup>ն</sup>չհանեն,

Քանի որ յաւիտեան ամայի պիտի ըլլաս», կը պատգամէ Տէրը:

27 Երկրին մէջ դրօշա՛կ բարձրացուցէք,

Ազգերուն մէջ շեփո՛ր հնչեցուցէք.

Անոր դէմ ազգե՛ր «պատրաստեցէք,

Անոր դէմ կանչեցէ՛ք Արարատի, Միցնիի

Եւ Ասքանազի թագաւորութիւնները.

Անոր դէմ զօրավարնե՛ր նշանակեցէք,

Մագոս ջորեակներու պէս ձիե՛ր բարձրացուցէք.

28 Անոր դէմ ազգե՛ր պատրաստեցէք.– Մարերու թագաւորները,

Անոնց կուսակալներն ու բոլոր նախարարները,

Եւ անոնց տէրութեան ամբո՛ղջ երկիրը:

29 «Երկրագունդը կը շարժի ու <sup>ս</sup>կը տանջուի»,

Որովհետեւ Բաբելոնի դէմ Տէրոջ ծրագիրները կ'իրագործուին՝

Բաբելոնի երկիրը ամայութեան <sup>ն</sup>վերածելու համար, առանց բնակիչի:

30 Բաբելոնի զօրաւորները պատերազմելէ դադրեցան,

Եւ ամրութիւններու մէջ կեցած են.

Իրենց զօրութիւնը <sup>գ</sup>պակսած է, կիներու պէս եղած են:

Անոր բնակարանները այրուեցան, անոր նիգերը կոտրուեցան:

31 Սուրհանդակը կը վազէ **ուրիշ** սուրհանդակի հանդիպելու,

Ու տեղեկաբերը **ուրիշ** տեղեկաբերի հանդիպելու,

Բաբելոնի թագաւորին իմացնելու համար

Թէ իր քաղաքը **մէկ** ծայրէն գրաւուած է,

32 Թէ անցքերը բռնուած են,

---

<sup>է</sup> Եբբ.՝ երկիրը

<sup>ւ</sup> Կամ՝ կործանարար

<sup>բ</sup> Եբբ.՝ դարձնեմ

<sup>ն</sup> Եբբ.՝ չբերեն

<sup>ս</sup> Եբբ.՝ սրբացուցէք

<sup>դ</sup> Եբբ.՝ երկիրը

<sup>տ</sup> Եբբ.՝ երկունքի ցաւ կը քաշէ

<sup>ր</sup> Եբբ.՝ ընելու

<sup>գ</sup> Եբբ.՝ ցամքած

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

Եղէգները կրակով այրուած են,  
Պատերազմիկները շփոթած են:

**33** Արդարեւ գօրքերու Տէրը՝ Իսրայէլի Աստուածը սա՛ կը յայտարարէ.

«Բաբելոնի աղջիկը կալի պէս է.  
Ատենն է զայն կամնելու:

Քիչ **ժամանակէն** ետք անոր հունձքի ատենն ալ պիտի գայ»:

**34** Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը

Ջիս լափեց, զիս բնաջնջեց.

Ջիս պարապ ամանի պէս ըրաւ,

Ջիս վիշապի պէս կլլեց.

Իմ համադամ **կերակուրներէս** իր փորը լեցուց,

Ջիս դուրս նետեց:

**35** Սիոնի բնակիչը պիտի ըսէ.

«Ինձի եւ իմ մարմինիս եղած բռնութիւնը Բաբելոնի վրայ ըլլայ»:

Երուսաղէմ ալ պիտի ըսէ.

«Իմ արիւնս Զաղդէաստանի բնակիչներուն վրայ ըլլայ»:

## ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՕԳՆԷ ԻՍՐԱՅԷԼԻ

**36** Հետեւաբար Տէրը սա՛ կը յայտարարէ.

«Ահա՛ ես քու իրաւունքդ պիտի պաշտպանեմ,

Քու վրէժդ պիտի առնեմ.

Անոր ծովը պիտի ցամքեցնեմ,

Եւ անոր աղբիւրը պիտի չորցնեմ:

**37** Բաբելոն՝ քարակոյտ,

Շնագայլերու որջ,

Ապշուրեան ու սուլոցի **եմթակայ** պիտի ըլլայ,

Առանց բնակիչի:

**38** Անոնք կորիւններու պէս միասին պիտի մռնչեն,

Առիւծի ձագերու պէս պիտի մռռան:

**39** Երբ **գինիէն** տաքնան, անոնց խնճոյք պիտի սարքեմ,

Ջանոնք պիտի գինովցնեմ, որպէսզի հրճուին,

Եւ յաւիտենական քունով քնանան

Ու չարթնան, – կը պատգամէ Տէրը:–

**40** Ջանոնք սպանդանոցը պիտի իջեցնեմ՝ պարարտ գառներու պէս,

**Կամ** խոյերու պէս՝ նոխազներու հետ»:

## ԲԱԲԵԼՈՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

**41** «Ի՛նչպէս Սիսակը գրաւուեցաւ,

Եւ ամբողջ երկրի՝ պարծանքը նուաճուեցաւ.

Ի՛նչպէս Բաբելոն <sup>՛</sup>ամայութիւն եղաւ ազգերուն մէջ:

---

<sup>՛</sup> Երբ.՝ գովեստը

<sup>՛</sup> Կամ՝ ապշուրիւն

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

- 42 Ծովը Բաբելոնի վրայ բարձրացաւ,  
Անոր ալիքներուն շատութենէն ան ծածկուեցաւ:
- 43 Անոր քաղաքները <sup>բ</sup>ամայացան,  
Անջրդի երկիր եւ անապատ եղան,  
Այնպիսի երկիր մը՝ ուր մարդ չի բնակիր,  
Ուրկէ մարդու որդի չ'անցնիր:
- 44 Բաբելոնի մէջ Բէլը պիտի օպատժեմ,  
Անոր կլլածը իր բերանէն պիտի հանեմ,  
Եւ անգամ մըն ալ ազգեր անոր քով պիտի <sup>ժ</sup>չխուժեն.  
Բաբելոնի պարիսպն ալ պիտի տապալի:
- 45 Ելէ՛ք անոր մէջէն, ո՛վ իմ ժողովուրդս.  
Ձեզմէ իւրաքանչիւրը թող ազատէ իր անձը  
Տէրոջ բորբոքած բարկութենէն,
- 46 Որպէսզի ձեր սիրտը չթուլնայ ու չվախնաք  
Երկրին մէջ <sup>ա</sup>տարածուելիք լուրերէն՝:  
**Արդարեւ** լուր մը պիտի հասնի տարի մը,  
Հետեւեալ տարին՝ **ուրիշ** լուր մը.  
Երկրին մէջ բռնութիւն պիտի ըլլայ,  
Կառավարիչ կառավարիչի դէմ **պիտի ելլէ**:
- 47 Հետեւաբար ահա՛ կու գան օրերը՝  
Երբ Բաբելոնի <sup>բ</sup>կուռքերը պիտի պատժեմ.  
Անոր ամբողջ երկիրը պիտի ամչնայ,  
Անոր բոլոր սպաննուածները անոր մէջ պիտի իյնան:
- 48 Այն ատեն երկինքն ու երկիրը, եւ ամէն ինչ որ անոնց մէջ է,  
Բաբելոնի համար պիտի ցնծան,  
Որովհետեւ կործանողները հիւսիսէն պիտի գան անոր դէմ,– կը պատգամէ Տէրը:–
- 49 Ինչպէս Բաբելոն ամբողջ երկրի սպաննուածները **գետից** ձգեց,  
Նոյնպէս Բաբելոն պիտի իյնայ, ո՛վ Իսրայէլի սպաննուածներ»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԳԱՄԸ ԲԱԲԵԼՈՆԻ ԻՍՐԱՅԵԼԱՅԻՆԵՐՈՒՆ

- 50 «Ո՛վ սուրէ ազատածներ, գացէ՛ք, մի՛ կեցնաք.  
Տէրը յիշեցէք հեռուէն,  
Ու Երուսաղէ՛մը <sup>գ</sup>մտաբերեցէք:
- 51 Կ'ամչնանք նախատինք լսելով,

<sup>բ</sup> Եբբ.՝ ամայութիւն եղան

<sup>գ</sup> Եբբ.՝ հատուցանեմ

<sup>ժ</sup> Եբբ.՝ չհոսին գետի պէս

<sup>ա</sup> Եբբ.՝ լսուելիք լուրէն

<sup>բ</sup> Եբբ.՝ քանդակուած պատկերները

<sup>գ</sup> Եբբ.՝ թող բարձրանայ ձեր սիրտին մէջ

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

՝Ամօթը մեր երեսը ծածկած է,  
Զանի որ օտարներ մտած են Տէրոջ տան սրբարաններուն մէջ:

52 Հետեւաբար ահա՛ կու գան օրերը, – կը պատգամէ Տէրը, –  
Երբ անոր կուռքերը պիտի պատժեմ,  
Եւ անոր ամբողջ երկրին մէջ վիրաւորները պիտի հեծեծեն:

53 Թէեւ Բաբելոն մինչեւ երկինք ելլէ  
Եւ իր <sup>Ե</sup>գօրութիւնը բարձր վայրից մէջ հաստատէ՝,  
Ինձմէ **դրկուած** կործանողները պիտի հասնին անոր», կը պատգամէ Տէրը:

## ԲԱԲԵԼՈՆԻ ԱԻԵՐՈՒՄԸ

54 Բաբելոնէն աղաղակի ձայն կու գայ,  
Ու Զաղդէացիներու երկրէն՝ մեծ փլուզումի ձայն:

55 Որովհետեւ Տէրը Բաբելոնը կը կործանէ,  
Եւ անոր մեծ ձայնը կը ջնջէ.  
Անոնց ալիքները յորդառատ ջուրերու պէս կը գոռան,  
Ու անոնց ձայնին ժխորը կը <sup>Գ</sup>լսուի:

56 Արդարեւ կործանողը հասաւ անոր վրայ – Բաբելոնի վրայ –,  
Եւ անոր գօրաւորները բռնուեցան.  
Անոնց աղեղները կոտորուեցան,  
Զանի որ Տէրը՝ վարձատրող Աստուած ըլլալով՝  
Անպատճառ կը հատուցանէ:

57 Անոր իշխանաւորներն ու իմաստունները,  
Կուսակալները, նախարարները  
Եւ գօրաւորները պիտի գինովցնեմ.  
Անոնք յաւիտենական քունով պիտի քնանան  
Ու պիտի չարթնան», կը պատգամէ այն Թագաւորը՝  
Որուն անունը <sup>Ե</sup>Ջօրքերու Տէր՝ է:

58 Ջօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ.  
«Բաբելոնի լայն պարիսպները բոլորովին պիտի փլչին,  
Եւ անոր բարձր դռները կրակով պիտի այրուին:  
Ժողովուրդները պարապ տեղը յոգնած պիտի ըլլան,  
Ազգերը կրակի համար պարտասած պիտի ըլլան»:

## ԵՐԵՄԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԸ ԲԱԲԵԼՈՆ ԿԸ ՂՐԿՈՒԻ

59 Ահա՛ւասիկ այն հրահանգը՝ որ Երեմիա մարգարէն հրամայեց Մասսիայի որդիին՝  
Ներիայի որդիին՝ Սարայիայի, երբ ան Յուդայի Սեղեկիա թագաւորին <sup>Ը</sup>կողմէն Բաբելոն

<sup>Դ</sup> Եբբ.՝ Խայտառակութիւնը

<sup>Ե</sup> Եբբ.՝ գօրութեան բարձրութիւնը ամրացնէ

<sup>Գ</sup> Եբբ.՝ տրուի

<sup>Ե</sup> Եբբ.՝ Եհովա Սաբաւովթ

<sup>Ը</sup> Կամ՝ հետ

գնաց՝ անոր թագաւորութեան չորրորդ տարին. Սարայիա ՞գլխաւոր սենեկապետ՝ էր: **60** Արդարեւ Երեմիա գիրքի մը մէջ գրեց Բաբելոնի վրայ հասնելիք ամբողջ չարիքը, **այսինքն** այս բոլոր խօսքերը՝ որ Բաբելոնի դէմ գրուած են, **61** ու Երեմիա Սարայիայի ըսաւ. «Երբ Բաբելոն հասնիս, ՞ուշադրութիւն դարձնելով՝ կարդա՛ այս բոլոր խօսքերը, **62** ապա ըսէ՛. “Ո՛վ Տէր, դուն այս տեղին համար ՚վճռեցիր որ զայն կործանես, եւ մարդէ մինչեւ անասուն՝ անոր մէջ ո՛չ մէկը բնակի, հապա յաւիտենական ամայութիւն ըլլայ: **63** Երբ այս գիրքը կարդալը ււարտես, քա՛ր մը կապէ անոր վրայ, նետէ՛ զայն Եփրատի մէջ, **64** եւ ըսէ՛. “Ա՛յսպէս պիտի ընկղմի Բաբելոն. **ա՛լ** պիտի ՚չվերականգնի այն չարիքէն՝ որ ես անոր վրայ պիտի բերեմ. անոնք պիտի պարտասպին:»:

Երեմիայի խօսքերը մինչեւ հոս են:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԿՈՒՄԸ

(Դ. Թագ. 24. 18-25. 7)

52

Սեղեկիա քսանմէկ տարեկան էր՝ երբ թագաւոր եղաւ, ու Երուսաղէմի մէջ տասնմէկ տարի թագաւորեց: Իր մայրը Լեբնացի Երեմիայի աղջիկն էր՝ Ամիտաղ անունով: **2** Ան Տէրոջ «առջեւ չարիք գործեց, Յովակիմի բոլոր ըրածներուն համաձայն: **3** Սեղեկիա Բաբելոնի թագաւորին դէմ ըմբոստացաւ, քանի որ Տէրոջ բարկութիւնը Երուսաղէմի եւ Յուդայի դէմ էր, մինչեւ որ զանոնք իր ներկայութենէն վտարեց:

**4** Անոր թագաւորութեան իններորդ տարուան տասներորդ ամիսը, ամսուան տասներորդ **օրը**, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր բոլոր զօրագուններով Երուսաղէմի առջեւ հասաւ: Անոր դիմաց բանակեցան, եւ անոր դէմ բոլորածեւ մարտկոցներ կառուցանեցին. **5** մինչեւ Սեղեկիա թագաւորին տասնմէկերորդ տարին՝ քաղաքը պաշարուեցաւ: **6** Չորրորդ ամիսը, ամսուան իննին՝ քաղաքին մէջ սովը սաստկացաւ, ու երկրին ժողովուրդը հաց չունէր: **7** Քաղաքին **պարիսպը** ճեղքուեցաւ, ու բոլոր պատերազմիկները փախան. գիշերուան մէջ՝ թագաւորին պարտէզին քով եղող երկու պարիսպներուն մէջտեղի դրան ճամբայով քաղաքէն ելան, մինչ քաղաքիները քաղաքը շրջապատած էին: Անոնք դաշտի ճամբայէն գացին. **8** իսկ քաղաքիներուն զօրագունները թագաւորը հետապնդեցին: Երիքովի դաշտերուն մէջ Սեղեկիայի հասան, եւ անոր բոլոր զօրագունները իր քովէն ցրուեցան: **9** Թագաւորը բռնեցին, ու զայն Ռեբղա բարձրացուցին՝ Բաբելոնի թագաւորին քով, Եմաթի երկրին մէջ, ուր անոր դատավճիռը արձակեց: **10** Բաբելոնի թագաւորը Սեղեկիայի որդիները անոր աչքերուն առջեւ մորթեց. Յուդայի բոլոր իշխանաւորներն ալ Ռեբղայի մէջ մորթեց: **11** Յետոյ Սեղեկիայի աչքերը կուրցուց, ու զայն պղինձէ **շղթաներով** կապեց: Բաբելոնի թագաւորը զայն Բաբելոն տարաւ, եւ բանտը դրաւ մինչեւ իր մահուան օրը:

---

<sup>բ</sup> Եբր.՝ հանգստութեան իշխանաւոր  
<sup>գ</sup> Եբր.՝ նայելով  
<sup>դ</sup> Եբր.՝ խօսեցար  
<sup>է</sup> Եբր.՝ չկանգնի  
<sup>զ</sup> Եբր.՝ աչքերուն

**12** Բաբելոնի թագաւորին – Նաբուգոդոնոսոր թագաւորին – տասնհինգերորդ տարուան հինգերորդ ամիսը, ամսուան տասին, Բաբելոնի թագաւորին Քարքունիքէն եղող՝ Նաբուզարդան թիկնապահապետը երուսաղէմ մտաւ. **13** Տէրոջ տունը, թագաւորին տունը, ու երուսաղէմի բոլոր տուները այրեց. բոլոր մեծ **մարդոց** տուները կրակով այրեց: **14** Թիկնապահապետին հետ եղող Զաղդէացիներու բոլոր զօրագունդերը երուսաղէմը շրջապատող բոլոր պարիսպները փլցուցին: **15** Նաբուզարդան թիկնապահապետը տարագրեց ժողովուրդին չքաւորներէն **մաս մը**, ժողովուրդին մնացորդը՝ որ **տակաւին** քաղաքին մէջ «կը բնակէր», Բաբելոնի թագաւորին «կողմը անցած»՝ «դասալիքները, եւ մնացած բազմութիւնը»: **16** Սակայն Նաբուզարդան թիկնապահապետը երկրին չքաւորներէն **մաս մը** թողուց՝ որ այգեգործներ ու երկրագործներ ըլլան:

**17** Զաղդէացիները Տէրոջ տան մէջ եղող պղինձէ սիւներն ու «մեքենովթները, նաեւ Տէրոջ տան մէջ եղող պղինձէ ծովը կոտորտեցին, եւ անոնց ամբողջ պղինձը Բաբելոն փոխադրեցին: **18** Կաթսաները, թիակները, բազմակալները, կոնքերն ու խնկամանները գրաւեցին, նաեւ պաշտօն կատարելու համար **գործածուած** բոլոր պղինձէ անօթները: **19** Թիկնապահապետը գրաւեց գաւաթները, բուրվառները, կոնքերը, կաթսաները, աշտանակները, խնկամաններն ու թասերը, ինչ որ ոսկիէ էր՝ **իբր** ոսկի, եւ ինչ որ արծաթէ էր՝ **իբր** արծաթ. **20** **Նաեւ** Տէրոջ տան համար Սողոմոն թագաւորին շինած երկու սիւները, մէկ ծովն ու «մեքենովթներուն տակ եղած տասներկու պղինձէ եզները»: Այս բոլոր առարկաներուն պղինձը կշիռ չունէր: **21** **Ինչ կը վերաբերի** սիւներուն, մէկ սիւնին բարձրութիւնը տասնութ կանգուն էր, «անոր շրջագիծը՝ տասներկու կանգուն», անոր թանձրութիւնը՝ չորս մատնաչափ, ու մէջը դատարկ էր: **22** Անոր վրայ պղինձէ խոյակ մը կար. մէկ խոյակին բարձրութիւնը հինգ կանգուն էր, եւ խոյակին վրայ բոլորածեւ ցանցակերպ զարդ մը ու նուռեր կային. բոլորն ալ պղինձէ էին: Միւս սիւնն ալ այդպէս էր՝ նուռերով: **23** Նուռերը **իւրաքանչիւր** կողմէն իննսունվեց հատ էին, ու ցանցակերպ զարդը շրջապատող բոլոր նուռերը՝ հարիւր հատ:

**ՅՈՒՂԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲԱԲԵԼՈՆ ԿԸ ՏԱՐՈՒԻ**  
(Դ. Թագ. 25. 18-21, 27-30)

**24** Թիկնապահապետը աւագ քահանան՝ Սարայիան, երկրորդ քահանան՝ Սոփոնիան, ու երեք Քորան պահապանները բռնեց: **25** Զաղաքէն բռնեց պալատական մը՝ որ

---

<sup>բ</sup> **Եբր.**՝ առջեւ կայնող

<sup>գ</sup> **Եբր.**՝ մնացած էր

<sup>դ</sup> **Եբր.**՝ ինկած

<sup>ե</sup> **Եբր.**՝ ինկողները

<sup>զ</sup> **Այսինքն՝** խարիսխները, **կամ՝** խարսխածեւ պատուանդանները

<sup>է</sup> **Կամ՝** **անոր** տակ եղած տասներկու եզներն ու մեքենովթները

<sup>ը</sup> **Եբր.**՝ տասներկու կանգուն դերձան մը զայն կը շրջապատէր

<sup>թ</sup> **Եբր.**՝ սեմին

## ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ

պատերազմիկներուն զօրագլուխն էր, նաեւ թագաւորին ժսպասարկուներէն եօթը մարդ՝ որ քաղաքին մէջ գտնուեցաւ, զօրքին ատենադարապետը՝ որ երկրին ժողովուրդը կը զինուորագրէր, ու երկրին ժողովուրդէն վաթսուն մարդ՝ որ քաղաքին մէջ գտնուեցաւ: **26** Նաբուզարդան թիկնապահապետը զանոնք բռնեց, եւ Ռեբղա տարաւ՝ Բաբելոնի թագաւորին: **27** Բաբելոնի թագաւորը զանոնք զարկաւ, ու Եմաթի երկրին՝ Ռեբղայի մէջ զանոնք մեռցուց: Այսպէս՝ Յուդա իր <sup>h</sup>երկրէն տարագրուեցաւ:

**28** Ահա՛ւասիկ Նաբուգոդոնոսորի տարագրած ժողովուրդը.— եօթներորդ տարին՝ երեք հազար քսաներեք Հրեայ, **29** Նաբուգոդոնոսորի տասնութերորդ տարին՝ Երուսաղէմէն ութ հարիւր երեսուներկու անձ: **30** Նաբուգոդոնոսորի քսաներեքերորդ տարին՝ Նաբուզարդան թիկնապահապետը Հրեաներէն եօթը հարիւր քառասունհինգ անձ փոխադրեց. բոլորը՝ չորս հազար վեց հարիւր անձ:

**31** Յուդայի Յովաքին թագաւորին տարագրութեան երեսունեօթներորդ տարին, տասներկրորդ ամսուան քսանհինգերորդ **օրը**, Բաբելոնի Եղմարովդաք թագաւորը՝ իր թագաւոր եղած տարին՝ Յուդայի Յովաքին թագաւորին գլուխը բարձրացուց, ու զայն բանտէն հանեց: **32** Անոր հետ՝ քաղցրութեամբ խօսեցաւ, եւ անոր գահը Բաբելոնի մէջ իրեն հետ եղող թագաւորներուն գահէն վեր դրաւ. **33** Անոր բանտի հագուստները փոխեց, ու ան իր կեանքին բոլոր օրերուն մէջ շարունակ անոր <sup>h</sup>հետ հաց կերաւ: **34** Անոր ռոճիկը մշտատեւ ռոճիկ ըլլալով, օրական ծբածիմը ամէն օր Բաբելոնի թագաւորէն իրեն տրուեցաւ՝ իր կեանքին բոլոր օրերուն մէջ, մինչեւ իր մահուան օրը:

---

<sup>d</sup> Եբր.՝ երեսը տեսնողներէն

<sup>h</sup> Եբր.՝ հողէն

<sup>l</sup> Եբր.՝ բարութեամբ

<sup>h</sup> Եբր.՝ առջեւ

<sup>b</sup> Եբր.՝ բանը